938

206
Z-84
1862

010

LW.

20 b
Հ-84

# ԱՐԿԱԾՔ

## ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԽԱՉԿԵԱՆ ԽԱՉԱԿԻՐ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

յԵրկոՀեաց փՀոխանակ գրոցն էրգոՀ

*Ընդ հանգուցեալ Թադէոս Արք Եպիսկոպոս, Առաջնորդին Նոր Ջուղայու*

*Ի Հայրապետութեան Տեառն Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ Աստուածաբեալ և Աղգասէր Կաթուղիկոսի Ամենայն Հայոց*

[20 0 1

Ցաւի Տեառն 1863 · Հոգտեմբերի 30

ԻԿԱԼԿԱԹԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽՀ-ՍՍՀ
Им. А. Мясникян
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՅԵՐ
1038
ՊՐՈՖ. Լ. ՄԱՍԵՐՅԱՆ

23950-ч.3

Սիր Հայիտանուս Յովհաննէս
ԱՄԱՐԵՔՈՒՄԱՆ ԵՒ ԱՄԱՊԵՏ

Dr. Johannes Catchick

ՄԱՍՏԱՑՈՒՈՅ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԱՊԼԻՆ

# ԸՆԹԱՑՈՒՄՆ

## Արժանայարգ Տեառն Յովհաննու Խաչկեան, խաչակիր Աւագ քահանայի և Աստեղի.

Ի յառնել տխուր անհամեմատելի թեան ի մէջ ձեր եւ հանգուցեալ Թ. Ա. Եպիսկոպոսի եւ ի համբառնալ անխրատից ոմանց զձեռս իւրեանց ընդդէմ ձեր, զառաջինն ես քարոզ հանդիսացայ հեռաւորաց եւ մերձաւորաց վիմատիպ տետրակաւ խմով անմեղս թեան ձերոյ։

Եւ զարդիս՝ զնիւ երիտասարդաց բաջալանջ նահատակութեան ձերոյ յասպարիզի Աղգասիրութեան, եւ ժուժկալութեամբ տանելոյ ամենայն յարձակմանց հակառակորդացդ, եւ յետ արդարութեան զինու ի սպառ ընկճելոց զթշնամիս հայրենեաց, դարձեալ պարտք անհրաժեշտ անձին համարիմ, բաղել յինձ յանձն արարեալ թղթոց զնիւթ ցաւալի վիճին. եւ իբրեւ ի փորրիկ նկարու ձեւակերպեալ ի մատենիկս զամենայն անցս արկածիցդ՝ ի հանդէս հանել անծանօթից։

Ընկալարուք, աղաչեմ, զայս նուէր դուզնաբեռայ ի ձեռաց եղբօրս ձերոյ հարազատի, որոյ սիրտն, ոչ պա-

կաս քան զձերն, վիրաւորեալ տոչորեցաւ յընթացքս երկամեայ հալածանաց ձերոց. եւ որ այժմ ի դադարիլ ամենայնի ցնծութեամբ սրտի եւ ի նշան խորին երախտագիտութեան իմոյ վասն բազմադիմի շնորհաց ձերոց, որ տուս իս, նուիրեմ ձեզ զայս երկ գրաւոր, եւ բախտաւոր զանձն իմ համարիմ, եթէ միայն այս վաստակ իմ շնչին պակիցի բաղցր ակնարկութեամբ հայրապետիս եղբօրդ, որում

Եւ Ճշմարիտ փոքր եղբայր եւ ծառայ

Մ. Խ. Յովակիմեան։

# ՆԱԽԱԲԱՆ

Որպէս Գերագոյնն ի Մարգարէս Սուրբն Յովհաննէս Մկրտիչ ի նախանձ պահպանութեան օրինաց զոհ եղեւ դաւանաց Հերովդիադայ, նոյնպէս եւ անուանակիր նորա, զամ երկու՝ աներեւոյթ սրով հնարագէտ թշնամեաց իւրոց, զոգեսն ի մահ վիրաւորեցաւ վասն իրաւանց եւ Հայրենեաց։

Ապաքէն եթէ ճշմարտութեանն յաղթող զղջամենայնի, զիարդ ոչ թացափայլիցի հրաշալի ազատութեամբ Սբրբազան Հայրապետ Տեառն Յովհաննու Խաչկեան, Ազգ քահանային Կալկաթա քաղաքի, ի դժուարին դատին իւրում ընդ Ռաֆնորդին Նոր Ջուղայու Հանդուցեալ Թ.Ա. Եպիսկոպոսին, ընդ որում զոգեսն աշխարհ ամենայն զինեալ էր ընդդէմ միակ անձին Ազգ երիցուն։ ուրեմն թշնամիք վերջնոյս զեր քան զաշակերտս Պիւռոնական զպրոցին ի Ծայրն հասեալ են սկեպտականութեան (1)։

Մեզ չէին կամք իյուշ անգամ ածել զհնացեալ վէրս անցեալ երկպառակութեանն, եւ մտադիր իսկ տայաք լռութեան զայն եթէ ցարդ երեւեալ իցէր զործ ինչ ամբողջ և կարգաւոր, յայտարար իսկական նիւթոյ վիճիս,

1. Պիւռոն, որդի Պլիստարքոսի, յիշէնա քաղաքէ. որում ամենայն ինչ անընդունելի թուեցաւ և ճշմարտութիւն՝ թագուցեալ։

առ ի առաջնորդ լինել, որոց կամք իցեն խորամուխ լինել յայս բազմակնճիռն դատ ցաւալի։

Մատենիկս այս առաջիկայ՝ թէպէտև հակիրճ, սակայն լի ամենայն ծանուցական նիւթովք, թերևս պարզել կարասցէ առաջի աչաց հեռաւոր ազգայնոց մերոց՝ թէ զինչ էր պահանջ Աւագ երիցուն, և զինչ վճար Եպիսկոպոսին· զինչ նպատակ և իրաւունք բողոքանաց միոյն՝ և օրպիսի անիրաւ դատակնիք միւսոյն, որ ի պաշտպանութիւն անձին և եթ, ընդդէմ իրաւացի բողոքանաց Հայրենասէր Ազն, սրով քանդրանաց լուցուցանել ջանայր զձայն ճշմարտութեանն։

Զդիմադրական դրութիւնս երկուց կողմանց և զհամապատասխանութիւնս թարց ինչ յաւելուածոյ և զեղջման ունի գտանել ընթերցողն ի սմա. միայն յառաւել բացատրութիւն նիւթոյն յաւելի ես ինքս զստորագիր ծանօթութիւնս, յորս եթէ թերութիւնք ինչ գտանիցին, սիրով ներումն հայցեմ յընթերցողաց։

Մ. Խ. Յ.

*Թուղթ Տէր Յովհաննէս, Աւագ Քահանայի Խաչ-*
*կեան, գրեալ յ30 Ապրիլի 1861 ամի առ վեղ-*
*տաւան եկեղեցական և աշխարհական անձինս Նոր*
*Ջուղայի ի մասին բարեկարգութեան թէմին*
*Ամենափրկչի վանացն։*

Այժանայարդ Սրբակրօն Տեարք · Սիմէօն Տէր Մատ-
թէոս, Դաւիթ Մկրտում, Եղիազար Անդրէաս · Յով-
սէփ Աղազար, Մինաս Բարսեղ, Սարգիս Խ · Տէր
Մատթէոս, Յարութիւն Տէր Ստեփաննոս, Գալստան
Նազարէթ եւ Դաւիթ Ա · Բարաղամեան,
Եւ Յարգոյապատիւ Պարոնայք · Մարգար Միքայէլ,
Յովհաննէս Մարգար, Մանուկ Բարսեղ, Մկրտիչ Աբ-
բահամ, Յովհաննէս Տէր Ղուկաս, Բարսեղ Կարապետ,
Գաբրիէլ եւ Միքայէլ Գ · Սարգարեանց։ Ի Ջուղայ։

Ոչ սակաւ ցաւ է ինձ ընդդրկմամբ ժամանակիս զը-
րելն առ ձեզ զայս գիր անսխորժ, որ ոչ ի կամաց եւ
ոչ յայլ ազգ միջոցաց, բան թէ ի բուռն ներդործմանէ
անցիս տեղւոյդ պարտանղիմ գրել, եւ զվարագոյր եր-
կիւղին, որ ընդ ձեօք կարծի պատեալ, ի լաց բառնալ՝
յարձակ եալ եւ մուտս ձեր ի ճշմարտութիւն։

Սակայն՝ նախ բան զրացումն առարկայիս խնդրոյ,
զատեհ համարիմ զառ ի ձէնջ լուեալս ձեզ ի սիմափումն
դուշակել՝ յորժամ անտարբեր գրեն սղէք, եւ հաստա-

տեն տեսողք զթմրութիւն ձեր, որպէս թէ չէր ի Ջուղայ. եւ ոչ առ աչօք ձերովք եղծանին բարիք օգտի տան ձերոյ, զի որչափ անմարթ է ասողի ուրուք, իբրեւ համեր թագուցանել զբարբառ լեզուին, այնպէս եւ ունողին զարիւն մարդկութեան յերակս, կամովին կորանալի վէգ տմարդի եւ գերել զինքն ի տարկութիւն։ Ներեցէք, եղբարք՝ ներեցէք. մինչ ասիցեմ. յայս զոյն թմրութեան երեւիք ննջեալ, եւ ոչ բնաւ նկատէք զվնաս տան ձերոյ. ո՛չ ապաքէն նախնիք մեր, եթէ յայս ախտ անհոգութեան ախտացեալ լինէին, չլինէաք եւ մեք ի դիրս վայելուչ ժառանգութեան նոցին այժմոյս. ապա ուրեմն ասացէք թէ ո՞ւր գերեցան արիութիւնք ձեր եւ խոհականութիւն, եւ թէ ո՞ւր չքացան ճգունք սիրոյ ձերոյ՝ զարդ եւ շուք հայրենեաց, զի անյարիր է կարկատանդ՝ թէ երկնչիմք եւ անբաւական եմք ի դիմադրութիւն հզօրի ուրուք։

Զի թէ հնութիւնք ժամանակաց յամիչտակեալ իցեն ի մտաց ձերոց, ոչ անդէպ համարիմ մտաբերել զանցս հանգուցեալ Խաչատրոյ Եպիսկոպոսի ընդ իս, եւ մի՛ջոցաւ գրութեան եկելոյ ի Հայ ժողովրդոց Մաղրասայ յանուն Աստուծոյ ի ինքեան եւ հանդերձ եկեղեցականաց եւ աշխարհականաց Ջուղայոյ, յաւուր, յորում Արբան Պարսից 60,000 զօրօք ծանու, ընդ դեսպանաց հզօր տէրութեանց Բրիտանիէից բանակեալ ի Հաֆդասան չուրջ զԱթոռովդ. եւ Հաճի Միրզայ Աղասի փոխարքայն ընդ նորին Եպիսկոպոսի այնքան ջերմ սիրով, մինչ ի տես բազմականաց աղանդաւորացն չիտրէր զզալեանն ձեռամբ ի նա հրաւիրել եւ ասել,

ժամը ծխել տալ նմա։ Յայսմ վայրի եւ յայսպիսի վտանգաւոր ժամանակի հրաւիրեաց նա զհասարակութիւն Զուղայուդ ՅԱԹՈՌՆ ի բացումն եւ յընթերցումն գրոյն, եւ մինչ բանի մի տողք ընթերցեալ ծանեաւ զիմաստ խնդրոյն ազգային, եւ ոչ անձնաւոր օգտի, արդեալ խակոյն զընթերցումն. եւ իրաւամբ յանդիմանեցաւ յինէն. զի եթէ կարծէր ինքեան լինել հպատակ Ռուսաց եւ խնդիրն՝ ընդդէմ Ղորակարգ կանոնաց Էջմիածնի, կարէր անձնաւորապէս մեկուսանալ ի բաց, եւ ապաստան առնել զլուծումն ի նոսա, որք չէին վարակեալ կարծեօքն, եւ այն թէ. իմ գոլով մի յանհատից (ժողովոյն), չունիմ թողուլ զայն թարց վերծանելոյ ցզրաւ, որ ընդդէմ անհնարինս սրտմտեալ ի զայրոյթ որոտմանն, մինչ յայնմ ատ եւ անդ ծպտեալ ամենեցուն, մեաց առ խ եւ ոչ որ, եւ յորժամ, զիս միայն իրրեւ լուելեայն կալանաւոր պահեալ մինչ ժամու ՅԱԹՈՌՆ, զի՞նչ կարաց առնել՝ բան պատուով արձակել ի տուն. մի թէ ճշմարտութիւնք բանից ընդունակ են հարուածոց և զանից. ո՛չ, ո՛չ բնաւ։ (1)

Սապէս, յետ ելանելոյ խոյ այդի, յորժամ Սուրենեանն զձեզ ՅԱՌաջնորդարանի անդ իւրում (քստ զբրութեան ձերոյ) մատնեալ յորոգայթ վտանգի կալանաւորութեան« բուեի բո՛ւր, օձի բո՛ւր»կարա՞ց գործել ձեզ զիւաս ինչ. ապա զի՞ է ձեզ այսօր մորրոգութեամբ պաշարիլ և նստեալ ի տան հետաքննող լինիլ վտանգին Զու-

1. Հարց. Երբէ ճշմարտութիւնք բանից անհարուածելի, զիմբդ ապա հեղինակն հաւաքեալ տեսանի այժմ. — Պաշտոն Ակդրէն և նա ոչ հաւաքեալ ի ճշմարտութենէ խղճի։

զայու և Աթոռոյդ, մինչ Սեաւ ջուրն ողողեսցէ զԱմենեսեանդ. մի՞թէ չգիտէք թէ Ամենափրկչեան Աթոռն է հիմունք և խարիսխ հաստատութեան Ջուղայուդ, և մի՞թէ աչօք բացօք չտեսանէք զտատանումն նորա ի ծուփս և ի դիւրազայթ վտանգ մեծի ինքսու պարտեաց. նազի մի՞թէ ձեզ, հոգեւոր որդւոյդ, չեն պարտիք առ փեսայութեամբ Եպիսկոպոսի և առ այրութեամբ կապաւարչայ արտարին, խնամել և չթողուլ անտերունչ. չէ, եղբա՛ր սիրելի՝ մի՛ այդպէս առնէք. այլ զօրացարուք Տերամբ և արարէ՛ք զհանոյս, և պահեցէ՛ք զպատիւ Մօրն Լուսոյ եւ ձերոյ Հոգեւոր ծնողի։

Եւ քանզի, զոգջի՛ք, որչափ զամենայն ժամանակս անպակաս, այնպէս եւ յաւուրս յայսոսիկ առատացեալ են աստ եւ ի կողմունս ողբալիք այդի, որոց խնամոյ խառն գրութեանց հաստատեն թէ Սրբազան Առաջնորդն, որ զամենայն հաւատ եւ պատիւ իշխանութեան իւրոյ հաւատացեալէր Տէր Մարտիրոս Տէր Յովակիմին և Տէր Բարսեղ Գալստանին, և նորօք մատնեալ զՋուղայ և զվանքն ի լկանս նոցին, այժմ հասեալէ ժամն արդարութեան զի Տէր Մարտիրոսն, որ խոստացեալ էր տալ զդուստրն ի կնութիւն Ղազարու, սպասաւորի Առաջնորդին, որով և հանգուցեալ ունէր զպատիւն անսովոր, արդէն զլսցեալ ընդդէմ չհաս հրամանի Առաջնորդին պակեաց ընդ առն այլում, որոյ վասն և ատելութիւն մեծ ծագեալ ի նոսա, և մեծ մասն ժողովրդոց անկեալ ի կողմն Տէր Մարտիրոսի նուաճել զԱռաջնորդն Ջանան. և այսպէս յալիս ողբմելութեան տարուբերի վիճակ Ջուղայուդ, և այլն։

Այդ՝ յընթացս ճախողութեան խնդրի հարցանելէն ո՞վ էր և որո՞վ զօրացաւ Տէր Մարտիրոսն. ասելոյ էք. Սրբազան Աստուածորդաւ. դարձեալ. ո՞վ էր, որ ըստ օրինի կամ ապօրինի հրման չհասի ի պսակն արտասուեալ։ — հարկաւ Աստուածորդն. դարձեալ. թէ Աստուածեալն Սուրբ Հոգւով ո՞ւմ օրինադրեաց ձեզ հնազանդել և ունկն դնել բանից նորա. անչուշտ ասելոց էք։ ևս Աստուածորդին, որ զտնտեսութիւն հօտին յինքն հաստատեալ ունի. ապա ուրեմն և ես վստահացեալ ասեմ. չպիտէր ձեզ լուութեամբ կամ չէզոքութեամբ անցանել զանհրաժեշտ պարտիսդ. այլ զուն գործել արժան էր ձեզ, նախ՝ ի հաշտութիւն նոցին ընդ իրեարս. երկրորդ՝ եթէ չյաջողէր փորձն առաջին՝ ժողովեալ յոտս Աստուածորդին ի բաց հանել զՏէր Մարտիրոսն յԱւագերիցութեան արտօնութենանցն ի տրիտուր ապերախտ ժպրհանացն. քանզի եթէ նա Աւագ երէց էր ձեր, ապա և նա Աստուածորդ էր Աւագ երիցուն՝ ձեզ և համօրէն վիճակաց Աթոռոյդ, և այն թէ՝ ի բռնանալ խիզախողիդ ի ժամուն ի վերայ գլխոյն, յառաւելու ունէր յապա և զձեզ ընդ ոտիւք, զի եթէ ոք զտանուտէրն բէեղզերուզ կոչէ՝ չունի խնայել բնաւին և յընտանիս նորին, որպէս բաջ գիտէք և դուք. ուստի զարմանամ թէ զի՞արդ ընդ հակառակն ընթացեալ ձեր, ունկն մատուցանէք ընդունայն մարմանջանաց բանից անհաստուն մտաց, որք ի ժողովետեղ կամ ի հարկաւոր դէպս ստորագրութեան, ի հաճութիւն ստորագրութեան միոյն կախեալ՝ յաւելուն ի գրել, նոյնպէս և ես, նոյնպէս և ես, առանց զնիւթոյ խնդրոյն և գկատա-

բածէն տիրաբար խորհրդածելոյ։

Յորժամ զմտաւ ածեալ զառաջին ողբալի վիճակ Զուղայուդ նախ քան զարդի Ս.ռաջնորդդ, և նարդենոյս առ դովա՛ խակ, որ եթէ դուն ինչ անագանէր եկաւ-բութեամբ, ի սպառ սպառ մաչելոյ էիր. զարմանամ յիրաւի, թէ զիա՛րդ մոռայաւ ժամանակն, յորում ան-երկիւղ ի փողոցս Զուղայու շրջել տկարանայիր. և այ-ժըմ, ըստ վկայելոյ բաղմայ, երեխայ մի անդամ ան-կասկած շրջել զրանայ ի գիշերի և Գետառ, և Զար-բաղ և ի քաղաք. յուսմէ՞ ծագեալ երանութիւնդ. մինչ արդի սամսոնայեալ Ս.ւադերէյ ձեր զրութեամբ իւրով առ իս երանի կարդայր կարօտաւորայ յանկեալ-նոյի քաղաքիս. և մի՞թէ այժմ ի բայ՝ լքանիլ ոտից Ս.-ռաջնորդիդ այդի, չունիցին առաւելութեամբ բռնանալ ի ձեզ չարիք և լկանք նորանոր. ապա ուրեմն հա-սեալ է չափ մեղանայ Զուղայու և կուրծքն խարխափէ զինքն իվիժումն յանեալանելի դուռ կորստեան։

Զեն զանխուլ ատի ի մէնջ փոփոխութիւնք տեղւոյդ չնորհիւ Ս.ռաջնորդիդ ի լաւ անդր կոյս. երբ ետես և ո՞ր ժամանակ ծանեաւ զյարեկարգութիւն եկեղեցեայ Զուղայուդ ազգի ազգի փառազարդութեամբ. ե՞րբ և ո՞ր ժամանակ արդիւնաւորեալ էր ժողովուրդդ ջերմե-ռանդութեամբ, որչափ զարդիս աստուածարանական և յորդարուղիս քարոզիւք և բարոյական խրատուք նորին տեսանի. ահա այսպէս նիւթք դովեստից Ս.ռաջ-նորդիդ բազում, զոր, մի առ մի ընդլայնելն աստ երկարի, և զի՞ հարկ դիտակացդ իսկ ճառումն անձնաւորապէս փորձոյ փորձառեցելոյն ձերոյ. սակայն և այսպէս մի

կարծէք թէ չիմանամ զպատասխանին ձեր՝ յերկար հայթայթանս չունիցիք ասելթէ մեք առաւել բան զհեռաւորդ ատի քաջ զգայեալ եմք և զգամք զբարեբաւութիւն և զարժանաւորութիւն նորին, բայց քանի մի անպատեհք զնմանէ, զորէն եղնոյ պատեալ ընդ մեօք, հեղձամուղձ զբարիս մեռուցանեն. նախ՝ հերքումն նորա զմեզ զամենեսեան և հատընտիր առնելն զՏէր Մարտիրոս եւ զՏէր Բարսեղ. եւ նոքօք հաւասարելն զյարգ եւ զվարկ մեր հողոյ. Երկրորդ՝ դիւրալուր, դիւրահաւան եւ զայրացկոտ բնաւորութիւն նորին յանարժանս հեղոյց բարկութիւն եւ անէծս, որում, իբրեւ հրաբուղխ լերան, չլինի մերձենալ թո՛ղ թէ, ասել կամ լսել ինչ. Երրորդ՝ երկիւղ մեծի ծախսարարութեան նորա. որում, եթէ հպիցիք, ի պարանոց մեր կապելոցէ զվնասն, որ սակս ի բաց մնալն խոհեմութիւն համարիմք, եթէ ոչ ինքն Աստուծոյ նորդն լաւ ընտրեալ անձն է, և ոչ ինչ այլ պակասութիւն ունի, և այլն։

Եկեսցո՛ւք այժմ ի կարևոր իրաւունս ձեր անդրէն զոհանալով զՏեառնէ, որ չասէք բարբարոս, տգէտ է նա, արբեցող, մոլի է նա, ազգատեաց, անհաւատարիմ է նա, և ի վերբան զամենեսեան՝ Աթոռոյն բանդիչ և աւերիչ է նա. մինչ ծանուցեալդ պակասութեանց ամենեքեան դիւրամեղմելի. ահա ասվիմ բացայայտել սկսանիմ խոնարհաբար։ Նախ՝ ի բանն թէ հատընտիր որոշեալ զնոսա, որ հայի զլխաւորապէս ի մերս թերութիւն. զի որ տգէտն է՝, զյորենոյն բաղարջ թողեալ զգարեղէնն ուտէ զհաց. ապա ուրեմն ի մէնջ էառ զպակասութիւն մեր, որ ոչն մեզաւ, ըստ ասիցս Յովհան վարդապետին

առ Յովհաննէս Առաջնորդն (Պաւլոս), մինչ հենգնէր բանին յիմար՝ պատասխանէ. «այո. զի եթէ մեք յիմար չլինիմք, քոյիս տիմարն ևս առաջնորդ մեր ոչ կարդիր» ։ — Իսկ ի միւս պահանջն՝ թէ յանչափս հաւատացեալ նոցա՝ ընդ բոլոր նուաճեաց զվարկ և զհամբրումն ձեր, ուղիղ է, և չպիտէր այդչափ հաւատալ նոցա, որչափ այժմ էն, ընկալնու զհատուցումն ապաշաւանաց. բայց և այնպէս մարդկայինս բնութեամբ տկար եմք և ամենեքեանս՝ ընդունակ պաշարմանց և եղծիչ խորամանկ նենդաւորաց. և մանաւանդ Քրիստոս ընտրեաց զՅուդա յառաքելութիւն և ոչ ի համբոյր մատնութեան ինքեան. զի սակաւք ոմանք մարտնչիլ կարեն բնութեանս հակառակ։

Առ երկրորդ պահանջն թէ. զայրացկոտ է և անիծաբան. պակասութեանցս այսոցիկ զեղ քան ամենայն պակասութեանց բնութեան հեշտ է և զիւրին. մանաւանդ զի որչափ մեք ի փորձոյ հմտացեալ եմք, չթուի դա առաւել զայրացկոտ քան Խ. Եպիսկոպոսն. զի հանճարեղին ձիրք հոգւոյ ոչ հեշտեաւ կրից բնութեան խոնարհին. որչափ նորայն զուրկ յիմայմանէ, զրրտին անօթս կաւեղէն, յաւուր կիւրակէի ի հրապարակս մէջ գահին առ ոտն փշրէն. և մանաւանդ պատիժ զայրացկոտին ընտրի խոնարհ և հլու կենաց հպատակաց և անկելոց ընդ իշխանութեամբ յորժամ զիտելով զհուն՝ ոչ անփորձ մինչ յայն զձեռն ի յայրումն. արդարև նոգեալի ինն է ամենայն Քրիստոնէից, թէ զթէ Հովուի եկեղեցւոյ, որով բնաւ զարդարութիւն Աստուծոյ զրծել չկարէ. սակայն կայ ի սմին լուելեան ինն, զոր

ամենայն որ չտեսանէ և չգիտէ. այլ որ վարեալ է կամ վարէ զհոչակս որ պաշտօն ծանր, նա միայն իմացեալ և տեսանէ զի ծանրապատում է և գրեսթէ անհնարին հոչակաւոր պաշտօնատարին գոլ անզայրոյթ և անպարտաւ յաչս աշխարհի. մանաւանդ և իսկ՝ յանփորձ անձանց. եթէ գոյ ոք խելամուտ, աղաչեմ, զիս ևս խելամտել. թէ ո՛ր հայր ի մէջ ստահակ զաւակաց անվերդով մնալ կարէ, կամ ո՛ր զաստիարակ ի մէջ բաղմախաւան, անկիրթ աշակերտաց, որոց և յանհրահանգեալ վարուց չունիցի յուսահատիլ և զայրանալ. այսպէս և ո՛ր Աստուծոյդ ի հովուել զհօտն փեռեկատեալ ի փոքրախս չնորհացն՝ չունիցի նեղասրտիլ. ահա օրինակ ձեզ Մովսէս ի Սուրբ Գիրս, որ տիպ և օրինակ էր հեզութեան և խոնարհութեան, մինչ զի վկայեցաւ յԱստուծոյ չլինել նման նմին հաւատարիմ յամենայնի իտան իւրում. բայց երբ տիրեաց ի նա հոգին բարկութեան, այնքան խստացաւ, մինչ զՍուրբ պատգամն Աստուծոյ առ ոտն խորտակեալ մնաց անպատուհաս յօրինակ մեզ. թէ որ բարկանայ յաստուածակոչս կողմանէ ի վրէժխնդրութիւն օրինաց, չմեղանչէ. և գործք նորին չնմանին այլոց մեղաց բարկութեան. մանաւանդ վասն յանձն առեալ հօտին տրնելոյ են և համարս տալոցն Աստուծոյ. իսկ վասն անիծիցդ՝ չունիմ զաղափար ինչ արժանի ունելոյ զառաջս, լան զամենեսեան իմանալ պժգալի և գարշելի. սակայն զի տեսք դուք. վկայեմք և մեք, զի չէ ախտս այս ի մեզ նորամոյծ, այլ ի բնուստ և ի վաղ ժամանակաց հետէ եւ այսր. ոչ միայն այդր կամ աստ, այլ ամենայն ուրեք,

ի տանէս Հայոց բարձեալ նահապետական սրտաբուղխ օրհնութիւնն · եւ ի տեղ տիրեալ անէծք Մեծին Ներսիսի, որով կորեան եւ կորնչին ազգ մեր ընդհանուր։

Իսկ վասն վերջնոյ վտանգի ծանր եւ շռայլ ժասարարութեան Վանայոյ, մեք այսպէս վերջաւորեմք թէ չիք բնաւ յանցանք Աղանոորդիդ. այլ ձերոյ թոյլտուութեան եւ բաղձերութեան զոր ետուք նմա. զի Աղանորդն մի եւ եթ անձն լինելով. մի Աբեղայ, 2 տիրացու եւ 2 սպասաւոր եւս ընդ իշխանութեամբ պահելով, առ առաւելն ասեմք օրն մի թուական ծախս պահանջէ. այլ աւելին ո՞ր ծախի. ապա եթէ գիտէք թէ զարդիւնս վանայոյ ժողովեալ ի հեռաւոր վայրս անդրափոխէ · հի՞մ ոչ զառաջն ունիք եւ զսպէք զանիրաւութիւնն. այլ եթէ գանձեալ պահէ ի սնդկի Աթոռոյդ ի պէտս աւուր խիք նեղութեան, որպէս ամեն տանուտէր պարտ է առնել, զի՞ եւ զիա՞ղդ միշտ 900 կամ 1,000 թուականաց վաշխակիր պարտք Վանայոյ ոչ պակասին · այլ երբ հրաշալիս այս վասն մեր հեռաւորացս եւ անձեռնհասիցս ըստ մուտ եւ տես աղանդոյն անիմանալի, ձեզ մերձաւորացդ դիւրընտել է յորոշումն. որչափ մեք մերով տկարիմաց դիտողութեամբ խնամասիրել բաւեմք ասա թէ Աթոռդ ի սկզբանէ անտի շահախնդիր անձամբք անչքացեալ, որպէս է տեսարանդ ժամանակիս իսկ, յորում այլաբանօրէն ասեմք. Թոփչոնց Օլչին, Ղուրչոնց գիլանչին, Մահմադ Յասէն խանի սուփրաչին, կարՃՆՂի զալեանչին, Մահլաթի համամչին, չարսուի քիսաչին, եւ ի վերջոյ չարախտավատ գմրուկչին, Հասանչին, Աղաչին եւ Ղարաչին. խմա փալուան Յասէն,

Միրզայ Նասրօլլն, ասյլն, ասյլն, մի մի մատ մեղր լիզելոյ աղագաւ տիկն ճղելով, ուտելով, ըմպելով, վարդ վարդ գովելով, նարտախաղ նստելով, աղ վերբերելով, Մանիկ կտրելով, և ի վերջոյ պարապաւ տանէ ի տուն շրջելով, լրտեսելով և առանձին կրիւք զանպարտն ի պարտութիւն մատնելով, զինչ այլ թերութիւնք սանդարամետական չարեաց. այսու ամենայնիւ, լինի, որ եղեւն, և առնեն, զոր արարին. և ոչ այսչափ ներքնապէս, այլ և արտաքնաբար յայտ իսկ է մտախոհ զննչաց. թէ տունք և գերդաստանք քանի մի շնորհիւ վանայդ և Աստուծոյ Նորդիդ յաստիճան փառաց և մեծութեան պատուոյ վերացեալ, որով և զծախս իւրեանց օն անդր շռայլութեամբ բաղմապատկեալ. զոգջիք, առ ամն ոչ պակաս քան 300 թուման, ուստի՞ և յո՞ր կալէ կամ հնձանէ ընուն զայս. զի եթէ ասիցեն ի հայրենի ժառանգութեանց, զիտէք դուք, զիտեմք և մեք զունայնութիւն բանից նոցին, զի ուրագ մի, կամ սկաւառակ մի գինեշափի շունեցան և չունին զօրութիւնդ հրաշալի յաւիտենիս. այլ եթէ ասիցեն. մերով առժամանակեայ աշխատանօք և բերրամբ կոյր բախտի, ստեն և ուրանան զճշմարտութիւն, զի ըստ մերում հաւաստի տեղեկութեանց. անաշխատ գոյք նոցին ի վաղ ժամանակաց հետէ վանատուր էին ևեն, մանաւանդ՝ բանակք նոցին իսկ չրաւէին պատասխանի տալ ցայդ վայր անկոպար ծախուց և շռայլութեանց նոցին, զի ոչ որ իշխեաց ցարդ իւրով քրտնահոս երկամբք ադանիլ բեհեղս ադնիւ եւ մեծադին. ահա տեսէք եւ իմացէք, զի զսեր կամին այլք վայելեն, և զլոյծ թանն

վատահամբաւութեան տան վայելել Աստուածորդի. ուրեմն ոչ Վանքն է մեղանչական և ոչ Աստուածորդն. եւ զրեթէ, մեղանք Աստուածորդին իսկ ընդ այս ակամայ պատահարաց կրից ձեր են և ի ձէնջ պահանջել արժան է իրօք. յորժամ դուք զնա բարձի թողի արարեալ չէք ի ժամանակին զգայուցեալ նմա, զոր այժմէն անագան ուրեմն պահանջէք. ահա այսչափս եւ առ այս ձեզ դիտել շատասցին։

Ի վախճանի անօգուտ ասից եւ լսից ի վերայ անցելոց, փութասցո՛ւք զառաջս ապառնի վնասուն ունել ի փրկութիւն վանացն, Աստուածորդին եւ ձեր ամենեցուն, որ հաճելին է Աստուծոյ եւ մարդկան. ահա բացակնիք ծրարեմ ի սմա երկարապատում գրութիւն մի յանուն Տէր Բարդղի Զալստանեան, որով ունիք տեղեկանալ զամեն իրաւունս բանից, եւ այնթէ՝ զինչ առիթ նահատակութեանս ընդ ըմբշամարտիցդ ի սէր հայրենեաց եւ ի պատիւ ձեր, զոր, յուսամ եւ խնդրեմ, կնքեալ յանձնել նմա. եւ ապա արիացեալ ձայն տալ եւ խրախուսել զժողովուրդդ, ոչ առ յուզումն տարաձայնութեան. այլ խաղաղական հոգւով ի քննողութիւն առթից եւ պատճառաց վնասուց եւ աղաղակի ոմանց, ոչ զկողմն Աստուածորդի եւ հսկաակորդացն պաշտելով, այլ զիրաւունս խղճի եւ զճշմարտութեանն Աստուծոյ յարգելով, հաստատել նոր կարգ, նոր կանոն, եւ նոր սահման բարեկեցութեան, կարձելով զձեռս օգտածարաց յԱ.թոռդ, յապաւելով զաղաւաղութիւնն ներքին եւ արտաքին եւ չափաւորելով զծախս Վանացդ ըստ կարեաց ժամանակիս. եւ այսպէս, ոչ

միայն զարդարելով զձեզ զամենեսեանդ ի մի կարգ հաստատութեան սիրոյ. այլ եւ թողլով զկնեայս ձերոյ անուն բարի եւ յիշատակ անջինջ, թէ հարք մեր ոչ ընդ քնով անհոգութեան անցին, ընդունելով զվարձս ի Տեառնէ՝ ձեզ օրակ անվախճան. եւ այսպէս բառնալ զնախատինս համբաւատենչ տանդ Զուլայու, որովք եւ ես հաղածեալս ի տանէդ ոչ միայն անպատուութեամբ սրտի չնորհակալս ձեզ փոխարինեցից ատելն, այլ եւ ըստ խնդանն ամենարար, յուշ օգտի եւ մխիթարութեան հայրենեացդ պատարագել ոչ խնայեցից արդեամբք եւ ամենալաւ ջանիւք, որպէս մինչեւ ցայսօր ժամանակի։

Այլ եթէ, Տէր մի արասցէ. զոչխատանս ընդունայն արարեալ անդստին անհոգ եւ անփոյթ կեալ ախորժեսջիք, շատ համարելով պահպանելն զզլուխ ձեր և եթ. ուրեմն աղաչեմ՝ չնորհ արարեալ 2 տողիւ և եթ ինձ ծանօթս տալ. զի զորինակ նորին ընդ այլ գաղափարաց արդի գրութեանց, մարթ ացայց դնել ի նը-պատակի, ուր արժան է, և ջանալ չթողուլ իրրև 300 ամաց հայրենին դիւրաւ կորնչիլ. յայնժամ որ ինչ և ծագիցին ձեզ՝ ես անպարտ եմ։

Նա եթէ մշտապատրաստ (կեղծ) ստորագրութեամբ բանի մի անձանց ջանս ի կուրծ բերեալ հնարիցէք ստել զծանուցեալս ատի ձեզ, և կամ այլազգ վերծանել զգիտեալս ի սմին, զիտե պարտիք. ոչ միայն զհայթայթանս ձեր նանրայուցանելոցէք, այլ եւ ի վերքան զաղումս խոցելոցէք զիս. ուստի յուսալով եղբայրու-

ՀԱՅ-ԽՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ-ՍՍՌ
Մ. Մաշտոցի անվան
Ս. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

թեան ձեր, և զիս զրելով ձեր ամենեցուն շնորհապարտ։

Ի Կալկաթա. 1861. Ապրիլ 30։

(ձեռ.) Խաչակիր Տէր Յովհաննէս Խաչկեան։

Յ. Գ.—Տեսէք զհամառօտ կարգադրութիւն հանդուցեալ Պարոն Մանուկայ Զօրաբեան, տպեալ ի Կալկաթա, որում՝ թուի թէ, նախադէպ դոլով Սրբազանին զսեպհական ինչս իւր ի ցուցակ անցուցեալ յետ մուտ յԱթոռն գործելոյն. և ձեր անփոյթ զձերոց մնացեալ ցայս վայր։ Տէր Յ. Խ.

---

Թեղիր բարեկարգելոյ զրէմն Ամենափրկչի վանացրն Նոր Ջուղայի, ուղղեալ նոցն Աւագ երիցուն յ8 սեպտեմբերի 1861 ամի առ Ամենապատիւ Տէր Մատթէոս Կաթուղիկոսն։

Աստուածարեալ Քահանայապետի և Եռամեծար Բարձունապետի, Տեառն, Տեառն Մատթէոսի, Սրբազնակատար Կաթուղիկոսի և Դիտապետի Արարատեան Գրոհի Շնորհաբաշխ սուրբ աջոյն համբոյր պատկառանաց։

Ամենապատիւ Տէր

Զիեկէք ընդ ներկուստս օրինաց և աստուածաբանական

մակայութեանց զրուցելն դժուարին, բանի դժուա-
բագոյն՝ ասա ընդ նմա, որ ընդ իմաստիցն հանեալ՝
ի փորձ ունիցի զամեն հակադարձ փոփոխմունս վիճա-
կաց, ընդ որս և ի նժար հակայողութեան կշռադատել
թարց իրիք թերութեան զիրս ի չափս։

Բայց յորժամ յատուկ և անհասարակի ծնունդ մտա-
ցըն վեհազանց, և ճանաչումն նոցին զիրացն սեռք,
ի միոջէ զրազումս, և ի բազմաց զընդհանուրս, եւ մանա-
ւանդ նիւթք ոչ ի ձայնէ, այլ ի խորին զաղափարէ
նիւթոց արտադրին, այնպէս և դատումն նոցին ամենա-
բաւական, առ առարկողն բանից, որպէս Դատաւորք
ատենանիստք և փաստաբանք նորին իսկ թոյլտուու-
թեամբ տան և բաշխեն շնորհս խուժանին անվեհեր խօ-
սելոյ առաջի։

Յայս եղանակ ընտանի փորձոյ զօրացեալ ապիկարիս,
պատկառելի խոնարհութեամբ թոյլ խնդրեմ ի Ձերմէ
հզօր ատենէ, որպէսզի ընդ մտանելս խնդրով. ոչ ի շաղ-
փարք և անսաձոյ բանս հիւսուածոյ. այլ յիրաւունս
ներբին վերաբերել զՁերն հայրախնամ ուշադրութիւն.
և նովիմբ յօդել կարևորապէս զձիրս կենսատու խնամոց
Ձերոց ի նպաստակն, ուր հայի օգուտ ժողովրդեան միոյ
տարագրելոյ վշտոք անիրաւութեան, հարուածոյք ան-
հաւատից, ցկանոք անողորմից, և յաւուրս յայսոսիկ
տուայտանոք բարեկամաձև թշնամեաց տանն հաւա-
տացելոյ, բաջ յարմարեալ զոսկումն յերեսաց անար-
ժանութեանս կալոյ ի Ձերում սպասու գրաւոր վստա-
հութեամբ, ուր մնայ բայսմամբ անախորժ հետևանոք ի
ծանրապատում հոգս Ձեր ծանրաձալ, և օն անդր ճա-

պաղել զուրբ խորհուրդ Ձերյակամայս. բանզի գիտեմ զթանկագին ժամանակ Ձեր, գիտեմ զծանրութիւն ամենազգուարին վարանմանց մտաց Ձերոց առ յապաւումն աղաւաղանաց Այրամեանս տան, գիտեմ նաև զաղուութիւն պատուական ժամանակի Ձերոյ յումեքեանս ի հասումն յաւելորդաց. սակայն գիտեմ և զայս կարի քաջ, զի որ ծնաւն ի վիճակի շնորհաց՝ չունի չափթիլորչափ ծանրատաղտուկ ի նա տեղասցին, և այն զի՝ եթէ զՁերն երկնապարգեւ ձիրք հոգւոյ նախքան զոիրաբար ընկնումն ընդ ՁՈՎ ընդհանրական պարտուց աղգայնոց անխոնջ ջանիւ աշխատասիրէր զվիճակ ընութեան անդրափոխել, և զամենեսեան բարի մարդ և բարի քրիստոնեայ վերածնանիլ, որչափ նովիմբ զօրացեալ բազմայ զօրանան անդրէն ևս քան զևս համազգիք ընդզրգռմամբ մայրենի խնամոյ Մօրն Լուսոյ, կաթուղիկէ եկեղեցւոյ. ապա բանի՞ առաւելութեամբ այժմեանս ընդհանուր կոչմամբ Ձերով ի նոյն հոգ, ի նոյն խնամ սիրոյ և ի նոյն տեսչութիւն վերնաւաք, քաջալերէ նուաստութիւնս համարձակապէս աղաչել, յուսալով թէ և Ձերն Վեհութիւն ունի անսալ սիրով զհայրենեաց վիշտ, որ իրրև անհրաժեշտ պարտիք յիմ վերայ ժամանեալ տեսանի միջոցաւս այսուիկ։

Եւ թէպէտ առ ոտս ճարտարիմաստ բժշկի անպատեհ թէն է ճառումն մանրամասնապար զվեհանանց ախտի տարագրելոյ ուրուք; յորժամ յակնարկելն նորա զամկերևութիւն՝ զգայ զամենայն. սակայն մի՞ ունայնասցի յաւելուածս բանից, թէ որպէս բարեկենդանութիւն քաղաքի կամ ժողովրդեան միոյ կայանայ յակամակիտ

և ի սննդարար ջուրս աղբեր, նոյնպէս և ապականութիւն նոցին՝ յաղտաղտին լճոյ։—Այս ապրիւր տան մերոյ Զուղայու ի վաղ ժամանակաց հետէ և այսր ապականեալ ազգի ազգի անկարգութեամբ՝ չբաշխէ ծարաւելոց զառոջարարն կենաց. զի սոյն Զուղայ՝, որ երբեմն 24,000 ճոխ, փարթամ և ձեռնհաս տամբք գաղթականաց ազգիս, ընդ 24 հոյակապ եկեղեցեաց, աբանչելատեսիլ և ոսկերին պալատօք անխառն և անհաղորդ դրացի թշնամեաց, յըստորոտս լերան յայնկոյս Զանդարուտայ զուարճանայր պանծանօք, իբրև ունող ազգութեան, այսօր մերկացեալ յամենայն շքոյ, ըստ այրոյն սուգ ընդ գլուխն տարածեալ, իբրև տանեբուսքն կիսամայի եկեղեցեաց, 300 ստորանկեալ տամբք և ճառաղ աղբատիկ ժողովրդովք, ձեռն ի ծնօտի ողբոյ դառնապէս, և զարտնեղութիւն իւր դոգչիք եղերէ այսպէս։

Անծանօթք վիճակիս դառնութեան կարծեցին և կարծեն իրաւամբ, թէ նեռք անօրէնութեան Պարսից տեղացեալ յեմ վերայ խոցոտեցին զիս. սակայն և ես ասեմ. թէ յիմոց անտի ոչ սակաւ վէրք ինձ բացեալ սրտի, զի որդիք որովայնի իմոյ և ընտանիք տան, խաւարային և թանձրամած տգիտութամբ, չարահեռ նախանձու անիրաւութեան, դիւբախաբ խայծիւ սնապառութեան, խռովայոյզ ատելութեամբ, և չար քան զամենայն, սնապատիր և յեղյեղուկ առժամանակեայ փառասիրութեամբ, անկարգ, անկանոն, զեղխ և ապերասան արշաւանօք զվաստակն մայրենի երկանց առոտն կոխեցին, զըստացուածս անողորմից մատնեցին զշուք և զզարդս յերեսաց իմոց բարձին, եւ ի վերջոյ

այժմէն զոյիտակ համբաւ և զնչխարս վայելչութեան ան-
հետացուցանել կրրեն անողոքելի թշնամանօք , մանա-
ւանդ և որ զարհուրելին է՝ հոգևորականք իմ սոպրք պա-
տրուակաւ կրօնի և բռնաբարեալ փառաց հզօր մեքենայու-
ոչ ըստ օրինի Մելքիսեդեկին. այլ ըստ Ողիակոն դասու
պարչտօնէից արանց. զիս յամբովի խորասուզել խորհրդա-
ծեն, մին, իբրև տէր տերանց և միւսք, իբրև անձնապաշտ
արքանեակք Նորին համաձայն խիզախել յիս բռնանան .
զոր սակս անյուսացեալ , անճարացեալ և յամենից կա-
րեաց բարձի թողի լրեալ կարկառեմ զձեռս առնս . որ
երկնային շնորհօք , կրկնակրկին սուրբ ծննդեամբ վկա-
յեալ և անուանակոչեալ երդ կենաց և հաղարապետ խոր-
հրդոյն Աստուծոյ , մինչ տեսանեմ , և զրաղուկ Նորին
հզօր նախապատրաստ յընդունելութիւն ։

Արդ եթէ աշխարհի ծանուցեալ զիմանալին , զի՝
անհատոս անհաւատալի՝ թէ բազմաչեաց զիտողութիւն
Նորին սուրբ չունիցի հաշտ ակամբ և ինձ ակնարկել ,
և ներբին քննողութեամբ զարտաբին կեղծս խմայնոց
որոշել . և զարձաղանս նոցին օտար ի ստուգութիւն
անդրադարձել , ղտեսարանս ահարկու ի քաղցրութիւն
ամոքել , զբօղս սգոյ ի բաց փարատել , թաչկինակաւն
սուրբ ողորմութեան զարտօսր աչաց սրբել . և , եթէ
ոչ յառաջին շուք և ի վայելչութիւն իմ՝ գոնէ ի կարե-
ւորն այժմոյս ապաստան դարձուցանել . ուրեմն ո՞վ Դու
Նախամեծարդ Նահապետաց և Պետրոս հովուաց՝ տո՛ւր
զսկանդ ի պարզատանս , և զիրաւունդ ի դատս
ըստ Օրինադրողին հանուրց՝ թէ դատ արարէք այրոյն
և աղքատին

Սպաքէն մինչ սկիզբն կալայ անսովոր և անհասարակի խօսից, այո՛ եւ ոչ սակաւ տարակուսանք զինեալ ի բանս պաշարեն, թէ ո՞ր շաւիղ ամփոփ ընտրեցից անվնաս հոգւոյ իմոյ և հակառակորդաց ի շինութիւն և ի պահպանութիւն հայրենի տան իմոյ, մինչ ամենուրեք զդժուարութիւն գայթակղութեանց տեսանեմ և ոչ մի ինչ նշոյլ խաղաղութեան և բարեկարգութեան, բարեկարգութեան ասեմ, որ կամ չիք երբէք ծնեալ ի Պարսկաստան, ի Ջուղայ, և կամ չիք ուրուք իմացեալ ցայսմայր. բանդի վաստակեցան աչք յուսոյ մերոյ և չտեսին ինչ. ուրեմն բարեդոյն է ըստ խրատու Սուաբելոյն ասել. որ ինչ ճշմարտութեամբ է և ոչ ըստ Անձեւայսոյն ծածկել զդարշելիս, յորժամ ծածկութիւն ծնանի հրէշս և յարարէզս յերկրի, որչափ և Դուք Ձերով վկայեալ հանճարով և փորձիւ զիտէք. վասն որոյ ասացից պարզապէս. թէ ոչ ինչ ճշմարտութիւն ըստ արտայայտեալ ճառից ի վեր ելանէ ի Վանայ Սմենափրկչեան, զի յատուկ՝ արտաքին, և այլանդակ՝ ներքին, որ ահիւ, որ խորամանկութեամբ, որ սպառնալեօք, և որ համոզմամբ, կասելով զաչս երկիւղած, պարզամիտ և ստորանկեալ ժողովրդոյս, առնեն զոր արտաստուց են պէտք, և նոքօք իսկ առ արտաքինս վարագուրեն զգործսն, զերիվ զբարոյ, որպէս և ի հեռաւորս այնպէս տարփողեալ. սակայն չէ այնպէս. այլ թէ ողբալի յոյժ, յոյժ. զի նախագահն Տէր Սարտիրոս, որ ունի զԱթոռն և զՍուրբն ընդ բանամբ և Ջուղայ ողջոյն ընդ իշխանութեամբ, իբր ժողովրդապետ ինքնակարգ, և վարիչ մարմնաւոր իշխանութեան,

աղատ է ի կամն, սաստել, կապել, դանել, տուգանել, թողուլ և այլ բիւրազան չարիս անպակաս յարուցանել որ յայտնի և որ ծածուկ չնորհիւ Աստուծոյ, որ երբեմն թոյլ տուեալ և երկրպագու նմա եղեալ՝ մինչ այսօր դազանացեալ նորա չբաւի ունել զառաջս խըրոխտալոյ զԼթիւր վերայ. չէ՛ մինչ վնաս թէ յոգին վիժեսցէ զորովայնին զպտուղ, և թէ կործանէն անմեղաց հոգիք։

Երկրորդն ասի Տէր Բարսեղ, հեղինակ ամենայն ստութեանց և պետ պատասխանատու ի ժողովրդեան, ոչ պակաս քան զառաջինն հեղեալ զչարիս ի հասարակութեան տեղւոյն զորութեամբ և թողտութեամբ Աստուծոյ իսկ։ — Երրորդն խան ի Միրզայ Յ. Թաղէոս, անուանեալն, Աստենադպիր Վանայն (աներորդի նորին Տէր Մարտիրոսի), որ նախ քան զմուտս Աստուծոյ ի Ջուղայ՝ կարօտ օրական սիտոյից, և այժմ ի ժամուս վաճառական մեծ ի Թէհրան և ի Դաւրէժ, մեծամեծս, ասեն, վճարէ զորոս չնորհիւ Ամենափրկչեան Վանայ. (թողում զաներևոյթն ըստ փկայելոյ բազմայ. թէ Աստուծոյն ևս ծածուկ գործակից է նմա.) և ոչ այսչափ միայն, այլ և երկիցս ի տարեաց զգենու զանձամբ մեծագին չուխայ սպարգևեալ ի Վանայ կամ ՅԱստուծոյնէն. այլ որն և միայն, զինչան ունի կրել խղճալի ժողովուրդն, ոչ այնչ կրեալ է միշտ։

Զորրորդն ճանաչի Ղազար՝ երբեմն ծառայ և զարդիս խորհրդական Աստուծոյն, որ ի մտանելն ի Ջուղայ, ըստ փկայելոյ բազմայ, բոկոտն, այսօր իրրև գոհարավաճառ և տկանաւոր վաճառական, նաև 1,000 թուման

մարդկաւ փոխատու Վանայն։ Ահա՛ այսորիկ ընդ զլխաւորին համախորհուրդ, իւրաքանչիւր որ վասն օգտի իւրոյ չիններլով զվնաս եղբօրն, ի մի վայր ժողովեալ, ըստ քանց ասեն, լեն, խորհն, տնօրինեն և անուամբ Աստուծոյ զինքեալ զամեն ծանրութիւն և վնաս բառնան ի վերայ Վանայց և ժողովրդեան. հուսկ ապա կոչեալ զարտաքին քահանայս և ժողովուրդն առաջի ասեն նոցա զինդիրն, և այլ ընդ այլով դարձուցեալ գրանն, տալեն զնոսա ի ձեռաղրութիւն, թէ հաշիւք իցեն և թէ այլ ինչ. և ողորմելիքն այնորիկ առահի, թարց ընթերցման կամ ծանօթութեան խաստիցն սնուցուն զ ստրագրեալ սրտաբս ի վանայց գնան. ապա յանծանօթս միմանց հարցարանեն թէ զինչ արդեօք խնստ ստորագրեալ թղթոցն. ահա՛ սովիմբ խնստաստրելի է ողբալի վիճակ տառապեալ ժողովրդեանն և ներգործութիւն իրաւանց հոգեորականաց տեղոյն, որք առաւել բան զԱիրակուսայ Հռոմայեցւոյ բռնաւորի բարբարոսութիւնն ի տարաբախտ ժողովուրդն և հպատակն արծարծէ, որպէս ոչ միայն զրիչքի Ջուղայու զողալով գրեն. այլ և անպակաս եկողք անտի, իբրև կենդանի պատմագիրք, մի առմի հառաչանօք պատմեն. և այսպէս գայթակղութիւնք ի ժողովուրդս Հնդկաստանի անպակաս մնան. և իմ ըստ կարեւոյն լսելով, և առ հարկի սարտաւորութեան ստելով գնամ։

Եկեսցո՛ւք այժմ ի պատճառ սոսկալեացս, թէ ընդ՞ի՞նչ առիթ ցայս վայր եղելութեանցս. նախ՝ անիրաւ օրէնք Պարսից, ըստ որոյ միշտ կեղեքմամբ զՀզորին

կողմն պաշտեն և զանկարողն առ ոտն ճնշեն, թե զբնական անսիրելութիւն և անհամաձայնութիւն մի բաղնիկից տեղւոյն ի սկզբանէ անտի։ Երկրորդ՝ ոչ այն քան ի չքաւորութենէ գոյից և կարեաց ժողովրդոց, որ քան ի բուռն սովէ տգիտութեանց նոցին, յորս եթէ յարիցէ խմաստակ ոք յոտն հասարակ հասկացողութեան և խորամանկութեամբ խարդաւանեսցէ զամենեսեան ի կեղծիսն. զնան և նոքա զկնի զոգջիք երկրպագութեամբ, որպէս ի հնումն, յութներորդ դարու Աղաբերտ ի Գաղղիա նախապաշարեալ ժողովրդով հաստատեալ թէ հրեշտակ երկնաւոր բերեալ առ ինքն նշխարս ազգի տղի սրբոյ առ ի ընդունիլ նոքօք Աստուծոյ զոր ինչ և խնդրիցեն, և սովիմբ խաբերայութեամբ զեղնդունս և զհերան բաշխեալ նոցա ի պահել առ իւրեանս իբրև նշխար Սրբոյն Պետրոսի։ Սապէս և ի նորումն այժմիկ Տէր Մարտիրոս պիտակ իմաստութեամբ խորամանկ բարուց և օգնականութեամբ ճոխ ընտանեաց և իվեր քան զամենեսեան ամենասատիւ մեծարանօք Առաջնորդին դերմարդկային կերպարանափոխեալ ի Ջուղայ, և զսինկիրոս ժողովրդեան թագին ի կողմն իւր յանկուցեալ, ըստ առասպելեալ փիւնկին, կարծէ զինքն զոլ Եղիա. և այսպէս ընդվզեալ հպարտութեամբն մեծ բան զԵպիսկոպոսն զանձն համարելով, ճամարտակէ թէ չիք ոք մեծ բան զինքն, և չիք ոք սանձահար անօրինակ լրութեանցն. և իրօք այսպէս. յորժամ Առաջնորդն ի սկզբանէ անտի մտին իւրոյ ի Ջուղայ, զթագին պատիւ առաթուր նորին զանձեալ, և անհասաբակի պատուով զնա չաստուածացուցեալ ի

ժողովուրդն, թէ չէր ի համարէն քահանայս նախա-
մեծար բան զնա, ուստի և է նա հարազատ, սիրելի և
մի միայն հաւատարիմ ասպնջական իւր, մինչ յաւել
ի զիլոց, աչր, ականջ, լեալն, լեզու, կամք, խոր-
հուրդ և անձն հաւասար անձին զնա զրոչմեալ, և ոչ
այսչափ միայն, այլ և ազգի ազգի ծանրագին փառօք
և պարգևօք զնա յարգեալ եւ Աւագ երէց համայն Քա-
հանայից Զուղայու հաստատեալ, եւ զողջոյն Զուղայ
առ ոտն Նորին խոնարհեցուցեալ. մինչ ի վերջոյ այսօր
խոնարհեալ եւ ինքն չգտանէ զելս հնարիւ յինքն ամ-
փոփելոյ զդիւրավառառն պատիւ աստիճանին եպիսկո-
պոսութեան, որչափ ձևայուցանէ հրամանն ընդդէմ
հրամանի առ չհաս ամուսնութիւն զատեր Նորին Տէր
Մարտիրոսի, և Նորին ապատամբութիւնն ներհակ
հրամանի զլխաւորին։

Երրորդ՝ զրաղմայի զլխաւորաց մերոց եպիսկոպոսաց
ասեմ, որոց ի բացակայս յանձն լինին տեսչութիւնք
փեռեկտեալ հօտին, մանաւանդ մետրապոլտութիւն
վիճակաց, զի որչափ ժիր և արի ի կեղեքման, այնքան
և անծանօթ ցաւոց հօտին, և անարի ի կերել կառավա-
րութեան ողորմելի ժողովրդեանն, զի զառաջին պատ-
ուաբաղդ և ընչասէր բաղձանս զնեն ի նպատակ կու-
րութեան մտաց և ի ջանս, ոչ ըստ Աւարանին զարդա-
րելոյ զթիթեղն վակասի զոհարբր ազդասիրութեան և
տկամբք պատուականաբ օրինասահութեան. այլ վա-
ռելոյ զլանջս խրեանց պատուանշանաբ և շրջ զո-
րութեան մեծի, առ ի յաչս ստորադրելոյն ահարիւ և
անմատչելի, իբրեւ հրաբուղխ լեառն, երեալ. ուստի

և յայս պարտաւորին յանթատակն համոզել զտեղա-
ծանօթ զանձինս նմանեալս ինքեանց առ ի հասանիլ
նորօք փափագանաց ներքին, չիմանալով բնաւին թէ
մինչ ինքեանք անծանօթաբար նորօք ի նպատակ ծա-
նօթութեան ժամանիցեն, նոքա ծանօթութեամն
տեղական ի հորիզոն անդր անցանելոց են, զսերն ին-
քեանց, և զչիճուկն նոցա թողլով. նաև թէ որքան
անկոպար դանձք պիտին առ վճար զեղև խորհրդածելոց
բաժանելք ի թիկանց խղճալի ժողովրդեան. և չիք հոգ
թէ ժողովուրդն ի բառակուսէ տանջեալ մաշիցի. ահա
այսօրինակ մոլորութեամբ վտանգաւորի անարատ եկե-
ղեցին Քրիստոսի. և հարատահարեալ կործանի Աղգու-
թիւնն։ Յետ որոյ եթէ թէմական՝ խորագէտ, որպէս
Յովհաննէս Եպիսկոպոսն Փուրդ մականուանեալ (այս
այն այր է, որ յետ կաթուղիկոսութեան Յովհաննու
Կարբեցւոյ հրեշտակ և աւետարանիչ խաղաղութեան
պատգամաւորեցաւ ի Պոլիս, որոյ և ի տրիտուր յանձն
եղեալ Աւաջնորդութիւն Ջուղայու Վանայ), ոչ անա-
զան խոնարհեցուցանէ և զկարապետս իւր ի լուծ հաս-
տատութեան, և մեայ ինքն միայն անկախ յումեքէ,
կամ Աւաջնորդ ըստ օրինի, (որ յանհնարեայ է ասել)
և կամ միահեծան բռնաւոր ի վատարախտ ժողովուրդն.
իսկ եթէ ոչ ըստ նարդենոյս խաղալիկ մատանց խոր-
հրդականաց, ինքն ի մի կողմէ և հմանխոհք իւր ի միւս
կողմէ լեալ պատուհաս անոյժ և անկարող ժողովրդեան,
զերթ անցաղ տգրկի, ծծեն զարիւն նոցա, որքան
այժմէն իսկ։

Իսկ խոչընդոտն վերջին է իմանալ զանղուսալ և զան-

հասարակի կենցաղավարութիւն նոցին Եպիսկոպոսացրն ոչ ըստ օրինի հովուաց եւ հովուապետաց եկեղեցւոյ. այլ, զօրէն արքունական իշխանաւորաց, մեծագինս զգենլով զգեստս ներանոր, ծանրագինս կազմելով զարդս սենեկաց, բեհեղեայս յօրինելով սփռոցս, անկողինս և վերմակս, ըստնարձակս յարդարելով սեղան ոսկեզօծ, նոր և թափանցիկ յախճապակեօք, համադամ կերակրովք, ազգի ազգի անուշահամ ըմպելեօք, բազմազգի պտղովք և քաղցրաւենեօք և այլ արքայավայել հանդիսօք, նստարանս և բնարանս ոսկիազեօք և ազնիւ կերպասիւ յօրինելով, բազումս հաճելով ունիլ ի սպասու ծառայս մարդազգեստ, զարդարուն և ոսկեթել դլխարկօք, զընտիրս ընտիրս ձիոց պատուական տարօք ի սկիզս ճոճելոյ հանդերձ համախոհիւք ի զբօսանս, արծաթ՝ ի տեղի պղնձոյ, և ոսկի՝ արուրի, շախաղեալ ընդ տղմով մնափառութեան. միով ասացից. բանան տեղի արշաւանաց, որոյ նմանն ոչ ի տուրբ Գիրս և ոչ ի պատմութիւնս եկեղեցւոյ տեսանի նկարագրեալ. և ոչ Եղիմաածին կամ Երուսաղէմ երաղեալ են անդամ, յոր ներհակ եթէ բացցէ ոք բերան. վա՛յ ի զլուխն. փալուան Յօսէն տառուղոյ. փայտ, գան, ծեծ, բանտ և տուգանք. ահա՛ եղջիւր հաստատութեան ազգին։

Ընդ այս ել և էջս ասպարիզի շահատակութեան, անչուշտ, պահանջի և նպաստաւորութիւն ի տեղական կառավարութենէ տանն Պարսից, զոր չէ հնար առանց մեծի կաշառատուութեան ի ձեռս բերել, որով և կապել զաչս իշխանաւորաց տեղւոյն. ուստի և յատուկ փոան այսր պիտոյանան անկոպար գանձ և անսպառ

ապրիլը բղխողը ոսկւոյ ի կազդուրել զամենայնս, այլ չասի թէ յոր կալէ և յոր հնձանէ արդեօք, քան թէ յաղբատիկ, յանգործ, յանաշխատ և յանկարող ժողովրդոց երեկոյացեալ դարուս, որք ի նեղ անկեալ ստ և անդ թափառմամբ կործանին. և դերդաստանք նոցին, իբրև պատանդք պարտատերաց, մաշին անհնարին տուայտանօք։ Ահա այսգոյն դժբախտութեան ենթարկեալ վիճակ Ջուղայու, չգտանէ ճարակ ազատութեան. և Վանքն միշտ հազար թուման պարտուք ծիսոյ, ընդդէմ դեղուն և առատ մոլոյն. քանզի ոչ միայն ընդ իշխանութեամբ ունի կալուածս բաւական, որ բաւէ ի կառավարել լոկ զԱթոռն. այլ և ունի թէմս և վիճակս բազում, սկսեալ ի մերձակայ գիւղօրէից սահմանացն մինչ ցՀնդկաստան յայնկոյս Գանգէսի։ Հարց ապա զինչ առիթ սեանց տաճարին Աստուծոյ չլինելոյ ոսկեձոյլ. մինչ պատասխանիցի թէ, ըստ աղանդոյն մուտ և տեսի, չլինի բանիւ բացայայտել քան ասել մուտ և տես։

Յախտէ փառամոլութեան և ագահութեան ամենայն հնարք կեղեքանաց և անիրաւութեանց ի վեր ելանեն, մինչ անգամ ապշեցուցեալ զմիտս և զհիշող հեղինակաց՝ տան մոռանալ զԱստուած և զահաւոր դատաստան նորա. ուրեմն կարդալի է վայ ի գլուխ բարբարին, ուր դատաւորն է ագահ և փառամոլ, թէև նոյն ինքն դատաւորն, ըստ առասպելեալն Մետիւսայ ոսկեսիրի, ունի սովալլուկ խորասուզել ի տարտարոսն յաւիտենական։ —Ապա օգուտն ի՞նչ, յորժամ ասի վայտ հատեալ ի պէտս լուցման, բայց մինչ ցմոխրանալն զմէջ

և զթիկունս բազմաց ունի գանիւ խորտակել. որչափ և օրինակն պարզապէս յաչխարհի, և փորձն վարակեալ ի բազում մարդիկ. ուստի թողլով մեր զայս ամենայն հետևիցուք հնարաւորին, որ կարիցէ թերևս օգտել մեզ խիր:

Արդարև որպէս ի սկզբան գրութեանս, նոյնպէս և ցվախման չունէի և չունիմ առիթ ընդ կրիւք մուծանելոյ զբանս. այլ թէ ազգային կարեկցութեամբ և որդիական պարտաւորութեամբ զվիշտս հայրենւոյն խնդ ի կարեկցութիւն Ձեր ողբալ. զի ոչ միայն բուն Ջուղայեցի եմ (թէև հարուստ մասն ժամանակի կենացս յօտարութեան մաշեալ, որպէս 18 ամք անմիջապէս աստ) այլև բազմօք մտադիր լեալ եմ բնաձիր բարուց Ե՞ պիսկոպոսաց կողմանցդ, սկսեալ ի Խաչատրոյ Աղալ Նորդէն Գեանջայոյ, որ ի 1832 ամի Նուիրակ Հնդկաստանի հաստատեալ և վախճանեալ անհաղորդ ի Մաղրաս: — Ի Պօղոսէ, նոյնգունակ ընտրեցելոյն Նուիրակ Հնդկաստանի ի 1838 ամի: — Ի Խաչատրոյ երկրորդէ, որ յառաջնորդութենէ Սարկեր քաղաքի, ի նմին թուականի յառաջնորդութիւն Ջուղայու փոխադրեալ: — Ի Յովհաննէ Սուրենեան, որ յամի 1841 յառաջնորդութիւն բայամեկնեալ նախորդին Խաչատրոյ Ջուղայու ՅԱԹՈՌն ընտրեալ: — Եւ յարդեանս առաջնորդէ իսկ, որում թէպէտ, ըստ անցելոյն չեմ ակնատես. սակայն երկարամեայ յառաջ թղթակցութեամբ, որպէս գործակատար իւր, ի Հնդկաստան, և բազում նշանաւոր ի դիպօք զսա քան զամենեսեան քաջ ճանաչեմ. և չկարեմ ի խիղճս սրամախոհել թէ գտեալ եմ զոր

ըստ օրինի եպիսկոպոս և լրումն եկեղեցւոյ, թէև անարժանս, զուսածեալ մեղօք առաւել քան զամենեսեան պաշտօնեայս եկեղեցւոյ, դերան յաչս, ի շիւղ ուրուք մերձենալ մեղանչեմ։ — Ոստի զհետ դայ կարծել, որպէս և լսեմք ի յոգունս, զժուարին է ակն ունիլ ի ժամանակիս լուսոմունի. այր սակս չաղաչեմք և չասեմք թէ ի բաց հանէք զայժմեան Աղաչնորդն ի թէմէն Ջուղայու, յորժամ փորձիս զիտեմք զամենեսեան ի մի կարգի ընաւորութեան. և զուցէ փոխանորդ նորին ևս առաւել անբարեբաստն, յորժամ և բանի մի բարւոք արտարին բարեկարգութիւնք սորին և օգնականութիւն յեկեղեցիս և ի ժողովուրդս տեղւոյն տեսանին, և մանաւանդ, եթէ փառամոլութեան և ագահութեան ախտ չէր սա ընդ հոգւոյն պատուաստեալ, առաւելբան զամենայն անցեալ սթոռակալսն տօնելի լինելոց էր և պաշտելի յերիվուղած ժողովրդեանն Պարսկաստանի, որչափ ընդ հակամէտն ինքնին կորուսեալ զյարդ և զվարկ իւր ցոյս ատոիման. և յորժամ այսպէս մարդկօրէն տկարութեամբ առ ամենեսին մերձաւոր՝ չլինի ասել ինչ, բան զառաջս ունել աւելի վնասուց, թէ յոգուտ ներկայիս և թէ ապագայիս յաջորդացն (եթէ երկարեսցի կեանք Ջուղայու). և որոյ հնարն ոչ այլ ինչ խնամամբան զարկանելն Ձեր զնա ընդ բնութեամբ, ոչ հարցանկան դրութեամբ, յորժամ հասարակութիւնն, իբրև ատրուկ դերեալ, չէ յաղատ կամս իւր. այլ անմոռանջ ատորագրի, զոր ինչ առաջի առնեն նոցա, միայն անաչառ և արդարակրօտ անձն մի որոշեալ որ զարդարութիւնն չիցէ սովոր փոխանակել ընդ հաղար ոսկւոյ կա-

չառոյ, առաքել անդ ի քննել և կարգաւորել զամենեսեան։ և տալա շնորհ արարեալ կանոն մի վասն կառավարութեան տեղւոյն, գրաւոր ցոմնկով հաստատել։ և այսպէս զամենայն ոք յաստիճան իւր անդրադարձեալ յուղղութիւն. զի իւրաքանչիւր որ զիւրոյ արձակութեան չափ իմացեալ. այլ ոչ ևս բան ոչչափ վերմակին ձգել կարիցէ զոան։ Ասա թէ ծագիցին ուղղութիւնք և արդարութիւն յօգուտ հասարակաց, և Աստուած ի վեր յերկինս փառաւորի. որպէս երբեմն Հնդկաստան նեղասրտեալ յոյժ, տալագրեալ տետրակաւն սակաւաթերթ Ջանայ բարեկարգութիւն ինչ յԱթոռն Ջուղայու մուծանել. սակայն ընդդէմ զոլով սանձարձակ կամայ Աթոռայնոցն՝ յումեքէս դասեցաւ, որպէս օրինակ մի ասացելոյ տալագրութեան ընդ ամին ի տեսութիւն Ձեր ընծայեմ. և չիք հնար այլոգդ մուծանելոյ անդ զկարգադրութիւն բան Ձերով հզօր արտօնութեամբ։

Եւ երանի՛ թէ ի Ձերում տօնելի կարգադրութեան դրոշմիցէք և սաստիկ հրաման չձեռնադրել զոր յանուսից և յանհրահանդելոյ աղգի աղգի բարոյական մակացութեանց ի քահանայութիւն, որպէս եթէ զքահանայս Ջուղայու ի մի վայր ժողովեալ արկանիցէք ընդ բընութեամբ, մեծ մասն, ըստ իս, անբաւական լոկ անսխալ վերծանութեան, թող թէ բանալոց զնկարագրական կամ զխորհրդական մեկնութիւն նոցին. և վասն այսր իսկ պատճառի դերեալ յոտս մոյ իմաստակի, որ վառէ հուր ցասման անգամ ի գլուխ մեծաւորին։ Ահա այս է վիճակ հոգևորականաց մերոյ ի Ջուղայ, որք թանձրամած տգիտութեամբ ոտք ընդ գլխով և գլուխ

ընդ ոտիւք ճասպաղեալ, չմարթանան չինել կամանա-
բատ պահել զանարատ եկեղեցին Քրիստոսի։ զի մին
օգնականութեամբ հղօր միջնորդաց, և միւսն զօրու-
թեամբ ոսկւոյ կապեն զաչս իրաւանց եւ պատուոյ
Եպիսկոպոսին, և զձրի շնորհս Սրբոյ Հոգւոյն վարձեալ
պատրուակաւ կրօնի, զանշնարին հեղուն զչարիս. ոչ
տուողն և ոչ ստացողք շնորհացն իմանան ինչ, որպէս
արդի առաջնորդաւ պատահեալ բաղմօք, և ի նորումս
եր կոչումբք անարժանօք՝ աներորդեալ եւ բարեկա-
մաւ նորին Տէր Մարտիրոսի, մին՝ անուսումն եւ չորա-
գլուխ քան զտրմուղ Ջորի, Աբրահամ անուն Տէր Կիւ-
րեղ վերակոչեալ, եւ միւսն՝ ըիրտ և կատակարկու
բաղմաց, Ստեփաննոս մականուանեալն Վիմս, Տէր
Եփրեմ առաջնեալ, (որոյ մականունն չատուած ծաղ-
բածութեան բաւէ վկայել զարժանաւորութենէ նորա)։
և մի՛թէ եղանակ բահանայանալոյ նորին Տէր Մարտի-
րոսի օտար յողբալի օրինակէս, յորժամ դաղտ
ի հասարակութենէ, արտաքոյ Վանայն ընդ գիշերայն
ներկեցաւ իբր բահանայ։ ոյր վասն Սուրենեանն յետ
մուտ յաթոռն զործելոյ, զնա ընդ ընկերացն կարգա-
լոյծ առնել ստիպէր, և առնելոցէր իսկ, եթէ պաշտ-
պանութիւն և բարեխօսութիւն ապիկար զրչիս յա-
տենի նորին չունիցէր պատիւ ի ժամուն։ Ո՛հ, զինչ
յաւելից զանարժանեացս ի վիշտ, քան թէ երանելոյց
զժամն, յորում ըստ լինի ճշդիւ բարձումն սիմոնակա-
նութեան յեկեղեցւոյ. այն է զրամով վաճառումն
անգին շնորհաց Հոգւոյն Սրբոյ, և կամ սաստկագոյն
նզովիւք ցանկապատեալ զմիջոց անխտիր ձեռնադրու-

թեան բահանայից, առանց կանոնաւոր քննութեան զկը-
զերն վարուք, բարուք, հաւատով, ուսմամբ բարոյական
և աղգի աղգի կարևոր մակացութեամբ. և մինչ այս չիցէ.
չունի դաղարիլ երերումն եկեղեցւոյ և աղգութեանս.
ահա անհասուն խմացուածք իմ այսչափ է։

Յետ գրուածոցս ցայս վայր, բան իմն հաւանական
խելայ եկն ի կարծիս. զի կարևոր է Ձեր երկուանալ
ի հաւատիս, թէ անձնաւոր ինչ կրիւք յօդեալ իցեմ
զգրութիւնս զայս ընդդէմ վկայեալ մետրապօլտի ու-
րուք. և այսպէս խնդիրս մնասցէ թարմատար. ուստի
առ ի բաց բառնալ զայն յիսկութեանց, չգտանեմ
զայլ ելանակ ապահովագոյն, բան կցել ընդ սմա զտպա-
գրեալ անցս հասարակութեան ժողովոյ մերազնէից քա-
ղաքիս, որք բաղմօք յառաջ խորհրդածէին գրել այդր
Սրբազան Սիմեհոդոսին և ի բաց պատասխանել զնա
ի Վանայ Ջուղայու, որպէս եւ ի նոյն իսկ վայրկենի
եթէ խնդիր նուաստութեանս չիցէր միջնորդեալ, ան-
շուշտ ի վաղուց հետէ լինելոց էր անարդարար, որ ի ժա-
մուս կարծի լինել պատուով և լռելեայն. թէ և այժմէն
ներքինք ժողովրդեանս չեն առ նա սուրբ (որ վասն և
չյօժարիմ արտաքս ի լոյս հրատարակել զառաջիկայ խնդրոյս
զի մի աջուձախ բանիւք ներհակ կամացս յաւելցին
ինչ ինչ ի հանդերձանս ամենի յանպատուութիւն
նորին). թողում և զհաղարաւոր ապացոյցս լինելոց իմ
առ մի միայն ախոյեան նորա ընդդէմ բաղմաց՝ (չիշ-
խեմ ասել թէ ընդ այս բամբասեալ ևս եմ յամանց). և
որպէս մինչ ցսերկեանս օր պահպանեալեմ զնա ի փոր-
ձանաց անպատուութեան, նոյնպէս և ցվերջին կէտս պա-

հելոցեմ զուխտն իմ առ նա ի սրտէ զի ես շատ շնորհա-
պարտ եմ նմա, յորժամ նա արարեալ է զանարժանու-
թիւն իմ խաչակիր պարգևօք հոգելոյս Ներսիսի Կա-
թուղիկոսի. նա արարեալ է զիս Աստուած չթանչանալ
օրհնեալ Տէրութեանն Ռուսաց, թէև իրաւունք ասի
ինձ ի վերայ բազմամեայ մեծամեծ աշխատանաց, որ
յատուկ վանն Վանայ, և որ վանն հասարակութեանն
Ջուղայու, նաև որ վանն երկարամեայ հաստատիմ
սպասաւորութեանս ի պաշտօն եկեղեցւոյ. սակայն
ինչ որ է, ճանաչեմ զնա յատուկ բարերար և բարեկամ
իմ. ուստի և մինչ ցայս վայր ոչինչ եղանակաւ խոս-
եալեմ զսիրտ նորա, մանաւանդ ընդդէմ երբեմնական
անտեղի խոսելոյն զիս բանիւք և թշնամանօք նոցին,
զորս ինքն հարազատ բարեկամն կարդայր, եւ սերիեանս
թշնամիս ինքեան դատանէ անողոքելի դիմադրութեամբ.
և որ ի վախճանի բաջ իրազգայ լեալ անմեղութեան իմ
և պատրման իւր՝ ընդ իմանալեաւ զոգէ՛ք յետս կոչե-
լով զմնասն ետ ինձ իրաւունս դատին. և որ զարմանալի
թուի բնութեան. զժամանակն թանձրացեալ բանակուիլ
լինելոյ մեր ընդ իրեարս, թարց մարգարէանալոյ զկա-
տարածէն, ի նմին դիպահոլ յանդիման կացեալ ժողո-
վոյն ասացելոյ ի վեր, պահպանեցի զպատիւ Նորին ի ցոյց
անոխակալութեան եւ սիրոյս առ նա։

Եւ չէր իսկ բնաւ կարևոր գրութիւնս, եթէ շրջահա-
յեցողութիւնք ճարասպաւ զիս ոչ ստիպէին, քանզի
Նոր իմն չէ սկսուած աղաղակիս. այլ ի վաղուց հետէ եւ
այսր։ Վկայ բանիս հաստատիմ՝ ամօր ինչ յառաջ
հրատարակութիւնն Արշալոյս օրագրի, հաղորդեալն

յոմանց մերազնէից Բթաւոյ քաղաքի, իբր պաշտպանութիւն Աստուծոյ առ հակառակսն համբաւ. յոյր ընդդէմ բազմիցս որդիաբար գուշակեալ եմ ասել գրութեամբ առ ինքն և ջանացեալ եմ մի կամ միւս կերպ չլինիլ, զոր տեղի ընկալնու այժմ։ Յապացոյց բանիս ծրարել հաճիմ ի սմա զօրինակս գրութեանց իմոց առ քահանայս և աշխարհականս ոմանս ի Ջուղայ վերաբերեալ յայս իսկ խնդիր. բայց զկնի նորին մինչ քահանայք և աշխարհականք ոմանք նորոգ եկեալ ի Ջուղայէ զանհնարինս վկայեն, և օր ըստ օրէ առաւելութիւնք անկերպութեանց, որպէս զիսկական գրութիւն քահանային առ իս, պարունակեմ ի սմին, ճարտարհատ եւ յուսահատ եղեալ՝ խիղճ իմ կտտէ զիս և չթողու այլ ժուժկալել, մանաւանդ մինչ ստուգեալ հաւատի գտանեմ զամեն վրիպանս տեղւոյն. եւ դուցէ այլ սակաւիկ մի թոյլտուութեամբ Տէր Մարտիրոսն ի սպառ լափեսցէ զՋուղայ Աստուծոյն հանդերձ, յորժամ ըստ երևութին Աստուծոյն իսկ նախապաշարեալ չգըտանէ կամ չկարէ խոնարհեցուցանել զնա, եւ որ չար քան զամեն, ոչ երկար զանձն նորա յիմանալի վտանգէ ոստոյսայն իմանամ. գուցէ և այժմ իրօք տեղի առեալ իցեն կանխասացութեանս ներգործմունք լուսեղէնն և անձայն։ Եթէ ոչ, զինչ շահ ինձ տխուր եւ ցաւալի յաշխատանս, զի ոչ ի Ջուղայ գնացող եմ, և ոչ Ջուղայու Վանայ Աստուծոյ թաքուցեալ ունիմ։ Եւ եթէ եպիսկոպոսութեան ցանկալի, իբրև 12 ամաւ յառաջ, յորժամ հաւարակութիւն կողմանս առաջադրեցին խնդրուածով եւ մեծամեծ ուխտս վասն Աստուծոյ

փրկչեան Վանայ յայնժամ ունէի յանձն առնուլ եւ գալ յերկրպագութիւն Սրբոյ Սիոնիդ, եւ այն՝ ի ժամանակի երիտասարդութեան, եւ ոչ յաւուրս յայսոսիկ, յորս ախտակրեալ՝ գայթ ի գայթ մահու ակն ունիմ. ուստի եղբակցութիւն բանիս լեցի կնքել. թէ զոր գրեցի՝ ի սուրբ սրտէ եւ աղգասիրական հոգւով մի՛ ընդ այլ և այլ տնօրինեացի խորհուրդ, մանաւանդ կարդացեալ է վայ որ զլոյսն՝ խաւար եւ զխաւարն՝ լոյս յեղաշրջիցէ։

Ըղձալի էր նուաստութեանս համառօտել Զեզ զանոյս վիճակս արդի Հնդկաստանի ի տեղեկութիւն, որպէս ի 1855. Յունիսի 1 թուականս Ծանուցեալնէի Հոգելոյս Նախորդին Զերում. սակայն եկաւորութիւն Շնորհաւերճ Պարոն Միրայէլի Նալբանդեան ի կողմանս հաւատի առնէ, որ ի վերադառնալն աստի, կենդանական ձայնիւ հաղորդելոց է Զեզ զամենայն. ուստի զնպատակաւս այսուիկ զանց արարեալ, զմիոջէ եւ եթ աղաչաւոր լինիմ, թէ արդի Հնդկա-Հայք ի նախնեաց տարբերին յոյժ. զի տկար ջերմեռանդութիւնն արդի դժուարաւ հպատակէ առանդութեանց և ծիսական արարողութեանց եկեղեցւոյ. որ սակս խնդրէ եւ կարօտի ընդհանուր կանոնագրոց, որոց արտաքրեն չէ արտօնութիւն ուրուք քան թէ Զերդ Սուրբ Օծութեան. եւ այս՝ կարի վայելուչ ի դարուս ամենուրեք և յամենայն եկեղեցիս, յորժամ աղաւաղ և ոչ միօրինակ ընթանան մատակարարութիւնք օրինաց. որպէս, օրինակի աղագաւ, սաեմ զամուսնական իրաւունս. զի ի թէմակալ Ա.ռաջնորդաց ոմանց, ըստ հնոյ օրինաց, չորս աղգք միայն խտրին. և յոմանց (որպէս Ա.ռաջնոր-

զրն մեր) եօթն աղգք հանդերձ խնամութեամբ, որ և զչհաս նոցա հոգեւոր տուգանօք մերձաւորէ, որ էյայտնի կռապաշտութիւն։—Նա ի մասին անապաչաւ և անհաղորդ մեռելոց ոմանք խստիւ ոչ միայն զթաղումն արգելուն, այլ անգամ հայր մեր ասելն ի գերեզմանի վերայ, և ոմանք զայլազգի Քրիստոնեայս, անկեալս բնական մահուամբ, կամ անբնական պատերազմաւ, մեծ հանդիսիւ յուղարկաւորութեան և պատարագաւ խակաման ձեռամբ ի հող ամփոփեն, բազում անգամ էս ի վանս և յաթոռս իւրեանց, որպէս ականատես եղեալ եմ ի Ջուղայ, եւ լուեալ եմ այդի ի Սուրբ Էջմիածնէդ ուր ասի թաղեալ կայ դի Դեսպանին Անգլիացւոց, որ ի Պարսից անդրափոխեալ ի չիրիմ։ Թողում զօրէնս մեռոնի և դիրաւունս կնքահայրութեան, զոր Հոգելոյս Եկիրեմ, Հայրապետն մեր, կոնդակաւ տայ առնչութիւն արեանառուին. և ոմանք յառաջնորդաց մերոց տան լուկ անխակ երաշխաւորութիւն նորածնելոյն։

Արդ խնդրի հարցանել թէ՝ պաշտօնեայք եկեղեցւոյ ո՞մ հաւատան, և ո՞րն կալնուն օրինակ ուղիղ վարչութեան քան կուրօրէն խարխափին ի կամաց ի կամս, և ի հանոյից ի հանոյս յանչքութիւն եկեղեցւոյ ի զայթակղութիւն Ազգին և ի վիշտ պաշտօնատարաց իսկ։ Նաև զարմացումն իմ ընդ այս ոչ սակաւ. թէ զիարդ Երջանիկ Հայրապետք մեր Ամենայն Եկեղեցւոյ, այսպիսւոյ ընդհանուր պակասութեան մտադիր չէն եղեալ, որ նախատինս մեծ և վնաս ի մեզ ծնանի ի ժամանակիս այսմիկ. զինչ օգուտ աշխարհի և աղգի հասարակութեան եթէ ուրեք ուրեք յանկիւնս վանօրէից և Առաջնոր-

դարանաց փոչոտին ձեռագիրք կանոնաց. հի՛մ ոչ տպագրեալ բաժանին յազգի մերում առ ի գիտել ամենեցուն զօրէնս, սահմանս և զչափ աստիճանի հրամանաց թոյլտուութեան կամ արգելման, որ քան զամեն գիտելիս հարկաւորագոյն է և պիտանի օրինապահաց ազգիս. զի ուր չիք վաւերական կարգադրութիւն, անդ է տեսանել և անդադար աղաղակ և տարաձայնութիւն դժոխային. ուստի եթէ հնար ինչիցէ, առ ոտս Ձեր պաղատիմ ընուլ զայս պակասութիւն և բառնալ զնախատինս ի տանէ ազգիս։

Ի վախճանի պատկառելի խոնարհութեամբ ներել աղաչեմ յանդուգն վստահութեանս ակամայիւ և ընդդէմ սովորութեան տեղի ունելն ի սմա. և նահապետական սուրբ օրհնութեամբ թոյլ տալ ստորագրել զանուն իմ

Ձերդ Սուրբ Օծութեան տրուստ և անարժան ծառայ

(ձեռ.) Տէր Յովհաննէս Խաչկեան, խաչա. Աւագ երէց

Ի Կալկաթա. 1861. Սեպտեմբերի 8—20։

Յ. Գ.—Զմիոջէ մոռացեալ յիշատակութիւն ի կարգի անդ բանից. զի թէ մակալութիւն եպիսկոպոսաց ի հեռաւոր վայրս, մանաւանդ յօտար տէրութեան, եթէ չիցէ անորոշ ժամանակաւ, չթուի թէ չփոթութիւն ինչ ընդ մէջ անկարգութեան առնուլ, որչափ վճիռն չորից կամ հնգից ամաց զնոսա յամփոփ և յապահով վարչութեան յարմարէ։ Յուսկ զկնի եթէ ար-

դասիք վարուց և բարուց զնոսա յաչս ժողովրդոց արժանացուսցեն, կրկնումն թէ մի դիւրագոյն լինի. որչափ արտաքոյ այսր կանոնի, բացատութիւնք նոցին ի վիճակաց՝ ամենադժուարին, և ոչ թարց հետեւանաց ինասու. և այն թէ բանի առաքինութիւնք նոցա եթէ ի մեկնելն ի թեմից՝ դիւրեանցն միայն ասցեն, և ոչ հոլանելով զԱթոռն և զտեղին, ի կիր արկցեն զչարաչար սեղանակատութիւն, որչափ բազմաք այսգոյն խստութեան ստորանկեալ Վանայ Ամենասիրկչեան՝ չունեցաւ պաշտպան իրաւանց։

(ձեռա.) Տէր Յովհաննէս.

---

*Թուղթ վկայութեան գոմանի առաքինութեանց նոցն Աւագ քահանային տուեալ ի Հայոց Բուշեռի յամին 1834։ — Խնդիր առ Առաջնորդն։ — Մի նոյնպիսի թուղթ տուեալ նմա ի Հայոց Կալկաթայի։*

Եթէ ամենայն օրէնք ի ձեռն երկուց կամ երից վկայից զգենումն զարդարութիւն, չթուի ապա մեզ արժանաւորութիւն առն միոյ ի հաւատի վկայութեանց հարիւրաւոր արժանահաւատ, ականաւոր և հաւատարիմ անձանց թեբանալ. սորին վասն յառելումբ ասա քանի մի վկայականս տուեալ Սրբազրն Տէր Յովհաննէս Աւագ քահանային ի վկայութիւն մարդասիրական և աւետարանա-

կան առաքինութեանց նորա, որովք պանծալի հան-
դիսացաւ յասպարիզի հովութեան իւրոյ ի զանազան
տեղիս՝ զառաջինն ի Բուշեռ, յանդրանիկ թէմակալու-
թեան իւրում, ուր զդէն կրօնին սրբութեան ընդ մէջ
ածեալ դիմեցաւ ընդդէմ ժանտախտին, յորմէ սար-
սեալ ծնողաց՝ զզաւակունս լքանէին, և ընտանեաց՝ զըն-
տանիս · այլ ինքն Աւագ երէցն ոչ միայն, որպէս քահա-
նայ, մխիթարէր զսովենեսեան հոգևոր մատակարարու-
թեամբ, կամ՝ որպէս բժիշկ մարմնաւոր, ըստ կարեաց
դարմանէր զհարուածեալսն ի մահաշունչ ախտէն ան-
խտիր · այլ և բանայր գերեզմանս ի դաշտի, և բառնայր
զդիս նոցին ձեռամբ իւրով իսկ, որպէս կենդանի վկայքն
խոստովանին ։

« Արժանապատիւ և Սրբակրօն Տէր Յովհաննէս
Խաչիկեան ։ »

Ի Բուշեռ ·

« Լուսական և կրօնասիրական զնայսք Սրբութեանդ
յընթացս իրրև երեքամեայ քահանայագործութեանդ
ատտ, և մանաւանդ աստուածահաճոյ և առաքինական հան-
դէս Սրբութեանդ ի ժամանակի մահտարաժամին քա-
ղաքիս, ուստի փախստեայ լեալ ի դաշտի անդ ի սոս-
կալի կենաս թափառական լինէաք մեք · հոգեկրօն
խնամք Սրբութեանդ յահագին աւուրսն յայնոսիկ,
խմա՛, որ ի պահպանութիւն և ի կատարումն օրինաց
և պաշտամանց քահանայութեանդ, զգլուխդ ի կչիռ ե-

դեալ անվեհեր դիմադրաւ լինելիք ի վտանգս մահարեր, են ապաքէն այնքան ի հաճոյս մեր լեալ. մինչ ընդ տեսանելն մեր զՍրբութիւնդ ի հանդերձանս պատարաստութեան ընդ հաւաք հրաժեշտ առնելոյ աստի առ Հնդիկս ցաւելի զգայմանց ենթակայ լինիմք։»

«Այդ ունելով մեր զբաւականութիւն և զհաճութիւն ի խնկելի վարս Սրբութեանդ, աղերս պաղատանաց արկանեմք առաջի Հաստչին ամենից, զի տայցէ Սրբութեանդդ յարատեւել յամենայնի արդասեօք ի բարեբաւութեան բարոյ հանդերձ ամենայն առաքինութեամբ, և յաջողակ և անվտանգ ճանապարհորդութեամբ տալ ժամանս առնուլ Սրբութեանդ ի դիտեալ տեղի նպատակի Սրբութեանդ, յորմէ և ճոխութեամբ և մեծաւ արդասեօք վերադառնալ ի ցանկալի հայրենիսդ. ուրանօր երջանկութեամբ կենցաղակցել ընդ պատուելի ընտանեացդ մինչ ցխորին ծերութիւն կենացդ։»

«Մնամք Սրբութեանդ ամենախոնարհ ծառայք.»

Ի Բուշեռ · ի 1834 · Փետրուարի 22

(ձեռ.) Աստուածատուր Աւետեան
Եսայի Յովհաննէս
Մէլքում Յ · Մէլքում
Յովսէփ Յարութիւն Մէլքումեանց
Կ · Ա · Կոստանդիանոսեանց
Աբրահամ Թովմասեան
Պետրոս Ստեփաննոսեան
Յարութիւն Աստուածատրեան
Յովհաննէս Ղազարեան
Ս · Յարութիւն Մէլքումեան

Տրտմիմբ սակս չունելոյ աստ պատրաստ ի ձեռին զգիր շնորհակալութեան երկրորդ թեմի Ասադ երիցուն՝ Մինկսվորայ մերազնեայ հասարակութեան, որ ի Ջուղայ ընդ այլ պիտանի թղթոց երևի անհետացեալ շնորհիւ այնորիկ, որում հաւատացաւ զինչս տան իւրոյ հանել ի վաճառ. սակայն թո՛ղ չատասցի որոշ ժամանակաւ տուեալն նմա ի մերազնէից Կալկաթայի։

---

«Առ Բարձրապատիւ Այժանամեծար Սրբազան Տէր Յովհաննէս Սուրենեան, Այր Եպիսկոպոս և Հայրենասէր Առաջնորդ Վանայ Սրբոյ Աւետարանչին, և առ խորհրդական Անդամ Առաջնորդարանին ի Ջուղայ։»

## Գերապատիւ Հայր

«Թէպէտ յերկար ժամանակաց հետէ ոչ եմք արժանացեալ հայրական օրհնութենաբեր, ցանկալի նամակագրութեան ձերում. սակայն վասն բարօրութեան և երկարութեան պատուական կենացդ, նոյնգունակ և վասն պայծառութեան և հաստատութեան հրաշալի վանայ մերոյ, որոյ եղբ տեսուչ և Առաջնորդ, միշտ աղօթեմք առ Բարձրեալն Աստուած, որպէս հարազատ որդիք, վասն բարեխնամ և որդեսէր հօր, և վասն տանն հայրենեաց, խնդրելով յերկնաւոր Հօրէն յաւէրժայցուցանել ի ձեզ և ի վանայ մեր զշնորհս Աստուածային ողորմութեան իւրոյ յօգուտ և ի մխիթարութիւն լուսաւորչակրօն մանկանց նորոյս Սիոնի և ի պարծանս Ազգիս Հայոց։»

«Զկնի պարտուպատշաճ բանիւք զյարգութիւն և զրա-
բեմաղթութիւն մեր առ ձեզ յերևան ածելոյ մատչիմք
խոնարհաբար յիշատակել և զառարկայ սոյն այս թղթա-
գրութեան մերոյ ։ Ժամանակ բահանայազործութեան
Արժանապատիւ Տէր Յովհաննու Խաչկեան, բարեկարգ
Աւագ երիցու մերոյ, ի սուրբ եկեղեցւոջն Նազարեթայ,
մերձ է գալ ի լրումն, որպէս տեսանեմք, զկնի բանի մի
ամսոյ (1). յորժամ հարկ լիցի նմա ըստ սովորութեան
թողուլ զայս քաղաք, անջատիլ ի ժողովրդոյ իւրոյ և
վերադառնալ առ ձեզ ի Ջուղայ. բայց զիարդ կարելի
մեզ, որք բազում մասամբք ի հոգևոր քաղցր տեսչու-
թենէ նորա օգտեցաք, թոյլ տալ նմա հեռանալ ի մէնջ
և զուրկ թողուլ զմեզ ի հոգեշահ մխիթարութենոյ մա-
տակարարութեան բանին Աստուծոյ ։»

«Անջատումն այսպիսի պատուական քահանայի ի
մէնջ եղիցի մեզ արդարև զգալի յոյժ ։ Եւ այն վասն
պէտսպէս բանաւոր պատճառաց, յորոց զբանի մի և եթ
յիշատակեսցուք ի ստորև ։ Նախ՝ վասն բարւոյ և ան-
ըստգիւտ կատարելոյ զպարտիս ծանր և տարժանակիր
պաշտօնի իւրոյ ։ Երկրորդ՝ վասն առաքինասէր և խա-
ղաղասէր բարուոյն, որով զսիրտս ժողովրդոյ շահեցաւ
և քաղցրացոյց ։ Երրորդ՝ վասն ազգու և ճարտար բանից
ողջամիտ քարոզութեան նորին, որովք յաւուրս պատ-
շաճաւոր տնից և Տէրունական աւուրց զհոգիս ժողո-
վրդականաց յԱստուածպաշտութիւն ամոքեաց, չոր-

1. Մոռացեալ էր ժողովուրդն զանորոշ ժամանակ վի-
ճակաւորութեանն ։

բորդ՝ վասն երկայնամիտ և խոհական տնտեսութեանն, որով ընդ միւս պաշտօնակից եղբարցն զտունն Աստուծոյ կառավարեաց և կառավարէ, հասեալ ի վերայ ժամու և տարաժամու, յանդիմանելով, սաստելով, մխիթարելով ամենայն երկայնմտութեամբ և վարդապետութեամբ։ Հինգերորդ՝ վասն հայրական մասնաւոր խնամակալութեանն, զոր ցուցանէ երկրական ժողովրդոյս եկեղեցւոյ մերոյ, յորոց բաղմաց ծանօթ է, և յոգունց հանգամանաց իսկ տեղեակ։»

«Աստուածէն այսքանեօք և այսպիսեօք բարոյական բարեաւութեամբք և առաքինական ճրիւք զարդարեալ անձն, որպիսի է մերս բազմերախտ Աւագերէց, Սրբազնագոյն Տէր Յովհաննէս Խաչիկեանն, ցանկալի և փափագելի է մեզ ամենեցուն, զի կացցէ, մնասցէ աստ ի միջի մեր, առ ի սպասաւորութեամբ Աւետարանին մատակարարել մեզ զբանն շնորհաց և կենաց։ Վասն որոյ և մեք ժողովուրդք և խաչն արօտի մեր, խոնարհական յարգութեամբ և շնորհակալու սրտիւ խնդրեմք ի Սրբազնութենէ ձերմէ թոյլ տալ նմա առաջնորդական կոնդակաւ և օրհնութեան թղթով մնալ ի միճակի աստ, իբրև Աւագ երէց եկեղեցւոյ մերոյ այլ ևս հինգ ամս, և մի յղել կամ կարգել զայլ ոք ի տեղի նորա մինչ ցլրումն հնգամեայ ժամանակին ի հոգեշահ մխիթարութիւն մեր ամենեցուն։»

«Կատարելով ձեր զայս մեր խնդիր՝ շնորհապարտ և երախտապարտ արասջիք զմեզ յաւիտեան։ Եւ մեք միաբան սպասելով ստանալ զստորասական պատասխանի թղթոյ մերոյ, մնամք յարգանօք և ակնածութեամբ

Սրբազնութեան ձերում ամենախոնարհ ծառայք։ »

Ի Կալկաթա. ի 11 Նոյեմբերի 1848։

(ձեռա.) Գասպար Մ. Գասպարեան
Ստեփաննոս Զնթլում Աւետեան
Յ. Կարապետեան
Յարութիւն Աբգարեան
Ա. Յ. Աբգարեան
Սէթ Յ. Աբգարեան
Թովմաս Յ. Աբգարեան
Պ. Յ. Պօղոս
Յարութիւն Մնացական Վրդանեան
Կ. Մ. Շերիսօռ
Աղէք. Յ. Աբգարեան
Յարութիւն Գրիգոր Աբգարեան
Մկրտիչ Ս. Յովհաննեան
Մարտիրոս Ս. Յովհաննեան
Մ. Յ. Վրդանէս
Մկրտիչ Աբրահամեան
Յովանջան Էլիազեան
Փ. Ա. Գէորգեան
Յարութիւն Խաչիկ
Դաւիթ Փ. Մէլիք Բէգլարով
Մ. Գ. Բաղրամեան
Ն. Մ. Գասպար
Կ. Գ. Բաղրամեան
Վրդանէս Տէր Մարտիրոսեան
Կարապետ Յակոբեան
Զ. Մ. Մանուկեանց

Յովհաննէս Ավդալեանց
Խ. Յ. Խաչիկ
Յարութիւն Խաչիկ
Յովհաննէս Խաչիկ
Յ. Յ. Սարգիս
Ա. Վրդանէսեան
Մարտիրոս Միքայէլեան
Յովսէփ Ատեփան
Գրիգոր Պ. Որդանանեան
Յովհաննէս Զ. Շիրխօռեան
Աւաբել Զնիմլում Ավետեան
Բաղդասար Ավետ Տէր Գասպարեան
Մ. Ս. Թորոս
Մ. Դ. Թաղիղեան
Ռ. Զ. Շիրխօռ
Յ. Ռ. Շիրխօռ
Սրամ Միքայէլ
Գ. Ոսկան
Խաչիկ Մ. Շիրխօռ
Յ. Գ. Գրիգորեան
Մ. Յ. Խաչիկ
Յ. Մ. Գասպարեան
Ա. Պ. Աստուածատուր
Եսայի Գէորգեան
Գ. Ե. Գէորգեան
Դաւիթ Բարսեղ
Յ. Ա. Միքայէլ
Կարապետ Յ. Վրդանէսեան

Յ · Մ · Շիրխօռեանց
Կ · Թ · Շաֆրազեան
Լ՚մին Յ · Լ՚մին
Մէլքում Գասպարեան
Տիրացու Ա.ռաքել Զ · Տէր Ա.ռաքել
Պետրոս Մ · Գասպարեանց
Ս · Գ · Բաղրամեանց
Գէորգ Ա.ւետեան
Կ · Գ · Ա.ռաքելեան
Գ · Մ · Շիրխօռեանց
Յակոբ Ստեփաննոս
Ո · Պ · Որդանան
Նիկողայոս Սահակ Մալխասեան
Մինաս Յովակիմ Տէր Գէորգեան
Ն · Պ · Որդանանեանց
Յովսէփ Յ · Քամալեան
Յ · Կ · Սարգսեան
Կ · Յ · Սարգիս
Մ · Տէր Բաղդասարեան
Նիկողայոս Ա.ւետեան

---

Ի մասին վերոյ գրութեան հանգուցեալ Պարոն Գասպարեան Եկեղեցպանի այնր ժամանակի, յորժամ ի դիմաց հասարակութեան մերաղնէից, նախ գրաւոր հարցումն յԱ.ւագ երէցէն առնու · թէ յօժար էր նա կամակատար լինել ժողովրդեան և մնալ աստ Ա.ւագ ե-

րէց նոցա, ընկալնու զհաւանութիւն դաշամբ այսր առ ինքն ածելոց զմայր և զորդին. ուստի և նորա հաճութեամբ հասարակութեան պաշտօնական արտօնութեամբ գրէ առ Աղաջնորդն օրինակ զայս, ի 1848. Նոյեմ. 28 թուականաւ։

. . . «Ոչինչ կեղծարէն, անտեղի և առանց երկար փորձոյ խոստովան լինի հասարակութիւն մեր աստի զանդորրութիւն բաղդր, խաղաղ և բրիստոնէավայել ընթացից վիճակի տեղոյս, յոր ամենաբաւական և տօնելի մատակարարութեամբ շահասիրեալ փառաւորեցաւ սուրբ եկեղեցի տեղոյս, որոյ բուն պատճառն յատկացեալ խնդրագրով հասարակութեան, ոչ ի սմա ծանուցեալ լինի ի պարծանս ձեր և ի խնդութիւն և ի մխիթարութիւն մեր. մինչդեռ ընդ հակառակն ի բաղում ամաց հետէ հաւասար արդի այլ վիճակաց կողմանցս տատանիւր և ծրփայր անհամաձայնութեամբ և անվայել գնացիւք եկեղեցականացն մերոց, որ յայտնի՝ և որ լռելեան. որում ծանօթ էք և դուք, տեսանեմք և մեք. ուստի ոչ ընդունայն առաջի առնեն ձերում հոգաբարձութեան զխնդիրն արդի. և խոստովանին թէ Աստուածահաճոյ և քահանայական վարք և կառավարութիւնք Արժանապատիւ Սրբազրան Տէր Յովհաննէս Խաչիկ, Աւագ երէցին մերոյ նաև փորձառութիւնք առ բաղում դժուարալոյծ խնդիրս ժամանակին, այնքան հաճելի և հաւանելի են հասարակութեան, մինչ միաբան համբուրիւ սուրբ Աջոյ ձեր աղերսեն տալ նմա տեղի մնալոյ աստ ընդ երկար, ի մխիթարել զմեզ և կառավարել զվիճակ ձեր ազատ ի պատա-

հական վնասուէ, յորում թէև խնամոք ձեր ունիլ տեսա-
նեն ի կոնդակի անդ նորա ժամանակս բաղումս առանց
որոշման, այսինքն, որքան հանդ իցէ ինքեան կեալ աստ,
մնասցի. սակայն տարակուսութիւն, ի նա, ընդ մեօք պա-
տեալ՝ զհոգս բացակայութեան մօր նորա և որդւոյ ի տե-
զիդ այդմիկ. այր սակս անդադար խոկմունք նորա երբեմն
ի լոյս ընծայեն զկամս լքանելոյ զվիճակս ընդդէմ հա-
ճութեան և կամաց խմբի մերոյ. ուստի զգայեալ ամե-
նեցուն՝ փութացան գրաւոր հայցուածս առ ձերդ գթա-
ռատ հովուասիրութիւն և մարդասիրութիւն մատուցա-
նել և խնդրել զլուծումն տարակուսանաց մեր ամենե-
ցուն, որպէս և ի սոյն իմաստ հարցուպատասխանի արա-
ւրեալ մեր ընդ նորին Սրբութեան ունիմք՝ ի նմանէ գրա-
ւոր ընդունելութիւն, որոյ և գաղափարն պարունակեմք
ի սմա. և խոստացեալ եմք տալ այնու դադարութիւն և
ապահովութիւն մտացն։»

«Արդ նիւթ այսմիկ զրոյ այս է, որ ըստ խնդրոյ հա-
սարակութեան և մեր, Բարձր Սրբազնութիւն Ձեր զի-
ջեալ ի պաղատանս նոցին՝ թոյլ տացէ դալստեան նո-
րին մօր և որդւոյ աստ. և յաւել շնորհիցէ թեթևացու-
ցանել պահպանողական նպաստաւորութեամբ զամե-
նայն հոգս նոցին դժուարութեան չուեցմանն յաղագս
կատարեալ և հաստատուն լինելոյ միսիթարութեան հոտի
մերոյ աստ ի թէմի ձեր, ուր գրեթէ, ըստ թիւր
շրջանաց ժամանակիս, միմիայն միսիթարեալ և երջանիկ
համարի հոգևոր պարարտութեամբ, Աստուածաբանա-
կան սերմամբ քարոզից նորին, որ արդասաւորի ի ժո-
ղովուրդն մշտապէս. որով և բաւականացեալ նոցին

ասեն, բաժանումն նորին ի մինչ անկարևոր իմն է, և անիրաւութիւն ընդդէմ բաղմաթիւ ժողովրդոցս յոյժ. ուստի ակն ունին ի մինչ, առանց զանց առնելոյ կամ որ և իցէ պատճառանօք երկարելոյ խնդրոյն, չնորհարարեալ ունել ի մտի, ոչ միայն ոչ առաքել աստ քահանայ փոխանորդ նորա (որ չէ ընդունելի). այլ և, ի սէր համայն ժողովրդոցս կատարել կանխաւ զնախածանոյց խնդիրն մեր ի մասին մօր և որդւոյն, որով հաւատասջիք, ոչ միայն մեզ ամենեցուն ողորմելոց էք, այլ և խնամք հաստատութեան և ապահովութեան տարածելոց էք ի վերայ վիճակի ձերոյ տեղոյս, որ միմիայն մնացեալ է անշփոթ ի բովանդակ թէմս Հնդկաստանի, եթէ ոչ՝ այլ ընդ այլով ելն նորին ի մինչ անհնարին լինի, և այլն։»

Ի ժամանիլ նախընթաց գրութեանն առ Առաջնորդն ի Ջուղայ, ժամանակ ինչ անհոգ լեալ նորա, մինչ գտանէ և զօրհաս մահուն. զկնի որոյ և կառավարութիւն վանացն չունելով խնամս ստորաստական կամ բացաստական սպասաստխանի տալոյ, դարձեալ մինչ խորհրդածէ Աւագ երէցն լրանել զրաղաքս՝ ընդունի և զայլ գրութիւն նոր ի հասարակութենէ հետագայ օրինակաւ։

«Աբժանապատիւ Տէր Յովհաննէս Խաչկեան, Արքակրօն Աւագ երէց Կալկաթու Նաղարեթայ սուրբ եկեղեցւոյ։»

Բաղմերախտ Տէր

«Տխրութեամբ լսեմք. զի յառաջադրեալէք ելանել ի մայրաքաղաքէ աստի՝ մերմէ, ըստ ոմանց՝ յերկիր ծնընդեան ձերոյ, և ըստ ոմանց՝ յայլ վիճակ, յորմէ զհրաւէրն

սիրոյ ընկալեալ (1)։ Եւ այս լուր մեծապէս շարժէ զկիրս տրտմականս մեր, որ յետ հնգամեայ հոգևոր բրտանց և առաբելական երկանցդ, որով շահեցար ի տուն Աստուծոյ զժողովուրդ սեպհական, մատակարարելով նոցա զբանն կենաց ի ժամու և ի տարաժամու. և Աստուածնորդ եղեր մեզ առ ի լոյս Աստուածգիտութեան բաղցրախօս բարոզութեամբ, հեղութեամբ և ժուժկալութեամբ, թողեալ զմեզ առանց օրինաւոր փոխանորդի՝ յօժարիցիս հեռանալ ի մէնջ, և զրկել զմեզ ի բաղում հոգևոր մխիթարութեանց անտի, զորս մինչ ցարդ առատօրէն սրբիռեցեր։»

«Արդէն իսկ գլխովին խնդիր մատուցաք Սրբազան Աստուածնորդին ի մասին շնորհելոյ նորա զձեզ մեզ ի մխիթարութիւն եւ այլ եւս ամս ինչ, թէպէտ հանդիստ երանելոյն յաստի կենաց ի լոյսն վերին յաստղեաց զկատարումն խնդրանաց մերոց. եւ վիճակ ձեզ հատեալ զեկեղեցի սուրբ տեղւոյս անորոշ սպասմանի կամ ժամանակի. աղաչեմք սիրով ընդունիլ զխնդիր մեր զայս, եւ ըստ ոգւոյ կոնդակին շնորհելոյ ձեզ ՅԻսալ աստ եւ վարել զպաշտօն Աւագ երիցութեան քոյ մինչեւ եկեսցէ նա, որ ակնկալութիւնն է ամենայն Ջուղայեցւոց. եւ փոխանորդեսցէ մեզ ի տեղի Սրբութեանդ զայլ ուսեալ քարոզիչ եւ մարդասէր բահանայ, կամ ըստ պաշտօնի Աւագ երէց որ։»

«Լի թախանձանօք խնդրեմք, անտես չառնել զաղաչանս մեր զայս, զմտաւածեալ թէ զինչ լինիցի հօտն

1. Ի նմին ժամանակի յայլ խմբ երեւելի վիճակի հրաւիրեալ էր Աւագ երէցն գնալ անդ։

այսքան հեռացեալ ի մայր փարախէն առանց քաջ եւ անձնադիր հովուի։»

«Մնամք հանդերձ յարգանօք ձերոյ Սրբութեան ա-մենախոնարհ ծառայք»

Ի Կարկաթա · Փետրվարի 7 ին. 1850 թուին։»

(ձեռա.) Յարութիւն Այգարեան
Գ · Մ · Շիրխոռեան
Ա. · Յ · Այգարեան
Փ · Ա. · Գէորգեանց
Յ · Գ · Բաղրամեանց
Կարապետ Յ · Վրդանէսեան
Կ · Գ · Բաղրամեան
Մինաս Յովակիմ
Աղէքսանդր Ստեփաննոսեան
Կարապետ Յակոբեան
Յ · Մ · Վարդանեան
Յարութիւն Գ · Այգարեան
Աղէքսանդր Յ · Այգարեան
Յովանէս Իլիազեան
Յովհաննէս Առաքել Գրիգորեանց
Յարութիւն Խաչիկեան
Միքայէլ Յարութիւն Խաչիկեան
Ռ · Զ · Շիրխոռ
Յ · Ռ · Շիրխոռ
Միքայէլ Ռ · Շիրխոռ
Մկրտիչ Ս · Յովհաննեան

Խաչիկ Մ · Շերխօռ
Գէորգ Պետրոս
Յովհաննէս Սարգիս
Սարգիս Մ · Ս · Յովհաննեան
Մ · Տէր Բաղդասարեան
Մարտիրոս Ս · Յովհաննեան
Յ · Զ · Շերխօռեան
Սարգիս Մ · Շերխօռեան
Նիկողայոս Սահակ Մալխասեան
Յովհաննէս Աւդալեան
Աբրահամ Զ · Աւետեան
Դաւիթ Բարսեղ
Ռ · Թ · Ոսկան
Ստեփաննոս Խ · Տէր Յովսեփեան
Ա · Պ · Աստուածատուր
Մանուկ Յ · Դաւթեան
Մ · Խ · Յովակիմեան
Գաբրիէլ Լեւոն Գրիգորեան
Կ · Գ · Սէթեան
Յակոբ Ստեփաննոս
Յովսէփ Ա · Սէթ
Սէթ · Կ · Յ · Պետրոսեան
Յ · Կարապետեան
Վահան Մնացական Վարդանեան
Մ · Ս · Վարդանեան
Գալստան Ոսկանեան
Գ · Յ · Աւետիկեան

Զ. Մ. Մանուկեան
Գրիգոր Գ. Գրիգորեան
Լմին Ց. Լմին
Ց. Խ. Միքայէլեան
Գէորգ Աւետեան
Պօղոս Վիջէնեան
Ս. Ց. Սարգսեան
Եսայի Գէորգեան
Մարտիրոս Միքայէլ
Մ. Մարտիրոս
Յովսէփ Ստեփան
Խ. Ց. Խաչիկ
Կ. Մ. Շերխոռեան
Բաղդասար Աւետ Տէր Գասպարեան
Մ. Գ. Բաղրամեան
Ս. Գ. Բաղրամեան
Սէթ Ց. Արզարեան
Կ. Ց. Աւետիկեան
Ա. Վրդանիսեան
Վ. Պ. Վարդանէս
Կ. Թ. Շաֆրազեան
Մ. Դ. Թաղիզեանց
Յարութիւն Մայիլեան
Մինաս Ներսէսեան

---

Ահա ոսկեղէն շղթայ սիրոյ, որով, ասէր, կաշկանդեցիք զձեռս եւ զոտս ի հոգեւոր ծառայութիւն ձեր,

եւ այլն · սակայն տեսցուք թէ այլ առաւել հանգոյց կենձանաց յաւելո՞ւ ի վերայ. այո՛. զի յետ քանի մի ամսոց լսի թէ կառավարութիւն վանացն, սթափեալ ի խորին թմրութենէ հանեալ էր ի չու համարեալ ոմն քահանայ, իբր Աւագ երիցութիւն Կալկաթու ընդդէմ արդեաքան հասարակութեանն · եւ ի նմին ժամու տարաբախտաբէս հասեալ այսր ի վերայ բօթ մահուան միակ որդւոյ Տեառն Յովհաննու, Աւագ երիցու (1) : Եւ մինչ արբեալ նորա դառն բաժակաւ ազոյ. ի 1850 · Դեկտեմ. 17 թուականաւ կազմի ժողով մի նոր 38 անդամաց հասարակութեան. եւ վերջաւորի առարկայ ժողովոյն ըստ յետագայ իմաստից :

Ա. · Առաջադրեաց Պարոն Մարտիրոս Ս · Յովհան, եւ երկրորդեաց Պարոն Զօհրաբ Մ · Մանուկեան, զի Պարոն Յարութիւն Մ · Վարդանեան լիցի Աթոռակալ ժողովոյս :

Բ · Նոյն առաջադրութիւնն հաճելի լեալ ժողովոյն · եւ Պարոն Յ · Մ · Վարդանեան կալեալ զԱթոռն՝ առաջադրեաց Պարոն Փ · Ա · Գէորգեան · եւ երկրորդեաց Պարոն Առաքել Ջ · Աւետեան · զի Սրբակրօն Տէր Յովհաննէսն Խաչիկեան ըստ 'զօրութեան կոնդակի իւրոյ Մեսայէ վասն մեր ի վիճակի քահանայութեան Նաղարեթայ Սուրբ Եկեղեցւոյ մերոյ, իբրեւ Աւագ երէց, ցորչափ ինքն կամիցի, եւ ցորչափ հաճելի և ցանկա-

1 · Զոհ անպարտ անմոգորեան վանականաց · զի երէ ի ժամանակին հանեալ էր նա ի չու առ Հնդիկս, թերեւս ի սարսռէ ամենայնոյ ոչ ցրտահարեալ մնասանէր · անա ապա-ցոյց կորժանման Աւագ երիցուն միտ շնորհի վանականաց :

ի լիցի մեծի մասին հասարակութեան մերաղնէից եղելոց աստ։ Այս առաջադրութիւն հաճելի եղեւ ժողովոյս։ Դ. Առաջադրեաց Պարոն Յովհաննէս Զ. Շիրխօռեան, եւ երկրորդեաց Պարոն Առաքել Զ. Աւետեան. զի բոպէ ադրութիւնս սոյսր ժողովոյ յիշատակեսցի և յիշատակեալն մուծցի ի տետրս առանդատան եկեղեցւոյ մերոյ զի հասարակութիւն տեղոյս ոչ կամեցաւ ընդունիլ զկոնդակն բերեալ աստ ի սրբակրօն Տէր Գաբրիէլ Տէր Մի-քայէլեան վասն վիճակի Աւադերիցութեան։ Այս առաջադրութիւն եւս նոյնդունակ հաճոյ եղեւ ժողովոյս։

Դ. Առաջադրեաց Պարոն Սարգար Յ. Սարգսեան. եւ երկրորդեաց Պարոն Փ. Ա. Գէորգեան. եւ երրորդեաց Պարոն Յ. Զ. Շիրխօռեան զի ըստ յատուկ խնդրոյ ժողովոյս Պարոն Եկեղեցպանն եւ պաշտօնակիցք նորին, մտադիր լիցին առանձին խնդրանաց Սրբակրօն Տէր Գաբրիէլին խնդրակատար խնամով. եւ կարգեալ զնա յայլ իմն վիճակ պաշտպանեսցեն զնա, եւ մի թողցեն զնա ինչ անմխիթար (1)։

Ե. Ժողովս միաբան առաջադրեաց, զի եթէ այսուհետև գրութիւն ինչ և կամ պատուէր գայցէ աստ ի վերայ

1. Յետ ժանուցանելոյ զնրաւէր ժողովոյ և երեք աւուրքք նախ քան զբացումն այնորիկ, ժանան արար Տէր Գաբրիէլն ի քարոզս, ուր զգացեալ զնանդերձանս ժողովոյն, հրաժարական մի գրէ խսկոյն առ Աւագ երէցն. թէ չկարէր լինել Աւագ երէց Կայկաթու. և յաւել խնդիր իսն վասն վիճակաւորութեան մոյ մերձաւոր բեմի. որ վասն և. տուաւ նմա թէմն Զիլրու...

մեր յԱ.մենափրկչեան վանաց Ջուղայու թէ վասն դրամոյ եթէ վասն այլ ինչ առարկայից, այսպիսի գրութիւնք կամ պատուէրք մի լիցին ընդունելի մեզ մինչև ոչ ընտրեսցի նոր Ա.ռաջնորդ վասն նոյն վանացն։ Ժողովս հարկաւոր համարեցաւ ուղարկել զօրինակ այսր առաջադրութեան ի Ջուղայ ի ծանօթութիւն մերազնէից եղելոց անդր։ Եւ ժողովս այս հաճեցաւ տեղեկանալ զի Պարոն Եկեղեցպանն ոչ էր պատուեալ և վճարեալ զփոխանակագիրն վասն 3,000 կ. ռուփեաց, որ յայսմ նուագ ի արդէն եկեալ էր ի Վանաց Ջուղայու։

---

Ընդարձակ թուղթ պարտապանութեան սեռին, գրեալ նոյն Աւագ երիցուն ի 20 Փետրվարի 1862 ամի առ Բարձր Սրբազան Թադէոս Առաջնորդն Նոր Ջուղայու և Հնդիա-Հայոց։

Բարձրապատիւ Սրբազան Տեառն Թադէոսի Գերապատիւն Եպիսկոպոսի և Ա.ռաջնորդի Սրբոյ Ա.մենափրկչեան Վանաց սուրբ Ա.Ջոյն համբոյր։

Գերապատիւ Տէր

Յերկուսն Յունվարի այսր ամի, ի ձեռն Գերապատիւ Պարոնայ Գէորգայ Ա.ետեան և Յովհաննու Ա.վգա-

լեան, դիտնական վարժապետի, ստացեալ բացակնիք զձերն Սրբազնութեան Յուլիսի 3 անցեալ ամի վերջասան թերթիս վերծխնդրական գրութիւն՝ ծանեալ զդիտուտրութիւն իմաստիցն, ոչ այլ ինչ, քան հանճարեղ հնարս ինձ ի կորուստ. և որդ ծաւալումն այնքան սահեղ և անողոքելի, մինչ թուի ամենայն արդարութիւնք իրաւանց անբաւական ի դիմադրութիւն. և ըստ որում այսպէս, հարկիս և ընդունայն հայթայթանք իրաւանց ի պատասխանատուութիւն, յորժամ ի պարզոյ երևի իրաւադատութեան ձեր կողմն տկարացեալ, և անիրաւի վրէժխնդրութեան զօրացեալ, զոր խիզճ իմ և Աստուած ճանաչեն անիրաւութիւն ընդդէմ ճշմարտութեան և օրինացն Աստուծոյ. բայց թերևս ձերում հեղինակութեան և խղճի արդարութիւն համարեալ գրեցիք, զոր գրեցիք, զոր յանձն առնեմք դատաստանին Աստուծոյ։

Աստի. թէպէտ ամենայն հայթայթանք իրաւանց անբաւական ի կաղդոյր. սակայն չկամիմ խոսել ընդ թեամբ քան զիշոյն Բահաղամու իշանալ. վասն որոյ յոտս Սրբազնութեան ձերոյ ներումն պաղատելով համառօտաբար տամ պատասխանի գրութեանց ձերոց, ոչ իբրև կամակոր ի յանդիմանութիւն ձեզ. այլ պարզ և վճիռ հոգւով ի պահպանութիւն իրաւանցս, որ այժմն թուի հալածեալ և անարևութացեալ ձերով նշմարանօք ի հրաշալիս լսելեաց, և ի սոսկումն ուխտի հոգևորականութեան։

Նախ ի բանն թէ. ի սկզբանէ վիճակաւորութեան մերոյ ստ մինչ ցարդ եղանակ և կերպ գրութեան Սրբութեանդ ընդ մեր Նուաստութեան (ի բաց առեալ

զգործնական առարկայս ) սկզբնաւորեալ և չարունա-
կեալ են ի վերայ երից հիմանց : Դախ՝ ի սրտաբեկ առնել
զսիրտս մեր և զթեւս աչխուժից : Երկրորդ՝ ընկերատեցա-
բար վատաբանել զհանգուցեալ և զկենդանի հայրենա-
կիցս քոյ : Եւ երրորդ՝ կրկնել և երեքկնել զնորհս բա-
բերարութեանց քոց մատնանիշ զնոսին յաչս մեր մխե-
լով : Ապացոյցք բանիցս ասացելոց նոյն իսկ թուղթք
ձեր են , յորոց ոչ զրնաւսն . այլ զփոքրն ի չատէ ա-
ռեալ նշանագրեմք ատտ : Դախ՝ յամենայն գրութիւնս
ձեր գլխաւորապէս յայն թափէք զմիգն թէ . « այժմ
ժամանակն է չար (1) , երաչտացեալ , ժողովուրդն ա-
պականեալ ի վարս, ի զնացս· և դուք տառապեալ և չա-
բաչար նեղչրտութեամբ, որպէս թէ նահատակիք ի վիճա-
կի այդր : Ի Հնդկաստանէ դառնալով յաղագս Ջուղայու
գրէք թէ . « այդ քաղաք ոչ սիրէ զխաղաղութիւն , ոչ
զմարդ բարերարոյ . այլ միչտ աղմկեալ . վատքն և
չարքն կայտռին և լաւքն կսկանին » . զորս չարունակ
գրելով ոչ այլ ինչ՝ բան զթեւս աչխուժից մերոյ բեկա-
նել ջանայք :

Երրորդ՝ էջք ամենայն թղթոց քոց չեն աղատ ի վա-
տաբանութեանց ընկերաց հոգևորականաց և քաղաքա-
ցեաց , որոց զբարին , եօթն և տասն ամք են , վայելեաս
և չմնաս երախտադէտ (2) : Պատճէնք թղթոց , քոց առ

1 . Երէ բարի՝ ուր ներգործութիւնն . մինչ անգամ ձե-
ռագիս հովուապետն հաւաժեալ տեսանի այժմիկ . . .

2 . Մի է այս ի չարարուեստ գիտից արկանելոյ բշնա-
մութիւն ի մէջ քահանայիկ և ժողովրդական առ ի հատանել
զանէր վերչնոցն ի թիկանց առաչնոցն :

քեզ էն, ընթերցիր վերստին. և վկայեա բանիցս ճշմարտութեան. այլ նշանակեմք աստ միայն զբանս առաջին գրութեան քոյ առ մեզ, որոյ թուականն է 8 Նոյեմ. 1851 ամի. յորում նախ՝ զմիաբան քահանայս քոյ վասաբանելով գրեցեր այսպէս՝ «բարեգոյն լինելոց է՝ Տէր Յարութիւն (Յակոբ Տէր Կարապետեան) ի վիճակ տեղւոյս առ խ. . . . և զՏէր Մկրտիչ Տէր Կարապետեան տեղւոյս ուղարկել ի Զիւրայ. որովհետև մերձ է լրումն 2 ամ ժամանակի թեմի նորա աստ. զի ի սկզբան վիճակաւորութիւն սորին հնգամեայ ժամանակաւ՝ զերիս ամս յատկացուցեալ վասն Աչդարադայ, և զերկու ամս վասն տեղւոյդ, որում թէև հասարակութիւն տեղւոյս յօրէ անտի մտին յայս քաղաք ոչ կամելով հանդերձեալ էին յետս դարձուցանել. սակայն իմ ցաւելով ի վերայ տգիտութեան նորա և պարտուցն, պահեցի աստ . . . բայց ցաւիմ ասել. ի ծոց նորին դոլով զեղուն նորա. նոր ինքնատեղծ բառիւք. յ. զ. ս. ն. և այլ աւելի տառիւք, յընթերցմունս իւր, ուր ուրեք հարկաւորի հանեալ ածէ ի գործ. և ուր յաւելու՝ անդրէն համբարէ ի ծոց իւր. սկաւառակն՝ սակաւառակ, սպունգն՝ ըսպունգ, սիրոն՝ սրրով, հասկն՝ հասակ, և այլ այսպիսեօք դայթակղութիւն ժողովրդոց և զղջութիւն ինձ պատճառէ. ուստի թողեալ լիցի ի կամս և ի տնօրէնութիւն ձեր, զոր ինչ բարի համարիցիք առնել՝ ընդունիմք և մեք սիրով և հպատակութեամբ (1): Նախ բան զայդ գրու-

1. Ցնոր ժանուցական բանիցն մինչ յանձն առնել ի հաճոյս, անդէն գտանի դատապարտեալ:

թիւնդ, եւ ի կողմանէ Պարոն Սերթայ Յ. Աբգարեան Եկեղեցպանի առ կառավարութիւն վանայս գրութեան օրինակն տուեալ էիր, յորում չարաչար զանգատելով զվատթարութենէ նորեկ բահանայիցն, դատապարտեալ էիր անխնայ զվանայս կառավարութիւն։»

«Նոմին իսկ 8 Նոյեմ. 1851 ամի գրութեանդ զնախորդն իմ վերջին ապերախտութեամբ վատաբանելով զը-բեալէիր. «այլ այս չափ և եթ ասեմ. նախորդն ձեր տգէտ էր. և զարմանամ թէ որպէս կուրօրէն բախտն վերայուսկեալէր զնա ի բարձրագոյն պատիւ ատենանի Հովուութեան և ասպետութեան։»—«Ոչ աղատ թողեր ի վատաբանական հարուածոց քոց նաև զսրբազան Կարապետ եպիսկոպոս, հոգևոր ծնողն քոյ, զԱտուածատուր, զԳէորգ, զՅովհան և զԱնդրէաս վարդապետ, միաբանս Սրբոյ վանայս, զմեծ մասն բահանայից Ջուղայու, թէ զհողայեալսն ի դերեզմանի և թէ զկենդանիսն, նոյնպէս և զմեծ մասն աշխարհականաց տեղոյս, որոց մի մի, յանկէ յանուանէ նախատական բանս պարաւանաց ի Սրբութենէդ գծագրեալ արդէն հաւաքեալ ունիմք ի նամակաց քոց, և ի պահանջել հարկին ի լոյս ծանօթութեան ունիմք ընծայել։»

Աբգարեա, որպէս չունէի ակնկալութիւն հանդիպելոց աւուրս այսմիկ, չունէի բնաւ և յօժարութիւն գրելոց զոր գրեմս անհնարին ցաւօք սրտիս. և դուք, որպէս հայր, պարտիք ներումն շնորհել ակամայ և բրոնադատ հալածիս, յորժամ ասացից թէ նախանշանակեալ գրութիւնք իմ մաքուր սիրով, ոչ միայն ապացուցանեն զպաւակցութիւն իմ յանսպատեհս ժամանակի.

այլև զհարազատութիւն իմ առ ձեզ, զկրօնասիրութիւնս ի նախանձ եկեղեցւոյ և զազգասիրութիւնս ի պատիւ ճըշմարիտ կրօնասիրութեան. քանզի որ անհոգն է ի պարտիս որոշման լաւաց և վատաց յօգուտ ընդհանուր, համարձակիմ ասել. կամ նա վասն իւրոյ ինքեան ծնեալ է և կամ վասն այլոց մեռեալ յաչխարհի. թող և զզատապարտութիւն ի դիմաց Աստուծոյ, որ կարդայ յականջս ըղձաց. վայ որ զխաւարն լոյս կոչիցէ, և այլն։

Զեր Սրբազնութիւնն, եթէ ներիցէ համարձակութեանս և խղճի մտօք իրաւունս տայցէ ընտրութեան ի բաց դնելով զառիթն վրէժխնդրութեան, ինքնին վկայելոցէ արդարութեան և անմեղութեան իմում ի բանս, ի դիտաւորութիւնս և ի գրութիւնս առ ձեզ. ոչ հոգւոյն, զոր այժմն վարակիք, այլ հոգւոյն, զոր յառաջն իմանայիք. և հաւանութեամբ՝ մանաւանդ և շնորհակալութեամբ ինձ քաջալերս տայիք ազգի ազգի միջոցաւ, քաջ յարմարեալ ի հաւաստիսն թէ զոր ծանուցանէ առանց իրիք դիտողութեան՝ ծանուցանէ վասն մերոյ ծանօթութեան և նախազգուշութեան. եթէ ոչ՝ իւրոյ ինքեան զինչ չահ, զինչ օգուտ, և զինչ փառս անձին կենդանեօք, թող թէ մեռելօք. մինչ ինքն ևս մեռեալ ըստ աչխարհի՝ տքնի լոկ ի պայծառութիւն ազգի և ի հաստատութիւն եկեղեցւոյ յուսով յաւիտենական կենաց։ Այո՛, յայնժամ և զկնի այնպէս էին նշմարանք ձեր. և եթէ էին այլ իմն դիտաւորութեամբ, արտարինն՝ այլ և ներքինն՝ այլ և այլ, չունէի հոգի մարդարէութեան իմանալոյ զգաղտնիս բնութեան, որպէս և չունեցայ բաւականութիւն յետ բազում հարուածոց

Ա.Թոռոյդ Հանկանիլ անդրէն ի ծուղակ անուտի պատ-
ուոյ և մեծարանաց ձերոց, որչափ, ըստ իմոյ միամիտ
և անխարդախ հաւատոցն, հաւատացի զզրութիւն ձեր
և զպատիս, հաւատացի զձեզ Եպիսկոպոս և Գլուխ
իմ, հաւատացի զձեզ որպէս որդեսէր Հայր, օրէնսու-
սոյց հարազատ և իրրև նոր Հեղինաս, հաւատացի զձեզ
որպէս խոստովանահայր և ծածկող անարժանիս ըսե-
լեաց, հաւատացի ձեզ և զառանձինս աննեղնդ հոգւով,
զոր ինչ վասնոյ ամանակն ի դրից անտի իւրոց
ինձ ուսոյց ի վնաս իմ և յօգուտ ձեր ի հոգւոյն վե-
բատեսչութեան, իբր այն զի, յատուկ պարտաւորու-
թիւն ինձ նշմարէի ի պարտիս պաշտօնի, որպէս թէ
ամենայն վիճակաւոր ի բացակայ թէմս պարտի շարու-
նակ հաղորդել Եպիսկոպոսին իւրում զամենայն անցս
հանդամանաց վիճակին, չիմանալով զձեր յատուկ
իմացականութիւն թէ օրէն վարկանէր զբաղելն իւր
ի ժամանակի սիրոյ և օգտակարութեան զէն առնուլի
դէպս այլասիսման, և այն կրճատեալ և հատընտիր բա-
նիւք, առանց դրուն առարկայս խնդրոյն բացայայտելոյ,
թէ առ ի՞նչ վախճան, առ ի՞նչ պարտաւորութիւն և առ
ի՞նչ օգուտ. և մի՞թէ խօսիլն ի վերայ անցեալ և պատմելն
զնշմարութիւն յանցանք իցեն, զկենդանեաց և զմե-
ռելոց ունիլ օրինակ և ապացուցութիւն, զոր դուք, իբրև
վնասակար միջոց ի ձեզ առեալ առիթս դատապարտու-
թեան ինձ առնէք քաջ յիրաւունս տրամախոհեալ՝ ոչ
այլազգ միջոցաւ կարէիք ի գլուխ հանել զվնասակար
դիտեալն ձեր առ հասոյս կորստեան, եթէ ոչ՝ զինչ չար
արարեալ էր իմ ընդդէմ ձեր հակառակ վկայեալ բա-

բեայն բաղմայ, յոյր ներհակ արժանի վարկայք փորձել զձեզ և զանմեղութիւն իմ խիթալի միջոցաւ այնր գրութեան ձերոյ՝ հատընտիր բանիւք, ոչ այնքան ի վնաս տառապելոյս՝ որքան ձեր և ձերոյ աստիճանի Եպիսկոպոսութեան, վեհանձնութեան, կրօնի, եկեղեցւոյ և Ազգայնոյն իսկ ընդհանրապէս։

Մանաւանդ մոլեռանդն հաւատն իմ ի ձեզ այնքան նախապաշարեալ, որ յստանալս զգրութիւնս ձեր, իբրեւ զպատգամս սրբոյ յարգէի զհրաման ձեր, եւ պատասխանի առ ձեզ գրելն ի վաղիւ չախորժէի, եւ եռանդուն սիրով զգրեալս առ ձեզ բան կրկին վերծանել կամ սրբագրել աւելորդ համարէի մինչ ցամն 1857, զկնի որոյ ի պատճառս գործոյ նուիրակութեան ձեր, այն ինչ զգայի նշոյլ իմն անբաւարարութեան եւ փոխոխման ձերոյ, ապա անազանարար ծանեայ զկարծիս իմ սխալ՝ եւ մինչ տայի զպատասխանի յ8 Հոգտեմ. նախատակոծ գրութեան ձերոյ Յունվարի 23 ամսաթուով՝ գրեցի ձեզ եւ զայս. « գրէք զի եթէ զէպք պահանջիցեն, բառ առ բառ եւ բան առ բան տալոցէք պատասխանի գրութեանս, եւ այլն։ Ընդ որ ներումն պաղատելով ազաչեմ ո՞ր է այդ տարապարտ դէպք (1), չգիտեմ. բանզի եթէ Սրբազնութիւն ձեր եւ եթէ նուաստութիւն իմ յուսով բարեաց Վերին Տեսչութեան, փոխադարձ սիրով եւ

1. Ինանէր այժմ անիրաւեալ վիճակաւդ. և վայելեսմ զարգասիս արիաստանացդ և քաջ հաւատարմութեանդ յեպիսկոպոսդ հաւատացեալոց. և ի յուշ ահ միաւանիցամ չանկանիլ ի կեղծիս հոմուսպետաց։

նախանձելի սրբութեամբ սերմն բարի սերմանեցաք, յանդգնութեան եւ անկեղծութեան. արդ ուստի՞ երեւեցաւ եղինձն, զարմանալ արժան է. զի եթէ ասիցէք. ի յաճախս վստահ եւ յանպատրուակ գրութեանց իմոց, խոնարհագին դիմօք ասեմ. ձեր սրտառուչ, վեհ եւ քաղցր գրութիւնք, նա եւ վառումն անկեղծութեան սիրոյ այնքան գրաւեալ զսիրտ եւ զեռանդն հոգւոյս, մինչ զի ցայս վայր ի դրելս ձեզ գիրս չվերծանէի կրկին ի սրբագրել զվրիպակս տառից, թո՛ղ թէ խմաստից բանի, քաջայոյս գոլով թէ ընդ ում խօսիմ որդերաբար, ըստ եւ նա հայրաբար ոչ զիերութիւն գրչիս. այլ զյօժարութիւն ըղձիս ինքնազոհ բնեալով՝ ուստի մի կարծէք զգրեալս դիտաւորութեամբ իւիք, որչափ եւ զարդիս ի նմին համարման գրեմ զիրաւունս. եթէ զգայի թէ վիծուն եւ անարժան գրութիւնք իմ արժանանային ձերում զիտողութեան, վաղուրեան զսպեալով զգրիչս, օն անդր քան զսահման չելանէի ի նեղսրտութիւն ձեր, եւ ինձ ի բաժին բաժակիս դառնութեան, շատ համարեալ ինձ զվայելեալս սպասահարութեամբ ի չորից Ա.ռաջնորդաց Ա.թոռոյդ. բայց ընթացք եւ համարումն իմ ընդ ձեզ, որպէս եւ ձերն ընդ իս, արտաքոյ եղեն առաջնորդական եւ բահանայական վարչութեան ըստ պահանջման ժամանակի եւ պաշտման, յորում անշուշտ վայելէր ինձ զպատեհութիւնս անվեհեր եւ պարզախօս ատենի, իբրեւ որդւոյ հարազատի ընդ հօր զորովագութ, եւ այլն։»

Յետ որոյ ոչ դուք ինձ ներհակ պատասխանեցիք, եւ ոչ ես ունեցայ առիթ գրելոյ ձեզ ըստ առաջնոյ եղանակի

եւ այսպէս շարունակելով զպաշտօնական հրամանս ձեր ոչ իւիք զթեցայ ի պարտիս, եւ ոչ ի դիպոյ լուռ եղէ յանտեղի նախատինս ձեր, ոչ մտօք յանդիմանութեան. այլ առ ի բաց բառնալոյ ի ձէնջ զվարկուածն օտարոտի զյառաջեալն ի բարեկամաձեւ թշնամեաց, որպէս այժմ ինեթէ ըստ ձերում մտադրութեան կամեցեալէր իմ յանդիմանել զձեզ ի պատասխանի վեշտասանութերթ գրուածոցն ձերոց բազմապատիկ առաւելութեամբ ոչ միայն կարէի զսեթեւեթ կուտակումնս նիւթոց նորին հզօր ապացուցութեամբ ոչնչացուցանել. այլ եւ զներհակն ձերով իսկ գրուածօք հաստատել, եւ զթանգուզական իմաստ հնարիցն աշխարհալուր հռչակել եւ պահանջել ի ձէնջ իրաւունս ընդդէմ արդի անհասարակի գրութեան ձերոյ. սակայն որպէս միշտ, նոյնպէս եւ այժմ, չեն ինձ կամք կորուսանելոյ զպատիւ սիրոյ եւ բարեկամութեան խնդ ի ձեզ. թող ձերն առ իս այլափոխեալ իցէ եւ լինիցի, որժամ, ըստ փոփոխման ժամանակի, ունի փոխիլ եւ եղանակ արդի կամաց ձերոց, թէեւ յայնժամ վասն իմ յումպէտս ըստ սովենայնի։

Ցայս վայր պարտաւորիմ դառնալ ի համառօտութիւն պատասխանեաց քանի մի նիւթոց գրութեանց ձերոց. նախ՝ ի բանն. «թէ յայնմ թափէք ձիգն. թէ այժմ ժամանակն է չար, երաշտացեալ եւ այլն. երկրորդ՝ թէ էջք ամենայն թղթոց ձերոց չեն ազատ ի վատաբանութեանց ընկերաց, եւ այլն»։ Ի պատասխանի սոցին ընտրեմ օրինակել աստ զյօդուածս գրութեան ձեր առ իս, ի 1852, Մարտի 6. եւ որով անհարօրէն ի հարց զալ թէ որ զոմանս վատահամբաւեալ (իրաւացի պատա-

ռաւ) , ըստ ձերում ենթադատման ասի պարտաւոր, զինչ նուազ եւ նա, որ բամբասելոյն զազգ մի ողջոյն ։

«Շնորհաղարդ Տէր Յովհաննէս Խաչիկեան , Աւագ քահանայ բոլոր վիճակի Վանից սրբոյ Ամենափրկչեան .»

## Մտերիմ մեր եւ Հարազատ Սիրելի

« Տիրաւանդ ողջունիւ ողջունեմ զարժանաւորդ ողջունի . եւ շնորհ Նորին սուրբ տարբանալ ի սիրտ եւ ի հոգի քոյ մաղթեմ . եւ ապա զամ ի պատասխանատուութիւն քոյդ բանից յութն Նոյեմ. անցեալ ամի գրութեանդ , զոր ստացաք ի 21 Փետրվարի , որ արժանի են արժանաւոր պատասխանատուութեանց ։ »

« Խնդակցութիւն քոյ բարեսրտութեամբ սրտի եւ հոգւոյ յաղագս զալստեան մերոյ ի վիճակս այս մեզ վիճակաւորեալ , թէպէտ հարկ քաղաքական բանարարէ զմեզ լինիլ գրէն զոհարան . այլ արմատացեալ տաժանակրութիւնք նոցին , որոց եղաք փորձառու յայսմիկ փոքու ժամանակի , արժանի դատին զմեզ ողբերգութեան Երեմիայի Մարգարէի քան թէ բերկրաւիթ ուրախութեան հոգեհարազատ բարեկամի . այլ թէ այսպէս եւ թէ այնպէս, կամք ամենիշխան Տնօրինողին եղիցի օրհնեալ. եւ ըստ այսմ գտցուք եւ մեք պարտաւոր

միշտ բարերանել, թէ ըստ յաջողութեան եւ թէ ըստ ճախորդութեան (1)։»

Ազգասիրական վէպք արժանագով մշակութեան ձերոյ, թէ առ Սուրբ Աթոռս եւ թէ առ Հայրենակիցս եւ աղգակիցս քոյ Ջուղայու, յորէ անտի գալստեան մերոյ ասա, չեն մեսցեալ թագուն ի տեղեկութենէ մտաց մերոց, եւ ոչ անծանօթ ի նորալուր լսելեացս՝ մանաւանդ ի հաւատարիմ պատմութենէ անխարդախ վիպողաց, եւ որ առաւելն է՝ ի բարեշնորհ բահանայէն Տէր Յովհաննէսէ Գալստանեան, այր բանական եւ բահանայ Բարձրելոյ։ Որպէս լսեմ եւ տեսանեմ ի վորձոյ. զի ի մարդարէից ոչ հալածեցին հարքն Ջուղայեցւոց, եւ ոչք ոչ եղեն առիթ կործանման թէ Աթոռոյս եւ թէ տանց իւրեանց ի բնաձիր ժառանգութենէ ազգիս Հայոց, ոչ միայն ի Ջուղայ. այլ ուր ուրեք եւ կան ներկայ, ի բնաւորութենէ նոցա հալածեալ զկապ եւ դարման անձին վատառողջութեանց իւրեանց, եւ ատեալ զայնոսիկ, որք սիրեն զնոսա ի սրտէ, ցանկան յամենայն զօրութենէ բարեբաւութեան եւ օգտակարութեան իւրեանց եւ մատնելով անխնայ ի չարաչար հիդն եւ ի տանջանս՝ ջանան միշտ վասն նոցա վաստակել զվաստակս անանց բարութեանց, թէ վասն հոգւոյ եւ թէ վասն մարմնոյ. այլ զոյզն ուրեք երեւեցան, որք չամանդաղ աղետիւք մարթացան նշմարել ի վաստակս իւրեանց երախտաւորաց, եւ հաղիւ մարթացան գիտել թէ Ջանադիրքն

1. Ահա բնկրնկումն բնոց աշխուժից, վաղուրնոն խառատվանեալ յինքեանէ։

վան Իւրեանց ոչ թէ զփառս անձանց խնդրեն . այլ զփառս պարծանաց Իւրեանց Հայրենի ժողովրդականաց ։ Լինելով իմ մնայոյզ ի խորհուրդս նոցին տեսանեմ զի համարաբ դանդատանաց եւ շտեմարանք ցաւոց բազմապատկեալ են ի սրտիս ի մէջ սակաւ ժամանակի . այլ եթէ զամենայնն ճառեցից եւ հարազատիզ խնդ դանդատեցից, ոչ քեզ զօրէ առթել մխիթարութիւն և ոչ դանդատողիս տաց հոգեզուարճ բերկրութիւն . այլ ակնկալութիւն , որկախեալկայ յիմանալի լոյսն անմահութեանն ի Քրիստոս, Նա ինքն եղիցի քեզ և մեզ ի մշտնջենաւոր ողորմութեան իւրում անսպառելի առիթ մխիթարութեան և ցնծութեան ։ »

«Գոհ եմ զքէն, զի զաջակցութիւն իմ վասն լինելոյ քո պաշտօնակատար Առաջնորդական գործոց և կարեկից օգնական մերս վիճակաւորութեան ոչ արարեր անտես . այլ ընկալար սիրով ի սէր հոգւոյ ակամբ ծանուցեալ սիրոյն զքեզ , և հաճեցար լինիլ վշտակից և ծակից ծակցելոյս ընդ անլուծանելի սիրով աշակերտութեանն Քրիստոսի . ուրեմն Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ . և Տէր պահեսցէ զանձն քոյ յամենայն վնասատիպ պատահմանց , թէ հոգեւորականաց և թէ մարմնաւորականաց . և օգնութիւն նորա արագահաս արագեսցէ եւ ի գործս ձեր բարիս, եւ ժամանեսցէ միշտ ի թիկունս տը կարութեան ձերոյ զի զոլով ձեր զօրացեալ զօրութեամբ նորա՝ զօրասջիք բառնալ զխոչ եւ զիսութ ծանրութեան մերս վիճակաւորութեան հոգեւոր տան ձերոյ Աթոռոյս եւ ողորմելութեան վիճակեալ ժողովրդականաց տեզոյս ։ »

«Անարժան վարք եւ պարսաւանայ տեղի բարք կեղա-
կործ քահանայիցն Տէր Կարապետի Տէր Ս. եւ Տէր
Մինաս Բարսեղեանի տեղեկացեալեմ ի վշտասլա-
տում գրութենէ ձերմէ. իսկ երկրորդին՝ ի պատմութենէ
հրատարակեալ լրագրայ. եւ որպէս լուաք ի գրուա-
ծոյն՝ նոյնպէս եւ զննեալք տեսողութեամբ աչայ մերոյ
զայնս լինել հաւաստի, որոյ աղագաւ թէեւ ըստ
տրտաբին կերպարանայ ըստ զգեստուք կրօնաւորեալ
կատուն կամին ցուցանել զինքեանս արժանաւոր քահա-
նայ. բայց ոչ մտածեն տկարամիտքն թէ կեղծաւորեալ
պարկեշտութիւնն կեղծամ է. եւ իբրեւ մերկանան՝ երե-
ւի խոցահար վիրաւորութիւն գլխոց նոցա, այն է տդէտ
եւ անվայել քահանայագործութեանց իւրեանց։ Աւիսո՛ս
անուան սուրբ աստիճանի քահանայութեան, որ առա-
քելական ձեռնադրութեամբ մակագրեցաւ ի վերայ նո-
ցա. ափսո՛ս այնմ, որ ոչ գիտելով զյարգ եւ զզօրութիւն
նոյն աստիճանի՝ իբրեւ զմարգարիտ սուրբ էարկ առա-
ջի այնպիսի խառնակենցաղ խոզանմանից (1), որովք
երգիծանամբ մեք, երգիծացար և դու նախ քան զմեզ։»

«Գովասանութիւն գովանի վիճակաւորութեան ձերոյ
բազմաձեայ ժամանակաւ յերեւելի եւ ի մեծանուն քաղա-
քիս Կալկաթա, իբրեւ ճառագայթ արեգական յայտ յան-
ղիման երեւի նրբանկատ տեսողաց ամենից. քանզի եթէ
չէին լեալ այնպէս, ի վաղուց երեւէր եւ ճայն տարածայն
բազմապէս. բայց փառք չնորհաւորողին զձեզ բա-

1. Արդեօք պարսաւիչ հեղինակն, որպէս ճանաչող զօ-
գութեան սուրբ մարգարտին, չա՞րկ զայն ի կոխումն խոզ-
քորակաց բազմաց։

բելութեամբ , համեստ վարուք եւ քաղաքավարեալ բարուք . որչափ յարատեւեաս իբր յօտար վիճակաւորութեանդ , այնչափ առաւել փառս բարձրացուցանես եւ զսէր մարդասէր ժողովրդականաց տեղւոյդ վայիր առատութեամբ առ քեզ գրաւես (1) . մինչդի ամենեքեան հոգեշահ բանից քոց անսան , եւ , իբրեւ հօտ բանաւոր , ղեկոտ հովուասլտին ընթացող հովուիդ ընթանան , ըստ որոյ սիրեն զքեզ սիրովն նորա , եւ զամենայն զկամս քոյ կատարեն համարելով թէ այն է հաճոյն Աստուծոյ , եւ այլն : »

Աղաչէն վերին գրութեամբդ ձերով յայտնեցաւ ոչ միայն վատաբանութիւն ձեր առ կրօնակից միաբանս , առ եպիսկոպոսս , առ կենդանիս եւ հողոցեալս . այլ եւ առ համօրէն ազգս Հայոց ի բնաւորութեան անդ ի հակառակն կոչին , այլ եւ իմ՝ անարժանիս փանաքի յարդ ի պատիւն քահանայութեան եւ կառավարութեան վիճակիս նախ բան զձեզ . եւ այն՝ ոչ միայն յաշխուժութեան ժամանակի երիտասարդութեանս . այլ եւ յաւուրս ձեր եւ զկնի ուսանողելոյս ի ծերութիւն , (ուր դադարիլ սկսանին կիրք , եւ բուսեալ նորոգին ոստք առաքինութեան եւ փորձառու խոհականութեան) ցամն 1857 , եւ կաղ ի կաղ՝ ցամն 60 էիս վասն ձեր մաքուր հոգեկիր . եւ զկնի ի ծագիլ ամն պահանջի արդարութեան, ապա եղէ մոլի խելագար. բայց չէ այնպէս , որպէս եւ անիրաւ պահանջ և դրպարտական փաստ գրութեան ձեր վկայեն ի դատաստանի ողջախոհ քննչաց . եւ որոց միտք չեն կուրացեալ ախտիւ նախանձու՝ անաղօտ լուսով արդա-

1 . Երէ չարակնութիւնք սուտ եղարց թոյլ տայցեն ։

բութեանս կարեն խմանալ զՀնարս Հնարիս ձերոց, ոչ այլ ինչ, քան նպատակ կորուսանելոյ զիս ի տարապարտուց։ Թող լիցի զոր կամիցդ. և ինձ միայն պաշտպան լիցին խիղճ իմ և Աստուած։

Նա թէպէտ վերոյիշեալ բանիւք անթերի յայտնեցան իրաւունք մեր ընդդէմ արդի իրաւանց ձերոց. սակայն յօժարիմ օրինակել նաև զմին ի յոդուածոց 1855 ամի. Յուլիսի 8 գրութեան ձերոց առ իս յորժամ խնդրեալ էի քահանայ մի արժանաւոր ի փոխանորդութիւն Տէր Մկրտչի Յ. Տէր Ղուկասեան։

«Փոխանորդն Տէր Մկրտիչ քահանայի Յ. Տէր Ղուկասեան արդէն Տէր Յարութիւն Տէր Ստեփաննոսեան գտանի ուղևորեալ աստի. ընդ որ և Տէր Յովհաննէս Մկրտումեան վասն Զիչրու. իսկ յաղագս փոխանորդի հանդուցելոյ (Տէր Յովհաննէս Գալստան) կամք ի վարանս խորհրդոյ. զի ըստ որում չէք անտեղեակ բնաւորութեանց քահանայից տեղւոյս. դժուարին լինի մեզ առաքել զայնպիսի ոք, որ չիցէ արբեցող, բարձրամիտ եւ կամապաշտ, որպէս դուք կամիք. զի բաց ի միոյն զողջիք ամենեքին հարուստ գտանին ունակութեամբք այնոքիւք. ուստի կարգադրել այնպէս բարւոք համարեցաք, զի թէ կարելի իցէ, համոզեսջիք զժողովուրդն Սէյդաբադայ առանց ակամայութեան տալ ձեզ զՏէր Նիկողայոս քահանայն իւրեանց, և այլն։»

Արդ՝ կարծեմ, այսքանս բաւական լիցի արդարացուցանել զիրաւունս տեղական վատարանութեանց զոմանց ի միարանից, ոչ առանձին կրիւք. այլ արդեամբք զործողութեան նոցա, որոց վասն զրեցան, և առաւել քան

զառաւել դուք կնքեցիք ձերով վկայութեամբ որպէս ականատես ։

Գամայժմ յայլ պարբերութիւն բանից ձերոց . ի բանն թէ . «որոց զբարիս եօթն և տասն ամք վայելեալ չեղէ երախտագէտ , և այլն » ։ Խնդրեմ ասել թէ այս միՈ՞ն է ի հնարեալ նեռից զրպարտութեանց ձերոց առ իս արձակեալ ի վատաբանութիւն և ի թշնամութիւն ընդ ժողովուրդն իմ տեղւոյս , այր ներհակ յանդիման առնեմ ձեզ կարդալ զթղթեանս իմ զրեալս աստի, մանաւանդ ձերածանոյց Նոյեմ . 8 գրութիւնն ։

«Ի պակաց բանիցս և գրութեանցս արժան վարկանիմ յիշել և զչնորհակալութիւն իմ զհամայնից ժողովրդոց վիճակիս , որք առաւել բան զիմ փանաբի արժանաւորութիւն յարգեն և պատուեն զիս սիրով . և յանմխիթար կեանս իմ ասպնջական լինին միշտ այցելութեամբ, և այլն ։ « Որովք զիտելապարտ է, նախ քան զձեզ և ի ձեր իսկ ժամանակ եղեալ է անձնաւոր շնորհակալութիւն և երախտագիտութիւն իմ առ նոսա և նոցայն՝ առ իս . և եթէ իւիք չփոթեալ առ ժամանակս մի , այն ևս՝ ի շնորհս ձեր . զի առ ի պահպանել զպատիւ ձեր , արատաւորեցի զիմն բամբասանօք , թէ չվայել էր ցայն վայր ձեզ ջատագով և ախոյեան լինել , որպէս արդի կշտամբանք իմ յամանց , որ , ըստ իմիք , վրէժխնդրութիւն է առ այն . սորա վկայն և դատողն ինքն Աստուած . և յուսամ՝ չունիցի անագանել արդարութեամբ իւրով ։

Ի բանն թէ. « զմիսաբան քահանայս վատաբանելով գրեցի՝ զՏէր Յարութիւն Յակոբն պահել աստ , եւ զՏէր Մկրտիչ Տէր Կարապետն առաքել ի Զիչրայ ,

և այլն, եւ թէ մեր սկզբնապատճառ եղեալ վատաբանութեան Տէր Մկրտչի, արկաք զյանցանս մեր յայլոց վերայ, և այլն »։ Որում թէեւ բաւական էին վերոյնշանակեալ գրութեան ձերոյ խմաստք. սակայն յօժարիմ առաւելապէս բացատրել թէ ո՞վ՝ սկզբնապատճառ վատաբանութեան նորին Տէր Մկրտչի, ներկայ հայասական բանից ձերոյ. ուստի թոյլ խնդրեմ օրինակել ի ներքոյ զձեր 1851. Դեկեմ. 15 գրութիւն, որ ընդ թուականի իմոյ բամբասեալ անդրանիկ գրութեանն առ ձեզ համեմատեալ, 7 աւուրք միայն զանազանի. եւ զայս առնեմ ոչ ի դիմադարձութիւն. այլ յապացուցութիւն արդարութեան իմոյ. ուստի յուսամ թէ չզայրանայք։

« Արժանապատիւ Արրակրն Տէր Յովհաննէս Խաչեկեան, Արժանամեծար Աւագ երէց վիճակաց Ամենափրկչեան Վանայ »

« Գրութիւնք մեր առ ձեզ հետ զհետէ, յուսամք, հասեալ իցեն առ ձեզ, որոց պատասխանեացն եւ մեք ակն ունիմք։ Ի վիճակաւորին մեր աստանօր Առաջնորդական պարտաւորութեամբ հայցեալ զվիճակաց մերոց Հնդկաստանի, մանաւանդ զԿալկաթու՝ տեղեկացաք ցաւօք եւ տրտմութեամբ, զի պատուելի եւ բարեպաշտ ժողովուրդք մեր կան ի մեծի դայթակղութեան ի մասին անարժան վիճակաւոր քահանայից ոմանց, որոց տեղեկացաք հաւաստեաւ ի բողոքագրութեանց ժողովրդոց տեղոյդ առ աստ (1) եւ ի լրագրոյ Արդասիրի տեղոյդ։ Զկնի այսոցիկ ցաւելով՝ ի նախորդէն

1. Ցնս՝ շատ ի գրութեանց քոց։

մերմէ հանգուցելոյ եւ գտաք զի տուեալ կոնդակն առ Տէր Մկրտիչ Տէր Կարապետեանն այսպէս ունի պատուէր. զի նախ 2 ամս վարիցէ զպաշտօն իւր ի Սէյդաբադ, եւ իշրանալ երկու ամացն վերադարձեալ անտի առ այդր՝ վիճակաւոր լիցի տեղոյդ 3 ամս. զորմէ անշուշտ գիտէք եւ դուք։ Արդ լսեմք զսոյն Տէր Մկրտչէն թէ Ջրեալ ըզ պատուէր կոնդակին իւրոյ եւ զշրաման առաքողին կալեալ է զվիճակաւորութիւն տեղոյդ առանց նախասպէս գնալոյ ի Սէյդաբադ, ի նշանակեալն իւր վիճակ։»

«Ի տրտմութիւն հոգւոյ մեր լսեմք եւ զնմանէ. թէ մեռելոտի կեղծամիւք մատչիւր յահաւոր խորհրդակատարութիւն սրբոյ Պատարագի, (զոր դուք ասա արգելեալէք) եւ թէ ընթացք քահանայութեան նորա գայթակղութեանց է մայր, որովք եւ բարեպաշտութեանց պատուելի ժողովրդոյ մերոյ ընդ յետս կաղալոյ եղեալ պատճառ ի յուսահատութիւն եւ ի գայթակղութիւն արկեալն զնոսա· յայս սակս սպարտաւորութիւն մեր համարեցաք, ըստ մարթելոյ, բառնալ զգայթակղութեանցն պատճառ. եւ զի Տէր Կարապետեանն Ջրեալ զպատուէր հրամանի իւրոյ կոնդակաւ Առաջնորդին՝ վարէ զպաշտօն իւր այդր, ուր չէ արժան, յայս սակս ոչ խիղճ համարեցաք մեզ հանել ի պաշտօնէ վիճակաւորութեան, յորմէ ստ ըստ հանոյս՝ եւ ի տեղի նորա առաքեցաք մերով կոնդակաւ զարբեհամբաւեալ Տէր Յովհաննէսն Գալստանեան, զնախածանօթ բարեկամն ձեր. ուստի ի ժամանիլ նորա այդր՝ Տէր Մկրտիչ Տէր Կարապետեանն պարտ է ելանել ի վիճակաւորութենէ. եւ սրբակրօն Տէր Յովհաննէս Գալստանեանն փոխանակել զտեղի նորա, և այլն։»

Ահա պարզ ապացոյց արդար բանից ձերոց, որպէս հանճարաւոր բանս մեր կարծելով՝ արիաջանութիւն իմն համարելով՝ զՏէր Յովհաննէս Գալստանեան, զարժանաւոր քահանայն, փոխանակ Տէր Մկրտչի յինէն վատաբանելոյ, հանիւր ի փոխանորդութիւնն նորա. եւ թերևս այս անբարեկամն ի հաստատութիւն դիմադրութեանս. մատիցուք յայլ իմն յօրուած բանի թղթոյ ձեր յառաւել ապացուցութիւն, զոր գրեցիք զկնի մահուան նորին Տէր Յովհաննէսի Գալստանեան ի 1855 ամի · Յունիսի 8 թուականաւ :

« Ասդ ասնեմք Սիրելութեանդ զպատճառն, որ հարկադրեաց զմեզ վիճակաւորել զնոյն քահանայ (այսինքն Տէր Յովհաննէս Գալստանեան) վասն տեղոյդ, որ առ Պարոն Ամիրխան քենակալն ունելով զհաշիւ պահանջից, քաջայոյս էր ակնկալութիւն նորա, թէ ամբողջ ունելով զդրամագլուխն տոկոսեօք նորա, այնչափ հաւատացեալ էր նորա եւ ի սէր, զի եթէ յառարկայ խօսից մերոց զէպ լինէր բառս ինչ դիպչողականս խօսել զնոյն Պարոնէ, քահանայն զժկամակեալ ի սրտի այլաբանութեամբ դիմայն յայտնէր զկիրս իւր. ճշմարտութիւնն ետ նմա փորձառու լինել անճամբ անձին : Ուստի մինչ արարեալէր յաւուր միում զհաշիւ ընդ Պարոնին այնմիկ՝ գտեալ էր զպահանջս իւր 70 թուման փոխանակ 400ին, զոր ինքն ունէր ի մտի. յայդմանէ միջաբեկեալ յուսոյ նորա դիմեաց առ մեզ դարկայցեալ դիմաց, դողդոջիւն ծնգովք, բարեխմամբ լեզուի. եւ պատուորով աճապարանօք յայտնեաց զգործոյն հանգամանս, աղաչեաց շնորհել ինքեան զվիճակաւորութիւն

տեղւոյդ. զի՞ առանց այնր, ասէր, տուն իւր ունի կործանիլ, եւ զերդաստան իւր նեղիլ յաղքատութենէ։ Մեր ի սրտաշարժ դրութենէ աղերսից բահանային, ի գութ կարեկցութեան շարժեալ խոստացաք նմա ի նմին ժամու կատարել զինդիր նորա, թէպէտ յետ այնր քաջ խելամուտ եղաք անբարեխառն հետեւութեանցն, որք ունէին ծնանիլ ի նորին վիճակաւորութենէ. սակայն առ ի չդժրել խոստման մերում եւ իշտալ նմա կարծիս ստելութեան առ սիրելիս մեր ոմանս, զամենայն վիշտս յանձն առեալ առաքեցաք զնա վասն տեղւոյդ վիճակաւոր (1)։ Այդարեւ կարի դառնաղէտ եղեւ թէ վասն մեր և թէ վասն ձեր վիճակաւորութիւն նորա, զորոյ զփորձն թէ մեք եւ թէ դուք վայելել արժանացաք, եւ այլն։»

Այդարեւ պատկառէ ընութիւն իմ յասել ինչ այլ ընդդէմ պատճառի պահանջուն ձերոյ, որ համարի էական նիւթ եւ հիմն ամենայն վրէժառու գրութեան ձեր. թողում ձեզ դատել. եւ եթէ հիմն այսպէս ինքնախախտ՝ զի՞նչ այլ ապաւինութիւն չինուածոյն ի վերայ, որ վասն չէր հարկ ինչ այլ խօսելոյ կամ մատնելոյ զանձն իմ ի տարժանակրութիւն ընդունայն վաստակոց. սակայն դեռեւս ոչ ձանձրանամ ի կարեւորն յառաջել բաւարարութիւն ձեր։ Ահա՛ տեսէ՛ք, զթուական կոնդակի Տէր Յովհաննէսի Գալստանեան, 1851. Հոգտեմ. 26. եւ բննեցէ՛ք զժամանակ չուելոյ նորա այդի՝ յութն Դեկտեմ. որէ թուական եւ օր անդրանիկ գրութեան իմոյ աստի առ ձեզ, զոր ասէք պատճառ եղեալ վնասու, եւ այլն. սակայն բարեբաստութիւն

1. Ահա՛ քեզ հակասութիւն անբնական։

համարի ասելն թէ յայնժամ տակաւին հեռագրական գիծ (տէլեգրաֆ) տեղոյս ոչ հաստատեալ, եթէ ոչ ասելոյ էիր թերեւս այնու միջոցաւ իսկեմ ձեզ ծանուցեալ, թէեւ նոյնմբ եւս անկարելի՝ եւ եւ դարձ բանից աստի ի Պարսկաստան ի միում աւուր։ Այդ մնայ հասկացողացն դատել. եւ դառնամ ես յեղանակ ընտրելոյն ձերոյ զիս ի պաշտօն ընդհանուր Աւագ երիցութեան եւ որսալոյն ձեր զիս ի կորուստ։

« Ի թէմական Առաջնորդէ Սրբոյ Վանիցս Աժենափրկչեան, ի թաղդէոս եպիսկոպոսէ, առ Սիրելի հարազատ որդեակ, Շնորհազարդ Սրբակրօն Տէր Յովհաննէս Խաչիկեան, Աւագ երէց Կալկաթու, ողջոյն փրկչաւանդ։»

« Ցոյդ ընդ ողջունիս հայցեմ ի շնորհացն Աստուծոյ հանգուցանել ի բեղ զարդիւնարար պարգեւս եւ զներգործութիւն նորա եւ ցօղել ի հոգի քոյ բազմաշնորհ ձիրք Սրբոյ Հոգւոյն, որով լիցի քեզ բարգաւաճել հոգեւաբար բարեօք ի մխիթարութիւն քոյ եւ ի մեր պարծանս։»

« Ցլինելոյ մեր թէմական Առաջնորդ Սրբոյ Վանիս ունիս տեղեկանալ կոնդակաւ իմով, որ ընդ թղթոյս հասանել ունի այդր ի ձեռս սրստուելի եկեղեցականաց տեղոյդ, որով եւ Աթոռական լեալ սրբոյ Վանիս եւ Աղգիս, որք ընդ նովաւ, ի խոյզ եւ ի խնդիր ելի մեծարուանձանց եւ արժանայարգաց, եւ զտի զԱրժանապատուութիւն քոյ մի ինոցանէ լինել. լուայ զանձնական ապաքինազարդ քոյ կենցաղավարութիւն եւ զհաստատուն

ժրութիւնդ ի սպասուն քահանայական պարտաւորութեանցդ. լուայ եւ զհաւատարիմ փութաջան վաստակս քոյ ի գործ նուիրակութեան քեզ յանձն եղելոյ ի Սրբազան հանդուցելոյ իմոյ նախորդէ, որոյ հաւատամ զի վկայ հաստատուն տեսանեմ եւ կենդանի խնդրամատոյց թուղթն հասարակութեան տեղոյդ առ սուրբ Աթոռս սակս ունելոյ զքեզ սիրելին իւրեանց, մինչեւ ընդ ինքեանս։ Ուրաջինն գովանայ է արժանի, եւ երկրորդն՝ երախտագէտ շնորհակալութեանց։»

«Ուստի եւ մեք վասն քոյոյդ արիաջան երիցուի ուսանիմք ի Սրբազան Ուռաբելոյն թէ. «որք բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին (2), մանաւանդ որք աշխատիցին բանիւ վարդապետութեան»։ Համեմատեալ զքահանայավայել զաշխատասիրութիւնդ ընդ հրամայելոյն Ուռաբելոյն, տեսանեմ զքեզ բարւոք վերակացու լեալ հօտիդ, եւ աշխատեալ բանիւ վարդապետութեամբ. յայն սակս արժան դատեցաք մեծարել զվաստակ քոյ պարգեւաւ, որում զսիրելիդ իմ արժանի վարկայ։ Տամ Սիրելոյդ զծաղկեայ փիլոն մի կապտագոյն, զոր ստանալոցես մեծաւ յարգանօք ի դերասպատիս Եկեղեցեաց տեղոյդ. եւ յամենայն պաշտամունս կրեսցես զայն ի տրիտուր հաւատարմութեանդ եւ յարատեւոյ արժանաւոր կրօնասիրութեանդ։ Նա եւ մեծարեմ զքանս քոյ պատուանամբ իշխանութիւն ունիլ ի մէնք յամենայն ի կեանս քոյ վարիլ իբրեւ Ուսագ երէց, ուր եւ իցես, նաեւ ընդ

1. Հայեցեալ ի պատիւն այժմոյս՝ զարմանամք թէ հիմ շատացեալ երեքկին։

ստորագրութեանդ կցել միշտ զբաղդ Աւագութեան։ Եւ պարտին ամենեքեան, որք ընդ իշխանութեամբ եւ ի թեմի մերենն, ճանաչել եւ յարգել զհարազատ որդիդ իմ Աւագ երէց, որպէս և մեք անջնջելի (1) բանիւ մերով հաստատեմք զանուն Աւագ երէցութեանդ այսու գրով եւ ստորագրութեամբ մերով։»

«Դարձեալ ծանիր, Սիրելիդ իմ՝ որովհետեւ սպասուելի հաստատակութիւն տեղւոյդ խնդրեալ էին ի Սրբոյ Վանայ (նախ քան զմերն գալուստ) յերկարաձգել զթէմ քահանայագործութեան քոյ ի վիճակիդ, յոր կաս. որոյ վասն առ ի հաճել զկամս պատուելութեան նոցա, տամ քեզ սոփաւ թոյլտուութիւն մնալոյ ի վիճակի քահանայագործութեանդ, ցորչափ զոս եւ ժողովուրդդ տեղւոյդ հաւասարաբար համ եւ հաւան լցեալ ընդ երկարաձգեալ թէմակալութիւն քոյ։»

«Եւ արդ, Սիրելիդ իմ՝ թեւակոխեա՛ յայսմհետէ քան զոր յառաջն, յառաջադէմ նկրտիլ ի բարի համբաւաշխատասիրութեան քոյ եւ Ջանա՛ առաւելուլ զհոգ մատակարարութեանդ ի վերայ հօտին Քրիստոսի քեզ յանձն եղելոյ. յանախեա՛ մարդասիրաբար զաղգասիրական փոյթ քոյ եւ խնամ առ ամենեսին, չխնայելով զվարեւորն ի քէն. բաղմապատկեա՛ զաշխատասէր Ջանս քոյ եւ յօգուտ ի փառաւորութիւն Սրբոյ վանայս եւ հայրենեաց քոց, յամենայն ի դէպս բարեպէս, յոր թէ հաստատուն կայցես եւ Ջերմ սիրով աշխատասիրեսցես

1 · Բանի՝ սիայն պատկանելի Հրութեանն Աստուծոյ. ըստ այնմ «երկինք և երկիր անցցեն և բանք իմ ոչ» և այլն։

յամենայնի՝ կրկին վարձուց (1)արժանի եղիցիս. մին ի նուաստութենէ իմմէ, որ, լուեալ զբարի գնայից քոց համբաւ, մեծարեցից զքեզ եւ պատուադիր առանձնաշնորհութեամբ, եւ միւսն ի Վեհափառագոյն Փրկչէն Յիսուսէ, յորմէ ունիս լսել ի հանդերձեալն զերանալիցն հրաւէր. «Ծառայդ հաւատարիմ՝ մուտ յուրախութիւն Տեառն քոյ:»

«Կնիք դնելով բանիցս՝ բարեմաղթեմ ի Տեառնէ հանգուցանել ի քեզ հոգի հեզութեան եւ երկայնմտութեան, շնորհօք զարդարել զանձն քոյ եւ լինիլ քեզ հովանաւոր մարդասիրութեամբ նորին յամենայն կեանս քոյ եւ ի գործս: Ի Ջուղայ. Յամենափրկչեան Սուրբ Վանս. ի մին Յուլիսի 1851:»

(ձեռա.) Պարսկաստանի եւ Հնդկաստանի
Հայոց Եպիսկոպոս Թադէոս

«Ի Թէմական Առաջնորդէ Ամենափրկչեան վանիս, ի Թադէոս Սրբ Եպիսկոպոսէ, առ Արժանապատիւ եւ Սրբանուէր Տէր Յովհաննէս Խաչիկեան, Աւագ երէց վիճակաց Ամենափրկչեան Սուրբ Վանիս Ջուղայու, ողջոյն օրհնառաք:»

«Գիտութիւն լիցի քեզ, զի զքահանայից, որք ի զանազան քաղաքսդ Հնդկաստանի վիճակաւորեալ են մոայն եւ ինքնագլուխ, լսեմք զի ոմանք ի նոցանէ ապօրինաւոր

1. Ահա հատուցումն կրկին վարձուցն, զոր ընկալայ ի Ն. Բ. Սրբազնութենէ:

ընթացիք եւ անվայելուչ գործածութեամբ զպաշտօն իւրեանց պատճառեն զրազմատեսակ անկարգութիւնս, որով կորուսանեն զպատիւ կրօնի եւ իւրեանց, եւ պատճառ լինին զայթակղութեանց ժողովրդոց, որոց եւ հաւաստեաւ տեղեկացայ անբաւարար եւ բողոքարկու թղթովք ոմանց ժողովրդոց ի ձեռաց վիճակաւորաց իւրեանց. յաղագս այսր կարգեմ զԱրքութիւն քոյ վերատեսուչ լինել ի վերայ գործոց եւ ընթացից եւ բարուց այսօրինակ անկարգարար վիճակաւորաց վասն լինելոց նոցա առաւել մերձաւոր եւ մօտակայ ձեզ, քան թէ ինձ. եւ սովաւ տամ քեզ լիակատար կարողութիւն, զի յորժամ դէպ լիցին ասպետալս խռովայոյզ անցք ի մէջ քահանայից եւ ժողովրդոց՝ դու հաստ լիցիս այնոցիկ քննելով զպատճառ իրացն։ Եւ թէ մեղքն ի վերայ քահանային անկցի՝ նոսա քաղցր խրատիւք համոզեսցես նմա դառնալ յանվայել ընթացից իւրոց. թէ ոչ անսայցէ այնմ՝ յանդիմանութիւն յաւելցես ի վերայ. եւ եթէ նովիմբ եւս ոչ ուղղիցի. սաստկութեամբ խրատեսցես. եւ ասպետալ միջոցաւ խաղաղութիւն ձգեսցես ի մէջ քահանային եւ ժողովրդոց արմատախիլ առնելով զանպատշաճ տարաձայնութիւնն եւ կարգաւորութիւն սերմանելով փոխան նոցա. իսկ եթէ յանցանքն ի կողմ ժողովրդոյն լիցի՝ քահանայավալել խրատիւք քարոզեսցես զնոսա ի խաղաղութիւն և ի միաբանութիւն համոզելով զնոսա ընդ վիճակաւորին իւրեանց, յուշ առնելով նոցա զբանն Յիսուսի. «թէ որ զձեզ (զքահանայս) անարգէ՝ զիս անարգէ». իսկ եթէ դայթակղարկու քահանայն դեռ յամառեալ յանկարգութեան իւրում ի վերնչանակեալ

երիւք միջոցքն եւ ոչ ուղղիցի, յայնժամ պարտաւորութիւն է քեզ ծանուցանել ինձ փութանակի զանցիցն որպիսութիւն, զի ես իմով Առաջնորդական պարտաւորութեամբ և արտօնութեամբ բերել տայ զայնպիսին աստանօր. և ըստ արժանոյն խրատեցից զնա։»

«Վասն հրատարակութեան հրամանագրոյս այսորիկ ընդ ամենայն վիճակս Հնդկաստանի, և ի տեղեկութիւն քահանայից վիճակաւորաց տամ քեզ իշխանութիւն օրինակելոյ զայս թուղթ և զօրինական առաքելոյ ընդ ամենայն վիճակն իմ Հնդկաստանի ի տեղեկութիւն քահանայից և ժողովրդոց նոցին։ Սիրելիդ իմ՝ ո՛ղջ լեր ի Տէր ամենայն մխիթարութեամբք։»

Մնամ ձեզ բարեացակամ աղօթարար

(ձեռ.) Պարսկաստանի և Հնդկաստանի
Հայոց Եպիսկոպոս Թադէոս։

Ի Ջուղայ. յԱմենափրկչեան Սուրբ Վանս.
Ի 31 Յուլիսի 1851։

Վերոյ օրինակեալ կոնդակաց մին, իմա զառաջինն, ի 12 Հոգտեմ. հասեալ ի ձեռս իմ նախ քան զիմ Նոյեմ. 8 անդրանիկ գրութիւնն, որպէս և զատացումն խոստովանեալ ունիմ նոյն իսկ նախկին գրութեամբս։ Ահա այսչափս անմոռանալի լիցի. թէ մինչ խորհրդածէի զհրաժարականս ի հրաւէր և ի պարզև մեծարանացն դրել, կառավարիչք եկեղեցւոյ տեղոյս բուռն ստիպանօք արգել ետուն, և բարեմտութեամբ մատնեցին զիս

յորդայթ սերկեանս փորձանաց ըստ իմում նախատե-
ութեան, որ լիով գուշակեցան յիմում նախկին
գրութեան. բայց չիք միաս առաջի արդարութեանն
Աստուծոյ. մնասցէ՝ որ ինչ է. և դարձցուք մեք յայլ
իմն յօդուած բանի։

Մին ի հզօր և դատապարտական փաստից ձերդ Սբ-
բարձրութեան է և այս. «թէ բարեաւ յաղթելն օգուտ
համարելով պատկեցաք զՍրբութիւնդ Աւադերիցական
տիտղոսիւ, ծաղկեայ փիլոնիւ, հայրապետական պար-
գևեալ խաչիւ, գաւազանաւ իշխանութեան, և որ
առաւելն էր, կայսերաշնորհ Ասպետական չքանչանաւ,
և այլն.» և միւսն թէ. «ծագեցաւ զրաղրութիւն ընդ
մէջ մեր և Սրբութեանդ ի ձև անբաւականութեան յամին
1857. որոյ սկզբնապատճառն եղև այն. զի մինչ առա-
քեցաւ յամի 1853 կոնդակն նուիրակութեան, Սրբու-
թեան ձեր թողլով զայն անգործ կամ, զի ասացուք,
որպէս ասէիրդ, յանհաւանութենէ կամ ի հակառա-
կութենէ Պարոն Եկեղեցպանի, ոչ ազաչելով բեզ
գործադրութիւն նոյն կոնդակի, գրեցեր առ մեզ թէ
չէ կարելի զայն կատարելն. և մեք զԱրժանապատիւ
Տէր Մ՝Տէր Յովակիմեան առաքեցաք նուիրական
պարտաւորութեամբ. իսկ ձեր ի լուր համբաւոյն այնմիկ
ամապարեալ զկոնդակն եդիք ի գործ հակառակ ձեր
յայտարարութեան և զգործ նուիրակութեան վերջաւ-
րեցիք, զի մինչ Տէր Մարտիրոսն այդր ժամանեցաւ,
ամենայն գործն յանգ ելեալ՝ մնացեալ դատարկաձեռն
ի միաս Սուրբ Վանայս և յամօթ առաքողիս զնա. զոր
և միւս առիթ կալար ի ձեռին քում այպանելոյ զկառա-

վարութիւն Վանայս։ Մեր իրաւունք ի ձէնջ պահանջելի այս էր. զի եթէ զգործն առ քեզ յանձն եղեալ ոչ կատարեցեր կամ ոչ ունեցար միջոց կատարելոյ և պարզ բանիւ գրեցեր մեզ ի 28 Սեպտեմ. 1855 ամի, թէ «ցայսմամբ երկարաձգոր զիտողութեամբ պարագայից գործոյս ոչ այլ ազգ ասահովութիւն և արդիւնաւոր միջոց կարացի ընտրել, առաւել քան զթողուն յարդեան դրութեան (այսինքն անգործ և յզկայ առեալ դրութեան) և յայտնել ձեզ (որդիական խոնարհութեամբ՝ կետիւբ ծածկեալ) մինչ զոր ինչ հրամայիցէք կատարել սիրով» — ընկալար ի մէնջ պատասխանի այնր յ31 Դեկտեմ. 1855 ամի. 551 համարաւ թէ. «առաջարկեամբ բեզ զի թոյլ տաջիք Լմեալ գործոյն այնմիկ յիւրում ամիսոփեալ և զկայ առեալ դրութեան առանց խիք աշխատ լինելոյ և զշնարս հնարելոյ սակս առաջացուցանելոյ զայն. . . վերջաւորարար ազգ առնեամք. զի մի երբէք ձեռնամուխ լինիք յայն գործ. իսկ եթէ նախ քան զհասանել թղթոյս սկզբնաւորեալ իցէք զայն գործ՝ բաստուիրեամ թողուլ ի կախ. մնասցէ՛ զի մի ապարդիւն լինիցի ակնկալութիւն Սրբոյ Վանիս և վաստակ ձեր. այլ մնասցէ՛ ժամանակ մի, մինչ արասցէ այց Աստուած տաճարին իւրում սրբոյ, որպէս և դուք յուսադրեալիք։ Մեր իրաւունք իքէն այս էր, զի եթէ մերժեցեր զպատուական գործոյս՝ զի՞ ևս միջամուխ լեալ յայն կատարեցեր. սակայն տեսար զի ընդունայն ջանք և անօգուտ վաստակ էր, եւ այլն։»

Ի Պատասխանի առաջնոյն. «թէ բարեաւ յաղթեալն օգուտ դատեցիք». ամենախոնարհ զիսնք հարցանեմ,

թէ ո՞ր էր չարն կարօտաւոր յաղթութեան բարոյն, զի Աւագ Երիցութեան տիտղոսն և ծաղկեայ փիլոնն յառաջ էր քան զմի ծանօթանալն ընդ ձեզ և գրելն զգիր, որպէս վերոյ ձեր գրեալ կոնդակքն վկայեն և Խաչնհայրապետաւանորհ ի 1854 ամի. Հոդտեմ. 19 և կոնդակի Հոգևոյս Ներսիսի Կաթուղիկոսի առ իս գրեցելոյ թուականն յայտնէ, որպէս և ձեր գրութիւնն առ նա կանխապէս, յորժամ չէր բնաւ գիտութիւն ինչ անցեալ ընդ մէջ ըստ ձեր վկայելոյ թէ ի 1847 ամի ծագեալ անբաւականութիւնն ի համապատասխանիս. ըստ որում այսպէս՝ ո՞ր չար, և ո՞ր խոչ դիտուարալոյծ ընդ մէջ կայր, զոր դուք բարեաւ յաղթելն օգուտ խմացայք։

Ահա գրեմ և զօրինակ գրութեան ձերոյ առ Սրբազնակատար Կաթուղիկոսն Ներսէս, վերաբերելի խաչապարգևին, զոր դուք առաքեալ էիք առ իս։

## « Ձերդ Սուրբ Օծելութիւն »

### Ողորմած Տէր

« Արժանաւորութիւնք արժանաւորաց նման ստուերի զհետ նոցա ընթանան. այլ եթէ արև չնորհաց ոչ ծագեսցի ի վերհագունից վասն արժանաւոր ստորադրեցելոց, իբրև ի խաւարի մնալով, ոչ արժանաւորութիւնք նոցա ստուեր ձգեն, և ոչ ապիրատիցն անարժանութիւնք ի յայտ դան։ Վասն այսորիկ յամենայն ազգս ի բազմացուցանել զարարեգործաց թիւս, և ի նուազեցուցանել զչարագործացն, սահմանեցին վասն արժանա-

տրացն զարգև և զխրախոյս բաջալերութեան։ Ի վե-
ճակի խնամ գտի զչորս հոգևորականս, որոց իւրաքան-
չիւրն, ըստ սէնպէս վաստակոց իւրեանց և բարեմաք-
դութեանց արժանաւորք համարին քաջալերական
պարգևաց։»

«Առաջին է Անդրէաս վարդապետ Սարգսեան, միա-
բան Սրբոյ Վանիս Ամենափրկչեան, ծնեալ ի Ջուղայ,
դաստիարակեալ ի սպասու քահանայիկ ոմանց, ընկա-
լեալ զկարգ վարդապետութեան ի 1840 ամի ի Սրբազան
Խաչատուր Եպիսկոպոս Առաջնորդէ։ Զէ գիտուն որ.
այլ ունի զնոհեմութիւն և կարէ վարիլ ընդ ամենեսին
քաղցրութեամբ շահելով զժողովուրդն ըստ պատշաճին.
վաստակէ յոյժ վասն ժողովրդական գործոց զվէճս և
զտարաձայնութիւնս նոցա խաղաղելով։ Ի 1850 ամի,
մինչ Վանքն անտերունջ էր, սա այնպիսի խիզ եղանա-
կաւ պահեալէր զկառավարութիւն Վանիցն, մինչ ամե-
նայն ժողովուրդք Ջուղայու բաւարար էին զնմանէ. մեծ
արիաջանութիւնն, որ եղեալ է ի ժամանակս զօրաս-
հանջութեան, որ, ըստ ամենայն մասին ճիգն թափեալէր
վասն պահպանութեան ժողովրդոց. չունի համբաւ ինչ
չար։»

«Երկրորդն՝ Տէր Յովհաննէս Խաչկեան, ծնեալ ի
Ջուղայ յաղքատ ծնողաց, ընականապէս ուսումնասէր.
որ իւրով ջանացողութեամբ յաւէտ ստացեալ է զու-
սումն բերականութեան արհեստի. վարժեալէ ի Սուրբ
Գիրս։ Եւ, ըստ որում ունի բնական ճարտարութիւն
մտաց, չքեղ զրան իւր յարդարէ։ Զեռնադրի քահա-
նայ, իբրև 25 ամաց յառաջ, ի Կարապետ Եպիսկո-

պոսկ, վիճակաւորէ ի Բուշեռ քաղաքի։ Անկանի անդ մահտարաժամ. սա անձնադիր հովուութեամբ ի վերայ հօտին իւրոյ տընելով կառավարէ զնոսա հոգևորապէս։»

«Երկրորդ անգամ վիճակաւորի ի Սինկափուր քաղաքանդէն ևս իւրով բարւոք պաշտօնակատարութեամբ ի լրանալ ժամանակին, շնորհակալութեամբ ժողովրդոյն արձակեալ դառնայ ի Ջուղայ, ի հայրենիս իւր։ Արի ազգասիրաբար, և միշտ զօգուտն Վանայս կանուն ինքեան նպատակ։ Ի 1843 ամի ի հանդուցեալ Սուրենեան Սրբազան Եպիսկոպոսէ առաքի նուիրակ ի Հնդկաստան. և կարգեալ լինի վիճակաւոր դասաղլուխ քահանայ Կալկաթու։ Հասանէ ի Հնդկաստան և զգործ նուիրակութեանն արդիւնաւորութեամբ կատարէ, հաւատարմութեամբ առաքելով զդումարն առ կառավարութիւն Սրբոյ Աթոռոյս Վանայ առ կենդանութեամբ Սուրենեան Առաջնորդին։ Իւրով խոհեմութեամբ և բարոզութեամբ շահէ զսիրտս ժողովրդականաց Կալկաթու. պահէ զՋերմեռանդութիւն նոցա ըստ կարևորին առ կրօնն հայրենի, և, որ առաւել պարծանք է, որ, ընդդէմ սէյսալիս աղանդաւորաց, պահպանէ զնոսա իւր ի խաղաղութեան։ Ի ժամանիլն մեր Առաջնորդութեամբ ի Ջուղայ, վասն այնչափ դովանի վաստակոց նորա կարգեալ հաստատեցաք զնա Աւագ երէց ի վերայ ամենայն վիճակի Աթոռոյս Վանայ։ Ի ժամանակս մերոյ Առաջնորդութեան նա յօգուտ հոգևորականութեան, մանաւանդ Սրբոյ Վանիս և Ազգին իւրոյ, ցուցեալ զիւրն բարեջանութիւն՝ յորդորանօք իւրովք հաստատեաց զերկու դպրոցս ի Ջուղայ արդեամբք բարեպաշտուհի

Տիկին Մարիամու Յակոբ Յարութիւնեան և օրիորդին Թագուհւոյ Մանուկեան, երկուց քերց, որք բնակին ի Բէթաւիա · և յորդորանօք իւրով հաստատեաց առաքել զտարեկան դեղոցայս վասն աղքատաց Զուղայու · ասացաւ թոշակ վասն Շիրազայ քահանային, որոյ բնակիչք աղքատ լինելով՝ ոչ մարթանային պահել զքահանայ · և այլ մասնաւոր բարերարութիւնս առ բազում մասնաւոր անձինս ունի մարդասիրութեամբ (1) : » . .

« Այդ, վեհափառ Տէր՝ ըստ որում վերոյ յայտ արարեալ արժանաւորութիւնք չորից հոգևորականաց խոց վիճակիս արժանի են պարգևաց վասն առաւել ևս խրախուսութեան նոցա · ուստի պարտաւորութիւն համարիմ ինձ խնդրել ի Ձերդ Աստուածարեալ Հայրապետութենէ զի բարեհաճեսցի հօտապետութիւն ձեր զվիակս հօտի ձերոյ վարձատրել առաքելով վասն Անդրեաս վարդապետին զիսաչ վարդապետական, վասն Տէր Յովհաննու Խաչիկեան զիսաչ Աւագ երիցական շուրջանակի մանր ակամայեր, և վասն Տէր Յովհաննէսի Գալստանեան և Տէր Մարտիրոսի Տէր Յովակիմեան զիսաչս ոսկեայ, որով թէ նոքա և թէ մեք միալ ունիմք առաքելապատիվ շնորհապարտ շնորհայ Սուրբ Օծելութեան Ձերոյ · և նովիմբ միալ միշտ անձնաղիր ծառայութեամբ յօգուտ Եկեղեցւոյ և Ազգին : »

« Եւ ես միշտ պատիւ համարելով զծառայութիւն իմ,

1 · ի բաց թողաք զոր վասն միւս երկուցն խօսի կարի հանաստիւ :

վերապատուելութեամբ գրեմ զիս Զերդ Սուրբ Օծելութեան ամենախոնարհ ծառայ։»

(ձեռ.) Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց Եպիսկոպոս Թադէոս։

Ի Թէհրան. 1854. ի 24 Փետրվարի։

Ապաքէն ամենախոնարհ պաղատանօք և տխուր զգայմամբ համարձակիմ ձերոյդ ընդ ձեզ ի հարց մտանելթէ վերոյ մանրախոյզ նկարագրեալ արժանաւորութիւնք իմ յառաջ վարեալն ձեր յատենի Նորուն Բարձրը Սրբազնութեան ուղի՞ղ էին թէ՝ անուղիղ. զի եթէ առաջին՝ որպէս և է իսկ. ապա զի՞նչ այլ իրաւունք ձեր և ձերոյ բանից. թէ օգուտ համարեցիք բարեաւն յաղթել (չարին). և մի՞թէ ծանուցեալ ջատագովութիւնք ձեր չէին արժանի շնորհացն և պարգևացն (մինչ նախ քան զձերն առաջարկութիւն, ի նախորդէն ձերմէ անդրէն նշանաւորեալ զայնմանէ արժանաւորութեանցս յատենի Սրբազան Սինհոդոսին առնել ստիպեալ կայր). իսկ եթէ վերջին՝ զի՞նչ այլ պիտոյ սեթևեթելն անարժանեաց ի ձէնջ և ի ձերապէս վեհից, ի յաղթելն ինչ բարեաւ հանել զթակարդ իմն սոյնանման ի Բարձր և ի Սրբազան Ատենէ։ Ուրեմն նովին ունակութեամբ, ըստ ձերում եղբակցութեան բանի, պարտաւորեալ էիք և դրսրձրազոյն դուռն Տէրութեան Ռուսաց ի խնդրել և ի բերել ինձ զչրանչանն Ապաստութեան. զորին ի-

բաւունս ձեզ թողում լուծանել, (որպէս թէ այն էր թե-
ռութիւն ականց խնդրեալ և պարգևեալ խաչին. և
որով ընդելուզանել զայն ի փողփողուն դիրս կամե-
ցայք). մանաւանդ 1855. Դեկտեմ. 28 զգրութիւն ձեր առ
ի վասն այնր իսկ արժանաւորութեան խմոյ, ձեզ ըն-
թեռնուլ խնդրեմ, զորոյ զյօդուածն ևս գաղափարել
ասա ոչ անտեղի համարեալ։

« Զեռ թագուն մնացեալ ի տեղեկութենէ մերմէ ար-
գասիքն բարեգործութեանց ձերոց, թէ յօգուտ Սրբոյ
Վանից և թէ հայրենեացդ, զորս, իբրև ծառ բազմասա-
զարթ տնկեալ ի գնացս ջուրց բարեսրտութեան, պտղա-
բերեալէք վասն բազմաց. և յոգունք արժանացեալ են
վայելման ձերում բարերարութեան։ Այն ևս բաջայայտ
է մեզ, թէ բազումք փոխանակ ճանաչելոց երախտեաց
ձերոց՝ խօսեցեալ են զքէն վատաբանութիւն . . .
Դուք թէպէտ, ըստ խոնարհութեան ձերոյ յայտնէք
զանարժանաւորութիւն ձեր սակս խաչընկալութեան
պարգևին. սակայն մեք իսկապէս արժանի համարեցաք
զձեզ Հայրապետական պարգևի. ըստ որում ծանն
ի պտղոյ անտի ծանուցեալ եղև . . . զայս գրեմք
ինքհակալ լինելով. զի բազում բարերարութիւնք յա-
ռաջ եկեալ են ի բարեսիրտ ջանից ձերոց, եւ այլն։»

Թողում զգերազանցելն ձեր բեմբասայութեամբ
զառ յինէն միշտ ի Վանս և յեկեղեցիս այդի չնաչխար-
հիկ զնուաստութիւն իմ նկարագրել, զորմէ ոչ միայն
գրիչք գրեալ են ինձ. այլ և ականձալուրք իսկ այսր ինձ
ծանուցեալ, զորս այժմէն կեղծ կամ հաւասար հողոյ
սկնարկէք. և իմ բաւարարեալ անտի և ասի, և

բաւական համարեալ ցայս վայր իրաւաբանութիւնս՝ փութամ յայլ պատասխանատուութիւն պահանջուն ձերոյ։

Ի 1857 ամի ասէք ծագեալ զանբաւարարութիւն մեր գրագրութեամբ ընդ իրեարս. ուղիղ է միայն. սակայն կենդանի խիղճ և հզօր արդարութիւն պահանջի աստ ի բննել և դատել թէ վնասն անբաւականութեան ուստի՞ և յո՞ր կողմէ ծագեալ, ամենեալ և վնասակար վախճան ընկալեալ։ Այս հանդամանք անցեալ թէպէտ, ըստ մուտ և տեսին, չլինի արտաքնաբար ուսեալ խելամտել (որպէս չկարացի ներքնաբար 1857. Օգոստոսի 14 գրութեամբս և մանրամասն ծանուցմամբս ձեզ բաւարարել). այլ մոռանել ընդ միջ և իմանալ զոր արժանն է. և զուք արդարութիւն մեծ գործէիք, եթէ շնորհ արարեալ լինէ, քանի մի պատուաւոր և հաւատարիմ անձինս որոշէիք ի բննել աստ, ի դատել դիս, և տալ ձեզ զարժանն, քան զոր այլ ընդ այլով ի խաւարի զիակութիւնն պահեալ՝ դիս դատապարտել բարեհաճեցայք, քա՛ջ տրամադրեալ յիմացականութեան ձերում թէ այնու հետաքրքրութեամբ չունէիք արդարանալ և արդիւնաւորիլ ի հանդերձմունս ձեր ներհակ անմեղութեանս. սակայն տակաւին ես ոչ ձանձրանամ համառօտել սոլաւ կրկին զկարեւորն, ոչ յամբաւական բաւարարութիւն ձեր. այլ ինքնաստ իրաւանցս։

Արդէն նախ քան զառաջումն և դյանձնարարումն գործոյդ առ իս, կոչմանկի ծանուցեալէիք ձեզ. թէ եթէ յառնիցէք ի հանցս նուիրակութեան կոչմանցս, դիս բացակայ ի գործառնութեանց պահեցէ՛ք, որում՝ չան-

սացեալ ներհակ աղղարարութեանս արարիք. և այն ոչ ազատարար. այլ կցորդութեամբ ընդ եկեղեցականին, և այն ոչ ի ժամանակի խաղաղութեան տիրաբար. այլ զկնի յուզման ձերով խստառոգ և անպատշաճ դրութեամբ առ Հասարակութիւն տեղոյս զՁՕամեայ անցս անցիկ մեռելոց և կենդանեաց ընդ մէջ առիթ մաքառման կալեալ, զոր անարդութեամբ յետս առ ձեզ դարձուցին. և որոյ դառն յիշատակ թարմ՝ ի յիշողութեան ամենեցուն, չունէի ազատութիւն ի կամս եղակի զործակատարութեան. չունեցաւ և Եկեղեցականն հաճութիւն առ վնար գործոյն: Եւ իմ երկուստեքէ չուաբեալս մանաւանդ յերեսաց պահանջման և անբաւականութեան ձերոյ, որ ցայս վայր արիւնս ընդ քիրսն խառնեալ և զգործդ բարեպէս յամրովն ածեալ տուայտիմ, անդրէն ճիգն ճգանց ի կիր արկի. քանիցս համոզել զեկեղեցականն խոնարհեցայ. գրեցի բանի մի խնդիրս առ այն, և չընկալաց պատասխանի: Հուսկ ապա յայլ ինն փորձ մտեալ՝ ի դիմաց խմոց խորհեցի յառաջ վարել զգործն. վիմատիպ տպեցի ծանուցումն ինչ առ Հասարակութիւնն, և նախ քան զտարածելն խոհեմապէս առաքեցի առ եկեղեցականն զօրինակ մի, և յայտնեցի ինքեան եթէ չունէր ներհակութիւն ինձ՝ ես պատրաստ էի կատարել. քանզի առանց հաւանութեան նորին չէր հնար լինել ինչ: Ուստի նորա գրեալ ինձ ի պարզոյ զանհաճութիւն իւր (որպէս օրինակն արդէն ձեզ առաքեալ ունիմ, և երկրորդելոցեմ սովաւ) պարտաւոր արար զիս գրել ձեզ զոր գրեցի և յիշատակէքդ. ոչ ինչ ու-

նելով յոյս կամ ակնկալութիւն թէ ի փորու ունէր յանկարծակաս դիպով փոխիլ եղանակ գրութեանս առ ձեզ. և որոյ բուն պատճառն էր ամենանուիրեալ Պարոն Եկեղեցպանին, որ կատարեցաւ ի փորու միջոցի զկնի այնր գրութեանս առ ձեզ։

Զի այն ինչ հաստատեալ զլսակ նորա, և եկն առ իս ի խնդիր կատարման խորհրդոյ պսակին։ Այո՛, կալեալ զձեռն աղաչեցի, որպէս թէ, չնորհս մեծ ունէր առնել ինձ յընդունելութիւն իւր ի գործ նուիրակութեան։ Գոհ եմ յոյժ, զի զկնի բազում սիպ և լսիպ հանեցաւ կատարել զխնդիրս. և իսկոյն չարադրեալ գծանուցումն ի հասարակութեան առ հրաւէր ընթերցման կոնդակին, և ձեռագրեալ ետ առենադպրին եկեղեցւոյ, որպէսզի տպագրեալ տարածեսցէ, որպէս և եղեւն։ Յետ որոյ ի պատրաստիլ շրջաբերականին ստորագրութեան տրոց ժողովրդեան, մինչ անձամբ ելի ի Կասիմուր առ եկեղեցպանն (զի յայնժամ անդ բնակէր նա ի պարտիզին) առ ի տալ նորա ստորագրութիւն պատուոյն եկեղեցպանութեան։ Այո՛, ասեմ և պարծանք չհամարիմ. թէ նա յետ այսց ամենից տակաւին ի ներկայութեան Պարոն Թովմաս Յ. Արգարին կրկնեաց և երեքկնեաց յասելն. թէ «արարի զայս և առնեմ յատուկ ի պատիւրոյ և սէր»։ Որում և չնորհակալութիւն տալով ուրախութեամբ դարձայ ի հոգ շրջաբերման ստորագրելի թղթոյն, կարծելով թէ այնու ունէի շահիլ առաւելութեամբ զհանդէս ձեր՝ փոխանակ հետևեալ վնասուդ անոյսրեալի։ Եւ իսկոյն փութացայ 1856. Փետրվարի 29 գրութեամբ ձեզ աւետել և յառաջ վարել զգործն նուի-

բակութեան. որպէս և բարեպէս կատարեալ զպատրուէս հասուցի և ձեզ զժողովեալ դրամն (թէև այն ոչ պա-կաս ցաւօք ի ձեռն անօրինակ փոփոխման և հրամանի ձեր). բայց արդ եկայք իրաւունս բնեալ թէ իմ բաց-սական և ստորասական գրութեանց թուականն ըստ ձերում նշանագրեալ Սեպտեմ. 29 ի միջոցի 5 ամսոց ո՞րպէս հաս ձեզ, և ձեր պատրաստեալ կրկնանուիրակն հանիւ ի չու. և իմ աստ լուեալ և ամա-պարեալ վնարեցի զգործն մինչ դեռ վերջին գրութիւն իմ առ ձեզ հասեալ նախ քան զժամանումն նուիրակին ձերոյ ի Բուշեռ, ուր ի լսելն նորա գրեալէր ձեզ. և մինչ հասեալ նորա չոգենաւու ի Մասկատ, անդ ևս լուեալ ի Տէր Մկրտիչ Յ. Տէր Ղուկասէն զաւարտումն գործոյս, որ չէր գործ եօթնեկի կամ ամսօրեայ. և կամ թողեալ զայս ամենայն, ասեմ զարդելական գրութենէ ձերմէ, որով ասէր. պատուիրեցաք զկայ ունել զգործն, մինչ հասեալ այնր ի ձեռս իմ, գոգջիք աւարտեալ էր գործն. մանաւանդ ի թղթի անդ չէիք յիշատակեալ թէ ունէիք կրկնանուիրակ հանել ի գլուխ իմ. և նորա, ըստ ելիցն Իսրայէլի, ցուպ ի ձեռին ամապարէր յուղի. և թէ գրէիք ևս՝ քանի ծաղրալի լինէր զկայ ունելն գործոյն, զորմէ ոչ իմացայք ցարդ և ոչ իմանալոցէք յապա. միայն թէ հնարս հնարեցիք միջոցաւ գործոյդ դատապարտել զիս. և փոխանակ շնորհակալութեան՝ ճարտար համոզմամբ 2,500 կումար. ուտիք տուգանել, իբր ինձ ի վարձատրութիւն. և մինչ ոչ արդիւնաւորեալ այնու՝ զոխս ի սրտի պահեցիք ի հեղուլ յիս սերկեանն վրէժառու գրութեամբ զմնաս բաղում։ Թող ելիցին կամք ձեր. այլ մեք զգործն, իբրև

սեպհական պարտիք մեզ համարեալ, մտաք ի կատարումն, մանաւանդ զրջահայեաց լեալ մեր, եթէ ըստ պատեհութեանն չփութայաք առնել, և բանն, ըստ փոխիսման ժամանակի, այլ իմն կերպարանս իսկական ճշմարտութեան ընկալեալ. յայնժամ զինչ պակաս ունէիք կոչ ծակունս հրոյ ի գլուխս իմ թափել, որչափ անվնաս միջոցաւն թափեցիք և թափէք. թող Տէր ինքն լինիցի իրաւարար, որ ետես և գիտէ զամենայն:

Ասէք. «հասեալ կրկնանուիրակին ձերոյ՝ մնաց դատարկաձեռն»: Գուցէ ի բաց եղեալէ նորա զգտեսին ի հատարակութենէ տեղւոյս սնդերեսութեամբ զբանի մի հարիւր ռուբիս, իբր իրաւունս յետամնաց գաւազանապտղոյն զկնի ամենայն գործոց վճարման: Զիա՞րդ չյիշէք զերկու հաղար կուսակ. ռուբիսն, զորս խոմ միջնորդութեամբ և յորդորմամբ ետ նմա բարեյիշատակ Աղայ Յովանջանն: Ահա այսպէս եւ այսչափ են իրաւաղատութիւնք ձեր, մանաւանդ ի նկարագրելն ձեր ներհակ ենթադաստմամբ, թէ ի ձեռն կրկնանուիրակին ձերոյ յաւելոյր արդիւնք մտից նուիրակութեան քան զոր եղեալ ինեւ. զիա՞րդ տարս ժուժկալեցի խոհեմութիւնն չասել եւ մասնաւորիչ չառնել զուրս Բուսաբայ. ժողովրդոյ առնս (խմով թոյլատուութեամբ եւ դրութեամբ»: Ահա տեսէ՛ք դնաշիւղ տեղւոյն, զնուիրակութիւնդ ի ձեզ 118, իւրոյ ինքեանն 89. եւ սպասաւորին 13. ուստի եթէ ես եւս նման նմին ընդ Ա. անասդ եւ ձեզ կիսապար լինիմ, թերեւս քաղցրանայր յաչս ձեր զարդ իմ եւ վաստակ. սակայն ոչ միայն ի նուիրակական եւ յայլ վանքապատոնական ամենայն գործս ձեր առաջին, որպէս

եւ յատուկ վասն Կուսանաց տեղւոյդ · այլ եւ յամենից գործառնութեանց վերաբերելի աղգային իրողութեան, չէ քաղցրացեալ ի բերան իմ այնպիսի հայ · ուստի Աստուածայեալ միշտ սերն նմա, որ սովորեն է ուտել։ Ահա այսչափ եւ առ այն խնդիր բանի ձեր, յուսամ բաւական լինելոց է · եւ փութամ օրինակել զգիր Պարոն Եկեղեցպանին ըստ խոստմանս։

## «Սրբակրօն Տէր Յովհաննէս Խաչկեան Աւագ երէց»

### Թանկ Տէր

«Սրբազնութեանդ 2 հատոր գրութիւնս ստացեալեմ եւ ոչ սակաւ ուրախ տեսանել, զի Սրբութիւնդ հասկացայ զինչ ստիպէ ինձ յանձն չառնուլ կամակատար լինելոյ Առաջնորդին Ջուղայու (1) · բանզի ձիգ ժամանակաւ յառաջ միջոցաւ Պարոն Փ · Ա · Գէորգեան՝ մի ի կուսակցաց եկեղեցւոյն, ծանուցի Սրբազնութեանդ զանյօժարութիւն իմ ձեռնամուխ լինել բանին վերաբերելի Առաջնորդին · ուստի զարմանամ՝ ընդէ՞ր վերստին Սրբութիւն ձեր ստիպէ ինձ։ — Ի սակս Սրբազնութեանդ վերջին գրութեան (2) այսքան ասեմ, զի անսովոր եմ զայդպիսի գրութիւն ստանալ · այլ ի հարկէ վերջաւորեմ ի մտի իմ · զի որ ոք այդպիսի գրու-

1 · Ջուղայու սահ և ոչ մեր Հնդկաստանի։

2 · Վերջին գրութիւնն փոքր մի կոչտ վասն չտարոյ պատասխանի առաջնոյ գրութեանն։

թիւն չյառաջանայ յայլ իմն պատճառայ, եթէ ոչ իմաստ-
ծողութենէ, զի զոր ինչ կամիմ՝ կարեմ առնել եւ
փոյթ չտանեմ. օրէնք ի ձեռս իմ, եւ կամք յիշխելն.
այլ հակայողութիւնն տայ մեզ ընդ հակառակն իմա-
նալ, զի այդպիսի մտածողութիւն անհիմնաւոր է, միայն
ծնունդ առնէ ի միտս, եւ անդ թառամի։»

«Ի մասին կոնդակի Առաջնորդին տխուր եմ՝ չկա-
րեմ միանգամայն վերջաւորել առ այժմ. արդեօք
ունիմ յանձն առնուլ թէ ոչ (թէեւ ունիմ ամենայն
իրաւունք յանձն չառնուլ և հեռի պահել զիս). այլ ի հար-
կէ, իբրև պաշտօնատար եկեղեցւոյ, պարտականու-
թիւն է իմ խորհրդակցել ընդ պաշտօնատարաց եկեղե-
ցւոյն. վասն որոյ եթէ հանդէպ թուիցի Արքաղնութեանդ,
խնդրեմ զկոնդակն եւ զգրութիւնն առ հասարակութիւնն
(որ, կարծեմ, ի մասին նուիրակութեան) առաքել առ
իս, զոր եւ առաջի դնելով ժողովոյն մեր ունիմք վերջա-
ւորել և ծանուցանել Արքութեանդ զկատարածն, որքան
փութով, որ կարևոր է։»

Մնամ, Թանկ Տէր՝ հրամանոցդ խոնարհ ծառայ։

Յաւանդատան Նազարեթայ Սուրբ եկեղեցւոյ։

(ձեռագ.) Զ. Մ. Մանուկեանց Եկեղեցական։

Ի Կաղկաթա. 6 Սեպտեմ. 1855։

Արժան էր օրինակել այսր ըզ ի 1854. Մայի. 13 գրութիւն ձեր առ իս ընդդէմ կառավարչայ եկեղեցւոյ տեղւոյս, որոնցմանօք և աղգի աղգի ծանրակշիռ հանդերձանօք, և զրանս ձեր հարցական գրութեամբ ի Թէհրանայ առ փոխ Դեսպանն Բրիտանիոյ Պարոն Թոմանն վան յայտնելոյ նովաւ զիրաւունս խոկմանց ձերոց. սակայն, ըստ որում միտք իմ չէ վրէժխնդրութիւն. այլ արդարութիւն. ուստի մնասցէ՛ ուր կայ։

Ընդդէմ այսն արարեալ եսեսականութեան խնդրէք զոր ինչ ախորժէք. սակայն նուաստութիւն իմ պատկառելի խոնարհութեամբ պատասխանէ. թէ եսեսականութիւն իմ ոչ թափուր ի անոտի պարծանս պատուոյ նանրայեալ իսկութեամբ. այլ արդիւնաւորեալ էր բազմօք նախ բան զձեզ, ծաղկեցաւ և յաւէտ պտղաբեր եղև վասն ձերև ի ձերում իսկ ժամանակի, որպէս թողեալ զանցեալ և զվկայեալ բանս ձեր, մանաւանդ յատենի հանգուցեալ Քահանայապետին։ Յաւելում և աստ զնչմարիտ և անտխեղծ բանս ձերոյ խոստովանութեան, ոչ առ իս, որ ընդ հարիւրաւորաց ճնչեցին ի ճնչանս թաքստեան. այլ հռչակեալն միջոցաւ Ուսումնասէր անուանեալ լրագրոյն Սինկափուրայ, որոյ թուականն ի միտս ածեմ ձեզ՝ 1852. Սեպտեմ. 10 ի կարդալ կրկին, եթէ մոռացեալ իցէք, (զոր ի պատճառս չողոմարար բանից թոյլ չետուն աստ յեկեղեցիս ընթեռնուլ), որոյ և խնդրեն վերարերելի Խաչակայ հանգուցեալ Վարդապետին Սաղիմայ թարց հրամանի վանայ Ս. մեռնափրկչեան և ընդդէմ սովորական կարգի մտանելոյ նորա ի Հնդկաստան ի թէմ Ս. թոռոյն ձեր, յորում յետ

բողոքելոյն յարէր այսպէս « . . . թէպէտ նա հարտարու-
թեամբ բանից իւրոց և խոհեմութեամբ առ ինքն դրաւ-
եաց զսիրտ և զսէր պատուելի հասարակութեան ցձերոց.
սակայն զինչ կարծէր, սիրելիք մեր՝ նա առանձին մտա-
խոհութեամբ իւրով ընդ միտս իւր չհենդնէ՞ր զդիւրահա-
ւանութիւն ձեր բարեսիրտ հասարակութեանն , զի
ինքն օտարական ոք մտեալ ի տուն և ի սահման վիճակի
Վանայս Ամենասիրելի՛ն առանց հրամանի կամ հաւա-
նութեան ինչ ի Տանուտեառնէն , լոկ շողմարար վա-
րուք այնչափ ընդարձակեաց զիշխանութիւն իւր ի
տան օտարի , մինչ յետ առ ինքն դրաւելոյ զսէր բնա-
կողացն ի տանն այնմիկ , համարձակեցաւ խորհել սեպ-
հականել և զտունն հանել կամելով զՀնդկաստան ի
վիճակաւորութենէ Ամենասիրելի՛ն Վանայ և հնա-
զանդեցուցանել զնա ընդ վիճակաւորութեամբ Երուսա-
զէմի . և առնէր առանց իրիք դժուարութեան . զի սէր
Ամենապատուելի մերազնեայ հնդկարնակ հասարակու-
թեանց զերեալ ունելով առ ինքն՝ զիւրին էր ի կատար
հանել զխորհեալն իւր , եթէ տեսչութիւնն Աստուծոյ
չհանէր նմա ախոյեան զՀնարիտ Զուղայեցի հայրենա-
սէր որ՝ զԱրժանամեծար Տէր Յովհաննէս Խաչիկեան ,
Ասադ Երէցն ասեմ , որ իւրով արիաջանութեամբ խոչ-
ընդոտն եղեալ սեղանակապուտ խորհրդոյ օտարին ,
անզործունեայ եթող զայն , և ազատեաց զՎանս ի մե-
ծադոյն կորստենէ , և զդիւրահաւանութիւն ոմանց՝
յիրաւացի մեղադրանաց աշխարհի , և այլն : »

Ի հրատարակեալ բանից աստի երկու ներգործու-
թիւնս տեսանի ի պարզոյ , այն է ուղիղ կամ անուղիղ .

զի եթէ առաջին՝ որպէս և է իսկ. ապաուրեան ոչ պար-
ծանօք. այլ խոնարհ նշմարանօք ի յարմարութիւն բանի
ձերում ասեմ. ըստ որում Ջուղայ կենդանի է Հնդ-
կաստանաւ, թէ բաղմին ձեր այժմ յԱթոռ Վանայդ
և Առաջնորդութեան Ջուղայոյ իմ է շնորհ, զտանելն
ձեր զաստիճան Եպիսկոպոսութեան և սպասիւ շքանշա-
նայդ ի Բարձրագոյն Գրանէ Ռուսաց և ի Տէրութենէ
Պարսից յանուն Ջուղայոյ իմ են շնորհ, և խիզախեցին
ձեր արդի յիմ վերայ, և խնամ սրով զլոռանոցն իմ
հատանելն իմ են յանցանք. և եթէ այսպէս՝ ի՞նչ իրա-
ւունք ի գրելն ձեր առ իս զսոյն գիր թաթառեալ զրպար-
տանօք. թէ զիս մեծարեցիք, սպատուեցիք, եւ այլն։
Եւ մի՞ թէ շնորհ ինչ իցէ Այդեպանին եթէ զամեն բա-
բիս Այդոյն վայելեալ, ի յաւելուածոյ անտի մանա-
ւորեալ իցէ Այդետեառն. և այն ոչ զահանջմամբ նորին.
այլ հրաւիրմամբ կամայ հրաւիրողին։ Գուք ձեզէն
տուք զիրաւն, և ցուցէք սպա զայլոցն ի ձեզ զիսիմա-
կանութիւն հաւեմատ խնդ եսեսականութեան, մանա-
ւանդ յոչ ինչ ժամանակ ես երախտամոռ եղեալեմ
ընդդէմ ձերոյ մատնանիշ շնորհայն առ իս։ Իսկ եթէ
վերջին՝ ուրեմն ընդէ՞ր մեռուցիք զհոգին ձեր այնու,
եթէ ոչ երևելաբար, դէ՛թ աներևութաբար վտանգումն
Անանիայի և Սափիրայի, առ դատաստանաւն Աստու-
ծոյ, որ ահաւոր է, և ոչ ոք կարէ ընդդէմ կալ նմա։
Եւ մի՞թէ կարծէք թէ արդի մեծութիւն ձեր և սպաս-
նալիք ի վերայ անմեղայ կարեն նպաստել ձեզ օգուտ
յահաւոր դատաստանի անդ. ո՛չ ո՛չ. այլ հակադարձն
ունին պահանջել զվրէժ. յորժամ հրեշտակք նոցա հա-

նապաղ ներկաս Հօր տեսանեն. և զրկեալն ի ձէնջ աղա-
ղակէ. և բողոք հնձողացն ունի հասանիլ յականս
Տեառն Զօրութեանց։ Զեմ ես ստրջացեալ թէ կորզե-
ցի զվնիթարութիւն հայրենի տան իմոյ ի բռնաբարու-
թենէ օտարին, ըստ ձերում վկայութեան (1). և չցաւիմ
թէ բարերարեալքն յինէն, ըստ ձերում վկայելոյ, խո-
սեցան զինէն զվատահամբաւութիւն. սակայն ցաւիմ,
արդա՛ւք ցաւիմ, թէ հի՞մ ժամանակս այսչափ ապե-
բախտ և այսչափ սանդարամետական նախանձու
լցեալ, մինչ գայթակղեցուցանէ և զընտրեալս։ Աղա-
եմ, ո՛ Տէր՝ չզայրանալ յիմ վերայ. այլ ցաւիլ ի վերայ
վշտաց դիւրագին և դիւրակորոյս ծառայիս ձերոյ, որ-
չափ և ինքն անիրաւեալ ծառայ ձեր ցաւի, արդա՛ւք
սրտի մտօք ցաւի ի վերջին գործ և յարարս ձեր տար-
օրինակ առ ինքն։ Երանի՛ թէ, ըստ գրելոյ ուրումն հե-
ղինակի, ունկնախիլ լեալ էր ձեր բանից մարդելուզաց,
որք չուրջ զձեօք ծծեցին և ծծեն ցաւարտ զարիւն պատ-
ուոյ ձեր. և անդստին չիմանայք զուք, և ոչ զձերն
միայն, այլ և անմեղայ ոմանց, որոց դատաստանն Տէր
ինքն տեսցէ՛ յահաւոր դատաստանի անդ իւրում։

Ի կարևոր պատասխանեաց վերին թեթևացեալ
պարտ և պատշաճ իրաւանցս համարիմ զնախկին գրու-
թենէ իմմէ առ ձեզ խօսիլ ևս համառօտապէս. ոչ
ի դիմաղրութիւն ձերոց յառաջ բերեալ փաստից բաղ-

1. Թէև որք կերին զհաց ի պատրաստեալ սեղանէս,
տարաբին ինձ խափէութիւն, և այսօր ոխակրեալ թշնամի ինձ
եղեալ։

ուածեալ յայնմանէ, այն է 8 Նոյեմ. գրութենէ». այլ ի կատարումն նախագրեցեալ մարգարէութեանն, որ իրօք այսօր ի կատար հասեալ ձերով շնորհիւ, և ի բացայայտութիւն առթոց վատահամբաւութեան ընդդէմ ոմանց և նախորդին ձերոյ, և առ այն թէ «զատան երբեմն անձինք ոչ ճանաչող երախտեացս շնորհի, որք խօսեցան զինէն անիրաւութիւն», ըստ ձերում ցաւակցական գրութեան ի վեր, յուսալով թէ ձերն ճանաչողութիւն ոչ նմանեալ նոցա։

. . . «Նա առանիկ չէին ինձ կամք (որպէս և չէ օրէն) յայս նախաչափող թուղթ աղերսանաց կցորդել աղգի ազգի մասունս արտաքին վերաբերելեաց՝ սակայն անհրաժեշտ հարկ որդիական խոնարհութեանս, մանաւանդ ձերդ հարկաւոր կարօտութիւն ծանօթութեանց ի դիւրութիւն և ի նպաստ գործոց հմտագունից, առ անթերի վերածմունս կառավարութեան վիճակաց կողմանցս, և յատկապէս հեռաւորութիւն զծի տեղւոյս ընդ տեղւոյդ տարեկան միջոցօք, պարտանդեն զիս օն անդր քան զբաղաքականին անցանել զչափ, և բուռն հարեալ ղպատկանաւորաց զնել յատենի ձերում, զոր ինչ տկար միտք իմ ենթադատէ յօգուտ հասարակութեան. բայց և այնպէս ոչ ստեցից ասել թէ յետ ցարդ հպատակ և հաւատարիմ ծառայութեանս առ Սուրբ Աթոռդ և առ Ջուղայ, յորժամ ի տրիտուր գանձեցի ինձ մէգ և մառախուղ աւաղանաց և ցաւոց անբմբերելի, միանգամայն վերջաւորեալէի ի միտս չխառնիլ ընաւին յայլ գործս վերաբերելի Աթոռոյդ և Ջուղայու, որպէս այժմ առ այս, զոգջիք ձայն իմն ահարկու ի ներքուստ

արտէ ընդ իմանալեաւ ի ըստիս կարդայ. զիա՞րդ անմտաբար մոլիս ի ծայր վերջին տգիտութեան ոչ բաւականացեալ ցաւօք արտիդ, որ ի շնորհս երից Աստուածորդայ վերսաժամանեցին քեզ, իբրև փոխարինութիւն անձնադիր ծառայութեանդ առ իւրեանս, զոր եթէ ի շնորհ միոյն զնահեցեր զկեանս ամենայդ, միւսոյն ոչ խնայեցեր և զոր զեւոյդ, և ապա վարձատրեցար ցաւօքդ, յորում այժմ եղուկ, վա՛յ և ա՛հ կարդալով ոչ ինչ միխիթարիս, զամենայն զգործս քոյ և զարդասիս գործոյ ո՛վ ետես. ո՛վ լուաւ և ո՛վ յաւելու այժմ հարցանելթէ յո՛ր սահման դժբախտութեան և օտարութեան կեաս այսօր, եւ այլն։ Բայց ի կազդոյր սորին յանդիմանի ձերն զովանի և անենդ մարդասիրութիւն և ճանաչումն յարգանաց և պատուոյ, նախ ձերն և ապա՝ այլոց իւրաքանչիւրոց ըստ արժանւոյն և մանաւանդ գիտողութիւն ձեր ի հոգ հովուական, որպէս յաւուրս յայսոսիկ ի վեր երևեցան, ոչ միայն ի ձեռն պանծալի և օրհնաբաս նամակաց ձերոց, այլ և արդեամբք գործնական շնորհօք, յատուկ իմն ներգործեալի հոգւոյ՝ բռնաքարշ ածէ յընդունելութիւն գրութեանս ընդդէմ միանգամայն ուխտին առաջնոյ։»

«Արդ խոստովանիմ զստացումս ի Հոգտեմ. 12 Յուլիսի 30 թուեալ ողջունաբեր նամակ ձեր, և յուշ առեալ զամենայն զշրամայեալսն ի նմին. առ որ ներումն մաղթելով ասեմ. նկատողութիւն ձեր առ այն բարի է յոյժ և գովելիք հարկաւոր ըստ ամենայնի. սակայն աղաչակենցաղ հանգամանք կողմանցս ոչ բարւոք արդիւնաւորեն զայն արտօնութիւն իմ տուեալն ի ձէնջ, յորչափ չիցէ որոշումն արժանաւորութեան թէմակալաց

վիճակիդ ի ձէնջ և ի կառավարութենէ Վանայոյ. բանդի անբնին բայահանումն բահանայից ոմանց խմալէս տգէտ, անուս և անփորձառու անձանց ի կողմունս, հարկաւ առերէ վիշտս բազում և ժողովրդոց գայթակղութիւն և զլուանս ոչ սակաւ. վասն զի ոմանք յաղատ Տէրութեանս ի պարապողութենէ նիրհեն ի քուն թմրութեան փափկասիրութեան և մեծամտութեան, որոց բնական տգիտութիւնն ընդ աչխուժութեան ջերմ հասակի կենաց, և ընդ զօրութեան ոգիաւոր օղեաց և ցբոց միաբանեալ զանհնարինս գործադրեն, և մանաւանդ յորժամ վրիպեալ ի կեղծիս պատուասիրութեան չողոքորթութեամբ լցեալ ոմանց հողմարածից՝ ընդոստնուն յաստիճան յետին մոլորութեան, եւ այլն։»

«. . . Զի հաւատեաւ խմանալով թէ հրաժարումն իմ ունէր զեկեղեցիս վայր ի վեր չրջել, այր վասն բարեգոյն վարկայ լռել առ ժամանակ մի, մինչ վերաժամանիցէր հովուական բաջ պատուելութիւն ձեր, զորմէ նախաձանուցեալէր մեզ աստ Արշալոյս Արարատեան լրագիրն Զմիւռնիոյ, որպէս զի յետ ժամանելոյ ձեր յԱթոռդ դնելով իմ զամենայն որպիսութիւնս անցիս տեղոյս և իսոյ ձեր առաջի արձակումն խնդրելի ի կապանաց աստի. բայց արդի հովուական հրաման ձեր հասեալ ի վերայ, ոչ միայն ի դերև եհան զդիտեալն իմ. այլև լծով ծանու հարկադիր արար զիս կալ և մնալ յորում կամ այժմ, մինչ տեսցիս յետ այսու զինչ ունի ժամանակն բերել վասն իմ (1)։ Այլ այսչափ և եթ

1. Անա տես, և վայելեսս զպտուղ ցաւագին բերմանց ժամանակին.

ասեմ. նախորդն ձեր տգէտ էր. և զարմանամ թէ ո՞ր, պէս բախտն կուրօրէն վերացուցեալ զնա ի բարձրագոյն պատիւ աստիճանին Հովուութեան և Աստեղութեան (1). զի տնտեսական պարտիք և մեծարանք նորա եղան յաւէտ ի ճանաչումն շնորհի Եղբուր Յովանէս Թէհրանայ ի ձեռն քանի մի ապրիստ հոտեալ ձկանց և ճուղբից, առ ոչ ինչ համարեալ զսէր և զարդիւնս բազմարդիւն ժողովրդոց կողմանցս, եւ այլն։»

Արդ՝ վերին գրութեամբ դատապարտ զիս առնէք, թէ վատաբանեցի զմիաբանս և զնախորդն ձեր, մինչ համայն դիտողութիւնք իմ ոչ նպատակաւ վատաբանութեան եղեն և ոչ վատաբանութիւն զայնս կոչել արժան էր (2). յորժամ միտք իմ էր զանցեալ անվայելչութիւնսն յայտնել, և նոքօք զձեզ ի ծանօթութիւն անպարսաւ վերատեսչութեան հրաւիրել, որպէս յ, ղ, ս և ն տառիւք զվրիպակս Տէր Մկրտչի յառաջ բերելով կամք էր ինձ լռելեայն յայտնել ձեզ թէ դուք ևս, որպէս եպիսկոպոս, մի՞ իցէ, ձեռնադրիցէք զանձինս նմա նեալս նմին, (ի մեաս եկեղեցւոյ) (3). այլ չիմանալով

1. Այս առացաւ յանկանուս փորձոյ. և այն կարի սաստիկ և խնամօք։

2. Երէ վատաբանութիւն՝ զիարդ ոչ գուշակեաց ի ժամանակին. այլ անդարձն ետ շնորհակալութիւն։

3. Մինչև վնասք եկեղեցւոյ ժագին յանարժան հովուաց (կարդա՛ զՊատուութիւն Աղգին), որոց և մեղք ընդ ժողովրդոց կախին ի պարանոցս հովուապետաց, և նիւթապէս ի գլուխ կանոնաց եկեղեցւոյ՝ զի երէ բարձցի սիմոնականու-

թէ դուք ունէիք ձեռնադրել ընդդէմ ուխտի ձերոյ առաջնոյ ոչ միայն զնմանեալս նմին. այլ և զարատարարս, որպիսի է Տէր Ռէթէոս անուանեալ քահանայն, զորմէ ասեն երկարել զձեռս և զրաղուկս ուղիղ չկարել։ Եւ որ զնախորդէն ձերմէ ասէք՝ սիրով և խոնարհութեամբ պատասխանեմ, թէ տդէտ կոչելոյ մեր զնա բազում ապացուցութիւն ունիմք, և այն թէ բայայայտեալ գործ նորա է բաւական։ Թողում և զանթողին նմա յանցանք զանցառութեանն ինաստութ ընդդէմ խնդրագրոյ ժողովրդեան տեղւոյս վասն առաքելոյ սատառ իս զմայր և զորդին իմ, մինչ մահացաւ մի միայն որդին իմ՝ նեցուկ և յենարան կենացս. ուստի աղաչեմ՝ երկայնմտութեամբ հաւատալ, թէ զոր գրեցի զնը-մանել և զայլոց՝ ոչ վարկպարագի. այլ մեծաւ իրաւամբ և հաստատութեամբ, զոր գիտէք և զուք կարի քաջ. և մանաւանդ պատկառի բնութիւն իմ ի բանալ աւելի ինչ զնմանել. ուստի եթէ կամիք, հարցէք ի կուսանաց սյոտի ձերոյ.

Ընդլայնմամբ վերին յայտնեցաւ եղանակ և կերպ վատաբանելոյն մերոյ զմիաբանս և զեպիսկոպոսն ա-ռանց իրիք անձնաւոր կամ առանձն կրից. և այն՝ ոչ

թիւն, և դրամով վաճառումն ձրի շնորհաց Հոգւոյն Սրբոյ, ոչ զիսնարհնեցն, ապրեցն, համբարձի և կեցն՝ ուսանողք զօրութեամբ դրամոյ բռնաբարեն զաստիճան հոգևորականութեանն, և բռնացեալ ի վերայ պատրուակաւ կրօնի՝ եղծեն, ջնջեն և բառնան զշուք և զպատիւ նկեղեցւոյ և սրբազան խորհրդոց սյնորիկ։

զանձանց. այլ զգործոց. ուրեմն այժմ դառնամ ի նո-
րութիւն իմն խնդրոյ, վերաբերելի Աւագ երիցութեան
պաշտօնի, և յակամայս յանձն առնլոյ, հնարիւք ինչ
ի բաց լքանելոյ զխորհուրդ, յորժամ ծանուցաւ թէ հան-
գուցեալ Տէր Յովհաննէս Գալստանեան վիճակաւորեալ
էր ի Կալկաթա, յոտս ձեր աղաչաւորեղէ փոխանցելոյ
զպաշտօն իմ առ նա։ Ի 1852. Մարչ 14 գրեցի ձեզ
օրինակ զայս։

«Այդպէս նախորդն ձեր, որպէս և ի վերջոյ Մեծա-
թիւն ձեր, յարդեցիք զնուաստութիւն իմ աւագերիցու-
թեան պաշտօնիս վիճակիս, յորում եւ իմ ամենայն
սիրով եւ հաւատարմութեամբ կայի, մնայի եւ, ըստ
իմովսանն, կառավարեցի զթէմն եւ զժողովուրդս մինչ
ցայսօր ժամանակի, մինչ ի վիճակի աստ չկայր քահանայ
հասակաւոր քանդիս եւ ընդունակ այնմ արտօնութեան,
որպէս եւ յորժամ ի վերջոյ տօնելի Հայրութիւն ձեր
վերահաստատեալ առաւելութեամբ եւս, ամենայն
յօժարութեամբ եւ հպատակութեամբ յանձն առի եւ
զբաւոր խոստմամբ ապահովութիւն ձեզ եւտու. սակայն
խնդիր եւ էութիւն բանին յայլ իմն դարձեալ՝ հարկիս
պահանջէ յինէն զայս հանդերձմունք. քանզի չէր բնաւ
Նկատելի զալուստն Արժանապատիւ Տէր Յովհաննու
Գալստանեան, Նախածանօթ բարեկամին եւ մտերմին
խոյ աստ, որպէս վիճակաւոր քահանայ, քան զոր յան-
ակնունելիս յաջողեցաւ նմա գալ, որպէս հասեալ ի
Դալկէրինգ՝ ի փոքու Աստուծով ժամանելոյ է աստ.
ուստի պատկառի բնութիւն իմ լինիլ Աւագ երէց նմա,
մինչ երբեմն ես էի նորա աշակերտ. և այս կարի իրա-

ւամբ. զի նա հասակաւ և միջոցաւ քահանայութեան մեծ՝ բան զիս. նա խոհեմութեամբ եւ ամենայն ազգի արժանաւորութեամբ նախադաս՝ բան զիս ոչ ինչ իրաւունք թոյլատրեն ինձ լինել Աւագ երէց նմա. վասն որոյ բոլորով սրտիւ եւ ամենայն հաճութեամբ խնդրեմ զԱւագերիցութիւն վիճակիս տալ նմա. եւ ես, որպէս յետին քահանայ իներքոյ հրամանի նորին, որպէս եղբայր եւ ընկեր, սիրով մատակարարելոցեմք զպաշտօն մեր Հնորհիւ Տէրամբ. եւ այսպէս միակամութեամբ բառնալոցեմք զծանրութիւն վիճակիս, որչափ ի մէնջ կարելին է։ Եւ եթէ Սրբութիւն ձեր բարեհաճեցի առ այս խնդիր եւ պատկանաւոր հայցուածք իմ, ոչ միայն ունի ողորմիլ ի վերայ քայքայեալ եւ տարաբախտ վիճակի տեղւոյս. այլ եւ յատուկ տարաբախտութեան իմում մեծ խնամք ածելոց է. որով եւ ես միսիթարեալ եւ ապահով ի միտս մնալոց եմ եւ զընկերն իմ ըստ օրինայ յարգեալ։ Ակն ունիմ, զմիակ խնդիր իմ առ սէր ձեր կանուխ ունի արդիւնաւորիլ, եւ այնու հաճութիւն եւ հաւատարմութիւն առ Սուրբ Աթոռդ բաղմապատկել, եւ այլն։»

Պատասխանի վերոյիշեալոյն. 1852 Հոյեմ. 28 թուով։

«Որպէս ամենք մեծագոյնք եւ թանձրամած ստուերք ոչ կարեն ծածկել զլուսափայլ ճառագայթս արեգական, ըստ այնմ եւ չարամտութիւնք չարասիրաց ոչ կարեն ընդ վարագուրաւ արկանել զպարեսպութիւն բարեգործաց. եւ որչափ հաճեսցին զժոխասարաս ատելութեամբ իւրեանց յաղթել նոցին բարելաւութեանց՝ տկարասցին ի յաղթահարութիւն իւրեանց. ըստ այնմ բա-

բեկարգ կառավարութիւն ձեր ակներեւ են սմենայն նրբաղնին նկատողաց եւ անթաքչելի են ի հոգեսէր դիտողաց, որք չիցեն կուրացեալ ստուերաւ նախանձու ատելութեան։ Այդ այնոքիկ են, որք զմեզ ի ձեզ առաւել վստահ առնեն. եւ ըստ այսպիսի յուսոյ մերոյ, քաջ գիտեմք. թէ զօրութեամբն Աստուծոյ մշակ էք աշխատաւոր բանաւոր երկրի, պաշտօնեայ էք պաշտօնակատար ըստ արժանոյն Սրբութեանց տանն Աստուծոյ և քահանայ էք ճանաչող զպատիւ քահանայութեան ձերոյ, որ գիտէք թէ զիրաւունս Տեառն ի բերանոյ ձերմէ խնդրեն, եւ թէ հրեշտակ էք Տեառն Աստուծոյ Ամենակալի։»

«Ի խնդրելն ձեր ի մէնջ վասն փոխարկելոյ ի ձէնջ պպատիւ Աւագ երիցութեան առ Տէր Յովհաննէս քահանայն, պատասխանեալ եմք առ այն ի 12 Մայիսի, համարաւ 201. թէ անկարելի է լինձ փոխել զրանս իմ. և անհնարին է լինձ զնկատողութիւնս կատարեալ ճանաչողութեան իմ յայլ վիճակ յեղափոխել. ուրեմն որպէս ի նախկին պատասխանագրութեան իմում առ ձեզ, խնդրեալ եմ զձերն ներողամտութիւն յաղագս թողլոյն մեր անկատար զձեր կամս. այժմ եւս երկրորդեմ. . . երբ ըստ յանձնելոյ Տեառն Աստուծոյ մեզ զձեզ, կալայ զձեզ եւ ոչ թողից, ըստ որոյ թէ իցեն բազում օրիորդք և թագուհիք. բայց ոչ կարեն գտանել զսէր կատարեալ սիրելոյ, որ իցէ տարրացեալ յամենայն մասունս սեպհական նպատակի հարազատ սիրոյ իւրոյ։»

Բացայայտեալ պատասխանեան պարզապէս ցուցաւ. թէ որպիսի շղթայիւք զձեռս և զոտս կաշկան-

դեցիք ցայս վայր ի հալածանս ձեր . և ծանուցաւ անհա-
մեմատ սէր ձեր առ իս ներհակ արդեանս ատելութեան ,
որ ի դրից անտի իւրոց չունեցաւ հաստատութիւն ինչ .
և ի 1857 թուականէ հետէ զիս , իբրև զձուկն , ի հուր
խորովեաց ։ Գիտեմ և ուրանալ չկարեմ թէ ոչ իւրովի
կամօք . այլ բուռն ստիպմամբ աներկիւղ խորհրդական-
նայդ . որ ընդդէմ և իմ ոչ իւիք շարժեալ կամ այլ-
այլեալ , կամ զդածումն ինչ յիս բերեալ . և որպէս
երէկ և յեռանդն կայեալ , մնայեալ ի սէր ձեր , մինչ
ցհասանիլ վրէժխնդիր գրութեան ձերոյ , կամ նախ
քան զժամանումն համբաւոյ գալստեան նորա . բայց սա-
կայն ձեր Արքաղնութիւն թող իրաւադատ լինիցի , թէ
մնայե՞ալ և եղե՞ալ է հաւատարիմ ի խոստումն , և կամ
սիրով նաժշտաց չէ՞ խոցեալ զթագուհւոյն սիրտ
քնքուշ ։ Ահա անհիմն համոզանք էին , որ նախապաշա-
րեցուցեալ զհաւատն իմ ի ձեզ , գրեցի երբեմն , զոր
այժմէն զէն արարեալ ի ձեռին ընդդէմ խղճի , ի լոյս
ընծայեցիք . և այն ոչ ընդ պատճառացն կամ առ պա-
հանջեալ խնդրողն . այլ հատընտիր , խուլ և խաւար
միջոցաւն . և եթէ զայն ամենայն առնել յօժարեցայք ,
զարմանամ յիրաւի թէ ընդէ՞ր և զոմանս ի նմանեաց
թողիք , յորոց մին ասեմ նշանաւոր բանիւ հանգուցեալ
առնակնոջն , որով Տէր Մարտիրոս , քաջ հաւատարիմ
և խոհեմ խորհրդական ձեր , դիտաւորութեամբ ըս-
րեալն էր ինձ թակարդ որոգայթից , առ ի յանգաւորել
զդիտեալ եւ ծանուցեալն ի 1857. Յուն 10 թուականաւ
գրութեամբ ի Բթաւիոյ առ Պարոն Ս . Ս . Սէրհանեան ,
թէ ի փոքու չարաչար հետևանօք գլորելոցէր զիս .

որպէս զկնի գրութեանն ի ձեռս գալոյն եւ բողոքելոյս ի ձեզ՝ ասացիք . որպէս դատաւոր՝ չկարէք կամ չկամիք մոռանել ի դատ մեր. եւ կեղծ մեղայականաւ Նորին կարձեցիք զիրաւունս , եւ ապա պատրաստեցիք ինձ զերկրորդականդ թակարդ : Թէեւ հաւատամ այժմէն , որպէս գրութիւն ձեր յայտ առնէ , տակաւին չասեմ թէ չէք խնայեալ զնորամանկութիւն Նորա . այլ խնայեալ կարիքաջ . բայց չգիտեմ թէ առ ինչ վախճան խոնարհեալ էք ի հաճոյս եւ ի կամս Նորա ցայս վայր , որպէս այժմէն խիղճ իմ աներկբայ հաւատայ զգրութիւն ձեր զոլ ամենայնիւ հնարք , կամք եւ վճար երկարամեայ բաղձանաց սրտի Նորա , թէեւ ձեօք եւ յանուն ձեր ի կատար հասուցեալ . սակայն լինիցի որ ինչ եւէ եւ լինելոց է . բայց ես զթաքուցեալն ձեր ի մասին ասացեալ առնակնոջն փութամ հռչակել սովաւ , զոր արտաքոյ պաշտօնական գրութեան , իբրեւ առանձին , ի 1858. Օգոստոսի 18 թուականաւ գրեցի ձեզ :

« Ոչ սակաւ զարմանալի նորութիւն իմն երևեցաւ ինձ առաքումն ապահարազանի գրոյն Տիկին . . . առ իս միջնորդութեամբ եւ ձեռամբ Տէր Նիկողայոս Տէր Յարութիւն , միաբան քահանայի տեղւոյս , որպէս եւ զիր Տիկնոյն առ նա, մինչ զսմեն գրեանս ձեր առ այլս բացակնիք կամ կնքեալ ի թուղթս իմ պարունակեալ՝ ես ասայի տեարցն . բայց թուի ինձ սորայն ոչ առանց դիտաւորութեան , որպէս զի մի իցէ, կարիցեմ , առանպատշաճութեան խնդրոյն , բայասպահել կամ չգործադրել եւ անկանիլ ի փորձանս նկատմամբ Նորին իսկ , յորժամ այր Նորա զլանայցէր ի կոչումս .՝ եւ իմ պատ-

բեցեալ ո և իցէ կերպիւ, առնէի զպատկն. և զկնի յարիցէր ինձ դառապատ և օրինօք քաղաքիս վարիցէր զիս յաքսոր, եւ տայր ընուլ զէջս օրագրաց ի խայտառակութիւն Աղգի եւ Եկեղեցւոյ։

Առաւել զարմանալի լինի, յորժամ նկատեմ թէ հանրասիրութեան հանճար փորձառութեան ձերոյ դիւրաւ խոնարհեալ յորոգայթադիր խորհուրդ Տէր Մարտիրոսի, ոչ ափսոսեայ զոնէ ունողիկ զհամարումն մեծ ի ժողովուրդս. զի եթէ արժէր միոյ պպղոնն անդամանդեայ մատանւոյ քաղցր յաչս իւր՝ քաղցրագոյն եւ նախամեծար զպատիւ կրօնի եւ ձեր կշռել պարտէր. եւ եթէ առ նախանձուն ընդ իս թակարդեալ նորա զայն ի վտանգ, հարկ լինէր ձեզ զոնէ զձերն պահպանել զանուն եւ զպատիւ, եւ մանաւանդ մտախոհ լինել թէ որ ի հեռաւոր ամաց հետէ չէր եղեալ ի Հնդկաստան, չլինէր եւ յաւուրս ձեր նշանակ չար. քանզի այդպիսի խնդիր շատ անգամ առ նախնեօք խաղացեալ զԱթոռովդ անարդիւն հետեւանօք, որպէս յաւուրս մեր իսկ, Աղայ Գրիգորի ընդ Դաստագուլ կնոջն, որ ի Սուրաթ քաղաքի, եւ ի վերջոյ ի Բոմբայի, (ուր բաժանեալ ի միմեանց՝ կինն բնակէր ի Բարկօտ, Այն Աղայ Գրիգոր ի 1838 ամի վախճանեալ՝ ձեռամբ խոմ թաղեցաւ) բաղմիցս աղերսարկու եղեալ յոտս առաջնորդաց վասն արձակման եւ կրկին ընդ այլում ամուսնութեան, չէր հասեալ փափագանացն։

Նա՝ դուք, որ դիւրաւ այս հրաման առ իս արձակեցիք, դուցէ անծանօթ էիք դրութեան ժամանակիս դառն, յորում չէր եւ չէ միայն խնդրարկուն. այլ ըստ որում

տեղի բաղմաթիւ ժողովրդոց, հարկիւ գտանին եւ կան անկողինք տարաձայն, որք յանճարութենէ կամ, լաւ եւս է ասել. յերկիւղէ պատուոյ վարին ընդ միմեանս լռութեամբ։ Ահա մին ի փոքու աւուր դատաստանա-կան վճռով բաժանեաց յիւրմէ զամուսին իւր. եւ մի՞թէ արձակութիւն հրամանիդ չունէր ծնուցանել չարիս ի սինլիքորս եւ յարուցանել դժուարութիւն մեծ յեկե-ղեցիս յազատակենցաղ քաղաքի աստ, ուր խենթք բա-ղում՝ քան զհանճարեղս, տգէտք՝ քան զիմաստունս, մոլիք՝ քան զառաքինիս, եւ անարգք՝ քան զպատուա-ւորս։ Ուստի հայեցեալ իմ ի դժուարութիւնս բաղում՝ չկատարեցի զհրաման ձեր. եւ, յուսամ, ներող լինիցիք համարձակութեանս այս. եւ եթէ հարկ համարիցիք երկ-րորդել զհրաման ձեր առ այն. ի պարզոյ ասեմ. չունիմ հպատակել. եւ ի կազդոյր հրամանի ձերոյ խնդրեմ այդի բահանայ մի առաքել աստ ի կատարումն հրամանիդ, որոյ ել և դարձի ծախսն ես ունիմ սիրով վճարել նմա։»

«Որպէս ի քանի մի նուազս կողմնակի, նոյնպէս և այժմ յայտնապէս և ուղղակի գրելով թոյլ խնդրեմ պաղա-տել, թէ մինչ ցարդ որ ինչ եղանակաւ մարթացայ հոլուել զեկեղեցիս եւ զժողովուրդս, յայսմհետէ այս-օրինակ ընթացիք ձեր չկարեմ այլ վճարել զպարտիս. ուստի աղաչեմ հոգալ զԱւագ երէց մի վասն աստի փոխարէն խմոյ նուաստութեան, որ կարիցէ այսօրինակ վտանգաւոր հրամանս ձեր կատարել. և ինձ տալ պատ-ուով զարձակուրդ. այլ եթէ տակաւին ընդ այս խոնարհ հայթայթանս իմ զայրանայք, չունիմ ասել ինչ քան. ահա սուր ձեր և պարանոյ իմ։»

Ցայս վայր բացայայտեալ փաստիւք եւ յանդիման կայուցեալ օրինակօք, կարծեմ, բաւական իրաւունս ունիք համարիլ ներհակ ձերդ արդի համարման և դատեղոյն զանմեղս. մարթ էր և բազում օրինակս յառաջ վարել յառաւել հաստատութիւն բանիս. թէ յոչ ինչ ժամանակ, և յոչ մի գործ ձեր գտեալ եմ թերի կամ տուեալ եմ ձեզ իրաւունս անբաւականութեան, որպէս և զամենայն գրութիւնս ձեր առ իս լցեալ ունիմ բաւարարութեամբ և չնորհակալութեամբ ներհակ միանգամայն արդի յեղաշրջման ձերոյ. ուստի վերջաւորելով զբանս փութամ յառաջել ի համառօտութիւն միւս պահանջից ձեր, զի մի Ցայցիս պարտաւոր առ այնս, յուսալով թէ ունիք ներել ակամայ և բռնաբարշ վստահութեանս։

Ի պահանջն յանդիմանական, որպէս թէ զրպարտանք սուտ կամ պարծանք զօղանջական ոչ կամեցողութիւն ժողովրդոյս զՏէր Մկրտիչ, և պահելս զնա աստ խնամօք, և այլն. ասեմ սիրով. զի եթէ հնութիւնք ժամանակի զայն իրաւասութիւն իմ այժմ ընդ հակամէտն իկեղծիս փոխարկեալ ըստ ձերում վարկուածոյ, յանկեղծ աւանդատան տեղոյս կայ ըստ սովորութեան բոպէ-գրութիւն անուանեալ անցագիրք ժողովոյ եկեղեցւոյն և կումխարի անդամոց այնր իսկ ժամանակի. նաև գրութիւն Տէր Մարտիրոսի հաւատարմիդ ի ձեռի իմում այժմ, որ յայնժամ, իբրև վիճակաւոր քահանայ տեղոյս զրեաց ինձ ի Զիչրայ, ուր գնայեալ էի յետ տեսկարութեան անձինս իբրև թեթև օդափոխութիւն։

«Հայր՝ եթէ յամեսցիս փութով գալ չունիս զվիճակս

խաղաղութեամբ գտանել ի շնորհս երկուց քահանայից՝ Տէր Մինասն իւրն տեղաւորեց, մնացեալ է մինչ ի քէն ընդունելութիւն լինի. և աղաղակ մեծ է ծագեալ։ Յարութիւն Շերիքսօն, Պ. Կարապետն, Կ. Յակոբն և Մեսրոբն անկեալ կան ի կողմ Տէր Մկրտչի, և շատ ասուլիս. ամեն կողմ գիրն վերառած մնէ տուն ներկայ իրար սոորագրութիւն ժողովեն. վասն որոյ Հրամանացող ներկայութիւնն շատ և շատ հարկաւոր է, եւ այլն։»

Այժմ յիշեալ Տէր Մարտիրոսն ընդ ձեզ է. հարցէք թէ ի գտանել գրոյն ո՞չ խակոյն վերադարձայ սատ յութն ժամու երեկոյեան. և ի վաղիւ կոչեալ զեկեղեցպան և զկուսիսարի Պարնայս յաւանձին ժողով, ուր և բացածգեալ զթէմաթոն Տէր Մինաս. և ի տեղի եղեալ զՏէր Մկրտիչ պարտաւորութեամբ 2 տարի ժամանակաւ, զորմէ դուք ունիք գրեալ՝ թէ լիով հասկացեալ էք ի Տէր Մարտիրոսէդ, մանաւանդ զարարս. և զկնի վասն Տէր Մինասին 400 ռուփիք ի սնղէկ եկեղեցւոյ, 300 ի պաշտօնատարաց ժամանակին և 100 ռուփի ինքուստութենէս արդիւնաւորելով՝ զՏէր Մինասդ յետս զարձուցաք սատի. որով և արարաք խաղաղութիւն ընդ զէմ նորա պատրաստեալ Տետրակին Մեսրովբայ Դ. Թաղիադեանին, զոր հանդերձեալ էր միջոցաւ Աղգասէր լրագրին տպագրել ի գայթակղութիւն աշխարհի, թէև մասամբ անդստին հրատարակելն ոչ խնայեալ։ Այս ձեզ վկայ անպիսին Տէր Մինաս հեղինակն այդր առ ձեզ (և բոլորագրութիւն բանիս յաւանդատան եկեղեցւոյ տեղոյն)։ Գիտէք և դուք բաջ, և ի նորոյ, իբրև անդէտ արդարութեանս, զիս դատապարտէք։ Այս

սոցին նման են ամենայն իրաւունք բանից ձերոց առ իս դատապարտելի։ Էր ասա չկարդամ. վա՛յ ի դլուխս ժամանակիս, յորում դատաւորն, որպէս դատախազ, ի բաց հաղածել ջանայ զարդարութիւն։

Անուն Մեսրովբայ ընդ մէջ գալով՝ յուշ երեր ինձ զիրաւունս ողորմի տալոյ ինքեան և ծնողացն սակս հաւատարիմ բանին գրեցելոց առ իս ի Բումբայու ի 1857. Դեկտ. 2 թուականու. որոյ օրինակն ոչ անդէպ համարիմ գրել աստ։—«Եթէ որքան դու զԹադդէոս Եպիսկոպոս Առաջնորդն քարոզեցեր և քարոզես, զԲրիստոս Աստուած քարոզելիր, ապաքէն հաստատուն վարձուց էիր արժանաւոր և փրկութեան հոգւոց բաղմաց. բայց դեռ ևս թողեալ է կամաց Սրբութեանդ։»

«Գարշահոտութիւնք գործոց նորա և արդի Ջուղայեցւոց արդէն սկսանին տարածանել զմահաբեր ներգործութիւնս իւրեանց, զորս այլ ևս դու ոչ տանել կարես և ոչ յայլոց թաքուցանել։ Դրութիւն զանազան քաղաքաց Հնդկաստանի և մեծագոյն մասին Կալկաթայի առ նոյն Առաջնորդն, արդէն իսկ յայտնի է քեզ. միայն մնացեալին Ջաւայ և քանի մի անձինք ի Կալկաթա. և այն միայն քեզ, որք ընդունէին թէ ահա Առաջնորդ ունիք. իսկ այժմ զրեանս հասին այսր առ իս ի Ջուղայոյ և լրեր բազում, որ սկսանի Առաջնորդն խորհրդով մանուկ խորհրդականաց իւրոց արհամարհել զընտանիս, կապտել և կողոպտել ըստ հաճոյից իւրոց։—Զ Պարոն Թարոս վարժապետ ևս ոչ տեսի աստ. բայց դու հայրս ի նմանէ և տեղեկացիր թէ որքան անարժան կաշառակուրութեամբ և սպառնալեօք հոգևոր և մարմ-

նաւոր իշխանութեան պարտաւորեալէ նորա (Առաջ-նորդին) զՅակոբ Ս. Մկրտչեան չտալ զտունն Հայ-բենի ժառանգութեան Պարոն Սուքիասայ 300 թումանի. այլ վճառել զնոյն Սէթաղայ Նահապետին 200 միայն, և այլն, և այլն։»

Ես ոչ Առաջնորդի հետ բէն ունիմ, և ոչ ընդ Յա-կոբայ ամենևին հաղորդակցութիւն. ոչ կարօտ եմ նմա. և ոչ ի Զուղայ երթալոյ դիտաւորութիւն ունիմ, այլ, իբրև բարեկամ և վասն քո իսկ օգտի գրեմ, հաս-տատ կայց ուր կաս, յաւուր միանգամ զմամուլդ իւղեա, և զտպելդ ըստ բաւականին յստակեա. զգրաւոր սիրե-լիան քոյ (որոց այժմ ես ինքնս պակասեցայ տեղեաւս) սիրով առ քեզ յարեցո. քանզի դուշակեմ ես ահա քեզ զբարոյական մեծ երկրաչարժութիւն. յէց ի Վէմեան չարժելի և ուրախ կայ . . . զՏէր Յակոբայ տեղոյս թէ-պէտև փոքր մի գանգատաւոր էր Պարոն Յարութիւն, բարեկամն մեր. այլ ինքն գրեթէ առ ոչ ինչ համարէր զնա ասելով թէ. Տէր Մարտիրոսն խոստացեալ է իւրն զկնի դարձին ի Զուղայ պակել զինքն վիճակաւորու-թեամբ Սրբոյն Կաղկաթայի։ Տես ուստի ուր հասաք. որ երեկեան երեխայք իրար թէմ խոստանան և տան, մինչ Առաջնորդն քնած է և ծերքն՝ անտեղեակք։»

Աւելորդ համարիմ առ տեղեաւս ի լոյս ընծայել զկա-յութիւն ասացեալ Պարոն Թորոս վարժապետի թէ առ ծանուցեալն խնդիր և թէ առ իմաստս անատորագիր գրոյն եկելոյ աստ ի Զուղայէ, եւ նմանոյն գրեցելոյ ի Զավայ, ուր մերաղնեայ պատուելիք ի Բթաւիոյ անտի զներհակն բողոքեցին թէ տպագրեալ տետրակաւն աստի

և թէ հրատարակմամբ Արշա· Աբարատեան օրագրոյ։

Ի դիմադրութիւն բանին թէ. ի դիմաց Պարոն Սեթայ Յ. Արգարեան եկեղեցականի առ կառավարութիւն Վանայդ գրեալ գրոյ օրինակն ես էի առեալ, և այլն։ Այս բանաստեղծութիւն ճարտար քան զամենն հնարաւորեալ իրաւունս ձեր է անզօր և անհիմն. նախ՝ թէ ո՞սատ ուսայք զայն, և թէ ի պահանջել հարկին որո՞վ կարէք ապացուցանել. երկրորդ՝ մի կարծէք զկառավարութիւն տեղոյս եկեղեցւոյ ըստ տեղոյդ Վանայցն է անձնիշխան ի գրելն կամ գործելն ինչ. այլ օրէն է ի հարկաւոր և ի պաշտօնական դէպս խորհրդոյ կամ գրութեան ինչ, նախ առանձին ժողովով կառավարիչ, երիսարի և Աւանդապահ անդամոց (որք թուով համարին անձինք եօթն) խորհիլ, խորհրդածել. և ապա ըստ արժանւոյն վերջառորել զբանն. եւ ոչ այսչափ միայն· այլ և զկնի գրութեան հատուցանելոյ, նախ զդաղափարն աչքք և մտօք ամենեցուն քննել, սրբագրել և ապա ստեղծագրին օրինակել հրամայել։ Ուստի դիցուք թէ ուղիղ՝ զոր ասէրդ. այլ չմտածէ՞ք զի եթէ խմաստք թղթոյն չիցէին վաւերական և պատշաճ ըստ հանգամանաց ժամանակին, հնա՞ր էր Պատուելեացն մրճատել զխիղճ իւրեանց անօգուտ և անշահ դեղեանօք, որչափ բազումք ի ժամանակիս կամակոր մտօք առնել աներկիւղանան։ Եւ մի՞թէ անարգանաց կամ պատժոց արժանի է որ ի շարադրելն օրինակ ինչ ըստ խնդրոյ և կամաց բարեկամաց իւրոց, յորժամ գրութիւնք կայանան ոչ ի շարադրողն և ոչ ի գրիչն. այլ յբստորագրեալ հեղինակն նորին խօսողն բանիս· մի՞թէ այսնման և գրութիւն

վերապատուելի Պարոն Յարութիւն Ա.ըգարի առ ձեզ (իմով գրչաւ), իբր խոստովանաբար և բարեկամական արդեամբք, յամին 1857. իբր ի զգուշութիւն ձեր ընդ-դէմ ազգի ազգի վատաբանութեանց զձէնջ այսր հա-սելոց, ըստ ձերում իակ 1857. Դեկտ. 31 յայտարա-րութեան թէ. «տամ իրաւունս և իշխանութիւն հա-մարձակաբար գրել առ մեզ ուղղակի թէ վասն քո յայս ինչ անձնէ (յայս ինչ առնէ ասելն թերևս ոչ առանց դիտաւորութեան պատժելոյ զնա) այս ինչ լսեմք, եթէ ճշմարիտ է՝ առ ի՞նչ այսպէս գործեցար, և այլն։» Դուք փոխարէն զպատասխանն առ նա գրելոյ սիրով, զամն 2 խռովեալ մնայիք. և զյաւելիս բաղում ինձ գրեցիք, որպէս թէ դառն սրտի խմոյ էին բանք իմաստիս այնր գրոյ։ Ա.յժմէն ենթադրեմք թէ իրօք այնպէս էր, որ-պէս իմաստասիրեցիք, աղաչեմ ասել զվնասակարու-թենէ դառնութեան բանիցն առ բերեալ խնդիրն. (ափ-սո՛ս, եթէ իցէր ինձ դառանել զօրինակ այնր գրութեան վասն օրինակելոյ ասա ի կրկնակի քննողութիւն բանիս դառն բաղձանաց սրտի խմոյ), որ հայէր ի խնդիրն պա-հելոյ զկառավարիչս վասն Ա.թոռոյդ, ըստ սովորու-թեան, յորժամ դուք վասն եկեղեցեաց տեղոյդ մի, մի կամ 2, 2 կառավարիչս ընտրեալ էիք, յորս չէիք ինչ ելևմուտ՝ քան մի լիտր մոմոյ կամ 5 լիտր ձիթոյ. և զձերն վանք, որ աղրիւրն է ամենայն առատ մոմոյ, ունել մի միայն ընդ իշխանութեամբ ձերով, որոյ ներ-հակ գրեցիք այսր առ հասարակութիւն տեղոյս որպէս զի նոքա ընտրեսցեն կամ նշանաւորեսցեն զկառավարիչս վասն Ա.թոռոյդ. և ի նմին վերաբերեալ զիսոչն մեծ,

թէ պարտին ընտրեալ կառավարիչը վանայդ տալ ձեզ ծախս ըստ արժանոյն, (որպէս թէ առ ամն 1,000 թուման) և չասէք թէ ըստ կարեաց մտից Ա.թոռոյն. որ մնայ աստէն խնդիրն թարմատար իրրև ի սակի անհը-նարեաց։ Ա.հա այսպէս և ձերածանոյց կոչումն ձեր այդը ի հասարակութենէ, զոր վրէժառու զրութեանդ միջոցաւ ի յանդիմանութիւն ինձ ածէք. զի ո՞ր յիմար և տգէտ զորէ ենթակայեալ զանձն ի պաշտօն կառավա-րութեան վանայդ և ի մեծամեծ փորձանս ձերոյ սպառ-նալեաց և անհաճոյ կամաց, մանաւանդ հիմն և կատար կառավարութեան են սէր, միակամութիւն և հոգը կա-բեկցական խաղաղութեան, որ հալածեալ այդի՝ չիսո-նարհի անգամ ի հոգևորականս. և եթէ չիցէր այս-պէս՝ չունէիք սպառնալ ի վերայ քարոզողիս կարգա-դրութեան, խաղաղութեան և սիրոյ։

Ա.ռ բանն թէ. «կամք էր զրգռել զեօթն և տասն ան-ձինս Ջուղայու ի կառավարութիւն ձեր և այլն». ասեմ սիրով և հառաչելով. զի եթէ զհոգի այնր դատապար-տեալ զրութեանս Փիլիպպայէս խնամայիք թարց ներհակ ինչ կրից, համբուրելոց էիք զնակատ իմ եռանդուն սիրով, որպէս միշտ համբուրեալ էք զրութեամբք. սակայն մինչ բարկութեամբ կամ, որ իսկն է, զրգռը-մամբ իսոյ և ձերոյ բարեկամաձև թշնամեաց ընդ հակառակն վարեցայք, չունիմ ինչ առ այժմս ասել մինչ ժամանակն ինքնին ուղղեսցէ զկարծեցեալ վրի-պակս, զոր, յուսամ, զկնի այնր հեղման վրէժառու զրութեան ձերոյ, իրաղգացեալ իցէք անդորրու մտօք վերծանութեամբ կրկին զգրուածս. և վկայեալ խղճիս

թէ գրութիւն իմ առ նոսա չէր մտօքն, զոր կարծեցիք և վրէժխնդիր եղէք։

Ա. պահանջն թէ. «Տէր Սարգիս քահանայն եկեալ յայտնեաց ձեզ թէ ընկալեալ ունէր յինէն զպահարան մի թղթոյ. և թէ Տէր Բարսեղ բողոքագրով դիմեաց առ ձեզ եւ այլն». ասեմ իրաւաբար, թէ պատասխանելս առ այս ուղղորդ ինն է, զի Տէր Սարգիսն իրրև անդամ մի ի վեշտասանից, ունէր հարկ վճարելոյ ըստ յանձնառեալ գործն համակցութեամբ ընկերացն և կամ նոքօք ինձ գրել զհրաժարումն իւրեանց առանց ձեզ ինչ յայտնելոյ կամ խորհուրդ ձեզէն խուզելոյ. բայց յորժամ այլ ընդ այլում չփոթեալ զիրաւունս յերեսաց երկիւղի ձերոյ. այն ոչ է իմ յանցանք. սոյնպէս և Տէր Բարսեղ յինէն ընթերցեալ զգիրն՝ ինձ պատասխանել պարտն էր. եթէ խմաստ գրութեանց առ ինքն անուղիղ կամ զրպարտանք՝ կարէր իւրովի փաստիւք և ապացոյցութեամբ մի մի զնիւթ պահանջեալ իրաւանցս ոչնչացուցանել. և ոչ թէ ըստ օրինի Պարսից տեղւոյդ, զհշմարտութիւնն բուռն ուժով ծածկել. որոյ քաջալերեմ մեք, որ ի պահանջելն յումեքէ զիրաւունս ինչ՝ զդաւուղայն և զաստնորին յանդիման կացուցանել. բայց փառք բարերարին Աստուծոյ, որ չեմք մեք ի ներքոյ իշխանութեան փալուան Յոսէն Դաւուղի, և չեմք վարակեալ շողոքորթական բնութեամբ ըստ անձար կիրարկուացն այդր։

Ի բանն թէ. «Ի մէջ ձեր և Տէր Մարտիրոսի չիք ծագեալ տարաձայնութիւն ի պատճառս ամուսնութեան դատերն, և այլն». ընդ այս հսկայականութիւն ես ոչ

բնաւ զարմանամ ի յայտնի և հաւաստի իմացականու-
թիւն իմ, թէ զոր ասէրդ և գրէք, առ ի՞նչ պարտաւո-
րութիւն. բայց այս ևս ասեմ՝ զի եթէ կարէ քաղաք
թագչիլ, որ ի վերայ լերինն իցէ, կարէք թագուցանել
և դուք զնչմարտութիւնն անստելի. զի թէպէտ սոսկամ
ի յայտ ածելս զանուանս անձանց առ իս վկայողաց, յոր-
ժամ դուք ամօք ինչ յառաջ վասն քահանայի ուրուք
յայտնողի զհաստարակ խորհրդոյ բանս, ըստ վկայելոյ
ոմանց, ի քարոզի զնա Յուդայ էիք անուանեալ. սակայն
յընտիրմանէ հարկին պարտանդիմ ասել. թէ ունիմ
ի ձեռին զվկայագիր՝ պատկագիր քահանային. լուեալ եմ
ասա յեկողաց քահանայից և ժողովրդոյ մանրաքննին
բանիւք. ունիմ և ի Ջուղայոյ այդի զգրութիւնս ոմանց,
թէև ըստ մասին անստորագիր յահէ երկիւղի ձեր.
գիտեմ նաև հաւաստեօք թէ մինչ ցդալ և հասանիլ
գրութեան իմոյ այդր՝ վասն այնր իսկ պատճառի
երկարէիք հակառակել միմեանց. և զկնի ի խորհուրդ
կամայ զիս կորուսանելոյ միաբանեցայք։ Նա և գի-
տեմ անչուշտ, գիտեն և համարէն Ջուղայեցիք զնչմար-
տութիւն բանիս, ուստի ասայէ՛ք դուք զոր ինչ կամե-
ցայք և կամիք։

Ցիրաւունս ձեր թէ՝ «Տէր Մարտիրոսն թոյլտուու-
թեամբ ձերով միջամուխ եղեալ ի գործ հարկաւորու-
թեան Ջուղայու, (այսինքն եղեալ բեռթխուդայ) և
այն թէ՝ զչարկ կալուածոց առ Ջրիրն 20 ռուբի
արար 16 և այլն»։ Հայեցեալ յայս առանձնաշնորհու-
թիւն ձեր ի նա չասեմ թէ եկեղեցին մեր բնաւթոյլ չտայ
հոգևորականաց պատաղիլ ի գործ մարմնաւոր ըստ ուս-

տին ի ժամու, յորում Եպիսկոպոսն ի կղերէ նախ ընկալ-
նու զհրաժարականն յաչխարհական գործոց. և ապա
ձեռնադրէ զնա քահանայ. որովհետև ձեր սատիճանի է
վայելուչ, չասեմ. և ի զուր տրնին տէրութիւնք հանել
զաչխարհական մեծութիւն ի Պապէն Հռովմայ. և չա-
սեմ. թէ բարեդոյն էս լինիցէր, եթէ փոխանակ նորա,
ըստ արժանւոյն տայիք զգործն ի ձեռս աչխարհականի
ուրուք ըստ բնականի սովորութեան տեղւոյդ. և զնա
ի գիպոց և յանդիպոց չզրկէիք ի սպաշտօնէ հոգեւոր կոչ-
մանն, որով անշուշտ զհետ լինի նմա մոռացումն հոգե-
ւոր պարտեաց ըստ Տեառն բանի թէ. «ոչ կարէք երկուց
տերանց ծառայել»։ Զայս և եթէ ասեմ. երանի՛ թէ 20
ռուբի լինիցէր վճար նոցին, և որոց ձեռք և ոտք չզթա-
յակապ չլինէին. քանզի յայնժամ որք տեարք էին այ-
գեաց և խաղողոց, զպտուղս այգեաց, որ ի հասարակու-
թիւն ազգին վաճառէին, և որ ինքեանք ճմլեալ գինի
և օղի պարզէին յուսով վաճառելոյ գինեվաճառաց, և
այլազգի քաղաքացւոց. և այնպէս զ20 կարի հեշտու-
թեամբ վճարէին քան ձերածանոյց 16ն։ Բայց մինչ,
ըստ հաւատի լսողութեան, փարուսն Յոսէն դառու-
զայն Զուղայուդ թոյլտուութեամբ ձերով զհամայն թաղս
Զուղայու և զհրամանն գինեվաճառութեան ընդ իշխանու-
թեամբ իւրով կալուկապեալ՝ ինքն տայ, ինքն առնու. և
եթէ հաղիւ ուրեք ի դէպ գայ ումեք սրուակաւ մի գինի կամ
օղի վաճառել 500 դրանով, զերկերիւրն պարտի տու-
զանս տալ դառուղին. ուստի այսպէս հարկադրին ժո-
ղովուրդք կամ մշակ լինել դառուղին և տալ նմա զի ձեռս
բերեալ գինին և օղին նուազ գնովն, զոր նայն ախորժէ,

և կամ զխաղողս իւրեանց առնել բացախ, և հանել զինչս իւրեանց ի վճար տէրունի հարկաց, և ի վերջոյ թողուլ զտուն և զգերդաստանս իւրեանց յողորմելութիւնս և ճողոպրել զանձինս ի ձեռաց պարտատերաց և անիրաւաց, ըստ կերպի Հայրապետ Շախանի և ոմանց եկողաց ի կողմունս ցաւոք, և վերադարձելոց աստի շուարանօք։ Որ ասէր. 16 թուման ի դառուղայէն փոխ ստացեալ, 50 յետս դարձուցեալ ի Ներքոյ ծանրապատում վաշխի, անդրէն 30 թուման ևս պարտական է, որ ցարդ հարկաւ երկպատկեալ լինելոց է. և որոց ճարն ոչ ինչ՝ բան զտուն և զստացուածս իւրեանց մատնել ի կորուստ։ Ահա շնորհ երախտեաց և օգտի քեռաղխուղին ի խղճալի հասարակութեան տեղւոյդ, և մանաւանդ մեր ոչ կոչեցաք զնա մահլաթի հասմանչի. զի զէմ խնդրուածոց զիմառնական բանից խմոց ոչ հայէր ի նա (1)։

Ի զիմադարձութիւն ձեր առ այն թէ «Տէր Մարտիրոսն ունեցաւ պարծանք յօգուտ Վանայ արդեամբ նուիրակութեան գնեալ տամբ ի Բթավիա, որ առ ամն երկերիւր թուման պտղարերէ, և այն (2)»։ Ա. այս զովեմ ես ևս զեր յաջողուածոյ գործոյն. գովեմ նաև զՀոգի Ջուղայածին բնակչայն, որք պատճառ և տնօրէն եղեն պարծանացդ, և չետուն թոյլ զրամոյն անդրա-

1. Երանէ՛ թէ ունիցէր նա զէր առաքինութիւն և երախտագիտութեան շնորհն ըստ չափու հասանելչուն։

2. Վէհն բորոտվին հիմնի ի պահանջ դրամոց. դրամ, դրամ, ոսկի, արժաք. այլ ոչ ինչ...

փոխել յԱՓոռդ և չքանալ ընդ անցելոց մեծամեծ մտիցն։ Բայց եթէ համարձակութեանս թոյլտուութիւն լիցի, կարծեմ խորհրդածող և բացող այնմ օգտի նուաստութիւնն իմ լինիցի վաղ քան զկանգնումն Տէր Մարտիրոսիդ։ Ընթերցեալքդ, դիտեմ. սակայն զուցէ մոռացեալ. ուստի եթէ չնորհ արարեալ զհատորս նամակաց իմոց առ նախորդն ձեր և կառավարութիւն վանացդ վերատին ընթեռնուք, ունիք ակահ լինիլ և իմանալ. որոյ անցաջողին է ի պատճառս կառավարութեան Վանացդ և ոչ իմ մինչ վասն այր պատճառի էր, որ զառաջին նուիրակութեանս գումարն յանձն արարի տեղւոյս եկեղեցւոյ կառավարութեան ի պահել՝ թերևս փրկիցի յապականութենէ և լիցի նպաստակ դնելոց ի վերայ անշարժ կալուածոց. սակայն զինչ զյաւուցս տասցիս, զի մինչ մեր աստ զայս օգտակարութիւն խորհեալ, նախորդն ձեր այդր զկալուած Վանացդ ընդ ծանր՝ վաչխակիր պարտուք գրաւեալ։ Աղաչեմ ասել թէ ո՞մ են յանցանք, մանաւանդ և չէ ի խաւարի աղօտ լուսոյ Մնացեալ համարեն թէ գործն այն անհաճոյ ձեզ՝ սկզբնապատճառ անախրութեան ընդ մէջ ձեր եւ Տէր Մարտիրոսիդ. սակայն այս մասին գովելի է նա (թէեւ ոչ իւրովի. այլ տնօրինմամբ հանգուցեալ Պարոն Եղիազարու Գ. Գասպարի) ընդ ժողովրդոյն Ջաւու. զի եթէ որ ի դարուս կամիցի գործել ինչ բարիս Աֆոռոյդ, չպիտի թէմակալ Աստուծնորդի խորհրդոյ եւ կամայ Ներբոյանալ, որչափ ես Ներբոյայեալս եղէ անպտուղ։ Ցատկապէս առած իմն է առաջնոցն թէ. «կերածն կրսած է. եւ հաղածն՝ փորված.» թէ ոչ՝

ջնեթ-ոցս կայանալոյ խնոյ ատ նովին արժէլից տան աւելի
լոկ նուաստութիւն իմ ի Զուղայուց եկեալ եւ վերա-
դարձեալ կարօտաւորաց ունի արդիւնաւորեալ (որպէս
մին ի ձեռս ձեր Յովհաննէս Գէորգի մերձ 200 թուման,
եւ միւսն՝ Պողոս Խանիդ հաւասարաչափ) . եւ ոչ
պարծանս յանձին բերեալ . քանզի չարարի ինչ , քան
զոր պարտն էի առնել : Թողում մնարերել ձեզ ըզի մի
նուազ տասն հազար Կումլ . ռուփիքն , զոր ի հոգելոյս
Աղայ Յովհաննէսեան Էչիազէն ստացեալէր իմ յօգուտ Զու-
ղայուդ . եւ ի շնորհս ապաշնորհաց տեղւոյդ յայլ իմն
դարձուցեալ՝ ի դերեւ ել աշխատանս , զորմէ ի վիճա-
բանական տետրակին ձեր ընդ Պարոն Յովհաննէս Մ .
Զօրարի գծագրեալ , զորոյ զարձագանգն ի չորս կողմն
աշխարհի հնչեցուցիք . եւ այլ ընդ այլով հիւսուածս ինչ
ոստայնանկեալ վասն նորին Յովհաննու , ըստ Ա հա-
րոնեան այծուն, զյանցանս ամենից ի գլուխ նորա կար-
գացեալ քշեցիք զնա յանտառս Գանգէսի եւ Աստրու ,
այն է Զաւա :

Ի վրիպանս պարզմտութեան խնոյ եւ զրչի , իբր
զրեցի ձեզ յորժամ պաշտօնատարք եկեղեցւոյ զկոնդակ
ձեր պահեցին անգործ . « հարկ էր ձեզ դաւազանաւ
իշխանութեան առնուլ զվրէժ , եւ արգելուլ զմոտս
քահանայից յեկեղեցին , եւ այլն » . ասեմ յաւելով թէ
այն էր դատմունք ունանց ժողովրդոց յայն իսկ ժամանակի
յասելն թէ . չվայելէր Ա ռաջնորդին բնաւ այսօրինակ
զրութիւն առ հասարակ ժողովրդն արձակել , եւ որով
զ20 ամենից ի վեր զհնայեալ և մոռացեալ բանս ընդդէմ
մեռելոց անդամ ի նորոգութիւն ածել . եւ եթէ ունէր

իրաւունս առնելոյ, զոր արար, պարտ էր միջոցաւն ի գլուխս հանել զիրաւունս իւր. իսկ եթէ ոչ՝ յորժամ զգրութիւն իւր անարգարար յետս յինքն դարձուցին եւ ետուն խմանալ զարարս իւր անտեղի, պարտ էր, եթէ ոչ մեղայսկանաւ, գոնէ մեղմ ինն գրութեամբ փարատել զխոցուած սրտի, որոյ խոցեցանն։ Ահա այս էր առիթն, որ տեղի ետ ինձ գրել ձեզ զայն ամենայն բարեմտութեամբ և ոչ դիտաւորութեամբն, զոր դուք ըստանման գործի ինձ ունիլ ախորժեցայք այսօր. եւ այն՝ զկնի ամաց բազմաց, յորում ընդ շրջանաց ամայն շրջեալ, փոփոխեալ եւ մոռացեալ եղեն ամենայն դիմադրելի իրաւունք։ Այո, զի եթէ Աւետարանն սուրբ հանապազորդ ոչ ընթեռնոյր ի լսելիս Հաւատացելոց եւ ոչ արծարծիւր յիշատակ արդեանց Փրկչին մերոյ յազգս մարդկան, ի վաղուց մոռացեալ լինէր կրօնն սուրբ. եւ մարդիկ անդրէն ի խառնակութիւն աղանդոց տագնապէին։ Այդ թողեալ զայս ամենայն, եւ մեք յանձն մեր առնումք զամենայն վնասս յերիւրեալս ի ձէնջ թէ վասն Տէր Մկրտչին եւ թէ վասն այլոց, ըստ ձերում ծանուցման թէ խմով յորդորմամբ կամ գրութեամբ արարիք։ Իսկ վասն այնր գրութեան ձեր, որ ի ձեզ դարձաւ անարգարար, աղաչեմ ասել թէ ո՞յր խրատու եւ յորդորմամբ, կամ ո՞վ վարդապետաց ձեզ զայն ի նորեկ եւ յանծանօթ վիճակի ձերում այդր, որոյ մրուրն զտուն ծնաւ ցայս վայր չարիս։ Զէ ստոյգ զոր ասէր. տիրոջ պատուելի ժողովրդոց տեւոյս խոցեցան անցիւք Տէր Մկրտչի. ըստ սրում չէր առարկայն անձնաւոր. այլ իրոք եւ իրաւակոնօր խոցեցան ի սրտէ գրութեամբ

ձերով այնուիկ, յոյր ընդդէմ ի պաշտպանեալս զձեզ արատաւորեցի եւ զիմն պատիւ, զորոյ եւ զնչխարեա մասն այժմէն կորուսի ձերով չնորհիւ, որոյ եւ վիշտն ոչ այնքան ինձ անհատիս կամ ձեզ եղեալ, որչափ՝ ընդհանրապէս եկեղեցւոյ եւ ազգի եւ 18 ա մենից վաստակոցս եւ ջանից, որոյ դատախազն ինքն լիցի Աստուած։ Այս վերոյ ասեալ բանիս տեղի կալնում ասել թէ՝ զամենայն, զոր արարիք՝ ոչ խոով գրութեամբ, այլ նոցին, որք ընդ ձեզ՝ ի չուրջ ձեր բազմեալ ուսուցին եւ ուսուցանեն, եւ իբրեւ ամենագէտ զանձինս իւրեանց համարտակեն, որչափ եւ ձեր նախապաշարեալ՝ այնպէս գոլ եւ լինիլ հաւատացիք։ ուրեմն մի զվնասն ձեր արկանէք այլում։

Ի պատճառն թէ։ «ես գրեցի ձեզ չկցել գիս ընդ այլում ի գործս ձեր, և թէ զվերարերելին իմ պարգև (պատիժ) առ իս ուղարկել, և այլն»։ ասեմ խոնարհութեամբ թէ մինչ եկեղեցականն շարունակ յայտնէր զանհաճութիւն իւր ի գործ Վանայդ և ի հրաման ձեր, որպէս և ի վերջոյ գրութեամբ իսկ յայտնեաց միջոցաւ նուիրակութեան գործոյդ, ես յաւէտ յօդուտ ձեր վարկայ գրելն։ որպէս զի եթէ ի դիպոյ ունիցիք գործ ինչ, մի՛ զիս ընդ այլում կցել և որով զձեռս և զոտս կապել ի վնաս ձերոյ ակնուելի նպաստից գործոց, մանաւանդ և դուք բաղմաք զկատաւարութենէ եկեղեցւոյ ասեալ ի մասին հաշուագրոյ Վանայդ և այլոց, ոչ միայն առ իս, այլ և առ ոմանս ի Պարոնայ ասեալ մեծ աղաղակ ունէիք տարածեալ։ մինչ անգամ խորհրդածեալ առ Դեսպանն Անգլիացւոյ ի Թէհրան բողոքել ըստ ձերում յայտարա-

թութեանն. այլ և յինէն զնարս դիւրութեան խնդրէիք. այր ընդդէմ և յատակապէս վանս օգտի Վանայդ ի 1854. Այպրիլի 19 գրութեամբ ծանուցի ձեզ զամենայն դժուարութիւն գործառնութեանց տեղւոյս, և չլինելն ինչ առանց հաստատուն և վաւերական կարողութեան. ուստի գրեցի ձեզ այսպէս. . . « Զի եթէ զհաստատմութենէս և զպիտեանութենէս աներկբայ էք, ապարտիք առաքել ինձ կնքով Վանայդ և ձեր վաւերացուցեալ կարողութեան գիր իմն, որպէսզի դիմաց Աթոռոյդ և ձեր ունիցիմ լիովին կարողութիւն յո և իցէ խնդիրս պատկանեալ Աթոռոյդ, թէ ի մասին բոլորի և թէ ի մասին մանաւորի, զոր ինչ բարի և վայելուչ համարիցիմ, արասցեմ յօգուտ Վանայդ և ձեր անտարակոյս. ապա այնու մարթանամ առնել զոր ինչ այժմ անկարողանամ։ Երկրորդ եթէ, չիցէ ընդունակ զայն լիակատար կարողութիւն տալն ինձ, ապարտիք որոշել զաստիճան և զեղանակ գործոյս ձերասպատկան, մինչ յո՞ր վայր, և յո՞ր աստիճանի. և զկնի ոչ արտաքոյ նորին մեծացուցանել զառարկայ խնդրոյն (իմանալ պարտէր զպահանջն ձեր) մինչ չկարիցեմ ամփոփել զայնս ապահովութեամբ առանց իրիք տարակուսութեան, որպէս օրէն է ամենայն պաշտօնատարի կանխաւ իմանալ զիւրն գործ վասն ոչ առաւել և ոչ պակաս զնովաւ վարելոյն, և չմնալոյն ընդ դատապարտութեամբ, մանաւանդ յայսմ բաղաքի, ուր ամենայն ինչ չափով և կշռով կարողութեան ասելոյն։ »

« Իսկ երրորդ՝ եթէ ոչ այս և ոչ այն, ուրեմն աղերսանօք պաղատիմ՝ չարկանել միւսանգամ յանտիրա

արտաքոյ կարողութեան խոյ և աստիճանի, որչափ ցայս վայր անխտիր միեալով զանձն իմ յայնս տարբերի ինձ ինս, վիչտ և թշնամանս բազմայ ի տարապարտուց, մինչ ընդ հակառակն իրրև 3 ամօք յառաջ ազատ յայսց ամենից զգայմանց՝ չափաւոր անդորրութիւն և յարգանս ի վիճակէս վայելէի, և այլն։» — Թողում զգաստ կարագոյնն ի խորհուրդ հնարից ի ձեռս բերելոյ զմին լաւ կուսայ. ռուփիս ի Յովհաննէ, որդւոյ Կոռնէլ Յակոբի, տուեալն և ուխտեալն ի Տիկին Հեղինէ մօրէն առ Սուրբ Աթոռան Էջմիածնի, Երուսաղէմի, (Սմենա.) Վանայցի և կուսանաց Սնապատին տեղւոյդ, հաստատեալ բաժանմամբ յիւրաքանչիւրն քսան և հինգ հազար ռուփիս։ Զինչ ինս եթէ հնար իցէր ի ձեռս բերել. քանզի նա սպանաւ և դրամն յաղրիւս ապականութեան չբացաւ (1). սակայն ի ներքոյ այժմեան հանգամանաց, բազում և բազում շնորհակալութիւն ունիմ առ յոչ ընդունելութիւն ձեր, որով մարթ էր ինձ նեղութիւնս, վիշտս, չարչարանս և ծախսարարութիւնս կարևոր. և ի փոխանակի այս վարձատրութիւն, զոր տեսի և ընկալայ, որչափ և ոչ սակաւ բամբասանս ի ձէնջ վայելեալ ի

1. Այնա քեզ արդիւնք սեմի անկառավարութեան. զի մի հարիւր հազար կուսպանիոյ ռուփիսն չէր գումար պակաս, զոր որդին նենգեալ մօրն՝ թէ ինքն առաքեցէր ի Էրզրում առ Տէր Յովհաննէս Աւագ երէցն և առ կառավարութիւն և կեղեցւոյ տեղւոյն որպէսզի կատարեսցին նորա ըստ հրամանին. այլ առեալ զդրամն Ժպտեալ գնաց յԱդրայ քաղաք. ուր սպանեալ ի հնդիկ զօրաց՝ կորեաւ ինքն և կորոյս զդրամն մեծագումար...

վերայ եւ սրբազան սպասուց և անօթեղինաց տեղւոյն Գուալէրայ, զորս, բազում Նախատինս աստի և անտի ի ծոց իմ ընկալեալ, առաքեցի ձեզ այդր։

Նա՝ ի մասին խնդրանացս թէ «պարզևն լուելեայն ինձ ուղարկեցէք»։ յայտնի իսկ է նշան անխառնասիրութեանս որպէս զի ոչ կամեցեալ ուրեք խնայել զիւառս և զպատիւ իմ անցաւոր և յեղյեղուկ։ Ահա ճշմարտութիւն բանից. որ ներհակ եթէ դուք այլ ընդ այլով հնարեցիք ինձ մատացածինս, այն ձեր է կամք և դիտողութիւն. և չիք ոք հակառակ ձերոց խորհրդոց։

Վերոյ բացատրութեամբ իրական բուն խնդրոց յայտնեցաւ և ունայնութիւն պահանջուն ձերոյ և դատապարտ առնելոյն ձեր զանձեղս. ուստի կարճելով զրանս՝ մատիցուք յայլ խնդիր։

Ի հակասականութիւնն թէ գրեցի. «քանի մի տունք չնորհիւ վանացդ ծախիւք շռայլութեամբ առ ամն 300 թուամանով ապրին, և թէ բովանդակ մուտք վանացդ 900 կամ 1,000 թուման, ուստի՞ դթերին ընու, և կամ Վանքն ի՞նչպէս կառավարի ապա, և այլն». պատասխանեմ պատկառանօք. նախ՝ դիտումն գրուածոյն իմոյ ոչ առ այլ ոք և ոչ առ ձեզ սոյնպիսի դարձուածս սիրէ, զոր Սրբութիւն ձեր յառաջ վարէ։ Երկրորդ՝ ընդէ՞ր պիտի վանացդ ծախք 900 կամ 1,000 թուման լինել, մինչ մերով երբեմնական կառավարութեամբ և բարւոք դիտողութեամբ ոչ առելի քան զ300 թուման եմք խնայեալ. և այն ի ժամանակին, յորում վարդապետք և մշակք վանացդ շատ և շատ էին բան որ այժմոյս. և այն՝ ոչ ըստ կերպին, զոր ասէք. թէ մինչ ցկէս օր սպասէին

մինչ ի Թադդէոս հայագործէն հայ հասանէր. այլ յա-
մեն ուրբաթու ի վանս ձեր հայ գործէին. և հայարարն
էր Որդանան, բեռորդի Աբրահամու Վարդապետի,
մերձաւոր բնակիչ վանացդ, յորմէ կարէք հարցանել։
Նաև, եթէ ըստ ասից ձերոց հայն արտաքուստ բերել կա-
րօտաւորէր, մինչ ցձեր ծանուցեալ Թադդէոսի դուքանն
10 հայարարի դուքան կային, մանաւանդ մին իբր բարձն-
կէց մի հեռի ի վանացդ. զի՞ այլ կիսոց ժամու ճանապարհի
հեռաւորութեան դիմումն, որ է պարզ անարդարութիւն։
Թողում զժամանակն նախորդին ձերոյ, որ ի տան Պարոն
Սիմոնի յատուկ փուռն մի պատրաստեալ՝ ամեն օր բա-
զարջ և կարկանդակ եփել տայր. որպէս և դուք լու-
եալ գիտէք. բայց թէ այս և թէ այն, յապայուցութիւն
ամենից օրինակեմ ի ներքոյ գրութիւն մի ի վիպագրէ
ումեքէ, որով ամենայն ինչ լիովին ծանուցանի բազմաց,
որ այժմ ձեզ միայն է յայտնի։

## ՑՕԴՈՒԱԾ 102

Արդ ժամէ, ըստ խոստման մեր, նկարագրել զար-
տաքին կալուածս վանայ ընդ այլ իրաւանց մտից ի
ճիշդ տեղեկութիւն հետաքննայ, թէ քանի՞ ճոխ Աթոռն
Սմենաւիրկչեան իւրով սեպհական ժառանգութեամբ
և քանի՞ աղքատ՝ օտար և փառասէր փեսայիք, որոյ
իրաւունք դատաստանի թողու իրաւաքննայ թէ տուն
մի հարուստ, ճոխ և փարթամ ամենայն պարագայիք
ընդէ՞ր պիտի միշտ ի ներքոյ հազար թուման պարտուց
ճնչիլ ըստ վերջին համարատուութեան Առաջնորդին
զկնի սեպհականելոյ անկոպար մուտս։

Յորժամ ի Շահ Աբբասայ Մեծէ, գերողէն Աղգիս Յասպահան քաղաք (Շօշ կամ Աբբաղ) տուեալ զՋուղայ յայնկոյս Զանդարուդի (գետոյ) ի բնակութիւն նոցա առ ստորոտով լերին Սոճի սար կոչեցեալոյ, կատուցանին վանք 2 ընդ քսաներեք եկեղեցեաց ի վայելումն բան և չորս հազար տանց գաղթականաց։ Յետ ոչ բազում ժամանակի երկրորդ Շահ Աբբասու, զկնի և յաջորդ թագաւորաց բռնացելոց յազգս, տուգանք, կեղեքանք, տառապանք և անդադարելի վիշտ տուայտանաց, տակաւին և ոչ չինութիւնն յամրովկ հասեալ, ցրուամբ և փախստեամբք գաղթականաց սկսանի անչքանալ, դատարկիլ և եղծանիլ, մինչ սերկեւանս հաշուով վանք մի և եկեղեցիք տասն հաղիւ մնացեալ. և ի 24,000 տանց անտի՝ տունք իրրև 300. և որ անտերունջ մնացեալ, փլուզեալ, է որ յայլազգեաց բռնաբարչեալ և է, որ ի մերազնէից՝ յետ սպառելոյ զնիւթն փայտեղէն, երկաթեղէն, թրձեալ աղիւս և այլն, զտեղիան արտորայս և այդիս ցանկապատեալ, և որ անցանկ արտորայք ակօսանն ի տերս արմտեաց ցորենոյ և այլ բուսոց, որպէս թամբաքի, բամբակ, վարունգ, սեխ, ճակնդեղ, կազամբ, շողգամ, ստեպղին, դդում և այլ բանջարեղէնք, որովք և ոչ սակաւ արդիւնս վայելեն աշխատասէրք։ Ի բաց թողեալ զկորուսեալսն ի հաշուէ (որպէս գասկ ասացեալ 90 ջրիր) ասեմք՝ որ այժմ կան 828 ջրիր (1), որոց 315 ի ձեռս մահմետականաց, և 513՝ ի ձեռս Հայոց, ընդ որս և այդիք և արտորայք վանացն 115

1 · Ջրիրն է տասն դաշիս։

Ջրեր և 7 դաֆիսք (1), որոյ արքունի հարկն տարեկան մի հազար թուման (2). 675 անկանի Հայոց, և մնացեալն վճարելի մանվեստականաց։ Այրատաբոյ սորին կան և հաստատելի Հայոց ընդունայն ծախք ինչ 75 թուման, որոյ 50 ասի զարէթունաց (3), 22՝ Շահ Աբբասի (4) և 3՝ Եհիրդուի (5)։ Այսոքիկ ընդ ամենն 750 թուման, յորմէ աղբունաստ հրովարտակաւ չնորհաբաշխեալ է Ամենապերկչեան վանաց 262 թուման, Տէր Սարգիս Տէր Մատթէոսին 10՝ և կուսանաց անապատին՝ 35, մնայ միայն թէ վասն արտորէից, թէ վասն արուեստաւորաց (բունուչաց) և թէ վասն զլխահարկաց Հայոց վճարելի լոկ 443 թուման, զոր համեմատելով այլ և այլ կարգադրեալ տէրութեանց հարկաց, արդարև չէ ծանր ինչ, որքան ծանրանայ աղքատութեամբ ժողովրդոց. այլ ինչ որ է, զիտումն մեր չէր դատաւոր լինել իշխանութեանց. այլ ասել և ցոյց տալ զարքունի հարկն Ջուղայու, կալուածս և զմու-

1 · Դաֆիսն քառանկիւնի՝ 21 և կէս գազ, որոյ կրիոն կամ չափն 5 գազ և 6 գրէ, երկիցս յայնութեամբ և երկայնութեամբ ասի մի դաֆիս։

2 · Տասն ռուփին Պարսից ասի մի թուման։

3 · Զարէթունայ ասի վարձ նորաւոր կարգեալ է ի վերայ ժողովրդոց իրաժանել և հաւաքել զնարկն և տարեալ յանձնել յարքունիս ստանալով զապահովագիր։

4 · Շահ Աբբասի ասի կանոնաւոր տուրքն, քան որոյ մանր ոսկիս տպեալ դնեն առընթեր թագաւորին առ ի բաշխել յողորմելոց իւր։

5 · Եհիրդուի ասի պարգևն, զոր բաշխէ թագաւորն քերթողաց զովեստից ի նմին իսկ առուր կաղանդի։

տրս վանայ Թերևս Ծադիցի ողորմութիւն Աստուծոյ ի սրտի ուրուք բարեպաշտի խնամել, դարմանել, և ըզ վանքն ի հանապազորդական հաղար թուման պարտուցն ազատել, որքան արդէն ցուցաւ թէ վանքն ունի հաստատուն կալուածս, այդիս խաղողոց և պտղոց, ունի արտորայս, զորս ի վարձու տուեալ, կամ ինքնին մշակեալ ընդունի ամ ըստ ամէ արդիւնս բաւական։

Ասացիս այժմ զմտից նորին և զընձեռեալ օգտիցն մի ըստ մեոջէ։ Նախ՝ զմեծ այգւոյն խաղողոց որ տայ առ ամն 250 թուման. — երկրորդ՝ զՆորաշէնէ (Մկրտիչ Առաջնորդի), սերկեւիլ և այլ պտուղք ընդ առատ քաղութիւս ասացեալ ծառոց՝ 220. — երրորդ՝ զՅովհանայ ասացեալ վանայ աւերեալ շրջապատէ՝ յիսուն. — չորրորդ՝ զՏէր Պետրոսեան կոչեցեալ գետնէ՝ 28. — հինգերորդ՝ զԳետառի արտորէից՝ 80 հանդերձ վանայ հարկաւորեալ բանջարեղինօք. — վեցերորդ՝ զԳասկէ Ծնայոդ արտորէից՝ 50. — եօթներորդ՝ զԳրիգորեանց հրոչակեալ այգւոյ՝ 80 և երբեմն՝ 100. — ութերորդ՝ զՀաքիմ Ստեփաննսեան այգւոյն խաղողոց, զոր թողուամբ վայելել վանականաց և ունիլ գինի և օղի բաւական. — իններորդ՝ զՄէյդան կարդայեալ տօնավաճառէ, ուր, ի կիւրակէս տուր և առ մեծ լինի. և ի ձեռն դառուղին դանկիւ ժողովէ յիւրաքանչիւր կիւրակէի, աւելի կամ պակաս, մի թուման։ Դէր և այս տարեկան 50. — Տասներորդ՝ զնորոգ գնեալ այգւոյն Գետառի, որ անկանի զհարաւով Նորաշէնին՝ 50 թուման առ պակասն, որք միանգամայն կան և մնան կալուածք վանայս, և ամ ըստ ամէ տան արդիւնս ի վայելումն վանականացն, որոց

ամենից մուտք հաշուին 858 թուման։ Դիրի վերայ և զ262 թուման չնորհաբաշխութիւն թագաւորին, մինչ զոյես 1,120 թուման։ Զայս հատոր բաժանեալ մտից պահեա ի մտի և մի մոռանար։

Գեղերայք անկեալ ընդ սահմանօք Պարսից ի վիճակի Այնանփրկչեան Վանայ յերիս որոշին դասս։ Վերին գեղերայքն են Փէրիա և Զարմահալ ունելով յինքեանս յատուկ յատուկ նահանգս. որպէս վերինն ունի 41 բաժանորդս անուանեալ Լաս, Ղարաղան, Սարի, Քեալվուզ, Համադան, Շահվարին, Գուլիզարդ, Մարանդ, Քալանվայ, Աշնայ, Աբարիք, Փառչիշ, Լիլիան, Ջաղզուրդ, Բուրվարի, Անաքշ, Փահրայ, Ցարաջարադ, Քէռեթէռ, Ջառնայ, Գոլզ, Շաւրաւայ, Ջնխոշ, Ջէշմայխան, Նաղան, Վերին Աբարիք, Դաւիլայ, Սանգաքիզ, Քանդէլնէր, Աբասարադ, Ղառչիրաշի, Զարթաղ, Մուղան, Աստանայ, Հաջիրաւայ, Խօրսաբադ, Ղալաշէլ, Դիլիսաւայ, Աւիսաւայ, Ջնաղ, Շահարինով և Խոսպիան։

Փէրիա բաժանի ի 25 գիւղս. Խօջիղալայ, Հաղարջրիք, Բոլորան, Աշնաւուլ, Հադան, Խոյդեան, Դաջան, Սանգիրարան, Խունկ, Շարուլաղ, Շրշան, Միլազէրդ, Նանադիգան, Մուղան, Սվարան, Աղիզան, Բարդաշահ, Ղարզուն, Նամազէրտ, Դրախտակ, Թառաղ, Աշկերտ, Դարարուրդ, Գուշխանան և Քրդեր։

Իսկ Զարմահալ ըստ անուանն տսի չորս գիւղ, այսինքն Լիւասան, Գիշնիգան, Սիրաբ և Սհմադաբադ։ Ի վերջոյ յաւելեալ գիւղ մի Մանգոյ անուն, որք ընդ

ամեն 71 գիւղք, բաժանեալ ի միմեանց 1, 2, 3 և այլ հեռաւորութեամբ աւուրց, ունին ժամատունս, ունին քահանայս, ուրեք՝ 2 և ուրեք՝ 3, որք միամիտ և ճշմարիտ երկրպագութեամբ պաշտեն զբրիստոնէական կրօն և զազգային ծէս առանց թերանալոյ ի նախկին աստանդութեանց, յորս եթէ գտցի որ լուծանող պահոց, իբրև հերետիկոս հալածեն ի խմբէ և ի գիւղէ պղծող ցանկաց հայրենեաց զնա կոչելով։

Գործ և ճոխութիւնք սոցին են սեպհական մշակութիւնք, հողագործութիւնք, խաչինք, գրաստք և այլն։ Որպէս մարդիկ յանդգն աշխատին ի սերմանս ցորենոյ, դարուց, հաճարի, սիսառն, ձեթենւոց եւ այլն. եւ կանայք ի տան ապահովեն զկութս խաչանց ի կոգի, ի սանիր, ի չորթան եւ այլն։ Զգեղմն խաչանց խուզեալ ի զանազան որակս ներկեալ եւ մանեալ ոստայնանկեն զճարտարակազմ յօրինուածս պատուական գորգոց եւ կարպետաց, նաեւ գործեն զանկապանս եւ ձեռնոցս թագաւորավայել։ Եւ այսպէս մարդիկ արտաքուստ եւ կանայք ի ներքուստ տան, սէր ընդ սիրոյ, սիրտ ընդ սրտի, կամք ընդ կամաց եւ բիրտն ընդ բրտանց խառնեալ ամենայն հաւատարմութեամբ ճուլեն ոսկի, եւ զանձեն զանձ վասն զաւակաց եւ զկնեայ իւրեանց։ Եւ որչափ յաւազակաց եւ ի հրոսակաց լեռնային կողոպտին եւ կեղեքին, այնչափ եւս ողորմութեամբ Տեառն անպարտելի, ճոխ եւ փարթամ մնան ի կրօնն հայրենի. քանզի յատուկ են նոցա շնորհք առաքինական յամենայն ի գնայսն, թէեւ սոպրօրէն։ Ի կայմնասայլեալ կալորէից սերմանց, որպէս եւ յամենայն իրաց, զառա-

ջին մասն գրուանաւ (բիլակ) իբրեւ տասանորդ, որոշեն Աստուծոյ. երկրորդ՝ աղքատաց (կաբսմասն), եւ ապա զմնացորդն, իբրեւ հաս իւրեանց, համբարեն ի տան կամ հանեն ի վաճառ։ Եւ որ ասի բաժին Աստուծոյ, տան հոգեւորականաց. ուստի ի վաղնջուց եւ այսր հաստատեալ է, զի յիւրաքանչիւր ամի մին ի վարդապետաց վանացն գնայ ի գեղերաց, իբր ի Նուիրակութիւն, և վերադառնայ հարիւրաւոր բեռամբք ցորենոյ, աղրոյ, սիսեռն, ոսպոյ, հաճարի, չորթանի, մեղրոյ, ձիթոյ, կարպետի, կովուց, ոչխարաց, եւ այլն, եւ այլն, եւ այլն. որոց զինն մասն վաճառեալ եւ միոմն ղիւղի բաւարարեալ տարեկան պիտոյիւք, յորժամ վանքն ճոխացեալ Առաջնորդաւ, Յաջորդաւ, վարդապետօք, տիրացուօք եւ մշակօք։ Բայց յաւուրս յայսոսիկ, այն ինչ Սրբազան Առաջնորդ վանացն աշխարհագիր արարեալ զանձինս բնակչաց գեղոցիս, զիւրաքանչիւր հնարս օգտի գտեալ՝ զտուրս նոցին ի զուտ դրամս փոխել, որոց վերայ եւ հարկահան քահանայս վիճակացն կարգեալ (ըստ որում չիք վարդապետ յաթոռն վասն գնալոյ նուիրակ), որպէս թէ զուտ դրամս եւ թէ հարիւրաւոր պարէնս նորա ստացեալ ի ժողովրդոյ հաստատեն յԱթոռն, (ըստ օրինակին, զոր առնեն Պապականք Մաղէրու, Փուրդգալոյ, Լիզբոնայ եւ այլոց, ի ձեռն Ջիզվիթ արքանեկաց Պապի), յոր եթէ գթեցաւ ոք ի տուրսն, վա՛յ ի վերայ հոլովման գլխոյն նզովիւք եւ այլովք. այլ եթէ այս եւ եթէ այն եղերմունք առարկային, չատ լիցի խելամտել, թէ արտաքոյ բաւական պիտոյից վանացն կարելի է, առ ամն 800 կամ 1,000

թուման ի գիւղօրէից արդիւնաւորիչի վանքն. զայս էս կալ ի մոի ։

Ի Ջուղայ, յիսկ հորիզոնի, կան սովորութիւնք միշտ պահելոց զԱթոռն լուսագնով, ուխտէցիս, մոմա-փողովք, ծնունդ օրհնէքով, սպակահասօք (մօհրանայ), պաշտօնէիւք մեռելոց, դիւազարդօք, գանձանակօք եկեղեցեաց եւ այլովք, առ ամն ոչ պակաս քան ղերիկ-ուր թուման. բայց լսի այժմ թէ մոմափողն եւ ծնունդ-օրհնէքն, իբրեւ ուսպէտս բարձեալ, եւ ի տեղի ծան-բարեռնեալ աւելի քան զչափն զպսակահասն ճիշդ քըն-նողութեամբ զեօթն պորտան ։

Սատիրյուք այժմ ի Հնդկաստան, ուր բնական աղբիւրն է մոի վանայն (ըստ հանգուցեալ Պարոն Սարգիս Յովհանի՝ կաթնտու կոմն վանայ) ։ Զ Կալկա-թա միայն յիշեցիս, յորմէ, ի 1851 ամէ հետէ եւ այսր 26,000 կուսպ. ռուպիս գտեալ՝ տակաւին ասի թէ վան-քըն ինն հարիւր կամ հազար թուման պարտական է Ա-ռաջնորդին . . . թող զտարեկան մուտս յայգեաց, թող զմուտս ի Ջուղայեցւոց, թող զմուտս ի գիւղօրէ-ից, թող զմուտս ի Թէհրանայ հաստատեալ առ ամն 50 թուման, (թող եւ զխոստովանեալ տարեկան 300 թուման ի նորոգ գնեալ տանէն Բէթավիու) ։ Ասա՛ զգնոց քշտեցելոց եւ յօտեցելոց ծառոց եւ որթոց այ-գեաց, որ ամենաբաւական ծախք լինի վանայ, միոյ Առաջնորդի եւ միոյ արեզայի. ասա՛ 5 կամ 10 տիրա-ցուայ եւ մշակայ եթէ կարգ եւ կանոն իցէ եւ չափա-ւորութիւն յանզուսպ շռայլութիւնան, եթէ ոչ՝ հարկ լինի իմաստասիրել այսպէս. զի եթէ մի կամ 2 եւ կամ

10 անձանց ծախս վանականաց առ տարին հազար թուման արտաքոյ ամենից կերակաց, ըմպելեաց, եւ այլն, ապա ուրեմն վայ մեծակարիք գերդաստանաց եւ տանուտերանց տեղւոյն, որք աշխատաւորեն օրական կէս կամ մի ռուբլի, որ չէ այնպէս՝ այլ ի Պարսկաստան, թէպէտ ըստ մասին Տէրութիւնն եւ տեղական կառավարութիւնն՝ անկարգ, անապահով եւ խժդժական՝ այլ ողորմութեամբ Տեառն ամենայն ինչ առատ եւ արժանագին, մինչ անգամ, 2 լոմայիւք խերեւէշիւք ընուլ կարէ որ զնախանաշիկն քաղցր, զոր մի ռուբլեաւ չկարէ որ ի Հնդկաստան. և այս մի է ի յատուկ. խնամոց Արարչին ի հասարակութիւն տեղւոյն . . .

Հաստատուն մուտք վանացն ի Կալկաթոյ՝ տարեկան վաշխ կտակեալ դրամոց մի հազար Կոմպ. ռուբլիք, զոր գտանէ ի սնդիկն եկեղեցւոյ՝ կապալ կամ վերդաս ասացեալ տուգանք քահանայից վիճակացն Հնդկաստանի, որ յառաջն էր 350. այժմ խնամօք Աստուծոյ եղեալ մի հազար ռուբլիք՝ իւրաքանչիւրոց 40 ռուբլին 100 առնելով . . . թող զոր քահանայք ի վիճակաւորին պարտաւորին ընծայամատոյց լինել, որչափ և ի վերադարձին բազմապատկարար. թող և զայլ իրաւունս տրոց ժողովրդականաց Կալկաթու ի դէպս ամուսնութեան, որպէս մնհրանայ, և այլն (ոչ պակաս քան զերկերիւր ռուբլիս)։

Արտաքոյ Կալկաթու, ի միւս բաղաքաց կամ թեմից Հնդկաստանի, հարկաւ գան մուտք առ Աթոռն, զորոց չունիմ հաստատ տեղեկութիւն և չնչանակեմ ինչ աստ. միայն այսչափ իմանալիք և ասելի թէ մուտք Աստ-

նախարկչեան Վանայ այնքան առատ է շնորհիւ Փրկչին Յիսուսի, որ ոչ միայն կարէ պահել զինքն անարատ կամ զրաղում անկարող ժողովուրդս Ջուղայու կարեկցութեամբ. այլ և տարեկան մի հազար թուման դանձել յարկեղի վասն սպաղային. փոխանակ այսպէս լինելոյ, տարարախտասէս առ ամն հազար թուման պարտական մնայ վանքն Աղաջնորդին. քննեա . . . .

Հանառատարար խօսելով զանց զրաղմօք առնեմ ա-ռանց զայլ ևս անկրանն մտից վանայն խօսելոյ, որպի-սի են երբեմնական տուրք երկուց Դեսպանայն Ռուսայ և Անդլիայոյց՝ իւրաքանչիւրոյն երկերիւր ոսկիք (բա-ջաղլի) և կամ ընծայքն Դեսպանուհւոյն՝ արծաթի ըս-պասք, թակոկք, ափսէք, ափսեայք և աչտանակք, որ յատուկ և սեպհական է Աթոռոյն երթևեկօք, և այլն։

Վերոյ կրճատեալ պարզատումարն յայտնեցաւ մեզ Աթոռոյն ձերոյ օն անդր բան զչափ և տեղի բան երեք հազարս թուման ընդդէմ ձերոյ ծանուցեալ ինն հարիւր թուման. ուստի մնայ խնայողացն վեր-ջաւորել թէ զիարդ միշտ վանքն հազար թուման պար-տուք ծփայ, և թէ ընդէ՞ր չկամի և չսիրէ զարտաքին կառավարիչս։ Ահա այսչափ և առ այս բաւական. փու-թամ յայլ իմն խնդիր։

Յաղագս անցից և վնասուն որդւոյ Դաւթի դարբնի և դստեր Կ. Յ. Պողոսի (Փրեանց) հաստատեալ վկա-յականաւ ստել Ջանասիրէք. սակայն եղանակ յօրինելոյ այդպիսի թղթեանց այդր քաջ յայտնի է ատտ բազմայ, քստ վկայելոյ ոմանց այդի եկողաց, և մանաւանդ քա-հանայից վիճակաւորաց տեղւոյս յատելն երբեմնապէս

թէ բանի մի գրութիւնս անդէն ձերով հրամանաւ տոր-
բագրեալ ունին առանց գիտելոյ զիմաստսն ։

Իսկ վասն միւս յօդուածոյն վերաբերեալ անհայր ման-
կանն, որ տուեալ էր Մէլքում մշակին վանացդ ի պահել
(1), զորմէ ասէք, թէ Տէր Անդրէասն տեղեկացեալէք
թէ նա ծնունդ էր այլազգեայ և գտեալ Յերևան թաղի,
և այլն. (2) համարձակիմ յուսալմանէ հարկին ասել
խոնարհութեամբ. թէ յորէ անտի Շահ Աբբասայ և լի-
նելոյն Զուղայու, տեսեալ են զրաղումս յաղէս յայլազ-
գիսն մանանել, և ոչ մին ի նոցունց՝ ի մերն ազգ. մանա-
ւանդ յասելն Յերևան թաղի, որ տեղի է յատուկ
սրիկայից և Լանդի կամ Լօռ անուանեալ հրոսակաց ։
Իրաւանամ ասել. զի եթէ այնպէս իցէր, զոր ասէրդ,
ունէին նոքա զողջոյն Զուղայ յաւարի առնուլ առաւե-
քան թէ ի ժամանակի սպանման Ռոստամ Բէգին չարի.
և մանաւանդ էր պարտաւորութիւն անդ ի նոսա զծը-
նունդն իւրեանց, իբրև զլակոտ, արտաքս ի փողոց բա-
ցահանել, մինչ ըակուտաց անդամ տեսողք տանեն խնամ ։
Յատկապէս Երևան է ի մի ծայր Զուղայու, զրեթէ և
վանդդ ի միւս՝ և ի միջոցի մեան մեց թաղք ընդ եկեղե-

1. Զամաչի անդատին խօսիլն գաղտնութենեն, մանա-
ւանդ գրաշիմատ կամաւոր ստութեանց ։

2. Երէ նոցն ինքն Տէր Անդրէաս և երէ նախագէտ ընկերք նորին ատ տա մեօք ի պարզոյ ասացին թէ որ որդի էր նա և յոր մօրէ ծնեալ. վկայեն այսմ և համօրէն Զուղայեցիք. հարցաւ նա, որ յորս քէշվարի ոսկւով ատաֆանաւորեալն էր ի Հասանչոյ սրիկայէ, մայրացաւ և նա, որ խեղագարեալ ծնողաց էր դուստր . . .

ցեօք. և թէ բանի՞ դժուարին (ի բարբարոս Տէրու-թեան) անցուցանելն թաղէ ի թաղ ցվանքն ձեր. եթէ բանն չէր այլ իմն թեկնածութեամբ. ուստի զսմանէ քաջ գիտէք զուք. գիտեն և բաղումք ի Զուզայեցւոց. ի հաւաստի ապրեալս լուեալ եմք և մեք այսր, և անսիպիթ լինիմք այժմէն, թէ ծնունդ էր նա Թորոսի Դանիէլեան կամ Մարտիրոսի Հիւսան (1)։ Մինչև բանք մեր և հարց հայէին յիրաւունս յատուկ ըստ մերում խղճի, զոր թողլով խելացի և փորձառեալ խղճի քննչաց փութամ յանգանորել զվերջնական ձեր հրատէր առ իս։

Ի կնքական բանս հրաւիրանաց ձերոց առնուաստու-թիւն իմ սակս այդր գալոյ և կանոն վասն Աթոռոյդ և Զուզայու հաստատելոյ, նաև յանդիմանէցն այն՝ եթէ խորշիցիմ ի գալոյ՝ այլ իմն շափով ընտրել ունիք, և այլն, ասեմ հպատակութեամբ և սիրով. զի եթէ սիրէր Աթոռդ զվարդ՝ ի 30 ամաց հետէ և այսր, չՁնՁէր զվարն նախկին կարգ. և եթէ սիրէր զկարդ՝ չատէր զՄանու-կայն Զօրաբերան կարի համառօտ և ամփոփ ցանկ կանոնաց. (չզարմանամ թէ ըստ մանրախոյզ կրկտման ձեր-ում, թաքուն ի ծանօթութենէ մնայեալ խսկական հե-զինակ նորին), որ միջնորդութեամբ եւ խնդրուածովք եկեղեցպանի տեղւոյս եւ պաշտօնակից անդամոցն յոտս

1. ՁԹորոս Դանիէլեանն քաջ ճանաչէ Սրբազանն, ըստ որում բողոքմամբ նորին ի պատճառս ... տարաձեր-ժեցաւ ինքն յառաջնորդութենէ Զրիմու քաղաքի, յորժամ վարդապետ էր և ոչ եպիսկոպոս։ Այս անցք ժամեօք են և Սրբազան Ուխտին Իշմիածնի։ Մարտիրոս հիւսն, խնամ զաւակ մի շար ... է ի Քնաչ անուանեալ գեղջէ։

նախորդին ձերոյ եղաւ. յոյր ընդդէմ նորա ի կարծիս վարակեալ թէ զորձէր այն զրգմամբ քահանայից այդի. ուստի ի շնորհս եղբօրն բանի մի սրիկայս յարբանեկաց քաղաքապետին բերեալ յաւանձին սենեկի Աւաջնորդարանիդ զոզեալ, և կոչեալ զդատաղլուխ քահանայս համօրէն եկեղեցեաց տեղւոյդ յԱւաջնորդարանդ. և ասա յեղակարծ կոչեալ զնոսա արտաքս եւ կալանաւորեալ զմանս «բռնի՛ թուք, ոնի՛ թուք»։ Եւ այսպէս տանջեալ զնոսա ի վայրկենին (որպէս ըստ օրինակին տանջէք դուք այժմ զէրքս)։ Ամա՛ Տէր Դաւիթ Մկրտում՝ քահանայն կենդանի այդր ընդ ձեզ է, որ դողդոջիւն ծնգամբք ճողոպրեալ զանձն ի վտանգէ հեւալով հասանէ ի տուն կնոջ Դաւթի ի խնդիր կարեկցութեան եւ նոյնմբ փրկէ զանմեղ քահանայսն ի վտանգէ անտի չաբաչար հարուածոց։ Արդ եթէ Անդրէաս վարդապետ, հնչեցուցանողն զանդակաց վանացդ, ի տարաժամու եւ չխոթմամբ լցողն հասարակութեան Ջուղայու. յԱթոռդ ի զնին անցիցն՝ մահացեալ, գիտեն ժամանակակիցք բազումք, գիտէ և ինքն կնոջ Դաւիթ, յորոց կարէք հաւաստել, թէեւ դուք ևս բաջ գիտէք։ Ա՛միսոն՝ չկարացի զօրինակ մեղայականի գրոյն առ քահանայսն գտանել ի խուռն թղթեանց իմոց, առ ի գաղափարել աստ (յուսամ, չասիցէք տգէտ զնա կոչելով յանցաւոր եղէ)։ Նա եթէ սիրէր զկարգ, անդրէն ի բարեկարգութեան իւրում լեալ՝ չկարօտէր իմոյ ապիկարի դիմադրութեան և կարգադրութեան, մանաւանդ թէ եւ ձեր Սրբութիւն ըստ օրինի ասէ. կարգադրութիւնն է իրաւունք ազգի և ժողովրդեան. սակայն վասն ողորմելի

վիճակին Զուղայու մեք զներհակն ասեմք. զի, ըստ սովորութեան տանն Պարսից, կամք հզօրաց են միայն իրաւունք կարգաց, եւ ուր ոյժ ներգործական՝ անդ և կամք կարգաց եւ կանոնաց երկրպագելի. վասն որոյ հաստատումն կարգի տեղւոյդ ոչ ձեր են գործ եւ մերոց եօթն պապուց պապի եւ ոչ զօրութեան անզօր եւ անշքացեալ հասարակութեան տեղւոյդ, նաեւ ըստ փրածոյ, ոչ հանօրէն ժողովրդականաց Հնդկա-Հայոց. այլ գործ է միայն հզօր արտօնութեան ընդհանուր կարգադրի և դիւաւորի տան Ազգիս Արամեան, այն է Արրաղնակատար Կաթուղիկոսի մերոյ Արրոյ Էջմիածնի, որում անսգան ժամանակաւս մնտուցեալ արդէն զսպաղատանս. եւ չթուի թէ անզործ մնասցէ, եթէ հաշտեալ կայ Աստուած ընդ տառապեալ և խախտեալ ժողովուրդն Զուղայու։

Արդարեւ, եթէ խմանայի զհրաւէր ձեր առ նուաստութիւն իմ ոչ լեալ այլազգ դիտաւորութեամբ, եւ եթէ չէին տակաւին յվերք արտիս անրուժ, ընկալեայն յերեսաց խստութեանց Աթոռայնոցդ, ես ինքնին ելեալ գայի այդր, ոչ իշխնել ձեզ զկարգ և կանոն (մինչ զուր զԱստուածայինն խանգարէք զկարգ). այլ ի շինել ինձ դամբան առ երի շիրմաց հանգուցելոց իմոց ի սուրբ եւ մարուր հող հանգստարանիդ. սակայն մինչ զդամ զհրաւէր ձեր ինձ յայցելութիւն ուղղուց վանացդ, ըստ այցելութեան ոմանց, սարսիմ գալ, ըստ որում սովորս եւ ուսեալս այցելութեանց արժանաւորաց և անսովորս ձերոյ խորհրդածեալ պատուոյ, իշխեմ բաւ համարիլ զկրեալս ի նախորդաց ձերոց և ի ձէնջ իսկ ցայս վայր.

և զչնորհակալուս ի ձեզ և ի հրաւէր ձեր մատուցանել և սպասել ապագայից խոստմանց, յորժամ եթէ այսպէս թեամբ այց արասցէ Տէր Յուղայուդ եւ Աթոռոյդ։ Իմ վերադարձն ի հայրենիս չէ դժուարին եւ զարմանալի. իսկ եթէ ոչ՝ թող զիս և զմարմին իմ վաղամեռիկ ընդ բազմաց կլանիցէ հող օտարութեան եւ աղաստութեան օրինաց քաղաքիս։ Ահա այսչափս բաւական առ խնդիրն վերին. ի դէպ համարիմ հետագայիւք խուզել եւ ի մէնջ գրանի մի իրաւունս, յուսալով թէ չունիք ինձ յանպակաս պարսաւանս նորանոր յեղյեղել։

Զերդ Արքազնութիւն ի գրեալ զայն վեշտասան թերթ գրութիւն առ իս նուաստութիւն, (թերեւս դիտաւորութեամբ, ըստ թուոյ վեշտասան ընտրեալս անձանց) ազաչեմ հարցանել, թէ որպէս եպիսկոպոս իրաւախնդիր, թէ որպէս վրէժառու և գատաւոր անողոքելի ընդդէմ ճշմարտութեան, լոկ ցհնարն մեռուցանելոյ զվաղամեռս ի մարմնի, որչափ ձև և տիպ իմաստիցն յերիւրեալ վերջնոյն ապացուցանեն, նախ՝ ցգիւտն հատընտիր զրանս ի գրուածոց առնլով. որով եւ ստելութիւն ի մէջ ոմանց ժողովրդեան եւ իմ սերմանելով. երկրորդ՝ զդիրն 2 օրինակ բացակիր առաբելով ասա առ ոմանս. երրորդ՝ զրանս եւ զյանդիմանութիւն այլոց ի ձեզ բերելով եւ ընդդէմ խղճի մաքառելով. չորրորդ՝ միանգամայն ներհակ հոգևորական եւ վեհանձնական պատուոյ ձերոյ. քանզի, ըստ ձերում բանի, զրեցի ես զդիր առ Տէր Բարսեղն եւ առ ոմանս այդի, բայց չգրեցի ինչ առ ձեզ կամ ներհակ պատուոյ եւ անձին ձեր. այլ, ընդ հակառակն իբրեւ ախոյեան, զձեզ պաշտպանել կամեցեալ

ամենախոնարհ հաւատարմութեամբ, յարգելով զձեզ՝ կարելից եղէ ընդդէմ ժամանակի վկայեալ պաշարմանց ի ձեզ. եւ միով ասացից. զարդիւնս ճշմարիտ սիրոյ ի ձեզ ցուցանել հաճեցեալ չիմանալով թէ դուք, ներ-հակ օգտի ձերոյ ունէիք զիրաւունս թշնամանելոյ (դուցէ պարտաւորութեամբ եւ չիմանալով թէ վախճանն լինելոց էք չարագոյն թէ վասն ձեր եւ թէ վասն մեղուցելոյս նոցա, որում այժմէն ստրջանալն չունի օգտել, յորժամ բանն ի բանէ անցեալ) և մինչ յայս վայր ճիգն անիրաւութեան առ իս թափելոյ, պատճառ եւ զէն կալեալ ի ձեռին զբանի մի բանս թղթոց իմոց ոչ ի ձեզ եւ ոչ ի նոսա. այլ վերաբերելի անցից ընդ մէջ ձեր եւ նոցա, յորոց զմին, օրինակի աղագաւ ասեմ. զեմխորոն ձեր սուրբ ընդ ձեռաց առնելն, որ եթէ չէր այնպէս, ոչ զձեզ ստիպէին եւ ոչ ինքեանք ընդ ձեզ միանային ի նարտախաղ, հռչակ ի տան ժողովրդոց, աղ վերբերելով եւ մանիլ կտրելով եւ զժողովուրդս տեսող գայթակղեցուցանելով, որպէս ականատեսք, մանաւանդ հոգեւորականք այդի եկեալ աստ պատմեցին։ Այժմ թոյլ տուք մեզ սիրով հարցանել թէ այնու անհեթեթ գործով նոցա չէ՞ր աղտեղեալ զեմիփորոն ձերդ Սրբութեան, յորմէ մեք, իբրև մոլեկան ախտ ինն համարելով, ժողովրդոց ի բաց կալ քարոզեմք։ Եւ մանաւանդ գրութիւն իմ այդր առ ոմանս՝ ոչ յանծանօթս. այլ ի ծանօթս իակ անցից, զորմէ ոչ օր լուեալ ի կողմնականաց աստի, մինչ ցդալ եւ հասանիլ գրութեան ձերոյ և ի զարմացումն դիզեալոյ լսողացն բանից՝ թէ զի՛նչ այս նորութիւն հրաշից։

Հինգերորդ՝ եթէ, ըստ ձերում ենթադրութեան, գրութիւնք իմ էին հակառակութիւնք, տակաւին ոչ հայէին ի յարաբերութիւն ձեռնարկիդ վրէժառու. զի եթէ պահանջքն էին անիրաւացի, կարէին նոքա պատասխանել եւ ոչնչացուցանել զիրաւունս։ Եւ ապա ձեր Սրբութիւն, ըստ ձերում հայրական բաղմաբարոյ սիրոյ պարտեաց, նախատել կարէր զիս յուղղութիւն. եւ եթէ այնու անհնարին՝ ապա իրաւամբ բացահանել ի տնտեսութենէ, և անուանել զիս ծառայ անհաւատարիմ եւ չար՝ քան այլ ընդ այլով յեղուլ զբարկութիւն ձեր ի գլուխս իմ (սիրով հարմից զսէր թագուհւոյն խոցելով) եւ որով արկանել անկարկատելի հերձուածոց ի հասարակութեան տեղւոյս, որպէս զի եթէ հնար իցէր ձեզ իրօք հասկանալ զսերկեան հանգամանս՝ թէ յո՛ր չփոթ տարաձայնութեան յուզեալ որդի ընդ հօր, եղբայր ընդ եղբօր, ընտանի ընդ ընտանւոյ, և բարեկամ ընդ բարեկամի. և որոյ բուն պատճառն է ձերդ հնարեալ վրէժխնդիր գրութիւն. և թէ ո՛րպէս. սակաւիկ մի ապացուցանի ի քաջ տեղեկութիւն ձեր։

Վեցերորդ՝ եթէ տեղացին ի ձեզ իրաւունք միակուղի յանդգնութեան՝ առ ի՞նչ միջոցդ պժգալի և զի՞ պիտոյ անցելոյց բանից ի ժամանակի սիրոյ և ընդունելութեան, նաև առանձնականաց արտահանումն ի լոյս և չփոթումն նոքօք զիրական իրաւունս. այդ հնար է պարսկական, որպէս ի վեր անդր յիշեցաւ, ըստ որոյ ի պահանջելն յուսերէ զիրաւունս ինչ, պարտականն ջանայ պատ ի պատ բանիւք ոտնակոխել զպահանջն յարեւելից յարեւմուտս զանազան, որպէս օրինակի աղագաւ,

տեսեմ զանցս հանդուցեալ Զաքարեայ Թորոսեան այդի ընդ Մանուկայ Յորդանանեան, զի այն ինչ ընկալեալ նորա զիսոխանակագիր՝ յդէ ի կողմունս, և ի վերաստա-նալն անհատոյց՝ պահանջէ ինանել զդրամն հատուցանել. պատասխանէ պարտականն. «արի, ըզորդն ասա, ընչի՞ գնացիր, Փռանկացար (բանդի Զաքարն առ ժամա-նակի հեստեալ էր)». պատասխանէ նա. «այդ խոյ խոզի և հաւատոց է մասն. և ես զիտեմ. դու զպարտեա-ցըդ խօսի՞ր թէ զինչ ասես զվճարէդ». նա անդրէն կրկ-նէ. «լաւ՝ հիմի որ Փռանկացել ես՝ զօչակդ մեր ժամին ի՞նչ է անում»։ Զարմացեալ նորա ասէ. «ո՛վ մարդ՝ խօսա՛ զոր արժանէ, փողս տա՞ս թէ ոչ». յաւելու նա բանիւն. «հա՛ քոյ գլուխն է վկայ, կերթամ սազան-դար կրերեմ, և զօչակդ ժամիցն հանեալ խերևանն կդձեմ, և այլն»։ Արդ եթէ թողութիւն առնիցէ՛ք ակամայ համարձակութեանս, ասեմ. պահանջ ձերդ իսկ նման նմին, եթէ՝ ոչ՝ որ ինչ խնդիրն էր բանից՝ առ-նոյր ես այնու հաւանական կնքումն, և ոչ թէ՝ դու յա-ռաջ այս ինչ և այն ինչ գրեալես, կամ՝ այս ինչ և այն ինչ անձն վատաբանեալ, մինչ զեռ յերկիկ եւ յեռան-գեն զգործս, զարարս, գրարս, զվարս և զամենայն գրութիւնս իրրև գործս արժանաւորաց գովութեամբ և շնորհակալութեամբ կնքէ՛ք։

Եօթներորդ՝ եթէ գրութիւնք իմ անվայելուչ և ան-պատշաճ՝ թողում, զոր ասացի այժմ թէ մինչ ցամս տասն գովութեամբ կնքեցիք. ասեմ լոկ զմիոջէ. թէ ըն-դէ՞ր, իրրև հայր կամ բարեկամ, նշանախեց աղգումն ինձ չետուք արտաքոյ միոյն վերաբերելի յատուկ նուի-

բական գործոյն՝ ի պահանջն անիրաւի 2,500 ռու-
փի տուգանայն և յանդիմանութեան խմոյ արդարոյ .
ըստ այմ « եթէ զկաք ինչ ստիպէին , ունկիք զիրա-
ւունս և զգրութիւնս առաջի առնել քննողութեան
այլոց , յորմէ զգաստացեալ ապա զսպեցի զդրիչս . և
չկարէք ասել կամ ցուցանել , թէ յորէ անտի գրեալ
իցեմ ձեզ ինչ ըստ առաջնոյ եղանակի , անստերիւր
հաւատով , և զորոյ ասէք գրեալեմ ձեզ . այո՛ . գրեալ
եմ (թէև ոչ ըստ ձերում ակարկու նշմարանաց ) յա-
ժամ՝ ի ժամանակի խառնակման վիճակիս , յաւուրս Տէր
Մկրտչի Տէր Կարապետեան . և այն շնորհիւ ձեր վիճա-
կաւորելոյն զՏէր Յովհաննէս իսպասանորդութիւն նորա ,
և յարուցանելոյն յիմ՝ վերայ զանշնարին վիշտս և տա-
ռապանս սրանելոյ թեան ընդ այն . և այս հաստատումն է
ինձ վերջին (պակասորդն անցելոյ) ի վարձ ցյետին շունչ
նահատակութեամբ պահպանելոյս զպատիւ Աթոռոյդ
և ձերոյ հրամանի : Արդ զսովորն ի բաց եղեալ ասեմ .
թէ զորութիւն բոլոր իրաւանց ձերոյ ցարդ բացայայ-
տեալ վիպագրութեամբ յայտնեցաւ . և , որպէս ի վեր
ասացեալ եմ , զնոյն և կրկնեմ ասա թէ կամք իմ չէ վրէժ-
խնդրութիւն , եթէ ոչ՝ հեշտին էր ինձ յաւելուլ զայլ
փաստս վկայութեան ի ձերոյ իսկ գրուածոց , թէև
սահմանաւորեալն , որ ինչ ցայս վայր ծանուցան և զորս
առնել չսխորժեմ՝ ոչ այլ ազգ մտօք և պատճառաւ
քան վասն չունելոյս զբանի մի նիւթս , որք են . նախ՝ կրը-
թեալ և հաստն միտք . երկրորդ՝ ձերպէս հզոր արտոնու-
թիւն և խորհրդականս հանձարեղ . և ի վերջոյ՝ թոյլտուս-
թիւն խղճի . սակայն վասն յաւելման միոյ յօդուածո

1857. Մայիսի (առանց բանիծնութեան աւուրց) գրութեան ձերոյ ներսումն մաղթելով փութամ յայտնել, յորժամ նեղբտութեամբ գրեցի յոտս ողորմածութեան ձեր. «Թէ մի այսքան վշտացուցանէք զհաւատարիմ ծառայս ձեր, առ ի լոյս հանել զգարշելիս». և ցուցի թէ ոչ էին գարշելիքն . . . պատասխանեցիք այսպէս.— «զարձեալ, որպէս Առաջնորդ, պատուիրեմ քեզ ի բաց հան ի մտաց քոց զայսպիսի աստուածընդդէմ դատողութիւն, և եթէ սպառնայեալ գարշելիքն հրատարակելի ի սօսափումն մարդկային ընկերութեան իցեն, այդոքիկ և նմանք դոցին, զոր ի լսելիս մեր հրատարակեցեր, բարեկամաբար խորհուրդ տամք քեզ, զայն ամենայն ի հող թաղել քան հրատարակել եւ այլն։» Արդ խնդրի ի խաղաղասէր վեհդ. զի եթէ քարոզելն ձեր ինձ վայելուչ, եւ հրատարակութիւն գարշելեացն (որ ոչ զձենջ. այլ զձերոց խորհրդականաց իրաւացի պատճառանօք) աստուածընդդէմ՝ զի՞ ապա ձերն նոյնասարաս անտեղի գործողութիւն աստուածահաճոյ արարիք զառանձինս մեր ի լոյս ընծայելով։ Աղաչեմ ասել. զի եթէ կան ի ձեռի ձերում բաղմարդիւն գրութիւնք իմ աստի, կան և ի ձեռի իմում գրութիւնք ձեր և պատասխանիք այդի։ Ահա ես պատրաստ եմ ի կոչումս, յոր եթէ ես վրիպեալ ինչ իցեմ, կարէք ընտրել զսմ և կամիք ի վերահասութիւն եւ ի քննողութիւն. զի որպէս ի ձենջ ծագեալ առիթն առաջնոյ, այնպէս եւ ի ձենջ վերջնոյ վերջաւորականն թէ ով վնասաւորեալ եւ յանդիմանող վնասուն, ով նախակիզն և ով դիմադրող սկզբանց. յայնժամ աշխարհի ևս ծանուցեալ լինելոց է,

որ ծածկեալն է տարտամութեամբ. և ի ժամուս թոյլ տուք ինձ հարցանել, ո՞վ Տէր իմ՝ թէ գրութիւնք իմ առ ձեզ պաշտօնականք ի հարկէ բռնութեա՞ն էին թէ ազատօրէն կամօք, ըստ կերպի ոմանց վիճակաւոր բա-հանայից, որք (եթէ չնորհ արարեալ առ ամն մի անգամ ևս գրել ձեզ ոչ խնայիցեն), չունիցին ինչ փոյթ կամ հոգ ծանուցմանց արտաքոյ անձնաւորաց (չողբորդու-թեամբ) «Հայր Սուրբ՝ աջդ համբուրեմ, Հայր Սուրբ՝ ես ողջ եմ, յուսամ, և դուք ողջ լիջք, Հայր Սուրբ՝ ծառայ եմ Սրբութեանդ, և այլն»։ Իսկ եթէ պաշ-տօնական և առ հարկի՝ որպէս է իսկ, և այն թէ պար-տականութիւն մեծ էր յամենայն վիճակաւորս, զի եթէ ոչ օրական կամ շաբաթական գրելն եպիսկոպոսին կամ թէմական Առաջնորդին զանցս վիճակաց և վիճա-կայնոց, գոնէ երկիցս ի տարւոջ նշանադրել զայն ամե-նայն ի քաջ տեղեկութիւն կառավարութեան (1), որով ես յիմարս առաւել յիմարացայ, ոչ այնքան ի հոգս ձեր, որչափ յամենոփ և յանվիշտ կառավարութիւն իմոյ վիճուն և անարժան վիճակի. զի մի միւսանգամ մատ-նեցայց ի վիշտ շարաչար, ըստ անծանօթ գործողու-թեան ձերոյ վիճակաւորութեամբ հանգուցեալ Տէր Յովհաննէսի Գալստանեան. ապա ուրեմն անպարտ տանեմ զկուտակեալ զրպարտանս և զանիրաւութիւն ձեր ի գլուխս իմ, եթէ ոչ՝ արդարև ցնորեալ չէի և ոչ

1. Այժան էր սատ գաղափարել զգրութիւնն առ հան-գուցեալ Տէր Գէորգ Ե. Էջիազն, որով նախատակոյ զնա սանել, փասն չգրելոյն զհանգամանս վիճակին Դաքու և գկա-ցութիւնս Ժողովրդոցն։

բանդագուշեալ ցայն վայր, յոր խենթութեամբ գրէի ձեզ զոր ասէք թէ գրեալ ունիմ, մինչ երբեմն դուք զիս խելօք կոչեցիք։ Թողում զայն իրաւունս ձերոյ օգտակար գրութեանց և անտի համոզանաց առ իս ի սկզբանէ ցվախճան, որովք մարթ էր ինձ ի մեծամեծս սահիլ և յուսաւորագոյն վատնդ պահանջու ձեր արդի մատնիլ, բան որ չնորհօք Տեառն զերծեալ և սթափեալ համարիմ այժմէն։

Ութերորդ՝ եթէ համոզական և կեղծ գրութեամբ ձերով բռնաբարչ զիս ի խոչտանգանս գործոց ձերոց որսացիք միջոցաւ ընդհանուր Աւագ Երիցութեան և փոխանորդական պաշտօնի, որպէս պատկեր ձեր ի բազմիս (ուրեմն բանք իմ բանք ձեր համարէին, եւ վրիպումն իմ՝ յանցանք ձեր), եւ որով զամեն ծանրութիւնս ձեր ի ձեր անկարող ժամանակի ի կողմունս ի պարանոց իմ սամետցիք, զմրուրն դառն ինձ արբուցիք, եւ զոգուտն ձեզ ի շահ դանձեցիք, և միշտ հակառակ արդի վարկուածոց ձերոյ ինձ չնորհակալութիւնս, բաւարարութիւնս եւ քաջալերութիւնս զրեցիք, զիա՞րդ ապա ի ձեռնարկ վերջին չեկն ի միտս ձեր անմեղութիւն իմ եւ վաստակ եւ ձերն վայելեալ արգասիք պաշտամանս. չեկն ի միտս ձեր համարումն, զոր ունիք յառաջ, և որով ջերմաջերմ սիրով կապեալ եւ կալանաւորեալ ունիք զմիտս, զձեռս և զոտս, և ոչ դոնէ զմտաւ ածիք զվաստակ լոկ վասն ձեր տասնամեայ քրտնախարշ աշխատանօք ի ընչասպառ կլմնայ տեղւոյս, ուր բրտունս ընդարձան խառնելով (անառողջ բնութեամբ) բարձի զարնոտեսական պարտաւորութիւն ձեր, և արդիւնաւորեցի

ձեզ ամենայն արդեամբք. զիա՞րդ ոչ խրթնայայք թէ անեղ այրս այս կորուսեալ ունէր զկին եւ զաւակունս իւր ի մոլեռանդն հայրենասիրութեան եւ հպատակութեան Աւագնորդայ Վանայայ, որ անդէն և ի նախաշաւիղ գրութեան իւրում մարդարէացեալ զանձնէն իւրաքանչիւր զոհ պատարագի կեղծաւորեալ սիրոյ մերոյ, զոնէ խնայեցիք սմա. և եթէ արժան ինչ իցէ՝ խրատու խրատեցիք և պատժեցիք ըստ չափու յանցանացն. և ոչ թէ գուլ զանակաւ եւ անիրաւի տանջանօք հատիք ըզ զլուխն. ուստի ըստ Մարգարէին Զաքարիա կարեմ կարդալ թէ ի տան սիրելւոյն խմոյ վիրաւորեցայ։ Գիտէ Տէր. ես ինչ ոչ արարի նմա. որ դարձաւ դիս բեւեռել. և եթէ դուք զվէրս սիրելեալն ծանր եւ դառն համարեցիք մուսացածին զդացմամբ, ես իրական ներդործմամբ զայն ամենադառն համարիմ։

Իններորդ՝ եթէ հաւատացի ձեզ, հաւատացի, որպէս Եպիսկոպոս և Աւագնորդ օրինի, որպէս օրէնսդէտ, օրէնսուսոյց և օրինապահ, որպէս կանոնաց պաշտպան, որպէս խոստովանահայր և դիս յանցաւորս պաշտօնական գործով և փոխանորդական արտօնութեամբ անձն՝ հաւասար անձին հաստատող, և զգործն հաւասար գործոց տնտեսականի իրաւամբ հաւեմատող, որպէս ի մի կամս, ի մի խորհուրդ և ի մի յոյս կոչման ընդհայ Հոգւոյն, ի յոգ սիրոյ եւ խաղաղութեան եւ հաստատութեան Եկեղեցւոյ և Աղգի։ Նա՝ միով ատացեալ. ձերով շարունակ համոզկեր գրութեամբք, որոց մի մասն արդէն ի վեր անդր բացատրեցաւ, և որոք ամենայն աղատամիտք չկարեն մեղադրել ինձ ի վրիպակս

գրութեանց ի ձեզ, թէ ի խաբս սիրոյ և հաւատոյ չիցեմ նախապատրաստեալ, մանաւանդ և այն իսկ ոչ առանձին պարտաւորութեամբ և կրիւք. այլ ի բռնադատութենէ հարկի փոփոխական ժամանակացն. սակայն խնդրեմ. Սրբազնութիւն ձեր բարեհաճեսցի ասել թէ դիցուք, ես, որպէս մարդ, սխալեցայ, և բազմապատկարար քան զոր ցուցիք, գրեցի ձեզ զանպատշաճ և զանյարիրս, ոչ մի. այն զամանց ի կողմնականաց ասսի կամ այդի պատճառանօք. այլ և զհամօրէն տանէ Աստուածս՝ (ըստ ձերում սիրոյ իսկ գործողութեան), զի՞նչ շահ, զի՞նչ օգուտ, զի՞նչ պարտաւորութիւն և զի՞նչ շնորհ ձեր առ ի լոյս հանել զծածուկս և զառանձինս գրութեանց մերոց։ Եւ եթէ այսպէս՝ պարտէիք ուրեմն (ըստ արդի բրթմնջանաց ժողովրդոց) նախապէս զկարգ խոստովանութեան յեկեղեցւոյ ի բաց բառնալ, և ապա զգործդ վճարել. քանզի որ մատնեցաւ ի ցանցս փորձանացդ՝ ոչ այլազգի գործեօք, բան խմանալի ուռկանաւ կրօնիդ սրբութեան և խոստովանութեան. ուստի, որպէս այլովք՝ սովիմբ ևս կնքեցիք զձերն անհաւատարմութիւն ի վայելուչն պատիւ (և եթէ մերն ընթացք այսպէս՝ զի՞այլ իրաւունս բարոյականութեան ի ժողովրդոց պահանջելի, որք բազմապատիկ առաքինական գործովք քան զմեզ նախադաս են, և որոց յատուկ են շնորհք, որ մեօք և զնայիք մերովք ոչ անաստուածանան)։

Իսկ տասներրորդ՝ ըստ ձերում հիմնեալ փաստի վրէժաւոր գրութեան, զի եթէ այդչափ ընդասակար եւ զզուեցուցիչ էի ձեզ, և զխստութիւն անզգամութեան խոց մեղմել և խոնարհեցուցանել կամիք, բազում էին

միջոցք այնր վճարման ամենայնի պատուով, ոչ ի վնաս ձեր և անմեղաց. յորժամ ես ինքնին բազմոք տուեալ էի ձեզ խնդիր և իրաւունք ի բաց հրաժարեցուցանել զիս ի թէմական կամ գործակատարութեան կապից ձերոց հրամանի, բաւէիք առնել, զոր ինչ հաճոյ էր ձեզ. քանզի չէի ես աշխարհական ոք զինեալ զօրու ծանու ընդդէմ ձեր, չէի ես կացող ներքակ կամաց ձերոց և հրամանի, որպէս և մինչ ցայս վայր. և մանն իմ երանութիւն ինձ ընտրէի յայնժամ, քան այսօրինակ ապրել և կեալն արդի: Դաւ եթէ այնու հզօր զօրութեամբ ձերով փոքձել զապիկարութիւն իմ ցանկացայր, մարթ էր ձեզ նկատել թէ չէ բնաւ շնորհ առիւծոյն որսալ զանձ (1): Ուստի այսու ամենայնիւ դրահետ վարեալ (թէ չէր ձեր գործ և խորհուրդ գործոյն) ձեզ առաւել բան ինձ վնասաւորի եղէք, թէև այժմ զներգործութիւն ասացեալս վնասու չիմանայք և չտեսանէք. սակայն ես զճշմարիտն ասեմ մոքմոքեալ սրտիւ. թէ վնաս Վանայդ և Ջուղայուղ ահաւոր և ահեղ եղև: Եկեսցէ՛ ժամանակ, յորում թէ դուք եւ թէ Ջուղայեցիք յիշեսցէք զբանս, և որոնեսցիք զժամանակն Տէր Յովհաննէսի և զմեղապարտն Տէր Յովհաննէս. սակայն չունիք դատանել. զի որ մեռաւն՝ այլևս չունի դառնալ ի կեանս վասն ձեր:

Ապաքէն եկեսցուք ի ճշմարիտ և ի բուն առիթն հե-

1. Ըստ տարաբախտ կանոնի եկեղեցւոյ Հայոց տասն դիտուն վարդապետք կամ քահանայք չունին զպտռնութիւն միոյ տգէտ եպիսկոպոսի:

տեւութեանց և նպաստակի փոփոխման դրից ժամանակաց՝ անցելոյն ընդ նարդենայս, որովք և փոփոխումն ձեր ի վիճակէ առաջնոյ ի նորս. զի զամենն առաջին (յորս զողբերգութիւն Երեմիայի Մարգարէին ընտրէիք փոխանակ այժմեան ձայնին Եսայեայ. «ցնծացէք անձնիմ ի Տէր. զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան արդարութեան, իբրև փեսայի եդ ինձ պսակ և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս։» Թէ դուք և թէ խորհրդականք ձեր կարօտ մեծութեան և փառաց աշխարհի, կարօտ նպաստից ամենեցուն մանաւանդ՝ Հնդկա-Հայոց, և ի վերբան զամենեսեան՝ կարօտ ի բայակայս այսր իմասպէս վառուն և անձնաղիր յիմար ծառայի ի ընալ ձեր զամենն բաղձալիս սրտի և կամաց ձերոց. այո՛, ընտրեցիք զնուաստութիւն իմ, յարգեցիք և պատուեցիք ըստ արժանւոյն, զոր ժամանակն ձեզ ուսոյց. այլ զկնի նորին, յաւուրս յայսոսիկ անցեալ և զերծեալ յամենից դժուարութեանց, և լցեալ ամենայն ճոխութեամբ և փարթամութեամբ՝ զի՞նչ այլ պիտոյութիւն Տէր Յովհաննէսի կամ Հնդկաստանի. մնասցին, լիցին, կեցցին կամ ոչ, որէ յետին երախտամոռութիւն. ուստի ըստ այսմ որչափ ամբ ձեր առաջին ընդ այժմուս զանազան, այնչափ և տարօրինակ գործ և վրէժխնդրութիւն ձեր իյանցաւորէս, որոց ամենից դատաւորն եղիցի Աստուած, գձերոցն ի ձեզ և զիմոցն առ իս դարձուցանելով ըստ գործոց, հաւատոց և գնացից։

Նուաստութիւն իմ, որ յամենայն կառավարչական գործս պրպտոնի չրջահայեաց և ոչ առանց հրամանի ձերոյ մեծութեան, նոյնպէս և խնդիր հասարակութեան

տեղոյս առ կարճեցման իրաւանց չհասի ամուսնու-
թեան, զոր ի 1857 ամի. Մարտի 14 գրութեամբ
եղեալ ձեր առաջի՝ աղաչաւոր եղէ հոգալ զարժանն.
զորմէ գրեցիք թէ հարկ էր՝ խնդիրն գոյացողոյն Հնդկա-
Հայոց և ոչ ի միայնոյ Կալկաթայ։ Անդրէն պաղատա-
ւոր եղէ ի 1858. Յունվարի 7 գրութեամբ թէ խնդիր
մայրաքաղաքիս համարի ի դիմաց ամենից, և թէ իւրա-
քանչիւր օգ զիւրն հոգայ զհոգ. ուստի անշուշտ մտա-
գրութեան ձեր արժան է. և ձեր Սրբազնութիւն ցայս
վայր բարձի թողի լքեալ, միայն բարւոք վարկաւ զնա-
խատինս բաղում ի գլուխ իմ կուտակել, որպէս թէ
եղեալէր իմ օրինազանցութեամբ զսպակ ի գլուխս
մօրաբեռ զաւակաց և կամ երկուց եղբարց ընդ երկուց
բերց։ Եւ մինչ նոյն իսկ Յունվարի 7 գրութեամբ յան-
դիման եղէ զպարտականայն. թէ ոյք էին նոքա և զինչ
անուանք նոցին կամ ե՞րբ և ո՞վ սպակաղիր քահանայն.
զուր խայտեալ զունայնութիւն պահանջման ձերոյ լռե-
ցիք (1)։ Այսոսիրաւի, որ ոչ կամք ունիմ եւ ոչ ան-
դորրութիւն մտաց ի հանել ձեզ զիրաւունս և զապա-
գայսս բաղում ընդդէմ անիրաւի պահանջման ձերոյ եւ
կրից խոց, որոց ցարդ տարայ սիրով, թէև ձեզ քաջ յայտ-
նի է արդարութիւնս, (մեղք չէ՞) եւ այն թէ. զուր եթէ
միով, ներեսկ փախագանայս, արտաքոստ զիս յար-
գեցիք, ո՞րքան եւ բաղում վիշտս անտեղի ի ներքուստ
հոգւով ինձ զդայուցիք հրապուրմամբ ձերոյ անմարդա-
ւէր խորհրդականաց, որոց վկայն եւ իրաւազէտն ահա

1. Ահա քեզ նշան որոնման պատմառաց յարուցանելոյ
խռովութիւն և ընկեցիկ առնելոյ զԱւագ երէցն ի պատուոյ։

ի բարձունս։ Թո՛ղ նա ինքն դատեսցէ զամենայն. սա-կայն չկարեմ՝ ասա անարդել զիմացուածս եւ զառաջար-կութիւնս Գերապատիւ Պարոն Յովսեփայ Աղա-թիզեան՝ միոյ յանդամոց եկեղեցւոյ Կառավարչաց այնր ժամանակի, որ զիմաղրէր թէ չէր հարկ զմեղիրն յիշեալ չհասի ամուսնութեան կսկեալ զհրամանաց ձերոց. որոյ եւ ի չկատարիլն՝ յօրէ անտի հրաժարեալ ի պաշտօ-նէն այլ ոչ եկն եւ ոչ եմուտ ի խորհուրդ նոցա, այսինքն ընկերացն, առ անօրէնութիւն ո՛ւ եւ իցէ պաշտօնական խնդրոյ։

Սակայն այս պատահար խնդրոյ ամուսնութեան մեր-ձաւորաց ընդ իրեար, և խստութիւն անտեղի պահան-ջուն ձերոյ տեղի բացին ինձ խորհրդոյ ազատութեան անձին իմոյ յերկսայրի սրոյ ասի եւ այդի ձերոյ, թող-լով զթէմական պաշտօն վիճակիս, զորմէ լուեալ հան-դուցելոյն Աղայ Յովհաննէսի Էլիազեան, առն բա-րեշնչատակի, եկն առ իս ի խնդիր արդելման հանդերձա-նաց, որպէս եւ արդելեաց իսկ. եւ մինչ զկնի այլ ինն դիպով վչտացեալ՝ զնոյնն առնել պատրաստեցայ, Գե-րապատիւ Պարոնայքն Յարութիւն Աբգար, Մարտիրոս Ս. Յովհան, Փ. Ա. Գէորգ եւ Աբէթ Յ. Աբգար եւ այլ բարեկամք խոչընդոտն եղեալ՝ բարեմտութեամբ հաստատին զիս բաժակիս դառնութեան եւ օրինակին բաղմաց, թէ ո՛վ մատնեսցէ զանձն ի ծառայութիւն եւ ի հաստատմութիւն վանականաց. եւ որչափ յաճա-խնայի յարդիւնս վաստակոց, այնչափ եւս ունի առաւե-լագոյն ի փախանակի կրել զվնաս անբմբերելի, եւ յու-սել զրեւինս ծծմբախառն ածխոյ ի տրիտուր։ Աբդ՝

թոզ լինեւ բացցին աչք ամենեցուն ի զդալ դիւրեանցն վիճակ. զի եթէ ընդ փայտ դալար այսպէս արասցեն՝ ընդ չորն զի՞նչ լինիցի։ Ինձ մնայ մեխեմարիլ Ընդհանրականաւ. թէ որ աշխատասէր անխոնջ ի պաշտօն եւ ի գործ ազգին ի մանկական տիոց անաւի յօր վախճանին ընկալաւ զարժանին փոխարինութիւն. եւ ըստ որում այսպէս, թոզուբեմն եւ փանաբխա ընդ մեծամեծացն բազմաց յանուրս մեռաղի բինու եւ ի բովս նախանձու ապերախտադիտութեան մոխրացի. եւ մնացէ զիւր սրտի բանն Առաքելոյն՝ Ա. Կորնթ. Գլ. Գ. Համար 15։

Այդ աւարտումն բանիս արարիս այսպէս. զի յետ առաքելոյ իմ ի Ջուղայ այդր զձերոյ ծանոյց հակառակ զրութիւն իմ. այո, ըստ խոստմանս, բաւական ժամանակ ապառեցի պատասխանւոյն. եւ մինչ ոչ զտի՝ եւ այլ ընդ այլով խնայայ ինչ, առաքեցի զորինակ գրութեանցս առ Ողորմածութիւն Սրբազնակատար Կաթուղիկոսի խնդրելովն յանձն առնելով իրաւազատ քննողութեան Նորին Բարձրութեան. եւ ի նմին ժամու, իբրև երախտապարտ ոք, (եթէ արժան է երախտիք կոչել զորս կրեցի եւ կրեմ) յարգելով զձեզ ի պատկանաւոր պատիւ անմեղութեան ձերոյ եւ յուշ ածելով զիրաւացի վնաս խորհրդականացդ. սակայն չլինէր եւ այս տակաւին, եթէ յանակնուանելիս չդայր ի վերայ զբութիւն Տէր Գրիգորի Մարտիրոսեան (զորմէ անդատին յանցեալ Օգոստոսի 8 յայտնեալ եմ ձեզ) եւ չտոչորէր զաղիս ի խղճահարութեան։ Այո, չեմ զարմանար եթէ դիմադրիցէք ինձ խմով նախկին անբաւարարութեամբ զնմանէ, որպէս թէ ժամանակ ինչ ըստ պատշաճի անցից

գրեալ ունիմ առ ձեզ. եւ թուի մին ի ձերաբարոյ վա-
տաբանութեանց առ միաբան քահանայս. սակայն ընդ-
այս իմաստ գրութեան նորին մերաժանօթք չետուն
կարծիս այլեւայլութեան։—Երկրորդ՝ ոչ միայն նոսա.
այլ երկոքումբք նորեկ միաբանիցս գրութեամբ եւ խոս-
տովանութեամբ, յորժամ զգրութիւն նորին Տէր Գրի-
գորի ահաւոր երդմամբ եւ գրութեամբ առաքեցի նոցա
ի կարդալ եւ գրել ինձ խղճի մտօք թէ գրութիւնն այն
ուղիղ կամ ոչ, որպէս եւ նոքա գրութեամբ իսկ ինձ
յայտնեցին թէ կարեն ուղիղ համարիլ ըստ մասին սակ-
նատեսութեամբ իւրեանց, եւ ըստ մասին լսողութեամբ։
— Երրորդ՝ մինչ հարցի ի նորեկ Զուղայեցւոյ ոմանց,
վկայեցին բոլորն լինիլ ուղիղ. արդ դուք ասացէք թէ
պատրեա՞լ իցեմ լոկ գրութեամբ նորին Տէր Գրիգորի։
Ասացի ի վեր անդր թէ սկզբնապատճառ յուզման եւ
չփոթման եկեղեցւոյ եւ ժողովրդեանս եղև ձերն գրու-
թիւն. եւ խոստացայ տալ զապացուցութիւն նորին։
Ահա թող խմացի, զի այն ինչ ասասէի խաղաղա-
սիրական եւ կարգաղրութեան համաւոյ տեղւոյդ,
ըստ խնկարկու սպասաւորանացս այդր առ ոմանս, ընկա-
լայ գրութիւն մի ի միոջէ յանդամոց վեչտասանեցն, զոր
մեծաւ երկիւղածութեամբ յահէ ձեր առաքեալն էր ի
շնորհս պարսիկ վանառականացն Հաջի Մահմադ Ռզայի
եւ Միրզայ Շէֆու առ Գերապատիւ Պարոն Յարու-
թիւն Արգարն, եւ նոքա առ իս յայտնելով թէ ձերդ
Սրբազնութիւն զրդմամբ աջակցողդ եւ հարազատ խոր-
հրդականացդ ծանրացաստմն եղեալ ի վերայ անմեղու-
թեանս, հանդերձեալ էք առնել զոր արարիք. և Պա-

րոն Մկրտիչ Հայրապետեան ոմն ի լեռնից և ի ներկայութեան ձեր զնուաստութիւն իմ և զհամայն Հնդկա-Հայոց նաեւ զքահանայս եւ զաշխարհականս այդի, որք հանդերձեալն էին, ըստ խնդրանացս հաստատել կարգ ինչ վասն Աթոռոյդ, հայհոյեալ ծանրագոյր բանիւք. և Սրբազնութիւն ձեր զնա ոչ անարգեալ և ոչ զսպեալ յանզգուսպ համարձակութիւն իւր. և նոցա առ ահի ձեր տարեալ զառաստելս նորա անճարութեամբ։ Ծանեայ կարի քաջ թէ այն սկիզբն էր երկանց, և թէ ունէր զկնի ծնուցանել զհրաշալիս. շուարեցայ ի ցաւ և ի վիշտ հոգւոյս. և ասա բարեգոյն համարեցի զծածկեալ անցս աստի խոց գրուածոց այդր հաշակել ի տեղեկութիւն պատուելի ժողովրդոյ տեղւոյս, զի մի ի տրեալն վերջին աղետից իրաւունս կալցին խպառ դատապարտելոյ զիս, թէ մինչ մեր վաղուրեան զդածեալ զարժանին բանիցս խորհէաք առնել. զու խնչընդոտն լինելով թոյլ չետուր և կցորդ եղեր վերաժամանեալ վնասուդ, և այլն։

Սա որ հարկեցմամբ ընտրեցի զժողով հասարակութեան մերազնէից, և զհանգամանս եղի առաջի. և յետ յայտնելոյ զամենայն թողի կամայ իւրեանց խորհել զոր հանոյ լինիցի իւրեանց զարժանին եղելութեանց։ Իսկ ժողովն, որ նախագրածն էր՝ մանաւանդ թէ նորեկ Զուզայեցիք այդի և թէ այլք ոմանք յոսն եկին աղաղակաւ ի ժողովի. թէ ուղիղ էին բանք խաստից գրոյն Տէր Գրիգորի, և կարէին գրութեամբք այդի ընտանեաց իւրեանց մի առ մի ապացուցանել։ Ժողովն ևս վերջաւորեաց գրել յԷչմիածին առ Սրբազնասուրբ Կաթուղիկոս

սրն և հայցել ինձանէ զայցելութիւն Զուղայու և վիճակացն։ Բայց զայս ևս թաքուցանել չկամիմ թէ սակաւ ոմանք յայնմ իսկ ժողովի պնդէին թէ գրել հարկ է Սբբ. բաղնատուրբ Կաթուղիկոսին նախ քննել զանցս սոցի և ապա, եթէ արժան ինչ իցէ, փոխադրել զձեզ ի Վանայդ ներհակ վերջաւորութեան երկու մասանց բանի, թէ ի վերայ արդի գրութեան Զուղայու չէր հնար մինչ քննողութեան ի Զուղայ, յորժամ ազատամտութիւն Զուղայեցւոց զերեալ կայր յերկիւղ սպառնալեաց ձերոց։ Եւ այսպէս աւարտեալ զրանն. այլ ի պատրաստիլ գրոյն առաքելի Յէջմիածին, վերահասեալ գրութեան ձեր առ Նուաստութիւն իմ, և տակաւին ոչ ի ձեռս իմ մտեալ՝ լու ի լու ի ընդլս հասարակութեան հոչակեցան բազում ներհակականք. և որովք մատնեցայ ես ի ներհակութիւն և յերկրայութիւնս ոմանց ի պատճառս յայտարարեալ բանիցն ձերոց թէ գրեալ էր իմ վատաբանութիւն զհասարակութենէ տեղւոյս զերիս տունս միայն զերծ պահելով, և թէ որոց զբարիս վայելեալ զսմս եօթն և տասն՝ չեղէ երախտագէտ, և այլն։ Յորմէ եկն ինձ իրաւունս բողոքելոց թէ չէր պարտ ձեզ գրել այնպէս. և եթէ գրել ախորժեցայք՝ պարտէիք կցել ընդ նմին և զանիթսն առ ի գիտել լսողացն եւ զկութիւն պատճառին եւ զձեզ գրեցելոցն յարդարութիւն եւ յիրաւունս. եւ շտալ նովաս խաղալ ի վերայ ծանր վրիպանաց։

Այո, որպէս ամենայն ուրեք ի հոչակ պաշտօնատարս (մանաւանդ ի հոգևորականն) չէ հնար չգոլ հակառակորդաց, ըստ այնմ թէ ամենայն Աննայ զներհակն ունի

Փեննայ. սմին հանդոյն ունեցայ և ես ի վիճակի սատ բանի մի սրս անբաւարար ի պաշտօնէս, (յորոց մին, օրինակի աղագաւ ասեմ. սմուանայողն ընդ դատեր մօրաքեռն, որ ըստ կանոնայ մերում եկեղեցւոյ չընկալեալ ի մէնջ զխորհուրդ պսակին, և զիմեալ յԱնգլիացիս ամուսնայաւ, յորմէ անտի անհաշտ ակամբ ի մեզ նայել սկսեալն էր. Թողում և զարմանալին թէ դուռ ի թիւ հակառակորդաց, մանաւանդ անձն անպատճառ, որ իսով շնորհիւ և միջնորդութեամբ զոգջիր ի յետին թշուառութենէ զերծեալ՝ կայ այժմ յաստիճան բարւոք կեցութեան, որոյ վնասն ինձ շատ եղև քան Աղէքսանդրոն դարբնի առ Աւաքեալն Պօղոս. յորմէ սիրելւոյն անձնասպահ լինիլ խրատէր։ Աւսպէս իմանալի է և զայլոցն, որք չկարէին և չունէին միջոց յայտնի ներհակութեան. բան զոր տեղի գտեալ ձեօք՝ յոտն ելին իբրև ինձ ստնանել և զողջամիտս ոմանս ի կողմն իւրեանց հանգուցանելով ամբոխել զխաղաղութիւն վիճակիս. (չիչխեմ ասանօր զսոն զգայմամբ ասել ևս զժանտախտական ունակութեանց ոմանց, որք յոնիկն ինչ սառանձին ներհակութիւն ընդ իրեար, յաւէտ յաղգայինս խնդիր ի ժողովի հասարակութեան վճարել ախորժեն հակամտութեամբ՝ ոչ ձեր, ոչ իմ և ոչ այլոց զիրաւունս պաշտպանելոյ աղագաւ)։ Աւ որ հնարեալ գրութիւն մի, իբրև բողոք կամ զիմադրութիւն ասացեալ ժողովոյ, որպէս թէ ոչ իրաւամբ կամ արդարութեամբ վճարեալ զեղանակ նոցին, որոց պարագլուխ տեսեալ զանուանս երկուց միարան քահանայից տեղւոյս ներհակ միանգամայն երկուց դրաւոր խոստովանութեանց իւրեանց առ իս, վերարերելի

առարկային տարբայելոյ (առիթ կալեալ նոցա թէ այնու զանուանս իւրեանց ի յիշատակագրի ժողովոյն ունէր ի դատապարտութենէ սպառնալեաց ձերոյ ազատել), որոյ ի տեսանելս հատաւ, խղեցաւ յոյս կարեցաւ, առ յապա տանելոյ ընդ նոսին պատուով զպաշտօն իմ յեկեղեցին. ուստի ի վերջնում աւուր անցեալ ամի առաքելով զհրաժարականս առ Գերապատիւ Պարոն Կ. Յ. Վրդանէս Եկեղեցականն՝ լուծի զկապ թէմական պարտաւորութեանս. ուխտեցի զանձն իմ, իբրև անպիտան անդամ յետին բահանայից, վասն իմոյ միայն մնալ իբրև անգործունեայ մշակ տանն Աստուծոյ, անդատին և հաւատարիմ Աթոռոյդ և բարեկամ հայրենեաց իմոց տան։

Յետ երկուց աւուրց հրաժարականի իմոյ հասեալ ի ձեռս իմ գրութիւն ձեր՝ բռնադատեաց զայս իմ թղաւաշատ գրութիւն ի պատասխանի. սակայն իբրև այր մահայու և ենթակայ խղճի պատասխանատուութեան գործոց առաջի ահաւոր դատաստանին Աստուծոյ, որ զանգործս մեր անդամ գիտէ, և չէ հնար սնոտի երկիւղիւ մարդկան մոռանալ զիրաւունս և զճշմարտութիւնս նորա ի դատապարտութիւն հոգւոյ, որպէս եւ ի սոյն ստորագրութիւն բռնադատ հարկի խոստովանիմ զանոխակալութիւն իմ ի ձեզ. խոստովանիմ զճշմարիտ բարեկամութիւն եւ զսէր իմ ի ձեզ. խոստովանիմ զերախտագիտական ճանաչումս ի ձեզ. խոստովանիմ եւ ցյետին չունչ պաշտպանութիւնս ի ձեզ ցժամանումն այնր իսկ գրութեան ձերոյ առ իս. զկնի որոյ խոստովանիմ զտրտմութիւնս ի ձերոյ անիրաւ գրուածոյ անտի. խոստովանիմ զրեկումն սրտի եւ յու-

ռոյ յիմաստից գրութեանց եւ չնորհաց ձերոց անտի · խոստովանիմ զյաւակցութիւն եւ զարմացումն իմ ի վիճակէ եւ ի դրից անտի ձերբակալութեան անարդաբ առարկայից եւ հնարեալ փաստից ձերոց անտի · խոստովանիմ զխոցումն խոցալից սրտի իմոյ ի վանականացեալ անթերի · խոստովանիմ զհաստատին գործոյդ՝ ոչ ի ձէնջ · այլ ի ձերոց խառնվայոյզ եւ անմարդասէր խորհրդականաց (թէեւ յանուն ձեր եւ ձեօք յանգաւորեալ) · խոստովանիմ զկորուստ ձերոց հայրախնամ եւ իմոյ որդիական երկասիրութեանց ամայն բազմայ ի կորուստն անգիւտ · խոստովանիմ զանմեղութիւն ձեր և իմ ի պատահարս չարաչար · խոստովանիմ զզբութիւնս այժմեան ի ձեռն ամենազաւառն և ողբալի կրից · խոստովանիմ նաև զանզգութիւն իմ յանկրաւի զբրկանս բազմամեայ վշտոբ և ցաւոբ առերեալս պատուոյս ընդդէմ, զոր դուք հաւասար հոգոյ արարիք · խոստովանիմ և ես զի, որպէս օրինակս նախկին գրութեանցս այդր առ ոմանս ի բարեկարգութիւն ունիմ եղեալ յուսս Ողորմածութեան Սրբազնասուրբ Հայրապետին, այնպէս և զօրինակ գրութեան ձերոյ և պատասխանոյն իմոյ սորին ունիմ առ Ղս առաքել, եւ ի սպասուարդար եւ անաչառ դատաստանի Նորին երկրպագուս վինիլ յուսով մինչ եղէ ինձ դատակնիքն թէ մահ և թէ կեանք։ Զկնի որոյ տեսցուք և ընտրեսցուք ապա զարժանն ըստ նպաստից ժամանակին · ուստի եթէ ի վաղիւն մահ եւ օրհասն իմ ինձ տիրեսցեն · (բանզի չթուի ինձ այլ երկարումն կենացս ընդ կրիւք չարաչար եւ ողբալի) ներող լիջիք յանցանաց եւ մեղաց նորին, որ

կսկծալի սրտիւ, ամենադառն վշտոք եւ ամենասաստկալի երկամբք ստորագրէ զանուն իւր ձերդ խոցեալ եւ անիրաւեալ ծառայ։

(ձեռա.) Տէր Յովհաննէս Խաչիեան

Ի Կալկաթա. 1862. Փետրվարի 20.

Փառք Պաշտպանողին արդարութեան հանուրց, որ Թադդէոս Եպիսկոպոսն յետ ընթերցման վերոյ լայնաձակ գրութեան, ոչ կարացեալ փաստ ինչ ներհակութեան ունել՝ քան կարծեօք վրիպակ միոյ տառի, այն է չէն փոխանակ կենի, որպէս թէ ձեռնարկն՝ ձեռնարջ, զոր բացայայտեալ 1862. Ապրիլի 30 գրութեամբն առ Պարնայքն Գ. Աւետ և Յ. Ավդալեանց, որոյ եւ սպասասխանին տուաւ յանցեալ ամի, Սեպտ. 10 վիմատիպ տետրակաւ մերով, ի բաւարարութիւն իւր եւ համախոհիցն։

Մ. Խ. Յովակիմեան

Հրատարակեալ ժողովոյ գրեալ նոյն Աւագ Քահանային ի 4 Յուլիսի 1862 ամի ընդ ձեռն Պարոն Մ. Խ. Յովակիմեան, եղբօր իւրոյ, առ Պատուելի Հասարակութիւն Հայոց Կարիսու, որ և հանախիրեալ կարգէ 5 քենիչս։ Քենութիւն սոցա և վերոյ երկրորդ ժողովոյն։

## Սիրելի Մկրտիչ

Տրտմութեամբ լուայ զարծարծումն վերստին խառնութեան տեղւոյդ ի սակս երկրորդական գրութեան եւ ծանրացաւումն վնեալոյ Թադէոս Եպիսկոպոսի յիմ վերայ, որպէս զի եթէ ոչ վերադարձայց ստի առ ինքն ի Զուղայ, չկարացիս առնել քահանայագործութիւն եւ այլն . . .

Աւելորդ իմն է նկարագրութիւն եղանակի հրամանի կոչման նորա, յորժամ ամենայն որ հասկանայ. այլ ես առաւել ընդ այն զարմանամ. մինչ լուեալ նորա զձրդումն մերոյ դատի յատեան Բարձու Էջմիածնի, թարց ունելոյ ժուժկալութիւն ստացման դատակնռոյ անտի՝ վաղվաղեալ է անդրէն ի ցասմնական զայրոյթ բոցարոյլ վրէժխնդրութեան, որ պարզ ապացոյց է անխաղաղասէր բնաւորութեանն, որով նկրտի և Ջանայ մեռուցանել նախ զինքն, ապա՝ զիս, ընդ մեզ և զհասարակութիւն կողմանս ի չարաչար հարուածս անբարոյականութեան։ Լոյսի որ ինչ է. եւ Տէր լոյսի միայն զարմանիչ աղետիս աղգակործան։

Զունիմ ինչ ճար՝ քան կոչելոյ ժողով մի ամենի յընտրեալ անդամոց հասարակութեան տեղւոյդ յանկէ յանուանէ. (ըստ որում ժողովն հասարակաց առ նախանձ առանձին քինու իրերաց մեծամեծ ինաս գործէ ըստ բնական սովորութեան) եւ դնել զամեն իրաւունս անցեալն նոցա առաջի ի բննել եւ ի դատել նախ զյանցանս եւ ապա՝ զհաշտանս յերեսաց անազորոյն խրստութեանց նորին Եպիսկոպոսի։ Ուստի սովաւ առաքեմ քեզ զկոչնագիրս ի չրջեցուցանել. զի եթէ Պարնայքն բարեհաճեսցին մտանել ընդ խնդրով մերով. ուրեմն տեղ մի եւ ժամանակ հաստատեալ ծանո՛ ինձ ի գալ այդր եւ վճարել զարժանն. իսկ եթէ ոչ՝ զամեն հոգս թողցուք արդար դատաստանին Աստուծոյ։ Ողջ լեր Տէրամբ։

(ձեռ.) Բոյդ Եղբայր Տէր Յովհաննէս

Ի Զիչրայ · 1862 · Յունն 23։

---

Յարգոյալատիւ Պարնայք՝ Յարութիւն Աբգար, Գէորգ Աւետ, Կարապետ Յ · Վրդանէս, Պետրոս Յ · Պօղոս, Յովհաննէս Ավդալ, Պետրոս Յ. Սարգիս, Ռաֆայէլ Զ · Շիրվանօր, Յարութիւն Կարապետ, Սէթ եւ Աղէքսանդր Յ · Աբգար, Մկրտիչ եւ Մարտիրոս Ս · Յովհան, Յարութիւն Գ · Աբգար, Աւետիք Գալստան, Գալստան Ոսկան, Յովհաննէս Գ · Բարաղամ, Յովհաննէս Ռ · Շիրվանօր, Յովհաննէս Ավդալ կրտսեր,

Մարգար Գրիգոր, Գրիգոր Պ. Մելիտոս եւ այլ բա-
ռեհաճեալ ճշմարտասէր բարեկամք։

Գերապատիւ Պարոնայր.

Բռնադատութիւն խղճիս մատոյց, ներբակ հանդիպեալ
չխօսելոյ ինչ առ սակաւ մի, մինչ մեկնեալ ժամանակին
շարի եւ հակառակութեան՝ թոյլ տայէ ընելոյ իրաւանց,
ստիպէ զիս ուղղել զայս գրութիւն անազան միջոցաւս
առ ձեզ ի վերայ նպատակի միոյ, որ հայի ի ճշմարտու-
թիւնս, հայի յիրաւունս արդարութեան, հայի ի պատիւ
Ազգութեան ձեր, եւ միով՝ հայի ի փրկութիւն հոգւոց
բազմաց, որք տարապարտ եւ անքաւելի յանցանօք
դեղեալն ի խորհուրդ եւ յիմացուածս վարկպարագի։

Ասարկայ խնդրոյս յայտնի է ձեզ, եւ աչօք տեսանէք
զերկպառակութիւնս եւ զանկարկամելի պատճառումն
ժողովրդեանս ընդդէմ իրաւացի կամ անիրաւացի մա-
քառման ընդ իրեար. եւ որոյ վերջնական ներգործու-
թիւնն ոչ այլ ինչ՝ քան թշնամանք եւ բակտումն սիրոյ
հօր ընդ որդւոյ, եղբօր՝ ընդ եղբօր, ընտանւոյ՝ ընդ
ընտանւոյ եւ բարեկամի՝ ընդ բարեկամի, որ է վերջին
տարաբախտութիւն խմբի։

Ով անակնուն ելի ցաւոյս թէ բանի դառնադէտ, ոչ
միայն վասն հիւրոյս (որ վաստակեալ ի բերմանց ժա-
մանակի, եւ խոնջեալ անպատում վշտաց ճախորդ բախ-
տի, ամենայն ինչ վասն իւրոյ ինքեան կատարեալ հա-
մարի). այլ վասն եկեղեցւոյ ի վերայ ոտի եւ տասն

ամայ, ըստ խոհեմանն ապահով պահելոյս, վասն ժողովրդեան, որոյ, իբրեւ խոնարհ պաշտօնեայ, բաղմօք ի բաղումս քրտնախարշ եղէ առ ի շահել, վասն համբաւոյ դերահամբաւ քաղաքիդ, որ տակաւին անչքութեամբն ի հեռաւորս սպանծանօք մեծարի եւ միսնդամայն՝ վասն ամենայն բարեաց, որ կարծի ի բարեկիրթ անձանց։

Թէպէտ խոհեմութիւն չէ ի հուր մերձենալ, յորժամ զայրագին է բոցն. սակայն եւ այնպէս հուրն ջրով շիջանի։ Զասեմ թէ այժմեանս Կալիֆթա ըստ մասին չմարթանայ ճանաչել զվաստակ վաստակաւորաց եւ զերախտիս երախտաւորաց. չասեմ թէ արդիւնք ոմանց հաւատացեալ բարեկամաց ժամանակիս ընդ հակառակին ծնանին վնաս ոչ ի վնաս որում կարծի. այլ իրօք հոգւոյ ներգործողին վնասու. չասեմ զդառնութենէ նախանձուն չար, որ զնախասահեղծան յեղեմ եւ զսերունդս նոցին ի կենցաղի ասա տառապեցոյց. չասեմ նա եւ թէ ասպարէզ ասի ամբարշտաց չափի քան, եւ վատակ նոցին ի դատաստանի՝ անչափ. այլ զայս եւ եթէ ասեմ թէ նախասպարարեալ ոմանց՝ զանուն Սրբազան Աղաջնորդին եւ իմ, իբրեւ գործիս հակառակութեան ի կիր արկեալ, ընդ ասուերի եւ ոչ ընդ խոսկանի զհետ լինին, յորժամ գիտեմ ես. գիտէ եւ Պատուելութիւն ձեր զներբին նոցա (վկայեն եւ ինքեանք) ոչ յԱղաջնորդն, ոչ յիս եւ ոչ յիրաւադատութիւն ինչ՝ այլ հակառակ իրեաց ի կործանումն, որ չէ գործ քրիստոնէավայել, աղատ ի վրէժխնդրութեանց Աստուծոյ։

Որչափ ես համոզեալ կամ, մասամբ եւ ձեզ է յայտնի

թէ ցայս վայր ոչ որ ֆիլոխիգոպէս խմացեալ զառիթ տա-
ռաձայնութեան ծագեցելոյ ի մէջ Սրբազան Առաջնոր-
դին և իմ, միայն առեալ ի միակուղի և տարտամ գրու-
թենէ Նորին Սրբազնութեան՝ ընդդէմ իմ ոստայնան-
կեալ զչիւառածս գործեցին և գործեն, առանց իմս
իրաւունք պատասխանատուն որոնելոյ ի դիմադրութիւն
նորուն։ Թո՛ղ իսկ այնպէս. և ես քաջ գիտեմ թէ լռու-
թիւն իմ և ի լոյս չհանելը իրաւանց, բազում վնասս ինձ
գործեաց և գործէ աղմկեալ ժամանակաւս. սակայն մի՛
ոք կարծիցէ զլռութիւն իմ ցայս վայր անտեղի, յորժամ
լսիցէ՝ նէր և չէ իմ կամք ամրոխելոյ զեկեղեցին և
զժողովուրդս, մանաւանդ և անօգուտ ինձ, յորժամ
զմնդիր իրաւանցս տարածեալ յոտս Ողորմածութեան
Սրբազնասուրբ Կաթուղիկոսին և յատենի, որ բաւէր մեր
երկոցունցս ցաւոց դարման տանել և տալ զդատակնիքն
ում որ հարկն պահանջէր. ուստի և վասն այսր իսկ պատ-
ճառի բարւոք վարկուցեալ զմեկուսանալս և մնալս
լռիկ, թէև անանդորրամիտք ոմանք այլ ընդ այլով խո-
կային։

Սակայն մինչ ըստ այժմեն թէ անդրէն գրութիւն մի
նոր եկեալ այդր ի Նորին Սրբազնութենէ Առաջնորդին
ընդդէմ յանցաւորիս, եւ զմանդարտեալ աս ուլիս հա-
սարակութեան աջուձախ վերանորոգեալ, և զանմեղու-
թիւն բաղմաց ի նորանոր մեղս թաւալեալ, որով եւ
կարեւոր է ծաղումն այլ ևս առաւելագոյն վնասակա-
բաց. վասն որոյ իրաւունս ընտրեմ յայտ առնել թէ ես,
որպէս քահանայ, մեծ վոյթ ունիմ զիրաւանց գրու-
թեան նորուն Առաջնորդին. ըստ որում Եպիսկոպոս,

Տէր եւ Գլուխ իմ. այլ ինաւին չունիմ փոյթ զանիրաւ յարձակմանէ եւ պահանջմանէ նորա անտեղի։ Այո՛, կարող է նա, որպէս եպիսկոպոս, առնել զոր արարեալէ եւ առնէ. այլ չկարէ կորուսանել զոգի եւ զիրաւունս իմ յորժամ ունիցիմ ընդ իշխանութեամբ. զի ճշմարտութեանն չի՛ք վախման, թէեւ առ ժամանակ ինչ տագնապիցի. եւ ընդ այս չունիմ ինչ ներհակութիւն։ Թոռ՛ղ իցէ վասն իմ, որ լինելոց է. այլ ջանայցէ՛ք դուք զեկեղեցին ապահով պահել, եւ զժողովուրդս՝ անվնաս. զի մի՛ առաւել հրդեհ իմն որորութեսցի ի վնաս իմոյ եւ յանրուժելի ցաւ իմոյ սրտի։

Եթէ անտեղեակ եմ ֆիզիդարար առարկայից գրութեան Աստուածորդին. բայց քաջ տեղեակ եմ անմեղութեան իմում անընդունակ հարուածոյն ըստ սովորութեանն. եւ չտեսանեմ զոյլ հնար դաղարութեան յուզմանց, ցորչափ հասարակութիւնք չեն իրաղդածեալ բուն պատճառի հանդամանացն եւ տարաձայնութեանն։ Վասն որոյ յարմատախլել զամենայն յառաջանամ սովաւ խնդրել ի Պատուելութենէ ձերմէ, ոչ վասն իմ (որպէս ասացի ի վեր). այլ վասն սիրոյ ազգութեան ձեր, վասն խաղաղութեան իմոյ ձեր, ի սէր Քրիստոսի, ի սէր ձերոց անմեղ փորրկանց, ի սէր պատուոյ քաղաքակցացդ համախմբեալ ընտրեցէ՛ք տեղ մի, որոշեցէ՛ք օր մի, եւ հրաւիրեցէ՛ք յատեան զի՝ որ եւ կամք ձեր մնիցի։ Կոչեցէ՛ք եւ զիս. հարցէ՛ք, իմացէ՛ք եւ քննեցէ՛ք զպատճառ աղմկիդ, ազատեցէ՛ք զսուրբ ականջս ձեր ի վնասակար զոզանջմանց, ազատեցէ՛ք զմարուր խիղճս ձեր ի մրճոտմանց. փրկեցէ՛ք զտուն Աստի եւ Պատուոյ

ձեր յիրաւացի պարտաւանաց այլոց քաղաքացւոց . զի եթէ իրօք , ես , որպէս մարդ , մեղուցեալ իցեմ՝ արկէ՛ք զիս ի ծով եւ տո՛ւք դադար մրրկացդ , եւ մի՛ այնուհետեւ ոք դործեսցէ զյանցանս ի պաշտպանել զիս . իսկ եթէ ոչ՝ թո՛ղ ծանիցեն ամենեքեան զիրաւունս և զպատիւս խղճի , եւ մի՛ վայրապար ասա՛ եւ անդ զոհել զպատիւ , յաւէտ՝ իւրեանց քան թէ՝ իմ ։

Այլ եթէ ոչ այս եւ ոչ այն . ապա ուրեմն զինչ ճար՝ քան թողուլն ի դատաստանի ահաւորին Աստուծոյ յաւուր վերջին , ուր ես անպարտ , թո՛ղ դատախազ մնասցէ ներքին համարումն իւրեանց զառ յԱռաջնորդէն եւ զառ յինէն , եթէ ոչ՝ մինչ յերկիր եւ յեռանդն յայտնապէս ամենայն ուրեք զԱռաջնորդն վատաբանէին եւ թշնամանէին ։ Թողում զժողովս ընդդէմ Նորա ի 1853 եւ 54 ամս , եւ Փետրվարի 18 տպագրեալ անցիւք ժողովոյ անարգաբար զգրութիւն Նորին Առաջնորդի յետս յինքն դարձուցանելն . թողում եւ զ1858 . Դեկտեմ . 2 ծանրակշիռ առաջադրութեամբ խոկումն հասարակաց ժողովոյ ընդդէմ Նորին Արքաղնութեան , ուր ես , գոգջիւք , որպէս ձեռնամած , խաղաղութիւն , սէր և ներումն ի ձէնջ պաղատեցի . թողում եւ զայժմեանս անիրաւի վրէժխնդրութիւն ոմանց ի պատճառս կալոյ իմ ախոյեան ընդդէմ ինքեանց եւ պաշտպանելոյս զԱռաջնորդն (ո՛վ փոխարինութիւն չար հակառակ բարւոյ) ։ Այժմ առաւել քան փառս համարիմ զոմարդի փոխադարձութիւն Արքաղանին իմոյ առ իս , կարի տարբեր վիճակօք . և որոյ որոշումն թողում զխոսակցդ ամենեցուն ։

Եւ մեամ յարգանաք ի բոլոր սրտէ, որպէս միշտ, շնորհապարտ և խոնարհ օրհնաբան։

Ի Զիչրայ. 1862. Յուն 23։

---

Յարգոյապատիւ Պարոնայք,

Կից շրջաբերականիս գոյ խնդիր իմն ի Սրբակրօն Տէր Յովհաննէս եղբօրէս, զոր ընթերցեալ ունիք իմանալ զնըպատակ և դիրաւունս խնդրոյն։ որ վասն խնդրելի է ի Պատուելութենէ ձերմէ զի բարեհաճեալ դումարեսջիք ի գործատուն ատորագրողաց, թիւ 203. Զինաբաղար, յառաջիկայ կիւրակէի, ի 6երորդում ամսոյս ի 11 ժամու նախ քան զմիջօրն, շնորհապարտ առնելով զձեր խոնարհ ծառայ

(ձեռ.) Մ. Խ. Յովակիմեան։

Ի Կալկաթա. 4 Յուլայի 1862։

---

Ի Կալկաթա. 6 Յուլայի 1862.

Ըստ վերոյ գրեալ շրջաբերական թղթոյ Պարոն Մ. Խ. Յովակիմեանի և ըստ խնդրոյ Սրբակրօն Խաչակիր Տէր Յովհաննու Խաչիկեան դումարեցաւ ժողով մերազնէից ի գործատան յիշեալ Պարոն Մ. Խ. Յովակիմեանի

ի թիւ 203. Զինարաղար առ ի լսել զբուն նպատակ իրաւանց Սրբակրօն քահանային։

Հետագայքն ներկայ էին յայսմ ժողովի։

Սրբակրօն Խաչակիր Տէր Յովհաննէս Խաչկեան, Պարոնայք Յարութիւն Կարապետեան, Յարութիւն Գ. Աբգարեան, Փ. Ա. Գէորգեան, Մարտիրոս Ս. Յովհաննեան, Յովհաննէս Խ. Միրայէլեան, Յովհաննէս Գ. Բարաղամեան, Պետրոս Յ. Պողոսեան, Պետրոս Յ. Սարգսեան, Ս. Յ. Բարաղամեան, Գալստան Դ. Գալստանեան, Մ. Խ. Յովակիմեան, Յովհաննէս Ա.վդալեան կրտսեր, Մարգար Գրիգորեան, Գրիգոր Պ. Մելիտոսեան, Սէթ Յ. Աբգարեան, Մկրտիչ Ս. Յովհաննեան, Գալստան Ոսկանեան և Մկրտիչ Տէր Յ. Գալստանեան։

Առաջադրեաց Պարոն Մարտիրոս Ս. Յովհան և երկրորդեաց Պարոն Յ. Գ. Բարաղամն, և միաբան ձայնիւ ժողովոյս Պարոն Սէթ Յ. Աբգարն կոչեցաւ յԱթոռն և եղև Աթոռական ժողովոյս։ Ընթերցաւ ապա Պարոն Աթոռականն (ըստ սովորութեան) զկոչնագիր Սրբակրօն Խաչակիր Տէր Յովհաննու Խաչկեան։

Ցետ ընթերցման այսր թղթոյ ընթերցաւ և թուղթ մի վերաբերելի առարկայից ժողովոյս ի նորին Տէր Յովհաննիսէ յարգաց դժտութեանց ծագեալ ի մէջ իւր և Սրբազան Թադէոս Առաջնորդին Ջուղայու, նշանագրեալ զգլխաւոր մասունս անցից և պատճառաց խռովութեան, առաջի դնելով ժողովոյս զհամապատասխանիս

ի մէջ իւր և Սրբազան Աղաջնորդին՝ վասն անաչառ քննողութեան և իրաւադատութեան հետագայ օրինակաւ։

Ո՞ Աստուծոյ՝ հասարակեալ առակ իմիկ թէ միականին ի մի և երկուքն յերկու նուազս փորձոյ ճանաչին։ Աստուծ եթէ ճանաչումն մարդոյ մտաց այսչափ հզօր՝ զիարդ հաւատալի թէ Կալկաթա զամն ութ և տասն անմիջապիակ յարակցութեամբ ընդ իս ի բազմադէպ եղանակս անցեալ՝ ոչ մարթասցաւ ճանաչել զիս։ Այո՛, ծանեաւ և կարի քաջ, յորժամ ցանկ այգեոյ սիրոյն և համաձայնութեանն չէր անկեալ. և բանտարկուք չէին ի նա եղեմուտս գործեալ և սերմանեալ յանդս բարոյականութեան զորումն ապականարար և զդժնիկն խոցոտիչ և մաքառիչ անդամ ընդ բնի և ոստոց, նա և ոչ ընդարձակեալ գայլոց գառնազգեստուց բուներեալոց ի միջի ողջախոհ հօտի, ի կլանել գարիս բազմաց և զմնացորդսն առ ոտն եղծանել, և անդրէն իրրև զհրեշտակս լուսոյ կերդել զանձինս, որպէս հոգիս արծանաւորս յարգանաց, մեծարանաց և ընդունելութեանց Աղին։

Յասպացոյց բանիս ունիմ առաջի դնել զձերն անմոռանալի գրաւոր ինքն առ իս երկիցս և երիցս, յորժամ դէմ եղեալէր իմ լքանել և թողուլ զԿալկաթա, որովք, իրրև ասկեղէն շղթայիւք սիրոյ ձեր, կաշկանդեցիք զձեզ և զոստս ի հոգևոր ծառայութիւն ձեր՝ ոչ բնաւ շօշափեալ ձեր ի մտի թէ փոփոխմունք շրջանաց փոխելոցդ զվիճակ պատուեցելոցն ձերոյ և արբուցանելոցդ նմա գրաժակ լեզոյ աստուածընդդէմ անպատուութեան,

յաւէտ ի ցաւ և ի տրտմութիւն ձեր, յորում որչափ իրաւադատութիւն խղճի ձերոյ պաշտպանել զիս և զպաշտիւ իմ աշխատասիրի, այնքան և կրիւք նախանձաւորաց աներկիւղածաց տուայտեալ տագնապի, և ածէ ի ձեզ զարմանալիս և զափոսանս թէ հի՞մ այսպէս, և զի՞նչ առիթ յանկարծահաս փոթորկիս. սակայն մի՛ լիցի ձեզ զարմանալ ի տարադէպս այս, յորժամ չիք հաստատութիւն յինչ, և չիք յարատեւութիւն բարեաց ի անտիսապատիր կենցաղի՝ զի գրեալ է. «Երկիր ի չարի կայ». և մանաւանդ՝ Փրկչական է բանն և կնիք. «Զէ մարթ չգալ գայթակղութեան. բայց վա՛յ մարդոյն այնմիկ, յոր ձեռն գայցէ»։ Եւ եթէ միջարկութեանս ձայնի և որոյ սատիկ ներդործութեան ունկնդիր լինէր աշխարհ, ոչ ոք զաչս արտասուալից աղաղակօք յերկինս առ Տէր չհամբառնայր, և ոչ ցաստումն պատուհասի ի վրէժխնդրութիւն յերկրի հասարակապէս ի մարդիկ ծուխնայր։

Ապաքէն ասացելովքս քաջայայտ է թէ բանի զիւրաահեն կեանք մեր, և քանի արկածից ենթակայ յերաշխէպս կենաց, ուր եթէ ոք զօրաւոր՝ քան զԱմսոն, անզօրանայ քան զԱմսոն, եթէ հզօր՝ քան զԿրեսոս արքայ, ապա տկար քան զնա առ երեսս տապալի ձիթոյն եռացելոյ կարդայ զՈղն. և եթէ պերճ արքայ՝ քան զերեկեան Լոյզ Ֆիկիպ, ապա հալածական ևս քան զնա, զի առաջ քան է յերջանկայն նախնեաց թէ. «մինչ ցլոյս վառ չի մնալ ոչ ում ճրագն». և թէ. «ոչ ով չասէ ես ես եմ. զի հասեալ հասանէ նմա վիճակ դառն և առնէ, որպիսի այժմ ես եմ։»

Դատն ասայի վիճակ իմ. մի՞ իցէ, միակուղի նշմարա-
նոք Պատուելութիւն ձեր վչտասցի, որպէս թէ ձեօք.
ոչ, ոչ բնաւ. և ոչ նոքօք, որ իրօք ցաւեցուցին զքնքուշ
իմ սիրտ. այլ ի նոցունց սիրելեաց տան իմոյ հոգևորա-
կանի, որոց ես հաւատացի ըստ օրինաց և կոչման կրօնի
զոլ և լինիլ ժառանգորդ տուչական շնորհացն Աստուծոյ
և մատակարար աւետարանական վարդապետութեանց,
ըստ ընդհանուր օրինադրողին Յիսուսի։ — Այո՛,
քահանայ եմ տրուալ յետին մչակաց տանն Աստու-
ծոյ, և պարտական եմ պաշտպանել ոչ միայն զքինուո-
րեալ գլուխն իմ. այլ և զհամօրէն կրօնակիցս (որպէս
ցայս վայր նովին ունակութեամբ և հաւատով մաշեալ
հիմնեցայ և իսով տրով եառ հատանել զպարանոց իմ).
սակայն որպէս մարդ, ենթակայ ահաւոր դատաստանին
Աստուծոյ, անխղճահարիմ յասել. երանի՛ թէ չիցէր
իմ ծնեալ յաշխարհի, և կամ ինձ անարժանիս վիճա-
կեալ աստիճան քահանայութեան. քանզի եթէ օրէնք
եկեղեցւոյ և քահանայութեան մերոյ այս են, զոր այժմ
մեքս պաշտեմք, և որով զազգ մեր և զժողովուրդ դայ-
թակղեցուցեալ՝ զոգի և զմարմին մեր ընդ նախասաց
վայիս Տեառն փակեմք, զի՞նչ շնորհ և օգուտ մեր՝ քան
դատապարտութիւն Յաւիտենականին, մանաւանդ՝
յորժամ բազմօք ի բազումս խուզարկու եղեալ՝ ճշդրտա-
գոյն փորձիս դատեմք զամեն մեսն եկեղեցւոյ ոչ ժո-
ղովրդովք. այլ մեօք իսկ յառաջեալ. և որոյ բուն սուիթն
ոչ այլ ինչ՝ քան թանձրամած տգիտութիւն հոգևորակա-
նացս մեր և ապօրէն ընթացք մերոց գլխաւորաց, որք
փոխանակ զարդարելոյ զեկեղեցին խմաստութեամբ և

չնորհօք, ընուն տգիտութեամբ և միաստակարօք ի ձեռն անուս, անկիրթ, անհասուն և անհրահանգեալ հրէշից, որոց զլուին ես զիս տեսանեմ։ Եւ այսպէս կոյր կուրաց առաջնորդ, ժողովուրդն՝ մեռօք, և մեք զլխաւորօք՝ զա-հավիժեմք ի խորխորատ վէին անելանելի ընդդէմ իրա-ւանցն Աստուծոյ։ Եւ ըստ որում այսպէս, և արդի հոգե-ւորականութիւն մեր հիմնեալ յարծաթասիրութեան, ի տուր և տուր գանձուց անիրաւութեան, հարկաւ լինին և ծնանին ինձ վիշտք ի զլխաւորաց, և յինէն աղաղակ ի ձեզ. ուստի, յուսամ, երկայնամիտ ինձ լինիջիք, եթէ նախապաշարեալ իցեմ ի վարկուածս բանից։

Արդարև չէր հնար ինձ բանալոց զդաւս սրտիս ի ձեր առաջի, յորմէ ոչ օգուտ ձեզ կամ բերկրանք ինձ լինին, մանաւանդ մահն ինձ յայսմ վայրի ընտրելի քան զոր գրեմս. սակայն մինչ տեսանեմ խստաւ լռութիւն իմ ընդդէմ անողորմ խստութեան Արքայն Աստուծոյ, որ յետ մահացուցանելոյ զոսկեպատ հարբաւ պատ-ուոյս, մահացուցանել սպառնայ և զոգի և զմարմինս, բռնադատիմ բազաբարկու հանդիսանալ ոչ զդիտակդ խերամտելոյ ազազաւ և ոչ զհակառակորդս իմ համոզե-լոյ, որք աչս ունին՝ տեսանել չկամին, և ականջս ունին՝ լսել դիրաւունս չախորժեն, և նզովեալքն զանձինս իրեանց ոչ ուտել և ոչ ըմպել մինչ սպանանել զան-մեղն Պօղոս, այն Պօղոս, որ եթէ զօձիս չար նախանձու և հակառակասիրութեան զանձանց պատառեսցեն, սրտի մտօք խոստովանելոցեն թէ զնա Աստուած պատ-բաստեաց ոչ միայն զամս 18 հանդերձիչ պատուական հոգւոց իւրեանց առ ձրի չնորհս Աստուծոյ. այլ և զան-

ձինս ոմանց մխեալս յաղբիւս դառն վիճակի տարաբաս-
տութեան ի վեր հանեալ և ըստ կարի հաստատեալ
ի բարւոք գնացս ։ Զէ այժմ զհիրոյս փոյթ նոցունց · զի
գրեալէ · « Մարդ բարի ի բարի զանձուց սրտի իւրոյ բղխէ
զբարի · և մարդ չար ի չարէն բղխէ զչար » · և չարն
միշտ հակի յայն , որ խորհի զչար ։

Այլ իրաւունք իմ տարածի ի հեռաւոր վայրս , ըստ
մեծի մասին անուամբ և եթ ծանօթս ինձ , որք անտե-
ղեակ գոլով էութեան անցիցս իրաւանց և անիրաւի
զրկանացս , պատճառին ստիպողական ժողովոյն և ան-
ցիցն ցայս վայր՝ այլ ընդ այլով չփոթին , մանաւանդ
պատճառս առեալ իբանի մի կեղծապատում գրութեանց
աստի ոմանց , չմանալով թէ որ հոգւոց , և որպիսի
գրչաց եղեն ծնունդք . ուստի պարաւանդիմ որոց ի ըն-
լիս համառօտել զիրաւունս թէ զինչ առիթ և թէ
ուստի ծագումն աղաղակիս ։

Ասացի յառաջագոյն թէ չէ հնար բացումն ցաւոց
սրտիս ձեր յառաջի , յորոց մին է այս . զի յետ բազում
ինամուց , զորս կրեցի յերեսաց խստութեան Առաջնոր-
դաց Ջուղայու վանաց ի սկզբանէ անտի՝ չկամէի զհրա-
ման Սրբազանին ի վերայ ընդհանուր Աւագ երիցու-
թեան Հնդկաստանի , ընդ որ և զմեծարանս նորին յանձն
առնուլ , որպէս և գրեալեմ ինքեան զանհաճութիւն իմ
զկնի պարտաւորութեամբ ընդունելոյս , և ունիմ զնոր-
հակալու պատասխանին ։ Վկայէ բանիս այժմէն Պարոն
Յովհաննէս Բարաղամդ , որ ընդ Գերապատիւ Պարոնաց
Յարութիւն Մ · Վարդանի և Յովսեփայ Աղաբէգեան ,
պաշտօնատարաց եկեղեցւոյ , այն ինչ յութն ժամու

երեկոյեան շնորհ բերեալ յեկեղեցին առ իս՝ մատուցիք ինձ զկոնդակն Սրբազանին շնորհաւորելով ինձ զպարգևն մեծարանաց (եթէ չէ արժան կոչել զայն պատիժ և պատուհաս մեղայ) զինչի պատասխանի լուայր թէ. ինչ ինչ վնաս ինձ պատճառեալ, և ինչ ինչ սնոտիք զիս մխիթարել կամեցեալ (քանզի յայնժամ առ մահուան որդւոյս սգաւոր էի, և ի պատճառս թոյլ չտալոյ վանականացն, ընդդէմ խնդրոյ հասարակութեան ձեր աստի ի ժամանակին զմայր և զորդիս գալ աստ առ իս)։ Վկայէ և արտասուս շրջահայեաց յահաւոր ատենին սեղանոյ բեմբասայութեամբ ի ժամուն, յորում զգենուի զպատիժն շնորհանուն թէ. վայ եղկելի անձինս եթէ ոչ մատնեցայց ի չարաչար փորձանս ապագայից, յորոց Տէր փրկեսցէ՛։

Վկայեն համասպատասխանիք մեր յետ վիճակաւորութեան հանդուցեալ Տեառն Յովհաննու Գալստանեան ի թէմ Կալիաթու թէ որպէս ապաշաւոր ի սպասու հօրն դտեալ վասն փոխանցելոյ զպաշտօն Աւագ երիցութեան առ նա. և նորա անհամ ի խնդիրս՝ պահեաց զիս ցայս վայր նպատակ ամենից նեռից արհամարհանաց և անպատուութեան։ Ունիմ և բազում ապացոյցս ի ձեռին վասն յամենայն ժամու երկիւղած լինելոյս և կանխագէտ գոլոյս արդի սովորական շնորհաց վանացն, բայց խնայասիրեալ ի տրամախոհութեան խնամ զանկայուն ուխտ, զդիւրախոտիս բնաւորութիւն, նաև զնարպիկ համոզումն Առաջնորդաց, որք մինչ կարօտեն ամենայն շնորհաց, բուռն հարկանեն յամենայն հնարս կեղծից. և մինչ ընդ զբաղմանն՝ շրջին յեղակարծ

ի հակամէտն կոյս, որչափ տէս ինձ ճշդրտի։ Եւ չլի-
նէր այս թերեւս, եթէ Աղգասէր Աղայ Յովհաննէսն
Էշիսդն չիցէր մահացեալ, և յոյս ակնկալութեան նոցին
ի նպաստից սատի նմին հատեալ. բանդի կարեմ հաւա-
տալ թէ վիճ և աղաղակ նոցին վասն դրամոյ էին, որպէս
Սրբազան Առաջնորդն վրէժառու գրութեամբն առ իս
խոստովանի թէ մինչ յամն 1857 չիք բնաւ գժտութիւն
ինչ անցեալ ի մէջ իւր և իմ. և որոյ ծագումն ասի ի նը-
ուիրականն գործոց, զորմէ կարծի թէ չէր իմ կամք
յառաջացուցանելոյ, և թէ ըստ ակնկալութեանն, ոչ
ըստ առաջնոյ եղանակի նուիրակութեանս արդիւնաւոր
լեալ. և որոյ վասն ճարտարարուեստ հնարիւք 2,500
ռուբիք ինձ տուգանելն իրաւունք խղճին վարկաւ չմա-
նալով, կամ լաւ ևս է ասել. կամառորապէս զանց
զժամանակաւ անցելովք լեալ, յորս յաջողութիւն
հասարակութեան ձեր աստի՝ ըստ նարդենոյս, յերկրէ
յերկինս զանազան, նաև զանց զխստասոճ և անպատ-
շաճ գրուածովքն իւրով առ հասարակութիւն ձեր եղեալ,
որով յետ զվիճակ բաղաբիս վայր ի վեր տապալելոյն,
գրութիւն իւր անարդարար վճռով ժողովոյ հասարակու-
թեան ձեր յերեսս իւր վերադարձաւ։ Եւ յայնմ օրէ
զոգջիւք բարոյականութիւն քաղաբիս առ հոգևորն ա-
զատաղել, թէ բանի ցաւոց, բանի երկանց, բանի
տարաձայնութեան և օրբան ցայս վայր անարժանեաց
ծնող և սնուցիչ գտաւ՝ բաջ գիտէք. նա և թէ բանի
կշտամբանս բազմաց ի գլուխ իմ կուտակեաց երբև
փոխանորդի իւրոյ, յատկապէս վասն վերակոչման զՏէր
Մկրտիչ Տէր Կարապետեան, յոյր վերայ հիմնեալէր

զայն գրութիւն իրօք վչտալի և վրդովիչ խաղաղութեան։ Ա.հա յայս իսկ յուզեալ ժամանակի յառաջացուցեալ զնեղիրն նուիրակութեան (ի զարմացումն բնութեան, թէ յետ այսպիսւոյ հուչակեալ անպատուութեան, անդ-րէն վաղվաղակի անցաւ սրտիւ ի հաւաբումն տրոց նուիրակութեան. տուէ՛ք, տուէ՛ք, զոր ինչ ասէք՝ հաճելի լինելոց է երբ դրամ ևս տայք, եթէ ունիք կամ չունիք, ընդ իս հաչտ իցէք կամ անհաչտ, տուէ՛ք զոր ինչ և կա-միմ և մի հարցանէք ինչ. վա՛չ զգայողութեանս)։ Եւ այն՝ կապակցութեամբ ընդ եկեղեցպանին, որ բաց-սական գրութեամբ մերժեաց յինքենէ զինղիր պաշտօ-նին և եթող զիս չուարեալ. քանզի զիտեմ՝ Ա.ռաջ-նորդն առանց իրաւանցն լինելոյ փոր հաւաբել կամի (ի ընուլ զբսակ Պարսից)։ Տեսանեմ փոքրատու ժողո-վրդոյ սիրտ վշտացեալ և ցրտացեալ՝ զանուն Ա.ռաջ-նորդին անգամ առնուլն ի բերան չամորժեն, և թարց օգնականութեան եկեղեցպանի չէ հնար կատարումն գործոյն. ուստի զնի՛ ամենից բարեգոյն վարկայ գրել նորին Սրբազնութեան քաղաքավարութիւն, և ամենայն բարեմտութեամբ զկայ զգործն պահել առժամանակ ինչ. որպէս և գրեցի. այլ յետ փոքու, մինչ իւիք յա-ջողուածով մարթացայ համոզել զհանդիսական կարեկ-ցութիւն նորին եկեղեցպանին և յառաջացուցանել զգործն, անդրէն ևս փութացայ աւետել և ծանօթս տալ ի միամտութիւն, որպէս և բարեպէս տարտեալ՝ զդամարն անթերի ևս հասուցի յինքն, զամեն աչխա-տասիրութիւնս նմա յանձն արարի, որ բաւէ ճանաչել զարդարութիւն և վարձատրել ըստ չափու։

Գործն նուիրակութեան, գոգՀիք, այսպիսաբար վճարեալ, յանկարծ հռչակ հարկանի թէ Տէր Մարտիրոս Տէր Յովակիմեանն, իբրև կրկնանուիրակ հասեալ ի Բուշեռ՝ գայ ի Հնդիկս, ուր ծանօթութիւն զգործոյս լրութեան առեալ զրէ հարկաւ Սրբազանին և նուէ ի Բումբայի. ուստի յայտնելով ինձ զեկաւորութիւն իւր եւ զաւարտումն գործոյս աստի, որոնէ զխորհուրդ յինէն թէ զինչ առնել արժան էր. ընթեռնու զխորհուրդ իմ, որպէս նուիրակ Ջաւու, խաղալ, գնալ անդ. վասն զի տակաւին ձեռնամուխս չէր իմ լեալ գործոյ տեղւոյն։ Հաւանեալ առ այն՝ յաւելու թէ, բան շատ ունի ի Կալկաթա և հանդերձեալ է գալ որպէս ելն. այլ թէ ո՞ր էր բանն՝ չտեսաք, միայն զդրամս նուիրակութեան յանաչխատ բուռն ամփոփեալ եւ ելեալ ի Զիչրայ խաւարաւ եւ մթաւ՝ գրեաց առ Ա.ռաջնորդն աղճատանս թՀընամանայ բաղում, ոչ միայն ընդդէմ հասարակութեան տեղւոյս ձեր, այլեւ իմ՝ անասելի զրպարտանօք. եւ զարձեալ անտի յետս այսր, անամօթաբար հաւաքեաց զրանի մի հարիւր ռուփիա, իբր իրաւունս անգործունեայ եւ գրկեալ դաւազանապտղոյն, և ամենայն շընորհակալութեամբ եւ բաւարարութեամբ ի մէնջ մեկնեալ գնաց ի Մինկարիս, եւ անտի՝ ի Ջաւա։ Մոռացայ ասել եւ զայս. թէ խմով միջնորդութեամբ եւ խնդրարուածով առ նախասացեալ Ա.ղայ Յովհանջանն երկու հազար ռուփիա եւս ի նմանէ չահեալ, եւ ի տրիտուր ամենայն աչխատանաց սիրոյ զոմանս ի մերոյ աստի յորդորեալ վասն արտաքսելոյ զիս յեկեղեցւոյ եւ փոխանորդելոյ զինքն ի տեղի, որպէս օրինակ գրոյն առ Ա.ռաջ-

նորդն խոստովանի, որ հրաշիւք ինն ի Ջուղայոյ աստ ի ձեռն իմ հասեալ, կայ ահա ձեր առաջի, մանաւանդ եւ օրինակ գրութեան իմոյ առ նա, զոր եթէ վասն երկարութեան ոչ ճանձրասջիք ընթեռնուլ, հաւատամ, ի սոսկալի գործոց նոցին եւ ապերախտութեանց հերք ձեր քստմնեալ՝ սոսափեսցին եւ ոսկերք ձեր։

Ի Ջավուց անտի գրէ դարձեալ գիր մի այսր առ Պարոն Ստեփաննոս Ս. Սերհանեան, որով եւ զկնի դառնադառն ածականս ինձ նուիրելոյ, յարէ թէ. « ի փոքու չարաչար գլորմամբ կորուսանելոյդ գիս, որպէս ահա իսկ ձեռագիրն և արդիւնաւորութիւն չարանախանձ դուշակմանն. զի զոր ասացն՝ արար եւ իսկ։ Եւ զկնի այսց ամենից, իրրեւ հարազատ բարեկամ իմ, գրութեամբն դուշակէ, զի եթէ ասէ. « ի միջոցիս կերպարանափոխ եւ ընդդէմ սովորականի գրութիւն ինչ ի Սրբազանէն ընթեռնուցուս, մի ընդոստնուցուս ի նեղսրտութիւն. զի յետ թողլոյ իմ զՋուղայ, ուանք յատենի Ս. առաջնորդին յօդեալ թշնամանս բազում ընդդէմ քո, եւ գուցէ Ս.առաջնորդն կամեցեալ լիցի զքեզ փորձել. սպասիր մինչ ես հասանեմ ի Ջուղայ, բոլորն ուղղելոցեմ. բայց դու զտարեկան վերդուն 100 ռուսիի հանգուցեալ Տէր Յովհաննէս Գալստանի եւ 55 ռուսիի Զիչրու Տէր Գաբրիէլ Տէր Մէքայէլի քեզն տուր եւ տուր զոր ասեմ, տուր, զի գիտեմ ես. բանումն բան կայ. վասն որոյ, որպէս բարեկամ, խորհրդատրեմ քեզ տալ, եւ այլն։ » Ս.ո որ չուարեալ ընդ անծանօթ բանս նենգաւորին, եւ հաւատալով նմա, որպէս բարեկամ, հատուցի և զտուգանքն 155 ռուսիի, և մինչ զկնի դրութիւնքն նորին ի ձեռս

իմ մտին . ապա իմացայ « բանումն բան լինելն » և զպատ-
ճառ Սրբազանին իրօք ընդ իս կերպարանափոխ վարե-
լոյն օտարոտի գրութեամբ . ուստի հաւաքեալ դիրաւունս
բողոքաւոր առ Աղաջնորդն եղէ որպէս զի ըստ իրա-
ւանց դատ արասցէ ի մէջ իմ և նորա չիմանալով թէ ինքն
անդէն խոնարհեալ կայ ի հրաման նորին . քանզի յա-
ռաջնում նուազի հրաժարեալ ի դատողութենէ ստի-
պեայ զիս զդէ անյիշաչար . և մինչ յերկրորդումն տե-
սեալ զիսոր խոցուած սրտիս՝ կերդ իմն մեղայականաւ ,
զոգջիք գիտաւորութեամբ զիս ի բուն հրաւիրեալ , մինչ
թակարդէին ինձ չարիս այժմեան արտաքոյ և այլ և
այլ միջոցաւ հնարից զիս ի կորուստ մատնել , յորոց մին՝
զնչանաւորն ասեմ զհրաման և հանգամանս պսակի հան-
գուցեալ առնակնոջն , որոյ ի չլսելս ոխայեալ՝ վրէժ
նորին առնուն այժմ :

Զիք որ ի Կալկաթա ի հասարակութեան , որ ոչ վկա-
յեսցէ իրաւանցս , որպէս գիտէ և Պատուելութիւն ձեր
թէ քանի ճախորդ համբաւ զԱղաջնորդէն անմիջապէս
խաղացեալ աստ , և բանիցս նեղսրտեալ հասարակու-
թեան՝ հանդերձեալ էին գրել և բողոքել առ Սրբազնա-
սուրբ Կաթուղիկոսն . և իմ աղգի աղգի համոզմամբ
զնոսա յետս ի խորհրդոյ դարձուցեալ , որպէս վեր-
ջինն ի 1858 ամի ի հասարակութեան ձեր ժողովի , (որ-
պէս ի վեր ասացաւ ) , ուր ներումն և երկայնամտու-
թիւն ձեր պաղատելով երաշխաւոր ձեզ եղէ և խոստա-
ցայ գրել Սրբազանին յուշ զարժանեացն առնելով , և
տալ կարգադրութեամբ իւիր անհետացուցանել զաղա-
զակս ոմանց յուսալով թէ Նորին Սրբազնութիւնն ըստ

հոգւոյ գրչիս, ունէր զսէր և զիրաւունս յարդարել, և ոչ ոմն ի սրտի արմատացուցանել, մինչ յունիին պատեհութիւն ինչ վճարել անիրաւարար, որչափ ի ժամուս, յորում ոչ միայն երկնընդդէմ հրամանաւն, իբրև միահեծան Տէր իմ և Աստուած, ի կրօնս քահանայական. այլ և յանձն իմ և հոգի ներգործել աշխատասիրի. և առ ժամս չտեսանի որ դիմադրող անիրաւութեանցն առիս, ի տրիտուր յոգնաշխատ վաստակոցս և լինելոցս աստ և ամենայն ուրեք ախոյեան ինքեան, որպէս գիտէք Պատուելիքդ, որ մինչ յերէկ և յեռանդն ընդ թշնամիս նորա թշնամի եղեալ և բաղում վիշտս ի սակս նորին ի ծոց իմ ընկալեալ, որպէս արդի հակառակութեան պատճառն ոմանց ընդ իս է ի սոյն առթէ, թէ հի՞մ պաշտպանեցի զնա ի հալածմանէ. բայց թող լիցի այնպէս ինձ պարծանք և այլոց ամօթանք։

Հապա զին՞չ և զմէ՞ այսպէս այսօր զհակադարձն հարցանելի է. թող Աստուած վկայեսցէ զոր ասեմս ճշմարտապէս, զաղաղակս բաղմաց Ջուղայեցւոց, զգանգատանս իսկ ներկայ եղեալ քահանայից թեմիս, որք ի տուէ և ի գիշերի տոչորելով զիսիշնս անհանգիստ արարին զիս բանիւք, թէ առաջի Աստուծոյ պարտաւոր հայրենեացդ գտանիս չտանելով խնամ հայրենւոյն քոյ և թեսարեկ ժողովրդոյ աղգայնոց. զի Տէր Մարտիրոսն լաւեաց զՋուղայ. . . Տէր Բարսեղն . . . գնաց Ջուղայ, գնաց վանքն և կրեան ժողովուրդք յերեսաց անողորմ խրատութեանց նոցին և հարստահարութեանց։ Մանաւանդ Տէր Մարտիրոսն կալեալ զզլուխն բաղմաթիւ ժո-

զովրդոց Թաղին և ընտանեաց իւրոց ի Թիկունս իւր, և խիզախեալ ի վերայ Աղաջնորդին նուաճեցուցեալ և զնա, և երկոքումբք ախոյեանօքս ունի կործանել զՋուղայ Հայրենին ձեր, և այլն։ — Հաղորդելով և բազում ինչ զանցից տեղւոյն, որք նշանագրեալ կան ի Թղթի Տէր Բարսեղին, որպէս ահա առաջի ձեր։ Ուստի և իմ խղճահարեալ, որպէս մարդ, քահանայ և բարեկամ Ջուղայու և Աղաջնորդին իսկ, մանաւանդ և երաշխաւոր ձեր, գրեցի ի Ջուղայ առ եկեղեցական և աշխարհական անձինս ոմանս որպէս զի սիրտ ընդ սրտի, կամք ընդ կամաց և սէր ընդ սիրոյ շաղկապեալ կարդ իմն բարւոք կառավարութեան հաստատեսցեն և զԱթոռն ընդ ժողովրդեանն ազատեսցեն ի վատաբանութեանց աշխարհի և զմեզ՝ ի խղճահարութենէ կրից անբմբերելի, ամենայն ուրեք զպատիւ, զվարկ և զյարգ Աղաջնորդին պահելովանարատ, որպէս ահա զօրինակն ձեր առաջի ընթերցեալ քնեցէք և վճռեցէք թէ չար ինչ գործեալ իմ ընդդէմ նորա արժանի վրիժուն առնել կանխելոյ։

Յետ այսց ամենից մինչ լուեալ և ընթերցեալ ի հաւատարիմ գրչէ զանհնարաւորութիւն առաջարկութեանս, և ի նմին ժամու Տէր Գրիգոր Մարտիրոսեանն ի Բումբայոյ հասեալ այսր, յուսահատ ի կենաց, յուսահատ ի գլխաւորէն Եպիսկոպոսէ և յուսահատ ի խորհրդականաց Աղաջնորդին, օն անդր քան զչափն, անդունդք ժողովոց աղաղակի բացան առաջի իմ բանիւք և գրովք։ և վկայ բանիցն գրուածոց մի առ մի կոչեաց զերկոսին նորեկ քահանայս ի Ջուղայոյ՝ զՏէր Մկրտիչ

Յ. Տէր Ղուկաս և զՏէր Սեղբեստրոս Յովհաննիսեան, արդի վայելչացեալ թէմական Կալկաթու քաղաքիդ, ոչ առանձին. այլ ի ներկայութեան Պարոն Միքայէլի Նալբանդեան, առն ազգասիրի և աշխարհի քաղաքակրթի, որ եկեալն էր հրամանաւ Սրբազնասուրբ Կաթուղիկոսին ի պահանջ կալուածոցն և հրիտակին հանգուցեալ Աբգալսեհի Մարտիրոսեան առ բարեկարգութիւն Նոր Նախիջևանայ քաղաքի. որ վասն և առիթ գտեալ՝ զգրութիւն Տէր Գրիգորի գրաւոր խնդրուածով առաքեցի առ նոսա և խնդրեցի զվկայութիւն իւրեանց առ նա, որն որ բանիւ բերանոյ խօսէին և վկայէին յորժամ նոցն քահանայն ճառէր։ Այո՛, ընդ այս ևս հաւատարիմ եղեալ խոստովանեցան զհաւաստեայ. և որով զիս պարտաւորեցին՝ մանաւանդ և ստիպէցին առաքել զգրութիւնսն բոլոր յԷջմիածին առ ընդհանուր Վեհապետն Հոգևոր և աղերսել ի Նմանէ զայցելութիւն վասն Ջուղայուն։ Ահա՛ օրինակն ձեր առաջի, բննեցէ՛ք. աղաչեմ բնել։

Եւ մինչ զայս յանգաւորեալ, ի միոջէ յանդամոց ընտրեալս անձանց Ջուղայու հոգևորական դասու հասեալ առ իս ցաւակցական գրութիւն մի յայտնելով զանհնարաւորութիւն խնդրոյն միջոցաւն այնուիկ. զի ասէ. մինչ բերկրեալ ընդ առաջադրութիւն իմ և բաջալերեալ ջանային կազմել ժողով Ազգային և ըստ խնդրանացս առնել բարեկարգութիւն ինչ, բանսարկուն սատանայ, որ հակառակն է ամենից բարեաց, սողոսկեալ ի հոգի ուրուք՝ տայ խաւնակել զամենայն, իմա՛ Մկրտիչ ոմն, իբր խորհրդական Առաջնորդին, ըստ պարսիա-

կան հնարից, հայհոյեալ, անպատուեալ եւ ահայուցեալ զժողով նոցին, յետս կասեցուցանէ. եւ ինքն Աստուածնորդն ծանրացաւսումն յիս եղեալ հրապուրմամբ անմարդասէր խորհրդականացն՝ յարուցեալ ի վրէժխնդրութիւն և զրեալ զիր մի ի հասարակութիւն բազարիս եւ ամբոխեալ զողջախոհ միտս նոցին. որ արդէն հասեալ այսր՝ զբազումս ապստամբեցոյց ընդդէմ իմ. եւ թէ ի ձեռն նոցա ինչ ինչ կրեցի եւ կրեմ, քաջ յայտնի է ձեզ, թող թէ անմոռանչ տարայ եւ տանեմ խնդրելով ի Տեառնէ դարձ եւ զղջումն նոցա։

Յիշեալ գրութիւնն գրի ի Ջուղայոյ մեծաւ երկիւղածութեամբ, և ի ձեռն մահմետական վաճառականաց առաքի ի Բումբայի. և անտի ի շնորհս Պարոն Յարութիւն Արգարիդ յանձն լինի ինձ ասա, և ծանուցանէ թէ ահա սկիզբն էր երկանց. եւ անճար պարտաւորութեամբ ստիպէ զիս (որպէս եւ ի ժամուս) համախմբել զժողով հասարակութեան եւ յանդիման ձեր բերել զամենայն անցս անցեալ, եւ զգրութիւնս ոմանց ի սոյն սակի, որպէս արարեալ իրաք յատենի ձերում ի վայրկենին չխօսեցայ ինչ քան զոր ասացի. «մի զարմացիր Պատուելութիւն Ձեր թէ նուաստութիւն իմ, որ մինչ յերէկն եւ յեռանդն պաշտպան եւ ջատագով Աստուածնորդին եւ երրեմնական երաշխաւոր ձեր, այսօր զներ-հակն ազազակէ ի լսելիս ձեր, թէ զամենն ճիգն ջանից ի կիր արկի առ ի կարգաւորել զԱթոռն, անարատ պահել զպատիս Աստուածնորդին, ազատեալ զմերազնեայս Ջուղայոյ ի հարստահարութենէ անտի ոմանց և զձերն սիրտ պուհել անվրդով. այլ որոյ կատարածն եւ օգուտն

չտեսանեմ ինչ՝ քան զսոսկալիս ինձ ի վնաս. ուստի պարտաւորիմ յետս կոչել ի ձէնջ զերաշխաւորութիւն իմ և ասել. ահա դուք գիտէք և Առաջնորդն ձեր. թողէք զիս զերծ մնալ յապագայ պահանջէն ձեր և յիրաւացի յանդիմանութեանցն, թէ մինչ քանիցս հանդերձեցաք բողոքել Յէջմիածին առ Սրբազնասուրբ Կաթուղիկոսն և տալ զԱռաջնորդն յետս կոչել անտի, դու խոչընդակն եղեալ մեզ՝ խափան ետուր, և այլն. ահա ես ի պարզոյ իմանամ թէ մեղուցեալեմ։

Ըստ ծայրագոյն մասին սիրտ ժողովրդոյն որ խոցեալն էր նախկին գրութեամբն Նորին Առաջնորդին, և բազմայ ձերոյ իսկ գրութեամբ և աղաղակաւք ընտանեաց ի Ջուղայոյ, մանաւանդ և գիտէք թէ Նորին Ջուղայեցիք զիարդ վկայեցին ձեր ժողովոյ առաջի, և թէ այք ոմանք եղեն բարձրաձայն աղաղակողք յատենին, թէ կարելի՞ն գրութեամբ և վկայութեամբ ընտանեացն իւրեանց Ջուղայոյ մի առ մի հաստատել զնիւթ բողոքագրոյ Նորին Տէր Գրիգորի, և առաւել քան զարժանն ինչ ինչ անվայելուչս, որոց կրկնելն աստէն անպատշաճ. ուստի եթէ ժողովն ձեր վճռահատեաց գրել և բողոքել Յէջմիածին՝ իւրոյ եղեն կամք. և եթէ ոմանք ի նոսին ժամու ընդ հակառակն շարժեալ յառանձին կիրս, ոչ ի պաշտպանել զիրաւունս Աղգին, ոչ ի պահպանել զպատիւ Առաջնորդին և ոչ ի սրտացաւ ինձ լինել. այլ ըստ հին աւուրց և բնական սովորութեանց, զիւրեանց կամս և հաճոյս հակառակ արդարութեան և ընկերոյց յառաջ մղել, այն ևս իւրեանց եղեն կամք. և մեք ոչ այս և ոչ այն կողմն ծանրացուցանել կամ թեթևացուցանել կա-

մեցաք. ոչ փափագ էր ինձ տեսանել զպատահումն սերկեւանս աւուր, որչափ և իրօք հոգւով ցաւիմ եւ տրտմիմ, մանաւանդ ի վնասն անիրաւի, որ յիս տեղաց եւ տեղաց գործակցութեամբ և չնորհիւ միաբան եղբարցս, որք մինչ պատրաստեալէին զանձինս իւրեանց ի վկայել բազում ինչ զԱ.ռաջնորդէն եւ զիսորհրդականացս նորին, տեսեալ զանհամաձայնութիւն ժողովրդոյն՝ յերկիւղէ լռեալ եղեն։ Դէմք ժողովրդոյն յայլ ինն փոխեցաւ, անդամոց պատուաւորաց սիրտք վշտացան, եւ ասպարէզ խռովութեան բացաւ. այր իւրաքանչիւր՝ ընդ ընկերի, որդի՝ ընդ հօր, հայր՝ ընդ որդւոյ, բարեկամ՝ ընդ բարեկամի եւ ընտանի՝ ընդ ընտանւոյ ի վէգ ելին. հերձուածք ի նոսա երևեցան եւ ի մեզ տարաձեցան ցայս վայր, որ չէ գործ քրիստոնէավայել կամ արժանաւորաց անձանց. զի ամենայն ընկերութիւն (իմա տուն) բաժանեալ յանձն՝ կործանի. և թէ ընդ այս զի՞նչ յանցանք իմ. աղաչեմ որոշել եթէ տակաւին չէ իսպառ անհետացեալ իրաւադատութիւն քաղաքիս։

Ա.րդ՝ խօսեցայց և զմիաբան եղբարցս արդի վիճակաւորաց տեղւոյս, որք յետ ուսայնանկելոյ զամենայն՝ ի սնոտի պատժոյ և յերկիւղէ Ա.ռաջնորդին զլացեալ գիսիրձս, զիրաւունս, զգրաւոր խոստովանութիւնս (1) և

1. Թուղթ բացցին ականչք խրից ի ըսդրէ քանի՛ վնասակար է եկեղեցւոյ կոչումն տգիտաց և պատահեկաց ի պատիւ քահանայութեան, որոց իրդ ի վայրիս չէ այլ ինչ քան գանձումն ոսկւոյ, յօրինումն վզնոցի, որոնումն զառ. թակաց (իմա զարդակաց), ոսկւով լաչիկ մանդիլ քաշած

զՀանապազորդական գրգիռս իւրեանց առ իս, գործեցին զներհակն, բոլոր քաւոր ընդդէմ ժողովոյ և սպառուոյ շարակի և այլ զարդարանաց ի խնդութիւն հրեշտակաց երկրի. վայ՝ քեզ ժողովուրդ ապշեալ մեռելոտի պարժանօքդ :

## Անուասիկ պատՀէնք մեր և նոցա թղթոց

Հայր՝ Սրբակրօն Տեարք Մկրտիչ Յ. Տէր Ղուկասեան և Սեղբեստրոս Յ. Ղեւոնդեան, պաշտօնակից եղբարք սիրելիք

«Զէք անտեղեակ ձախորդ և ցաւալի անցից ի ձեռն անբարեխառն կառավարութեան Ամենափրկչեան Վանաց, որ ի վաղուց հետէ, և այսր անմիշտակէս ի մեզ խոյանեան ատտ. չէք անտեղեակ ևս հայրապետական խնդ տեսօք ինչ յառաջ. զի գրաւոր բանիւք միաբանութեամբ եղէ գրելով և յորդորելով զոմանս ի քահանայից և յաշխարհականաց առ ի ունել զառաջս յընդհանուր ապահովութիւն քահանայից և ժողովրդոց տեղոյն և մերս ամենեցուն ի կողմանս այս : »

« Ապաքէն զկնի, այսօր ընկալեալ զգրաւոր թղթոյ մի ի Տէր Գրիգորէն Մարտիրոսեան նորոգ եկեղեցի ատտ, որոյ ի մասանն ոչ օտար յիմաստից կանխապէս յիմացուածոց մերոց, առաւել վշտացուցանէ զոգիս և տայ ի սրտէ. ցաւիլ ի վերայ դառն աղետից մերոց և հայրենակցացս ի Քուդայ. և մանաւանդ յայնմ իսկ գրութեան վկայս հաստատէ. զձեզ և զոմանս ի Քուդայեցւոց եկեղեցաստի Ժամանակիս. առ որ ի վերայ ընտանի գրուցաց տակաւին իրաւունս ընտրեմ առաքել ձեզ զայն Ժանուցագիր ի վերժանումն և յորդումն հաստատեաց.

ձեր եղեն և ի լոյս հանին զսպասաւորս բանիս ճշմարտութեան ի խորին տգիտութեան իւրեանց, իբր թէ զրուցատ որում և ձեր եկաւորութիւն ի քաղաքս և եղն ի Ջուղայոյ չէ երկար ժամանակ։»

«Ուստի նպատակաւս յանդիմանեմ ձեր և խղճի ձերոյ կացուցանեմ զանաւոր անունն Աստուծոյ և զարդարութիւնն անեղ դատաստանի նորա, որպէս զի ի վերայ քահանայական պատուոյ և խղճի ձերոյ զճշմարիտն առանց աչառութեան և երկիւղի ի նիրքոյ գրութեանս դրոշմել երէ ուղիղ իցեն ի մատաղ գրութեանն կամ ոչ, սակս ունելոյ իմ հոգ, զատ կարդորին յապաւել զանիրաւութիւնսն զի մի թոյլտութեամբ կամ բմբութեամբ առիթ եղէց կորստեան հայրենեաց մերոյ և սիրելեաց, և այլն։»

Պատասխանի· Սրբակրօն Տէր

«Ի պատասխանի այսօրեայ գրութեանդ ցաւիմք խստագոյն վասն ի պանդխտութեան և ի դժուարութեան մերում. այլ և ի դատեմութեան ժամանակիս, որ արտաքոյ տրտմակաւոր չտայ մեզ զգալ ուրախական ինչ. որ վասն չիք մեր՝ քան դիմումն յողորմութիւն Տեառն։ — Հասու եղեալ գրութեան Տէր Գրիգորի և երկայնի սրոյն. զոր յանդիմանեն առնեսք մեզ անաւոր անուամբն Աստուծոյ և պարտաւորեսս մեզ խոստովանելոյ զուղղութենէ կամ զանուղղութենէ նորին· և որով պարտաւորեսս մեզ ընդդէմ կամայ մերոյ ասելոյ է. վասն ի բանից գրութեանց անտի կարեմք ուղիղ համարիլ, զատ որում տեսեալեմք աչօք և լուեալեմք ականջօք. այլ վասն մասին՝ չեն եղանելոյ մեր եղելութեան անտի, չունիմք թէ

թիւն իւրեանց առ իս յերկիւղէ կամ նախ սպառնալեօք և ապա հմտոզական ոճով։ Հարցանելի է ի պատուհաստիս, թէև քան ձեզ լուսալիք ի բերանոց այլոց, և այլն։»

(ձեռ.) Տէր Մկրտիչ Ց. Տէր Ղուկասեան
Տէր Սեղբեստրոս Ց. Ղեռնդեան
Կայսերաբ. 1861. Օգոստ. 8։

Հայց. Սրբակրօն Տեառք Մկրտիչ Ց. Տէր Ղուկասեան և Սեղբեստրոս Յովհաննիսեան, միաբան եղբարք

«Քրիստոս այս շաբաթու երկու գրութիւնս գաղտիարեալ՝ ի տեսութիւն ձեր մատուցի խնդրելով զի շնորհ արարեալ ընդ նախագաղտիարաց հաճեսջիք, և երէ ուղիղ իցեն՝ գրել ի վերայ զվկայութիւն ձեր. զկնիք որոյ տեսանեմ զհրաժարումն ձեր յայնմանէ խնդրոյ. ուստի պարտաւորիմ գրութեամբս հարցանել զպատճառս հրաժարման ձերոյ և խնդրել զի ի ներքոյ գրութեանս հաճաւորեալիք ինձ զիրաւունս ձեր, զոր կատարելով ձեր շնորհապարտ առնիցէք զիս։»

Մնամ, որպէս միշտ, ձեզ հաւատարիմ
(ձեռ.) Տէր Յովհաննէս Թաչիեան, Թաչակիր Աւագ երէց
ի Կայսերաբ. 1861. Դեկտեմբ. 4

Պատասխանի. Արժանապատիւ Սրբակրօն Հայր

«Առաջին գրութեանդ պատասխանն թերան առ թերան յերէկի տուաք և Սրբութեան ձերում բաւարարեցաք. իսկ երկրորդին այսօր տեսեալ, որպէս թէ, ընդ գաղտիարին

լեայն թէ զի՞է զի սպառնալիք չկարացին ներգործել և և տալ առնել ընդդէմ կամաց, զոր ինչ համոզանք կամ փոխարկեալ ոմխօսից զործել հաճեցոյց։ Այլ զալա-փար և ապացոյց պարզ ստուգութեան, մինչ ահաւոր երդումն յառաջ արկեալ ի նոսա յանուն Տեառն, սար-համանատ օրինակեալ, որպէս և հրաման Սրբութեանդ էր, ձեռագրեցաք. վասն որոյ, յուսամք, սուրբ բաւարարեսցիք։»

Մնամք որպէս միշտ Սրբութեան ձերում խոնարհ ծառայք

(ձեռ.) Տէր Մկրտիչ Յ. Տէր Դաւիթեան

ի նոյնի։ Տէր Սեղբատրոս Յովհաննիսեան

Հարց. Սիրելիք

«Խնդրեմ դարձեալ զյիշատակեալն ձեր յառաջին էջ թղթոյս թերեան առ յերեան պատասխանին ձեր հանանօտ գրութեամբ յայտնել ի ներքոյ գրուածոյս, առ որ շնորհակալ եղէց զձենէ։»

(ձեռագր. նոյն) Մնամ Տէր Յովհաննէս Խաչիկեան

Պատասխ. Արժանապատիւ Հայր

«Բերեալ ասացեալ մեր բանիք այս են. զի որովհետև շարադրեալ ի Վանաց զիսոստովանագիրս առեալէ ի մէնէ Սրբազան Աստուծոյն և կարկանեալէ մեզ նզովիւք վասն չիսօսելոյ ինչ. վասն որոյ մեր խիղճն թոյլ չտայ մեզ։»

Մնամք խոն. ծառայք Տէր Մկրտիչ Յ. Տէր Դաւիթեան

Տէր Սեղբատրոս Յովհաննիսեան

ասիելի էր բան զամենայն. և լինէր նոցա արդարանալ ի կեղծիան եթէ փալուան Յօսէն դառուղայն կամ սպառնալիք անհատից յանդիման լինէին, և ոչ ի տեղիս ազատութեան, ուր ամենայն ոք անբռնադատ սրտիւ իւրովի կամօք։ Եւ ոչ այսչափ միայն՝ այլև մինչ փոխանակ խաղաղասիրութեան ընդ հակառակողս միացեալ ի ծածկել զգարշելիս իւրեանց, ամենայն ուրեք զներհակն խօսեցան, զանդրադարձն ասացին, և գրեցին Առաջնորդին զոր ինչ և մրճոտեալ սիրտ իւրեանց և խիղճ թոյլ ետուն. և այժմ, որպէս քահանայ բնական, վայելչանան ի յաղթանակութեան իւրեանց. սակայն յօրն աներեկի, յատենին ահեղ չկարեն յուրատ լինել, թէ սիրտ և խիղճ արդի իւրեանց խորհրդով նոյն էին, որպէս յառաջն. և թէ զոր արարին և առնեն, ասեն, լսեն, տնօրինեն և գործեն յերկիւղէ Առաջնորդին, ուզիղ են ըստ նիւթոցն. և թէ ի տուէ և ի գիշերի, թէ յեկեղեցիս և թէ արտաքս չէ՞ն զիս բորբոքեալ, տիպեալ, երդմնեցուցեալ (միջոցաւ խակ, զոր չլինի ասել աստ), խիղճս տուչորեալ և այլ բանիւք բազմօք զիս պարտաւորեալ, և ըստ Պետրոսի զանձինս դնել ի վերայ Հաբեանոյն. նա և, եթէ զէպ լինիցի, նախասացեալ Պարոն Միքայէլ Նալբանդին հարցանել նորին Սուրբ Օծելութեան Կաթուղիկոսին, կա՞րէ նա ընդդէմ խղճին դրժել, զոր ինչ միաձայն յերից քահանայիցն, այսինքն ի Տէր Գրիգորէ, ի Տէր Մկրտչէ և ի Տէր Սեղբեստրոսէ լուեալէ ականջօք յորժամ մին ճառէր և երկուքն համաձայն վկայէին։ Օ՛չ իմաստութեանն հանճարոյ խղճի անպատկառ ի բնութենէ, թէ որ զամն 18 ի գիրկս իւր ընկա-

լեալ զբաղումս ի քահանայից, որպէս և զնոյն ինքն Տէր Մկրտիչն իբրև զամս 6 զառաջինն, եւ մի՛ զկնի, ամենեցուն արտասուօք բաժանեալ յիւրմէ, թարց ցաւ կամ արատ ինչ ունէր տպաւորելոյ, զի՞արդ հաւատալի ինձանէ սուտակասպաս եւ թշնամանաց բանս մեր։

Եւ մի՞թէ առաջի Աստուծոյ ուրանալ կարող են ըզ հարցս յետ ժողովոյ եւ յարուցման բողոքագրոյն յամանց եւ ստորագրութեան իւրեանց ի նմին, թէ զի՞արարիք այսպէս. եւ եթէ այսպէս առնելն տմարդօրէն կարող էիք, զի՞ասա աղաղակ ձեր առաջին առ խս, եւ զի՞նչ գրաւոր խոստովանութիւն ձեր եւ այլն, ի պատասխանելն թէ. «զի՞նչ արարից, Հայր՝ յորժամ տարաբախտասպէս չտեսանի համակրութիւն ի ժողովուրդս, զի եթէ այնպէս իցէր, որպէս մեք ակն ունէաք, բազում ինչ ունէաք յայտնել. եւ ո՛վ գիտէ. միասայլ՞ Աստաջնորդն անդ, եւ ի վերադառնալն մեր աստի, զմորթ մեր ընդ գլխով ի տիկ հանելոցէ. զի ձերն բան յատուկ իմն է, եւ կապեալ չէր ընդ Ջուղայուն, եւ այլն։» Այս բանք են նորին Տէր Մկրտչի եւ յաւել եւս բազում անդամ երդմամբ ասացեալ թէ արդի դրութիւնն Ջուղայու եւ խըստութիւն մերոց վանականացն չատ տառապեալ եւ ցաւալի է բան ի ժամանակի Հաճի Հաչէմ խանին։

Կարէ՞ արդեօք մոռանալ, ուրանալ և արդարանալ Տէր Սեղբեստրոս ի բազում խօսս իւր ընդ խս (յետ զինքն ի լանջս սիրոյ և որդութեան ինձ գրելոյ թէ. քոյ եմ մկրտեալ որդի շնորհօք Աւազանին սրբոյ, քոյ եմ ըծաբարձ մշակ եկեղեցւոյ թաղի և քև վառաւորիլ յուսամ), թէ կառավարութիւն վանացն ողբալի է յոյժ, վանքն

եղեալէ մի Երանոց չամչի և տուն գինեվաճառի. զի կապեալ զնեռս և զոտս մերաղնէից գինեվաճառաց (յորոց մի էր զէթ առաջին հայր իւր Յովհաննէս), զրնդուսն Յովսէն արիկայ՝ այր զօրաւոր դառուղայ անուամբ յառաջ բերեալ ի Ջուղայ և սակ արկեալ ընդ նմա, տիւ և գիշեր վաճառեն գինի և օղի. զնեն զչամիչ արժանագին, վաճառեն ի ժողովուրդն թանկագին։ Եւ մինչ նորայորինեն օղի, դառուղին տան կիսագին։ Ա ցաւոյս թէ կարեմ բացատրել ոստ զիրաւունս, թէ ինչ ինչ անվայելչութեամբ մուծեալեն նորայականջս իմ. և որովք տոչորեալ զսիրտս և զանձս։

Այրդ զայս ամենայն թողլով անելեւոյթ դատաստանին Աստուծոյ ասեմ զվրէժխնդիր գրութենէ Աւաջնորդին, որ հնարեալն էր ինձ թակարդ անզերծանելի և առիթ արկանելելոյ ատելութիւն ի մէջ իմ և պատուելի ժողովրդոյդ. և որով բաժանել զնոսա ի սիրոյ և ի թիկանց օգնականութենէ իմմէ. և նուազեցուցանելով զկարողութիւն իմոյ արտօնութեան, ապա զնալ անվերհեր ըստ հաճոյիցն (1), որպէս իրօք զվորէալն իւրեանց արդիւնաւորեցին նախ առաջնումն և ապա՝ երկրորդաւս քաջագէտ գոլով տեղւոյս ընարոյս ունակութեանց թէ շիր համաձայնութիւն կամ համակրութիւն ի հասարակութեան։ Այս, շնորհիւ Տեառն մարթացայ պատասխանել վերոյ վրէժխնդիր գրութեանն, եթէ ոչ ճոռոմարանութեամբ կամ լծիկականաւ, ըստ նպատակի հանճարոյ խորհրդականացն. այլ հղօր վաստիւք իրա-

1. Լրատարարութիւն Ջուղայու Վանացի կրկ զերկիւղ մի միայն յերևաց Հնդկաստանի, մանաւանդ՝ Կալկաթու։

ւանցս, որովք մի առ մի ցուցանելով զանիրաւադատու-
թիւն, զանուղղութիւն և զանամոթելի նախանձ և ոխա-
կալութիւն խնամոյ գրութեանն. այլ զանազանութիւն
երկոցունցն այս եղև, որ նորուն անիրաւութիւնն աշ-
խարհալուր հռչակեցաւ ընդդէմ իմ, և ինն իրաւաչատ
պատասխանին անոյշատ՝ յամենից, միայն ի գիտութիւն
Աստուծոյ և Սուրբ Օծելութեան Կաթուղիկոսին բա-
ցաւ. բանզի յետ որոյ մարթի էր ինձ տպագրութեամբ
զերկոսեանն ի միասին ցրուել և տարածել ամենայն
ուրեք ի ծանօթութիւն. սակայն օրէնք իրաւանց հարցի
Նորին Վեհափառութեան Հայրապետին զաւ յինէն
թէ մինչ զդանդատանս բոց առ իս ուղղեցեր, հարկ էր
և քեզ սպասել դատակնռոյն, և եթէ անրաւարար՝ ապա
առնել և նշանակել զոր ինչ կամք էր, և այլն, թոյլ չետ-
ուստի զսպելով ցայս վայր սպասեմ տակաւին Նորին
Քահանայապետական ընդհանուր վճռոյն։

Այսպէս ի մէջ այսպիսի վշտաց տարտնապեալ, և
մինչ զմիոյն դարման ոչ գտեալ տակաւին, լսեմ զայլ
անհնարին և սոսկալին հասեալ ի վերոյ՝ երկրորդական
գրութիւն Նորին Առաջնորդին. զի եթէ առաջնումն
զտոս, զձեռս եւ զոտսիս կալուկապեալ տոչորեաց,
երկրորդաւս միանգամայն դահճորէն զգոգիս եւ զմարմի-
նոս մեռուցանել նկրտի, որպէս ասէրդ իսկ թէ ի լուր համ-
բաւոյ ժողովոյն տեղւոյս Նորին Սրբազնութիւնն առանց
ժուժկալութեան ասելոյ իսկ զչանդամանս անցիցն,
ծանրացաստումն եղեալ՝ գրութիւն իմն սոսկալի արձա-
կեալ ունի այսր միանդամայն ընդդէմ իրաւանց եւ ար-
դարութեան, որպէս զի, եթէ ոչ թողեալ զբաղաքս

ելանիցեմ ի Զուղայ, (իրրեւ կարգալոյծ) չկարեմ կա-
տարել զիսորհուրդս եկեղեցւոյ, եւ այն։ Այդ խնդրեմ
ի ձէնջ ընել զրանի մի իրաւունս. նախ՝ թէ արժա՞ն էր
նմա առնել այնպէս, եւ կամ, ինձ կրե՞լ զպատիժ ա-
նիրաւին. զի եթէ ինքն Առաջնորդն՝ անմեղ եւ միա-
միտ յինքեանէ, չպիտէր շփոթիլ կամ իրրեւ վեհերոտ,
ինքնամատն լինիլ. քանզի զանգատն տարածեցաւ ի
Բարձրագոյն Աթոռն Հոգեւոր Իրաւարանին, ուր հար-
կաւ բնին ամենայն մասունք իրաւանց, եւ ապա ըստ
արժանւոյն, արտադրի վճիռ. զի՞նչ ցաւ և զի՞նչ առիթ
իւրոյ ինքեան, ըստ օրինի տանն Պարսից յառաջել ան-
պատճառ եւ անբնին ի տուժել զանձն արդարոյ։ Ո՞չ
ապաքէն հարկ լինէր նմա սպասել մինչ առնոյր զիրա-
ւունս իւր ուստի հարկն էր. և ապա եթէ կարէր ըստ
օրինի առնել, զոր ասի արարեալ, քան գրգռեալ ի կրից
և ի հրապուրանաց անմարդասէր և խռովայոյզ խորհրդ-
գականաց՝ անարգելն անպատուել, եւ ներումն մաղթելով
ասացից, նախատինս յաւէտ ի պատկեր իւր արձակել։
Քանզի եթէ նուաստութիւն իմ փոխանորդ և պատկեր
իւր հաստատեալ ի տեղիս՝ զէթ պարտն էր հաւատացեալ
պատուոյն իւրոյ խնայել, եւ կամ նախ զղիմսյլսկն
պատկերի յինէն բառնալ եւ ապա զործադրել զայն
խստութիւն արժանի մեղադրանաց աշխարհի։ Ա՛հա
տեսէ՛ք զնախանձուն զորութիւն՝ քանի՞ չար եւ դառն,
որ ոչ յաջ և ոչ յահեակ թողու նկատել եւ զնասն նախ
անձին տայ ներգործել։

Տինա՝ որպէս Արքազան Առաջնորդն յոչ ինչ ժամա-
նակ կարէ իրաւամբ հաստատել թէ մեղուցեալ իցեմ

ի պաշտօնի քահանայութեան կամ վրիպեալ ինչ ընդ-
դէմ օրինաց և կանոնի Հայաստանեայց Սրբոյ եկեղե-
ցւոյ, չկարէ և ոչ ինչ եղանակաւ ի գործ վարել զնտա-
ցածին օրէնս հրամանի իւրոյ արդի. քանզի չեմ ես
յանցաւոր ի պարտիս կրօնի և ոչ գործեալեմ ինչ ներհակ
պատուոյ և աստիճանի Եպիսկոպոսութեանն. այլ եթէ
կարծէ զարտաքին գործոց պահանջ ինչ առնելն յանցանք
իմն է, թող իցէ այնպէս : բայց իմս խոնարհ դիտողու-
թիւն այն է թէ ի յետին յանհատից որ կարէ և ունի իրա-
ւունս պահանջելոյ յո՛ և իցէ աստիճանաւորաց եկեղե-
ցւոյ և յանդիմանելոյ նմա զթերութիւնն. և մանաւանդ
օրէնք եկեղեցւոյ ի դէպս այսոցիկ անցիկ և կամ իսկ
արժանաւորաց պատժոյ, չէ ձեւոմն, զոր Սրբազանն
ի կիր արկեալ ունի. այլ յանցաւոր ոք սարտի նախ եր-
կար և նուրբ քննողութեամբ դատել Հոգևոր Աւտենիս.
երկրորդ՝ ի ձեռն խոստովանահօր ստուգել զներքին
գաղանիս բնութեան. որոյ իրաւունք բռնադատական
են. և այս դնել ըստ յանցանացն ի վերայ զպատիժ ա-
պաշխարանաց, թէ ծանր և թէ մեղմ — այն է առաջ-
մանակեայ ճնշանք հոգւոյ և մարմնոյ, տառապանք դան-
նադոյն կրից, հոգևոր տուգանք, և այլն, զոր ինչ խրն-
դիր իրաւանցն օրինադրէ : Յետ որոյ եթէ պատժ ապար-
տն զղջմամբ յանձն էառ և ապաշաւեաց զմեղանս իւր,
ազատեցաւ ըստ մեծոյ և հրամանի Աւետարանին Քրիս-
տոսի, ըստ այնմ. « Եթէ մեղիցէ քեզ եղբայր քոյ, յան-
դիմանեա՛ զնա, յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուի-
ցէ քեզ՝ շահեցար զեղբայր քոյ : » — Իսկ եթէ ոչ՝ առաքել-
ա՛ն նա զարս հաւատարիմս, իմա՛ խոստովանահարս ի քա-

բողելը համոզել և խրատել զնա ի դարձ եւ յուղղութիւն այն է. «ապա եթէ ոչ լուիցէ քեզ՝ ա՛ռ ընդ քեզ միւս եւս կամ երկուս. զի ի բերանոյ երկուց և երից հաստատեսցի ամենայն բան»։ Եւ եթէ սովիմբ մեղուցեալն ի յանառութեան իւրում անզեղջ մնասցէ, յայտնեա՛ անդամակցաց և ժողովրդոյ ի զգուշացուցանել զնա ի դարձ եւ յապաշաւանս սրտի մտօք, այն է. «իսկ եթէ նոցա ոչ լուիցէ՝ ասասցէ՛ եկեղեցւոյ»։ Հուսկ յետոյ այսց ամենից խնամոց մարդասիրութեան, եթէ նա տակաւին յապառումն եկայ. ապա գործադրելի է ղյսամենականն, այն է. «ապա եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր»։ Մատթէ. Գլ. ԺԸ. Հատար 15. 16.

Սակայն, որպէս ամենայն ուրեք գործք, իրաւունք և արժանաւորութիւն իմ օտար յանիրաւ խորհրդոց և պատժոց, այնպէս և ձեռնարկութիւն Հօրն իրաւանցիս՝ օտար ի ճշմարտութենէ և ի ձեւոյ օրինաց։ Այլ եթէ նա, ըստ արդեան երեւութեանն, իբրև միահեծան Տէր և Գլուխ եկեղեցւոյ և Օրէնսդիր հանոյականութեան իւրում, նաև սամանական ուժոյ տէր անբնին յարձակեցեալ յիմ վերայ, որպէս յարձակեալն է արդէն, և ապա նանել զիս կամիցի, յաւել չնորհ ինչ չէ քան թէ ապանցէ մարդ զբնեալ ոք յանպատրաստ անկողնի. ուստի ընդ այս ես զգրութիւն նորին Պարսկական և Հռովմէական խստութեամբ եւ անգթութեամբ առ ոչ ինչ համարիմ. եւ ոչ խիղճիմ զգայ թէ ըստ վրիժուն յանցեալ ինչ իցեմ. սակայն ձեզ զիտակացդ ողորմ, ձեզ յայտնեմ զայս, ձեզ ապաստան առնեմ զիրաւունս. ձեզ թողում զքննութիւն սլարտեսցս, ձեզ տամ ըստ մա-

սին պատճառ կրիցս չարաչար , յորժամ դուք եղէք ոտն-
կապիչ իմ ի քաղաքի աստ : Ահա տեսէք , քնեցէք
զգրութիւնս ձեր առ իս , յայսմ սակի բողոքանացս
չասեմ անբարեխառն մտօք . այլ ամենայն բարեմտու-
թեամբ, ամենայն քրիստոնէական բարեպաշտութեամբ.
սակայն ժամանակն չարաչար թէ զձերն արգասիս շնոր-
հաց եւ թէ զիմս երկունս վաստակոց յողբալիս դարձու-
ցանել ջանայ , եւ առնելոյն՝ եթէ դուք ոչ ունիցիք
զառաջս : Ահա վաստակիմ ի ձեզ վերայեն սիրասուն զա-
ւակունք ձեր ամուսնացեալք եւ ամուսնութեան վիճակի
մերձեալք , իմ են մերտեալք եւ զաւակունք հոգւոյ . եւ
նորին իակ ստիպեն զձեզ հատանել ինձ զվարձս բաղմա-
մեայ ճգանց և սպասաւորութեան ոչ ոսկով եւ ոչ
արծաթով , (որոյ ողորմութեամբ Տեառն և ընտրիչ
ձերով անարատ եմ) . այլ իրաւամբ խղճի , պաշտպա-
նութեամբ Արքային պատուոյս , հաւատարմութեամբ
իրաւանցս , երախտագիտութեամբ վաստակոցս , եւ որ
առաւելն է ամենից , պահպանութեամբ համբաւոյ և մե-
ծի հատարման ձերոյ , որում ես հաւատացեալ՝ զամն
բաղում եղէ պաշտօնեայ : Ահա ցայս վայր եղի ձեր
առաջի զիրաւունս և զօրինակս համայնից գրութեանցս
և զհամապատասխանին. խնդրեմ քննել. զի պատրաստ
եմ ամենայն հարցի ձեր տալ ապայոյցս բաւարարական։
Ընթերցէք զօրինակս գրութեանցս առ Վեհապետն
և Սիւնհոդոսն Էջմիածնի. ընթերցէք զգրութիւնս Ա-
ռաջնորդին առ իս եւ զպատասխանին իմ առ նա , զորոց
ամենից գաղափարս եղեալ ունիմ յոտս Ողորմածու-
թեան Նորին Արքաղնասուրբ Կաթուղիկոսին . եւ օր ա-

ուր սպասեմ պատասխանույն։ Այժմ ես ի ձէնջ խնդրեմ քննել եւ վճռել. զի եթէ, որպէս մարդ մեղուցեալ ինչ իցեմ, արկէք զիս ի ծով, եւ տուք դադարումն մրրկին. այլ եթէ ոչ՝ ազատեցէք զիս ի փոթորկէն անիրաւութեան եւ ի կոհակաց փրփրեալ ծովու սրտից ոմանակալ նախանձաւորաց և բարեկամաձև թշնամեաց։ Արդարև ոչ վայրապար ասաց որ ասացն. «Աստուած՝ զու զիս յորոգայթից բարեկամաց փրկեա. ի թշնամեաց ես պատրաստ մնացիս միշտ։»

Սուտ է այն հիմունք վրէժառու գրութեան Արրազան Առաջնորդին թէ ես եղէ պատճառ վատաբանութեան Տէր Մկրտչին Տէր Կարապետեան. սուտ է զոր ասէ. խմով գրութեամբ յետս կոչեալ զնա ասոի, եւ որոյ փոխարէն առաքեալ զՀանգուցեալ Տէր Յովհաննէս. սուտ է զոր գրէ. որոյ գրարիս վայելեալ զամս 17՝ չեղէ երախտագէտ. սոյնպէս և միով ասացից. թէ խմաստք գրութեանն այլ ընդ այլով չախտաղեալ ընդդէմ ինձ գրպարտանք են և անիրաւութիւնք, մինչ անդամ լերանց անտանելի. եւ չկարեմ, իբրև 34 ամաց դանձեալ ոսկիապատ քահանայութեանս համբառն և պատիւն այսօրինակ մատնել ի կորուստ ապականութեան և անարդարար մատնել ի հող դամբանի։ Այլ, կորուսի պաշտօնիս զամուսին իմ և զզաւակունս. կորուսի զվայելչութիւն մարմնաւոր կենիս. կորուսի զտուն եւ զհայրենիս. այլ չեղեն այնորիկ ի քիսս իմ դառնագոյն՝ որչափ պարպատումն պատուոյս տայ ինձ զգալ. յորժամ մխիթարեալն էի թէ. «լաւ է անուն բարի քան զամենայն ինչ։»

«Մի կարծէք եւ զայս, սիրելիք՝ թէ զոր կրեցի ցայս վայր և կրեմ, յԱռաջնորդէն կրեմ. ոչ և ոչ բնաւ. այլ կրեմ ի վատակամ, խռովայոյզ և անմարդասէր խորհրդականաց նորին, մանաւանդ՝ ի Տէր Մարտիրոս երախտամոռէն, որ լրբև տալոյ անուս, եկն աստ և մարդացեալ յետս աստի դարձաւ, զիւր անձն ինձ որդեգրեաց. այլ զԿայենին և զԲամայն զգեցաւ պատմուճան. և մինչ վերացաւ ի պատիւ Աւագերիցութեան Ջուղայու, նախանձեցաւ յԱւագերիցութիւն իմ աստի։ Անօրինակ զինքն առնել կամեցեալ՝ շեթող չարիս ինչ թերի վասն իմ։ Ահա, ըստ մուտ և տեսին, չվնեի ուրեք խելամտել զասացեալս մինչ ոչ մտցէ ի գրութիւն մի յինէն առ նա գրեալ (յոյր ընդդէմ պարտաւորեալ նորա ի կեղծ մեղայականին). զի ամենայն ինչ մերկապարանոց նոցա։ Աւյ և յիրաւի, ոմ, խնամ և նիւթ գրութեանն այնմիկ, թէպէտ, խոստովանիմ, համանգամայն ներհակ բարոյականութեան, ունակութեան և խղճի իմոյ. սակայն զոր ես զգամ, զոր ես գիտեմ և որ ինչ ի նմանէ ինձ են վիճակեալ չարիք, չէ անարժան նմա. բայց գեռ ևս ես, որպէս մարդ յուսահատեալ և ստիպեալ ի զայրացմանէ ջերմ արեան գրեցի. սակայն տխուր եմ ի սրտէ. վասն զի նորա վնաս և վրէժն է, զոր կրեմ անուամբ Աւաջնորդին։ Բայց և այնպէս զի՞նչ զԱռաջնորդէն ասացից, որ խոնարհեալ ի բուռն կամայ և ի խնամութեան նորին, ցայս վայր չսթափեցաւ ի նախապաշարմանէն. և թէ զինչ հոտեալ մեռեալ կայ ի մէջ երկոցունցն թաղեալ, հարկաւ ի յարութիւն գայ, եթէ ոչ

այժմ՝ աշնուշտ յաւուրն յետնում։ (1)

Պաշտօն քահանային է կատարումն սրբազան խորհրդոց և մատակարարութիւն օրինաց. արդ յորժամ ես ինքնին, իբրև խոնջեալ և վաստակեալ օր, թողի, լքի զթէմական պաշտօն եկեղեցւոյ և, իբրև անգործունեայ մշակ, ուխտեցի զմնացորդ ժամանակս կենաց իմոց յառանձինս զոհել, զի՞ այլ խժդժութիւն հրամանին չունելոյ զարձակութիւն։ Ահա ձեզ վկայ ամուսնութիւն Պարոն Էմինի Մ. Էմինին. մինչ ստիպեցայ խնդրանօք կողմնականաց փեսային և հարսին կատարել զխորհուրդ և օրհնութիւն սուրբ պսակին, յանձնառու չեղէ. մինչ արդի վիճակաւոր քահանայք ոչ խնդրեցին յինէն. և մինչ կատարեցի զհանոյս նոցա, չընկալայ ինչ. և ետուս տալ զպսակահասոյին վիճակաւորաց. և ես, որպէս օտարական և բարեկամ նոցա, եղի զպսակն։ Զի՞նչ այլ ապացոյց պարզ քան զսա. այլ եթէ զէմ եղեալ նոցա հատանել զիս յանդամոց եկեղեցւոյ և ի քրիստոնէական հաւատոց, և ի միանգամ կամ երկիցս ի տարւոջ մատուցանելոյ զսուրբ պատարագ վասն մեղաց և փրկութեան հոգւոյ իմոյ, մեռուցանել զիս անհաղորդ և թաղել անարգաբար ի հանգստարանի օտարաց. թողում ձեզ և ձերոյ դալար խղճի ասել. թէ ո՞ր օրէնք և ո՞ր արդարութիւնք տեղի ընդունելութեան տան. և թէ այս գործ է Եպիսկոպոսի։ Վերջալոյս տեսանեմ զի ցաւ սրտիս և

1. Մեռեալն թաղեալ ի նոսա առ բազումս վաղ յաբուցեալ. և որոյ յուրումն ապականութեան ժիտրէ զխատեալ ուաժ բնութեան. ուստի բարեգո և է անդրէն թաղելն ի խոր մոռացութեան և անյիշատակութեան։

մորմոք բնութեանս բոպէ առ բոպէ զայրանան. երկրն-
չիմ թէ այլ յառաջանալս տիրեսցէ ինձ բանդագուշու-
թիւն. ուստի եղերելով զրանս՝ զիրաւունս ձեզ թո-
ղում և զձեզ, ըստ ձերում խղճի, ի խնամս Աստուծոյ,
և զԱռաջնորդն ընդ կուսակցացն՝ ահաւոր դատաստա-
նին Աստուծոյ։

Յարգանօք մնամ, որպէս միշտ, ձեզ բարեացա-
պարտ օրհնասան։

(ձեռ.) Խաչակիր Տէր Յովհաննէս Խաչէեան,
հրաժարեալ և վշտակիր Աւագ Քահանայ ձեր։

Ի Կալկաթա. 1862. Յուլիսի 5։

---

Յետ լսելոյ ժողովոյն զառաջարկեալսն առաջադրեաց
Պարոն Յարութիւն Կարապետեան (օրէնսգէտ) և երկ-
րորդեաց Պարոն Յ. Գ. Բաղրամն, և հաւանելի եղև
ժողովոյս զի ընտրեսցին հինգ կուսիարիք առ ի հաստ-
լինել առարկայիցն և համապատասխանեցայն իմն Սբ-
բակրօն Խաչակիր Տէր Յովհաննիսի և Սրբազան Թադ-
դէոս Աւագնորդին, և թուղթն ընդ համապատասխա-
նեցայն յանձնեսցի ընտրեալ կուսիարեցայն վասն ճիշդ
բնողութեան. և ապա միւսանգամ յառաջ բերցեն
ժողովոյս։

Աւագադրեաց Պարոն Յարութիւն Կարապետեան և
երկրորդեաց Պարոն Յովհաննէս Խ. Միրայէլեան. և
հաւանելի եղև ժողովոյս. զի հինգ պաշտօնատար (կու-
սիարիք) լիցին Պարոնայքն Պետրոս Յ. Սարգիս, Յ.

Գ. Բաղրամ, Մարտիրոս Ս. Յովհան, Պ. Յ. Պալ (օրէնագէտ) և Մարգար Գրիգոր։ Եւ ի նմին ժամու թուղթն ընդ համապատասխանեցայն յանձնեցաւ ընտրեալ պաշտօնատարացն վասն քննելոյ և կատարելոյ զհարկաւորն։

(ձեռ.) Սէթ Յ. Արգարեան, Աթոռակալ։

Միաբան ձայնիւ ժողովելոց մատուցաւ շնորհակալութիւն ժողովոյս Պարոն Աթոռակալին վասն բարւոք կառավարելոյ զԱթոռն։

---

Յետ իրրև հնգից ամսակոնաց կարի ճիշդ և մանրամասն քննողութեան կրկին ժողով հանդիսանայ այսպէս։

## Ա. Զ Դ

Յարգոյապատիւ Պարոնայք Յարութիւն Արգար, Կարապետ Յ. Վրդանէս, Յովհաննէս Աշգալ Կրսեր, Պետրոս Յ. Սարգիս, Ռաֆայէլ Զ. Շիրվօռ, Յարութիւն Կարապետ, Աղէքսանդր Յ. Արգար, Մկրտիչ Ս. Յովհան, Մարտիրոս Ս. Յովհան, Յարութիւն Գ. Արգար, Աւետիք Գալստան, Գալստան Ոսկան, Յովհաննէս Գ. Բաղրամ, Յովհաննէս Ռ. Շիրվօռ, Մարգար Գրիգոր, Գրիգոր Պ. Մելիտոս, Փ. Ա. Գէորգ եւ Յովհաննէս Խ. Միքայէլ։

Զի ըստ վերջաւորութեան ի 6 Յուլիսի ամսոյ ժողո-

վոյն կարգեալ պաշտօնատարքն քննեալ գոլով գրութեանցն անցեալ ի մէջ Սրբազան Թադէոս Աղամեանցին և Սրբակրօն Խաչատիր Տէր Յովհաննու Խաչիկեան. ուստի խնդրի ներկայութիւն Յարգելի Պարնայն ի թիւ 203. Հին Զինաբաղաբ փողոց, ի Գործատուն Պարնայր Մ. Խ. Յովակիմ և Կումպանի, ի 24ում ամսոյս յաւուր երկուշաբաթու, առաւօտեան 10 ժամուն, առ ի առաջի դնել զքննութիւնն իւրեանց և կատարել հարկաւորն։

(ձեռ.) Սէթ Յ. Արգարեան, Աթոռական

Ի Կալկաթա. 19 Նոյեմբերի 1862։

---

Ի Կալկաթա. 24 Նոյեմբերի 1862։

Ըստ վերոյ գրեալ շրջաբերական թղթոյ Պարոն Սէթ Յ. Արգարեան Աթոռականի գումարեցաւ ժողով մերազնէից յայսմ աւուր և ի ժամու ի գործատուն Պարնայր Մ. Խ. Յովակիմ և Կումպանի, ի թիւ 203. Հին Զինաբաղարի առ ի ընթեռնուլ և լսել զպատրաստեալ քննութիւնն կարգեալ պաշտօնատարացն ի ժողովի թուեալ 6 Յուլայի 1862։ Հետագայքն ներկայ էին յայսմ ժողովի։ Պարնայք Մարտիրոս Ս. Յովհան, Մարգար Գրիգոր, Աւետիք Գալստան, Մկրտիչ Ս. Յովհան, Մկրտիչ Տէր Յ. Գալստան, Մ. Խ. Յովակիմեան, Պետրոս Յ. Սարգիս, Յարութիւն Գ. Սարգար, Մ. Խ. Մալխաս, Կարապետ Մ. Շիրխօռ, Սէթ Յ. Արգար եւ Յովհաննէս Գ. Բաղրամեան։

Միասան ձայնիւ ժողովոյս և հաւանութեամբ Պարոն Սէթ Յ. Սարգարն կոչեցաւ յաթոռն և եղև Աթոռակալ։ — Ընթերցաւ ասպա Պարոն Պետրոս Յ. Սարգսեան ըստ խնդրոյ ժողովին զպատրաստեալ քննութեղթն կարգեալ սպասաւորարանն ի 6 Յուլիսի ամսոյ ժողովոյն, որք են Պարոնայք Պետրոս Յ. Սարգիս, Յ. Գ. Բաղրամ, Մարտիրոս Ս. Յովհան, Պ. Յ. Պալ (որ այժմս է հանգուցեալ) և Մարգար Գրիգորեանց բացայայտելով ի նոին զառիթ գժտութեանց ծագեալ յերկուց կողմանց, այսինքն Սրբազան Թադէոս Աղաջնորդին և Սրբակրոն Տէր Յովհաննու Խաչիկեան, մանաւանդ ի կողմանց խորհրդակցաց Սրբազան Աղաջնորդին Ջուղայու, այսպէս

«Մեք ի ներքոյ ստորագրողք վերջաւորութեամբ ժողովոյդ ի 6 Յուլիսի 1862. Պաշտօնեայք կարգեալ ի քննութիւն իրաւանց Տէր Յովհաննու Խաչիկեան, զոր առաջի սոյն ժողովոյ ընթերցաւ նա, մանրամասնապար քննեալ զամենայն և իրազեկ լեալ բոլոր հանգամանացն պատահելոցն. և խստիւ հարց ու փորձ արարեալ զրահանացն՝ խոնարհարար առաջի առնեմք անդամոց վերն յիշեալ ժողովոյ զմերս խոնարհ վաստակոյ կատարածն և վերջաւորութիւնն։»

«Նախ՝ յայտնեմք խոնարհարար, զի մտադրութեամբ ընթերցեալ զգրեցեալ իրաւունս բահանային, դտաք զայն լինիլ իրաւացի բոլոր, արդարանալի և օրինաւոր փաստիւք միանգամայն հաստատեալ։»

«Երկրորդ՝ զանազան գրաւոր վկայութիւնքն յիշատակեալք ի Քահանայէն ի յիշեալ գրութեան իւրում, մի

ըստ միոջէ կոչեցեալ տեսաք աչօք մերովք և ընթերցաք եւ զտաք գոյնս ուղիղ եւ բաւարարական ։»

«Երրորդ՝ հարկաւոր չհամարիմք մեր տեսեալ բոլոր գրաւոր վկայութեանց վերաբերելի մի առ մի խօսիլ սատ. ըստ որում չատ երկարել ունի գրութիւն մեր. միայն այնպիսի հանգամանք, որք հարկաւոր են յիշատակել ի պարզութիւն բանիցն՝ առաջի առնեմք ։»

«Չորրորդ՝ զկնի հարկաւոր, ըստ պատշաճին և կատարեալ քննութեան գտաք, զի առիթ և սկզբնապատճառ բոլոր խռովութեանց, անսիրութեանց, գժտութեանց և վիճիցն ծագելոց ի մէջ Սրբազան Թադդէոս Սրբ Եպիսկոպոսին և Տէր Յովհաննէս Խաչիկ Քահանային են անբաւարարութիւնք առաջնոյն ի Քահանայէն վասն նուիրակութեան գործոցն սատ, և ընդ նմին ծածուկ դաշնակցութիւն իմն ընդդէմ պատուոյ և պաշտօնի քահանային, որ երևի եղեալ և պատահեալ ի Վանս Սուրբ Աժենափրկչին, որ ի Ջուղայ, նախ քան զչուէն անտի Տէր Մարտիրոսի Տէր Յովակիմեան վասն գործոց նուիրակութեան ի Հնդիկս, երևելապէս (և որպէս հռչակ հարկանէր ի գալստեան Տէր Մարտիրոսին սատ յամի 1856) առարկայ ունելով զլրել չարաչար և հանել ի պաշտօնէ Աւագերիցութեան զՏէր Յովհաննէս Խաչիկն, և փոխարէն կարդել զՏէր Մարտիրոս Տէր Յովակիմն ։— Պատահումս այս գոյն լեալ է յամի Տեառն 1855. թէ ո՞ր արդարութեամբ և ի՞նչ իրաւամբ այս ծածուկ դաշնակցութիւն և այս վնաս Սրբազան Առաջնորդին և խորհրդականացն Վանայ էին, չէ ի կարիս մեր հասանել այնմ իրաւանցն և արդարութեան ։»

«Պատճառն վասն այս ծածուկ դաշնակցութեան և վճռոյն երև եղապէս և ըստ ամենայն պարագայիցն այսպէս խնամի գոլ. թէ գուցէ Սրբազան Աղաջնորդն բաւարարեալ չվնեելով վասն կառավարութեան նուիրակութեան գործոցն պատուել կամէր զՏէր Յովհաննէս վրէժառութեան հոգւով, գրգռելով և հանելով զնա ի պաշտօնէն Աւագերիցութեան, չդիտելով թէ ի պակասութենէ ըղձի և ջանից Տէր Յովհաննէսի չէր, զի հնչին գումարն իրր նուէրք տային Կալկաթու ժողովուրդն. այլ Սրբազան Աղաջնորդի իւր անզուսպ և խոյտուիչ գրիչն, անխոհեմ և անվայելուչ գրութիւնքն էին, որք ցրտացուցին զսիրտ ժողովրդեանն։ — Այլ՝ եթէ ոչք եղեն ծածուկ դաշնակիցքն, տխրիմ զի պարտաւորիմք յաւելուլ ասա, զի մինչ Սրբազան Աղաջնորդն զՏէր Յովհաննէս Խաչիին «հարազատ սիրելի, հարազատ մտերիմ, սիրե ի որդի» և այլ այսպիսի բաղում սիրելի ոճիւք խօսից և անուամբ կոչէր. եւ մինչ ստորագրէր զինքն գոլ «յամենայն սրտէ բարեացակամ նորա», անցայտ ի նմանէ ծածուկ դաշնակցութիւնս ունէր եւ փակէր ընդ խորհրդականաց վանայն ընդդէմ պատուոյ եւ պաշտօնի նորա, որպէս յօդուածք ի թղթոյ Տէր Մարտիրոսի Տէր Յովակիմեան առ Սրբազան Աղաջնորդն գրեալ ի Զիշրայ, և թուեալ 13 Հոգտեմ. 1856, զոր ի ստորև կցեցեմք, ունին վկայել եւ հաստատել։»

Օրինակ յօդուածոցն ի թղթոյ Տէր Մարտիրոսի Տէր Յովակիմեան առ Սրբազան Աղաջնորդն գրեալ ի Զիշրայ։

«Թուի նպատակ չվոխութեանց կողմանցս, մանա-

ւանդ քաղաքիս, որչափ ես երևակարար համարէի այդր, այնչափ խկութեամբ տեսանի այժմ, զի թողեալ զբնական ազգատեցութիւն մերայնոց, ոմերիմ թշնամի հանդիսացեալ են ամենայն բինօք ընդդէմ Աւագ երիցուն իւրեանց, զոր ինչ ճանապարհաւ եւ հնարիւք զրաւեաց զսիրտս ամենեցուն յառաջնում՝ այժմ միանգամայն ներհակութեամբ, խստանօք և նախանձ ունելով երթայ. և լինելով օրէնք տեղոյս խիստ՝ իմէնջ ոչ ոք վրստահանայ առ երեսս ընդդիմանալ նմա. զի կարող է ասել բահանայ եմ, Աւագերէց, պատկեր Առաջնորդի, զոր ինչ պարտ իմ պարտաւորի զիս առնել՝ զայն առնեմ, թէպէտ ըստ օրինաց արժան է առնել զստահակ ժողովրդոց այն ամենայն, զոր առնէ. բայց թէ նախ բան զայս այսպէս առնէր, չէր հասանել աստիճանի փառացն և հարստութեանն. բայց այժմ, ըստ որում անկարօտ յամենայնէ, մտրակէ կամք իւր, և հաճութիւն իւր թուլարէ ինքեան։»

«Վասն այսորիկ ես զգիր ձեր ոչ ի լոյս ընծայեցի. զի կարելի էր անդարմանելի խռովութիւն ինչ յառնել թէև մին բանի անձանց յայտնեցի զրել ձեզ հանել զՏէր Յովհաննէս ի պաշտօնէ. բանզի եթէ զուր ոչ առնէք. յետոյ ինքեանք ունին անկասել ի կողմն բահանային. ուստի թողէք ինքեանք արասցեն. և կարծեմ առնելոցեն, և զՏէր Յովհաննէս խայտառակութեամբ արտաքսելոց յեկեղեցւոջ (1)։ Հաւատացէք հայր՝ ինքն Տէր Յովհան.

1. Զանհայկական ոմն Տէր Մարտիրոսին, որպէս և զԹադէոս Արք Եպիսկոպոսին տպեցաք որպէս և ընթերցաք ի թուղթս նոցին։

նէսն եւս հասկանայ. և ես ստիպեալ ի բարեկամութենէ խորհրդատրեցի նմա հրաժարական մի գրել ինձ, և մինչ՝ եկեղեցականին (թէ և նա չընդունի զեկեղեցականութիւն), զոր թէպէտ կամք ետ. սակայն տեսանեմ՝ առնելն դժուարանայ։ Վերջապէս, եթէ միասցէ ատ՝ առաջի նոցա ունելոյէ զհամարումն, որչափ այդր ունի զՏէր Միքայէլ. զի ասեն սա քահանայ է և նա քահանայ է. բայց յետ այսու կարի վատ լինելոյ է, և չարաչար անկումն և գլորումն նորա։»

«Հինգերորդ՝ միւս պատճառն տեսանեմ գոլ տուգանքն իրրև 2,500 կամ 3,000 ռուբլեայ, զոր Սրբազան Աւագնորդն պահանջեալէր ի քահանայէն վասն կարծեցեալ անբաւականութեանն և սխալանայ նորին ի գործս նուիրակութեան ատ, որպէս թուղթն Սրբազանին առ բահանայն, թուական 29 Ապրիլի 1856. հաստատէ։ Վասն ծանօթութեան ձեր զյօդուածն յիշեալ թղթոյ կցեմք ատ։»

Յօդուած Սրբազան Աւագնորդի թղթոյն, որոյ թուականն է 29 Ապրիլի 1856։

«Արդ՝ թէ քո, թէ մեր և թէ մտաւորաց խղճմտանք կարեն դիւրաւ առնել զդատաստան գործոց այնմիկ վճռահատութեամբ այսու, թէ ըստ կանոնաց ոչ կարէ արդարանալ գործն Արժանապատիւ Տէր Յովհաննու Խաչիկեան յիրս այսմիկ, զի ի միում պարագայի և իրի բաց ասել և ստոր ասել հակառակ են միմեանց. այլ նկատմամբ պատճառացն ի ձէնջ յառաջ բերելոց, կարելի է ներողութեամբ փոփոխման մասնաւոր պարա-

գայի տալով զառիթն ասել. առանց ծանր սխալելոյ ս կդրնաւորեալ այն գործ. այլ յետ տալոյ զհատուցումն վնասուց, որք ի նմանէ ծագեցան։ Վնասքն ծագեալ ի նմանէ են կրկնակի. դրամական և անձնական. դրամական վնասն է ծախք ճանապարհորդութեան Տէր Մարտիրոսի, որ չէ պակաս հաշուելի քան զ2,500 ռուբիս. իսկ անձնական վնասքն են նեղութիւնքն Տէր Մարտիրոսի յընթացս ճանապարհորդութեան իւրոյ, անմխիթարութիւն մեր ի բացակայութենէ նորա և անձկութիւն կարօտանաց նորա ընտանեացն ի բաց թողեալ զանձնական վնասուց զհատուցման պահանջումն վասն բարեկամութեան։ Բացապէս ասեմ. զի իրաւունք խղճի պահանջէ զհատուցումն դրամական վնասուցն. այլ զի մի կարծիք լիցի մեր թէ իրրև տոյժ կամ տուգանք պահանջի այն ի ձէնջ. զայս առարկեմք (որ լիցի ձեզ տեղի պարծանաց և սիրի ժառանգելոյ զանուն ազգասիրութեան). զի որովհետև ըստ կանոնին սահմանադրելոյ սակ ընտրութեան նորոգ Կաթուղիկոսի, կամ նոյն ինքն թէմական Առաջնորդն կամ արժանաւոր հոգևորական կարգեալ ի նմանէ, իրրև փոխանորդ ժողովրդեան, պարտի ներկայանալ ի Սուրբ Էջմիածին։ Թէպէտ կարելի է ի ձեռն ծանուցողական թղթոյ եւս յայտնել զորոշումն մտաց եւ զընտրողութիւն իւրեանց. այլ առաջին կարգն է պատուաւոր։ Այդ՝ կամ մեք պարտիմք գնալ կամ դուք. զի յարմարագոյն եւ արժանաւոր անձն էք դուք ի քահանայս Ջուղայու. որպէս եւ ի ժամանակի ընտրութեան Հոգելոյս Ներսէս Կաթուղիկոսի, ի միջոց հոգևորականաց զձեզ ընտրեալէին Ջու-

զայեցիք ի հոգևորական դասէ գնալ փոխանորդ Յէրմիա-
ծին. այլ սակս 300 թուման ծախուցն ի կախ մնացեալ
էր առաքումն։ Այդ՝ եթէ մեզ վիճակեսցի գնալ, ըստ
մերոյ արժանաւորութեան, եւ ըստ վիճակի պատուոյ
պահանջման հազար թուման ծախք հարկաւորի. ուրեմն
կամ ի ձէնջ առատաշնորհութեամբ կամ յայլմէ բարե-
պաշտէ յորդորանօք ձերովք հոգասջիք լքանել զհանգըս-
տութիւն, զօգտակարութիւն եւ զդիւրութիւն անձին
ձերոյ գնալով ի Սուրբ Էրմիածին. վասն որոյ փութա-
նակի յայտնեսջիք մեզ. զի և մեր զմեզապատկան ծա-
նուցողական գրութիւնս առաքեսցուք առ Սինոդն Սրբոյ
Էրմիածնի յաղագս փոխանորդութեան ձերոյ ի մեր կող-
մանէ, որոյ ծախք ի ձէնջ կամ այդի մինիցի հոգացեալ։
Իսկ եթէ մեզ վիճակեսցի գնալ՝ զհազար թուման-
նէ ի ջուցեալ՝ յանձն առնումք տեղոյդ 3,000 ռուբլով կա-
տարել զմեր ճանապարհորդութիւն. վասն որոյ զայն գու-
մար կամ ձեզէն առատաշնորհութեամբ հոգասջիք,
կամ յայլմէ բարեպաշտէ միջնորդաբար ընկալջիք ի
լրումն առաջարկութեանս մերոյ այսմիկ։»

«Թէև վերջաբանութիւնն շատ ճարտարութեամբ է
գրեալ վասն տուգանացն. բայց երբ Սրբազանն գրեաց
թէ. «իրաւունք մեր խլէի պահանջէ զհատուցումն դրա-
մական ինչսուցն». և թէ. «վասն որոյ զայն գումար կամ
ձեզէն առատաշնորհութեամբ հոգասջիք կամ յայլմէ
բարեպաշտէ միջնորդաբար ընկալջիք ի լրումն առաջար-
կութեանս մերոյ այսմիկ». տուգանքն հաստատի, տու-
գանքն կամ հատուցումն դրամական ինչսուցս տուգանք
է համարելի, ինչ աչօք կամ ինչ լուսով նշմարեսցուք,

եթէ ոչ՝ ուրեմն ի՞նչ պատճառաւ կամ առ ի՞նչ վախճան պահանջումն և հաստատումն դրամական վնասուցն։ Բաւական չէ ասել տուգանք չպահանջեմ, և ի նոմին ժամու մատաւոր ցուցանել զծոցն նպատակաւ և մեկնութեամբ թէ ա՛րդ ի ծոց իմ։ Այսպիսի պահանջումն տեսրելի է, որոյ հետևանքն միշտ անախորժութիւն լինի։»

«Վեցերորդ՝ զոր ինչ աչօք մեր տեսաք և ընթերցաք, զայն առաջի արարաք. և համարելով թէ հիմն և սկզբնաւորութիւն բոլոր տարաձայնութեանցն ծագելոց էր անբաւարարութիւն Սրբազան Առաջնորդին վասն նուիրակութեան գործոցն աստ, այսինքն պակաս գումար նուիրակութեան յառաջ գալն. և հետևապէս պահանջումն տուգանաց 2,500 կամ 3,000 ռուբլոց կամ դրամական վնասուց վասն ծախուց ճանապարհորդութեան մեր նուիրակին Տէր Մարտիրոսի Տէր Յովակիմեան կամ վասն ծախուց ճանապարհորդութեան Առաջնորդին առ Էջմիածին, պարտաւորիմք ասել թէ. այս հոգեսպան արծաթն էր, որ գործեաց զհամայն չարիս։ Եւ եթէ 2,500 կամ 3,000 ռուբլին ևս առաքեալ լինէր առ Առաջնորդն, գուցէ չպատահէր և յառաջ չգայր այսչափ անախորժութիւն։»

«Եօթներորդ՝ ի Տէր Յովհաննէս Խաչիկ քահանայն զայլ վնաս չգտանեմք, քան զանցանելն նորա զխոհեմութեամբ։ Երևի թէ մեծ անխոհեմութիւն գործեալ նա և սխալեալ դրելով զթուղթն յ30 Մարտի 1861. առ ութն հոգևորականս և առ ութն աշխարհականս ի Զուղայ վասն հաստատելոյ զկարգ և զկանոնս վասն կառավարութեան Սուրբ Աթենափրկչեան վանացն, թէև

թուղթն այն չէր նպատակաւ անպատուութեան Աստծոնորդին։ Եթէ թուղթ մի վասն բարեկարգութեան վանայն քահանայն բայց առաքեալէր Աստծոնորդին և խնդրեալէր ի նմանէ զի Աստծոնորդն ինքն կոչել տայր զժողովն և հաստատել տայր զհարկաւոր կարգ և կանոնս, շատ յարմար և բարւոք լինէր, և դուցէ արգելոյր զնա-խատինս, զթշնամանս և զանպատուութիւնս, զորս զը-րեն առ քահանայն Արբազանն և այլք։ Յիրաւի չերևի զոլ չափ և սահման վասն այս ինքնակամ և առատաձե-ռն նախատանաց, թշնամանաց և անպատուութեանց, և ոչ արդարութիւն տեսանելոմ վասն այս չափազանց թշնամանացն։— Թէև քահանայն զործեաց զանխոհե-մութիւն. բայց և այնպէս զոն մեղմացուցիչ պատճառք. վասն այսր անխոհեմութեան մեղմացուցիչ պատճառքնեն, մին՝ չափազանց հայրենասիրութիւն քահանային և բո-զոքք և յորդորք բազմաթիւ հայրենակցացն նորա, թէ հոգևորականաց և թէ աշխարհականաց, թէ աստ և թէ ի Ջուղայ, որք հրաւիրեցին և հրապուրեցին, մինչ մխեցին զնա անխոհեմութեամբ և դահավիժութեամբ յայն զժուարին ձեռնարկ բարեկարգութեան Վանայն Սուրբ Աստվածածնի, թէև սոյն հայրենակիցքն այժմ լուացեալ զձեռս իւրեանց յանձնեն և մատնեն նա ինա-խատինս եւ մինչ ի բանադրանս. եւ չարդարանան վասն ընդդէմ ճշմարտութեան ներհակս խօսելոյ եւ ստորա-դրելոյ ի զանազան թղթեանս եւ ի վաւերականս, որք պարզապէս երևին դրեալ եւ պատրաստեալ ի Վանս Սուրբ Աստվածածնի. բանզի մի դրիչ երեւին սոյն դրու-թիւնքն, եւ ի թիւ ստորագրողացն չգտանի որ, որ գրել

կարիցէ այդպէս . թողեալ զայն՝ պարունակեալքն ի նոսին հեռի ի ճշմարտութենէ երեւին . բանդի գրաւոր վկայութիւնք ոմանց ստորագրողացն թէ առ երկիւղի բռնութեան ձեռագրեցին յայնս , անհաստատի կացուցանեն զայն գրութիւնն : »

« Միւս պատճառն մեղմացուցիչ է Արքազան Առաջնորդի առանց բարւոք մտածութեան , առանց երկարատեւութեան վասն աւաղելի կատարածին չափազանցութեան , և առանց պահանջման մեծի հարկի , կարի շուտափութութեամբ և մի զկնի մեայ կուտելն զխառս և զպատիւս ի վերայ քահանային , այսինքն մանկչակագոյն ծաղկեայ փիլոն , խալիչայ , այսինքն գորգ , զոր Եպիսկոպոսք և Վարդապետք սովոր են սփռել յեկեղեցւոջ եւ կանգնել ի վերայ , իշխանութեան դաւազան , ընդհանուր Աւագ Երիցութեան պաշտօն , փոխանորդութիւն Առաջնորդի անչափ , անսահման և անպայման կարողութեամբ , Առաբելական Թաչ եւ կայսերաշնորհ Ապստոական շքանշան , որով եւ արբեցուցանել զնա փառաց բաժակաւն և հրապուրել և հրաւիրել յանխոհեմութիւն : Այսպիսի առատաբաշխ պարգեւք փառաց եւ պատուոյ բաւական էին շլացուցանել զաչսն և զմիտսն ևս հրեշտակաց և գահավիժել :

Այս Արքազան Թադէոս Առաջնորդն էր , որ արիաչանութիւն համարելով կերզեաց զիշխանութիւն եւ զկատարարութիւն զանազան գործոց ատ վերաբերելի Սուրբ Աւետարանչի վանացն ի ձեռաց եկեղեցականին եւ գործակալացն Նազարեթայ Սուրբ եկեղեցւոյն Կալկաթայ , որք աւելի բան դար մի Հնացին և էին ի ձեռս

նոցա. և ոչ միայն եւ զայն ի ձեռս քահանային անչափ եւ անսահման կարողութեամբ. այլ գրեթէ իշխանացոյց զնա եւ արար եւ կարգեաց զնա միւս առաջնորդ աստ։ Մի՞թէ գրութիւնքն եւ թուղթքն Առաջնորդին չվկայեն զի խօսք քահանային օրէնք էին վասն Առաջնորդին երբեմն. եւ մի՞թէ չառնէր Առաջնորդն, զոր ինչ եւ գրէր կամ ասէր քահանայն. եւ ընդէ՞ր այժմ առաջադրութիւնք քահանային եւ կոչեն զժողովն 8 Դեկտեմ. 1861. վասն բարեկարգութեան Սուրբ Աստուածածնի վանայն և Ջուղայու համարին համարձակութիւն եւ անհնազանդութիւն։ — Այսպանս վասն մեղմայուցիչ պատմաստայն։ — Ի նմին ժամու մեծ պատասխանատուութիւն ի վերայ Թադէոս Աբբ Եպիսկոպոսին մնայ վասն հաստատելոյ զժողովուրդս Կաղկաթոյ ի սկզբան անօրինակ գովաբանութեամբք քահանային եւ ի վերջնումն նոյնօրինակ վատաբանութիւնքն և թշնամանքն գնմանէ վասն գրգռելոյ զժողովուրդն ընդդէմ նորա։ Զի՞նչ վկայեն եւ հաստատեն գրեցեալքն ի թղթի Թ. Աբբ Եպիսկոպոսին առ Տէր Յովհաննէս Խաչիկն, թուական 31 Յուլիսի 1861։ »

« Զի՞նչ համեմատութիւն և բաղդատութիւն յիշեալ թղթոյն ընդ այլ բազում նախագրեալ թղթոցն առ քահանայն, եւ ընդ կոնդակայն եւ հրամանագրոցն առ ժողովուրդն Կաղկաթոյ. խորին զգայողութեամբ եւ տրտմութեամբ յաւելումբ. զի եթէ միայեալ եւ էր տակաւին չնչին իմն ջերմեռանդութիւն ի ժողովուրդն եւ ակնածութիւն առ հոգևորականս, այժմ բարձեալ եղև միանգամայն։ Այո՛, պատասխանի եւ բաւարարութիւն

ունի տալոյ ժողովրդեան Կաղկաթոյ Սրբազան Առաջ-
նորդն Թադէոս. բանդի չեն ի դասէ տարկացեալ ժողո-
վրդեան Ջուղայոյ. զի Առաջնորդը Սուրբ Ամենափրկչի
Վանայ շրջեցուցանեն զնոսա՝ յոր կողմ եւ կամեսցին
ըստ աջողակութեան կամ անաջողակութեան իւրեանց։»

«Ութերորդ՝ վասն ժողովոյն 8 Դեկտեմ. 1861. զոր
Տէր Յովհաննէս Խաչիկն կոչէր եւս, ասեմք. զի յարմարա-
գոյն լինէր, եթէ զոմանս ի ժողովրդականացն կոչել
տային ի սոյն ժողովն. բայց եւ այնպէս, կոչել տան
քահանային չունէր վնասակարութիւն, բանզի ժողովն
ոչ ունէր վերաբերէր, եւ ոչ ունէր վնասեայ աստ։
Նոյնպէս սոյն ժողովն, եւ որոյ առաջադրութիւնքն եթէ
փոքր մասին ժողովրդեան ընդունելի և հաւանելի չեղեն,
մեծի մասին սպասուելի, սեպհական և երևելի ժողովրդ-
դոյն շատ հաւանելի և ընդունելի եղեն։ — Թողեալ
զայն, մինչ ժողովուրդն Կաղկաթոյ միշտ դանդաստա-
ւոր էին, բողոքին, աղաղակս բառնային և քանիցս ան-
գամ առաջադրեալին դրել առ Սրբազնասուրբ Կա-
թուղիկոսն զի յետս կոչեսցէ զԹ. Առաջնորդն ի վիճա-
կէն, զոր նա անբաւական էր կառավարել, և խանգարէր
անկառավարութեամբն և անկարգութեամբն իւրով,
Տէր Յովհաննէս Խաչիկն աղզի ազգի համոզմամբ յետս
դարձուցեալէր զնոսա ի խորհրդոց նոցա և վերջին ան-
գամն ի 1858 ամի ի ժողովի հասարակութեան Հայոց
տեղոյս ներուն եւ երկայնմտութիւն ժողովրդոյն պա-
զատելով՝ երաշխաւոր եղև նոցա քահանայն եւ խոստա-
ցաւ. դրել Սրբազանին բառնալ զանկարգութիւնն,
որք սպասահէին, և կսրգաւորել զամենայն, որով եւ

անհետացուցանել զաղաղակս ոմանց։ Եթէ քահանայն ունէր արդարութիւն եւ կարողութիւն երաշխաւոր մեզ լինել վասն Առաջնորդին, մի՞թէ չունէր նա արդարութիւն եւ կարողութիւն կոչել տալոյ զվերն յիշեալ ժողովն յետս կոչելոյ զերաշխաւորութիւն իւր եւ յայտնել զտարաբախտ կացութիւն ամենայն բանիցն. եւ մի՞թէ չէրնա պարտական մեզ զկնի երաշխաւոր լինելոյն, յայտնել ի զուր եւ անօգուտ ջանքն իւր վասն բառնալոյ զանկարգութիւնս և տառապանն և աղէտսն Ջուղայոյ և Ջուղայեցի համազգեացն մերոց, որք հասեալէին ի վերջին ծայր թշուառութեան։—Տխրելի է, զի այնպիսի իրաւադատք գտանին ի խմբի Հայոց աստ և այնպիսի ուսեալ եւ կրթեալ անձինք յօրէնս քաղաքական և եկեղեցական, մինչ վճռել զկոչումն ժողովոյն անհնազանդութիւն Առաջնորդին։ Եթէ այսպէս՝ ապա ուրեմն եկեղեցական օրէնք և կանոնական հրամանք Հայաստանեայց եկեղեցւոյ տան արտոնութիւն և վարերական Եպիսկոպոսացն Հայոց գործել և առնել զոր ինչ և կամին, և լինել հեղինակ ամենայն անկարգութեանց, անվայելչութեանց և բռնութեանց. եւ զստորին հոգևորականս զերի կացուցանել եւ հպատակել այսպիսի անարդարանալի արարողութեանց եւ անկարգութեանց զլսաւորաց իւրեանց առ երկիւղի հալածանաց եւ բանադրանաց։»

«Իններորդ՝ զհոչակաւոր 32ի Լեան թուղթն Սրբազան Առաջնորդ Թ. Ա. Բ Եպիսկոպոսին առ Տէր Յովհաննէս Խաչիկն, թուեալ 31 Յուլիսի 1861, ընթերցաք. զպատասխանն քահանային ևս ընթերցաք։ Երբ երկոքին

գրութիւնքս այսորիկ տպեսցին եւ ի լոյս ընծայեսցին, արժանաւորութիւնք եւ շնորհք իւրաքանչիւրոցն ունին յայտնիլ խոհական մտաց. վասն որոյ մեք երկար չունիմք խօսիլ ի վերայ երկուց գրութեանցն. միայն այսքան յաւելումք, զի ամենայն թուղթ կամ գրութիւն, յորում հակառակաբանութիւն գտանի, անհաւատալի կացուցանի, եւ միանգամայն անզօրանայ եւ ոչնչանայ։»

«Վասն ծանօթութեան և տեղեկութեան ձեր այնպիսի յօդուածս վերն յիշեալ Յուլիսի 31. 1861 թուաւ թղթոյ, որք պարունակեն յինքեանս զհակառակաբանութիւնս, կցեմք ի ներքոյ, նոյնպէս յօդուածս յայլ նախագրեալ թղթոց Սրբազան Թ. Սրբ Եպիսկոպոսին, որք ապացոյց են եւ հաստատեն ճշմարիտ չլինել զգրեցեալսն ի 31 Յուլիսի թուաւ թղթին, եւ ի վերջոյ յաւելուլ ունիմք, թէեւ չունէաք յառաջ բերել ասացեալ հակառակաբանութիւնսն. այլ ըստ որում Սրբազան Թ. Սրբ Եպիսկոպոսն մեզն վասն զլորելոյ զհանգուցեալ եւ զտարաբախտ Տէր Մկրտիչ Տէր Կարապետեանն ի վիճակաւորութենէ տեղոյս եւ փոխանակ առաքելոյ զՏէր Յովհաննէս Գալստանեան, միանգամայն ի վերայ ուսոց բահանային դնէ, եւ անբաւարարութիւն եւ աղաղակ ոմանց վասն այս անցեալ եւ տարաբախտ պատահելոցն, խլացուցանեն զականջս, վասն պարզութեան բանիցն յառաջ բերեմք։»

Չորրորդ յօդուածք Սրբազանի թղթոյն. 31 Յուլիսի 1861. առ Տէր Յովհաննէս Խաչիկն։

«Երկրորդ՝ էջք ամենայն թղթոց քոց չեն ազատ ի վատաբանութեանց ընկերաց հոգևորականաց և քաղաքա-

ցեայ , որոց զբարին , եօթն և տասն ամք են , վայելեա և չմնաս երախտագէտ : Պատճէնք թղթոց քոց առ քեզ են , ընթերցիր վերստին . և վկայեա բանիցս ճշմարտութեան . այլ նշանակեմք ասա միայն զբանս առաջին գրութեան քոյ առ մեզ , որոյ թուականն է 8 Դ.ոյեմ. 1851 ամի . յորում նախ զմիաբան քահանայս քոյ վարտանելով գրեցեր այսպէս . « բարեգոյն լինելոց է՝ Տէր Յարութիւն (Յակոբ Տէր Կարապետեան) ի վիճակ տեղւոյս առ իս . . . և զՏէր Մկրտիչ Տէր Կարապետեան տեղւոյս ուղարկել ի Զիւրայ : որովհետև մերձ է լրումն 2 ամ ժամանակի թեմի նորա ասա . զի ի սկզբան վիճակաւորութիւն սորին հնգամեայ ժամանակաւ՝ զերիս ամս յատկացուցեալ վասն Աէյդարադայ , և զերկու ամս վասն տեղւոյդ, որում թէև հասարակութիւն տեղւոյս, յօրէ անտի մտին յայս քաղաք, ոչ կամելով հանդերձեալ էին յետս դարձուցանել. սակայն իմ ցաւելով ի վերայ ագիտութեան նորա և պարտուցն՝ պահեցի ասա . . . բայց ցաւիմ ասել . ի ծոց նորին գոլով զերդուն նորանոր ինքնաստեղծ բառիւք . յ . զ . ս . ն . և այլ աւելի տասիւք . յընթերցմունս իւր , ուր ուրեք հարկաւորի՝ հանեալ ածէ ի գործ . ուր յաւելու՝ անդրէն համարէ ի ծոց իւր . սկաւառակն՝ սկաւառակ , սպունգն՝ ըսպունդ , սիրո�ն՝ սրրով , հասկն՝ հասակ , և այլ այսպիսեաք գայթակղութիւն ժողովրդոյ և զզուութիւն ինձ պատճառէ . ուստի թողեալ լիցի ի կամս և ի տնօրէնութիւն ձեր , զոր ինչ բարի համարիցիք առնել՝ ընդունիմք և մեք սիրով և հպատակութեամբ : Նախ քան զայդ գրութիւնդ ևս ի կողմանէ Պարոն Սեթոյ Յ . Արզասրեան

Եկեղեցական առ կառավարութիւն վանայս գրութեան օրինակն տուեալէիր, յորում՝ շարաչար դանդատելով զվատթարութենէ նորեկ քահանայիցն՝ դատապարտեալ էիր անխնայ զվանայս կառավարութիւն։»

Ութերորդ յօդուած Արքազանի Յուլիսի 31. 1861 թուով թղթոյ առ Տէր Յովհաննէս Խաչիկն։

«Մեք արդարև մեանդամ մոայն յորոգայթս բանից քոց ըմբռնեալ՝ կրեցաք եւ կրեմք տակաւին զտպաչաւանս. իսկ յետ զվորձն առնելոյ՝ յամենայնի զգուշաւոր եղանակաւ վարեցաք ընդ քեզ զԱռաքելական գրանն մեզ առաջնորդ ունելով սակս բարեաւն յաղթելոյ։— Միանդամն այն էր վոխելն մեր զՏէր Մկրտիչ Տէր Կարապետեանն ի վիճակաւորութենէ տեղոյդ հաւատալով բանիցն քում, թէ ուղղակի առ մեզ գրեցելոցն ի մասին նորա, զորս քաղուածովք յառաջ բերաք ի վեր անդր եւ թէ նախ քան զժամանելն մեր ասա, գրեցելոցն առ կառավարութիւն Արքոյ Վանայս, զորս կարծելով որպէս հանճարաւոր բանս Արքութեան ձերում, արիաջանութիւն իմն համարեցաք զԱրքազրն Տէր Յովհաննէս Գաբրտանեան, զարժանաւոր քահանայն, վոխանակ ի քէն վատարանեալ Տէր Մկրտչին առաքել ի վիճակաւորութիւն տեղոյդ. որով թէ արչսի դառնութեան բաժակ սակս մեր պատրաստեցաւ, եւ սիրտ պատուեալ Հասարակութեան տեղոյդ ի մէնջ վիրաւորեցաւ, դուք ինքնին ակնատես լեալ՝ առաւել քան զամենայն որ գիտէք. սակայն դուք արդ զմեզն ի վերայ այլոց անմեղաց արկանելով՝ զմեզ զսկզբնասլատճառդ անպարտ ի մեղաց անտի համարէք։»

Ի ցրումն վերոյիշեալ գրութեանց յաւելումք աստ զայլ յօդուածս յայլ թղթոց Սրբազանին առ Տէր Յով-հաննէս Խաչիկն։

Յօդուածք ի թղթոյ Սրբազանին, որոյ թուականն է Նոյեմբերի 15. 1851։

«Գրութիւնք մեր առ ձեզ հետ զկետէ, յուսամք, հասեալ իցեն առ ձեզ, որոց պատասխանեացն և մեք ակն ունիմք։ Ի վիճակաւորին մեր աստանօր Ա.ռաջ-նորդական պարտաւորութեամբ՝ հարցեալ զվիճակաց մերոց Հնդկաստանի, մանաւանդ զԿալկաթու՝ տեղեկացաք ցաւօք և տրտմութեամբ, զի պատուելի և բա-րեպաշտ ժողովուրդք մեր կան ի մեծի դայթակղութեան ի մասին անարժան վիճակաւոր քահանայից ոմանց, որոց տեղեկացաք հաւաստեաւ ի բողոքագրութեանց ժողովրդոց տեղոյդ առ աստ և ի լրագրոյ Ազգա-սիրի տեղոյդ։ Զկնի այսոցիկ յաւելով ի նախորդէն մերմէ հանդուցելոյ և դտաք զի տուեալ կոնդակն առ Տէր Մկրտիչ Տէր Կարապետեանն այսպէս ունի պատ-ուէր. զի նախ 2 ամս վարիցէ զպաշտօն իւր ի Սէյդաբադ, եւ ի լրանալ երկու ամացն վերադարձեալ անտի առ այդր՝ վիճակաւոր լիցի տեղոյդ 3 ամս. զորմէ անչուշտ գիտէք և դուք։ Արդ լսեմք զոյն Տէր Մկրտչէն թէ Ջրեալ ըզ պատուէր կոնդակին իւրոյ և զհրաման առաքողին՝ կա-լեալ է զվիճակաւորութիւն տեղոյդ առանց նախասէս դնալոյ ի Սէյդաբադ, ի նշանակեալն իւր վիճակ։»

«Ի տրտմութիւն հոգւոյ մեր լսեմք և զնմանէ. թէ մեռելոտի կեղծամիւք մատչիր յաչառոր խորհրդակա-

տարութիւն սրբոյ պատարագի, (զոր դուք ապա արդելեալէք) և թէ ընթացք քահանայութեան նորա գայթակղութեանց է մայր, որովք և բարեպաշտութեանց պատուելի ժողովրդոց մերոյ ընդ յետս կաղալոյ եղեալ պատճառ ի յուսահատութիւն և ի գայթակղութիւն արկեալեն զնոսա. յայս սակս պարտաւորութիւն մեր համարեցաք, ըստ մարթելոյ, բառնալ զգայթակղութեանցն պատճառ. և զի Տէր Կարապետեանն ջրեալ զպատուէր հրամանի իւրոյ կոնդակաւ Առաջնորդին՝ վարէ զպաշտօն իւր այդր, ուր չէ արժան, յայս սակս ոչ խիղճ համարեցաք մեզ հանելի պաշտօնէ վիճակաւորութեան, յոր եմուտ ըստ հաճոյս, և ի տեղի նորա առաքեցաք մերով կոնդակաւ զարբեհամբաւեալ Տէր Յովհաննէսն Գալստանեան, զնախաձանօթ բարեկամն մեր. ուստի ի ժամանիլ նորա այդր՝ Տէր Մկրտիչ Տէր Կարապետեանն պարտ է ելանել ի վիճակաւորութենէ. և սրբակրօն Տէր Յովհաննէս Գալստանեանն փոխանակել զտեղի նորա, և այլն։»

Յօդուած ի թղթոյ Սրբազանին, որոյ թուականն է 5 Յուլիսի 1855։

«Աղդ առնեմք Սիրելութեանդ զպատճառն, որ հարկադրեաց զմեզ վիճակաւորել զնոյն քահանայ (այսինքն Տէր Յովհաննէս Գալստանեան) վասն տեղւոյդ, որ առ Պարոն Ա. Միրխան քենակալն ունելով զհաշիւ պահանջից, քաջայոյս էր ակնկալութիւն նորա, թէ ամբողջ ունելով զդրամագլուխն տոկոսեօք նորա, այնչափ հաստատեալ էր նորա եւ ի սէր, զի եթէ յառարկայ խօսից մերոց զէպ լինէր բառս ինչ զիպչողականս

խօսել ընդդէմ Պարոնէ, քահանայն դժկամակեալ ի սրտի այլասանութեամբ դիմայն յայտնէր զկիրս իւր. ճշմարտութիւնն եւ նմա փորձառու լինել անձամբ անձին։ Ուստի մինչ արարեալէր յաւուր միում զհաշիւ ընդ Պարոնին այնմիկ՝ գտեալ էր զզանձն իւր 70 թուական փոխանակ 400ին, զոր ինքն ունէր ի մտի. յայդմանէ միջարեկեալ յուսոյ նորա՝ դիմեաց առ մեզ դաղկացեալ դիմաք, դողդոջիւն ծնդովք, բարախմամբ լեզուի. եւ սրտատրոփ սաստարանօք յայտնեաց զզործոյն հանգամանս, աղաչեաց շնորհել ինքեան զվիճակաւորութիւն տեղոյդ. զի առանց այնր, ասէր, տուն իւր ունի կոր ծանիլ, և դերդաստան իւր նեղիլ յաղքատութենէ։ Մեք ի սրտաշարժ դրութենէ աղետից քահանային ի դութ կարեկցութեան չարժեալ՝ խոստացաք նմա ի նմին ժամու կատարել զինդիր նորա, թէպէտ յետ այնր քաջ խելամուտ եղաք անարարեխառն հետեւութեանցն, որք ունէին ծնանիլ ի նորին վիճակաւորութենէ. սակայն առ ի չդժրել խոստման մերում և ի չտալ նմա կարծիս առելութեան առ սիրելիս մեր ոմանս, զամենայն վիշտս յանձն առեալ առաքեցաք զնա վասն տեղոյդ վիճակաւորու։»

«Այդարեւ կարի դառնաղէտ եղեւ թէ վասն մեր և թէ վասն ձեր վիճակաւորութիւն նորա, զորոյ զփորձն թէ մեք և թէ դուք վայելել տրժանացաք, և այլն։»

---

Հակառակարանութիւնք փայլունք և աշխարհաբարոգք, որք նպաստաւորութեամբ եւ քօղով խեղ առարկութեանց բնաւ չունին ծածկիլ, ոչ միայն հաստատին. այլ և ան կարեսրութիւն բանին մերկանայ յաչս խոհա-

կանայ։ Զկարծեցեալ վատաբանութիւն զՏէր Մ. Տէր Կարապետեանէ Սրբազանն քաղէ յանդրանիկ թղթոյ Տէր Յովհաննիսի Խաչկեան, որոյ թուականն է 8 Նոյեմբերի 1851. սակայն յառաջ քան զստանալն զայն զբրութիւն Տէր Յովհաննու Խաչկեան, որ պարունակէր զվատաբանութիւնս զՏէր Մկրտչէն, Սրբազանն զբրեալէր զՏէր Մ. Տէր Կարապետեանն ի վիճակաւորութենէ տեղւոյս և փոխարէն առաքեալէր զՏէր Յովհաննէս Գալստանեան։ Թիւ կոնդակի վերջնոյն է Հոգտեմբեր ամիսն 1851։»

«Վասն Տէր Յովհաննու Խաչկեան օրինակ տալոյն առ եկեղեցական Պարոն Սէթ Յ. Աղարեանն այսչափ միայն ասեմք. զի ըստ օրինաց և իրաւանց ստորագրողն ի թղթին է պատասխանատու և ոչ զօրինակ տուողն թղթոյն։»

«Ըստ ամենայն պարագայիցն և պատահելոցն, բաւական զօրաւոր և գրեթէ եզրակացուցիչ վկայութիւնք հանդիսանան առաջի մեր և տան մեզ կարծել թէ զանազան գրութիւնք գրեալք ի Սրբազան Առաջնորդէն և յառաջ եկեալք ի Վանայն Սուրբ Աւետարանչի, մանաւանդ թուղթն 31 Յուլիսի 1861. ոչ են գործք Սրբազան Առաջնորդին, զկնի պատշաճ կշռութեան. այլ յանդուգն և անմիտ ծնունդ մտայ խորհրդականայն Սուրբ Աւետարանչի վանայ, որք բարձրաձեռն երևին յամենայնի և յամենայն իրս։ Եւ եթէ այսպէս՝ տխրելի և ցաւալի են յոյժ, ամօթալի և անարգարանալի՝ արարողութիւնք խորհրդականայ Սուրբ Աւետարանչի Վանայն, մանաւանդ՝ Դպրին Վանայն, որք առանց խորհրդածե-

լոյ զնախագրեալ թուղթս Առաջնորդին գրեն և պատ-
բաստեն հակառակարանութեամբ, անվայելչութեամբ
և խեղ առարկութեամբ լի գրութիւնս. և վասն յայտե-
ցուցանելոյ զգժոխորալոյն բնախնդրութիւն և վրէժ-
խնդրութիւն իւրեանց ի Տէր Յովհաննէսէ Խաչեան,
ձեռնադրութիւն Առաջնորդին ստանան յայնս. որով
ոչ միայն անբաւականութիւն Առաջնորդին ի ինքս իւր
և գործի լինելն ի ձեռս իւրեանց միանգամայն հաստա-
տեն. այլև մատնեն և ըմբռնել տան զանմեղն և զարդա-
բն ի յանցանս և ի մեղս, զորս մեք չեմք պատրաստ և
չկարեմք ասել. թէ յղացեալէր նա ի սրտի իւրում կամ
ծնեալ, թէև չկարէ Առաջնորդն արդարանալ վասն
ձեռնադրելոյ յայսպիսի անվայելուչ թուղթս առանց
բաւական բննութեան և ընթերցման և առանց իմանալոյ
զիմաստս սոյն գրութեանց. և պատասխանատուութիւն
վասն ամենայն պատահելոյն մնայ ի վերայ ուսոց նորա։»

«Ի վասնման գրութեան մեր յայտնեմք, և որպէս քա-
հանայն յիշեալն ի գրեալ իրաւունս իւր, թէ Սրբազան
Առաջնորդն բարեհաճեցեալ բանադրանաց թուղթ
գրել վասն կարգալոյծ առնելոյ զքահանայն. և առաքեալ
զայն թուղթ եկեղեցականին ասա, զոր մեծ մասն ժողո-
վրդոց տեղոյս արգելեալեն ընթեռնուլ յեկեղեցւոջ։
Տխրելի է զի Սրբազանն առանց բաւական մտածութեան
զայս չուտափոյթ առաջադրութիւն արարեալ. և այս-
պէս ընթացեալ, աւելի վրէժխնդրութեան հոգւով քան
քրիստոնէավայել կամ եպիսկոպոսավայել մտածու-
թեամբ. քանզի բաւականին պատճառս չգտանին
վասն այս անգթութեան։ Եթէ եպիսկոպոսք Հայոց կա-

րեն արտօնութիւն վայելել, և ըստ կամայ և հաճոյից իւրեանց բանադրել զքահանայ որ առանց բաւական և օրինաւոր պատճառաց. ուրեմն եպիսկոպոսական իշխանութիւն Հայոց պիտի շատ նուաստացեալ համարիմք և հիմնեալ աւելի ի վերայ Հրէական վրէժխնդրութեան օրինաց քան ի վերայ սկզբանց քրիստոնէական հաւատոյ։»

«Մեք բաւական ապացուցութեամբք պարզեալեմք եւ հաստատեալ զդրութիւնս ամենայն բանից. և թէ քահանայն յաւել անիրաւելն է քան անիրաւողն, թէեւ ոմանք կալութիւնն յերկուց կողմանց ևս երևի. բայց վասն խաղաղութեան և բարնայոյ զգայթակղութիւն խոնարհարար ազդեմք և առաջի առնեմք զի շատ հարկաւոր է զրել առ Սրբազան Առաջնորդն թէ այսպիսի շուտափոյթ առաջադրութիւնս և բանադրանս չկարեմք ընդունիլ, և ոչ անպատուութիւն քահանային, որ պատրաստականութեամբ ծառայեաց և բարեպէս մատակարարեաց զհոգևոր մխիթարութիւն 18 ամս, բան այլ որ քահանայ յառաջ քան զնա ծառայեալ էր կամ մատակարարեալ, ընդունելի է ժող։ Եւ խնդրել ի նմանէ զի յետս կոչեսցէ զայս բանադրանաց թուղթ. եւ եթէ խաղաղութիւն կամի տեսանել՝ թող ընտրեսցէ հինգ կամ վեց անհատս ի բարեմիտ, ազատամիտ, խոհական եւ խաղաղասէր մասնէ ժողովրդեան տեղոյս՝ քննել զամենայն եւ տալ առնել իրաւունքս երկու կողման ևս, Առաջնորդի իրաւունքն Առաջնորդին՝ եւ քահանայի իրաւունքն քահանային՝ եւ բառնալ զխռովութիւնն եւ զգայթակղութիւնն, որք ծագեալ են աստ։— Այսպէս յայտնել նմա զի չընտրեսցէ զնոսա, զորս մինչ ցօրս իրաւադատէ համարեալ ինքն.

բանզի գործք նոցա ներհակ վկայեցին եւ հաստատեցին. եւ ոչ այնպիսի անձինս, որք փոփոխամիտք են եւ միանգամայն զուրկ յսկզբանց, թէ ոչ՝ ի զուր լինիցին վաստակք ամենեցուն։»

«Եթէ չունի անսալ Առաջնորդն այս խնդրանացս, երկնչիմ, կատարածն ոչ միայն աւաղելի լինիցի եւ անդարմանելի՝ խռովութիւն. այլ հետեւանք չար, որքան որ կանխել չկարեմք. զուցէ ոմանք յերկուց հակառակ կողմանց ժողովրդոցն ևս, վասն այս գայթակղութեան թողեալ զեկեղեցին իւրեանց յարեսցին յայլ եկեղեցիս։ Եւ վասն առարկութեան ասեմ. դիցուք թէ Վեհափառ Կաթուղիկոսն մեր զԹադէոս Սրբ Եպիսկոպոսն եւ զարարեալսն նորա պաշտպանեսցէ եւ արդարացուսցէ բոլորովին, զի՞նչ օգուտ, առ ի՞նչ նպատակ կամ առ ի՞նչ բարի վախճան։ Սրդէն ճեղքեալ եւ պառակտեալ կացութիւն Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ եւ զգայութիւն բազմաթիւ պատուելի ժողովրդեան յայտնի են ձեզ. չկարեն զկամս եւ զկիրս նոցա շրջեցուցանել ոչ Վեհափառ Կաթուղիկոսն և ոչ Թադուհին Վիկտորիա. այլ խաղաղութեան միջոցն հզօր է եւ ընտրելի եւ բարիս գործել կարէ։»

Ի Կալկաթա. 24 Նոյեմբերի. 1862.

(ձեռս.) Պ. Յ. Սարգսեանց
Մարտիրոս Ս. Յովհաննեան
Յ. Գ. Բաղրամեանց
Մարգար Գրիգորեան

Առաջադրեաց Պարոն Մարտիրոս Ս. Յովհաննեան և երկրորդեաց Պարոն Յ. Գ. Բաղրամեան, եւ հաւանելի եղև ժողովոյս, զի նախ բան զտնօրէնութիւն ինչ, յորմէ նակաց քննութիւնս մին առաքեսցի առ Սրբազնասուրբ Կաթուղիկոսն մեր Յէջմիածին, մին՝ առ Սրբազան Առաջնորդն Թադէոս և մի օրինակն՝ առ Սրբակրօն Խաչակիր Տէր Յովհաննէս Խաչկեան ընդ պարտուպատշաճ գրութեան խնդրելով ի նորին Սրբազան Առաջնորդէն զի յետս կոչեսցէ զհրամանագիրն ընդդէմ Տէր Յովհաննու Աւագ Երիցուն մերոյ, և թոյլ տացէ տեղի խաղաղութեան բառնալով զյաւալի երկպառակութիւնն յաղէս մեր, թողով մնալ զամենեսեան ի խաղաղութեան և յանդորրութեան։

Առաջադրեաց Պարոն Մ. Թ. Մախսան, և հաճելի եղև ժողովոյս, զի շնորհակալութիւնք մատուցին կարգեալ պաշտօնատարացն, մանաւանդ Պարոն Պետրոսի Յ. Սարգսեան. զի անխոնջ ջանացողութեամբ զնեղութիւն յանձն առեալ պատրաստեցին զբնութագրութեան աշխատութեամբ։

(ձեռ.) Սէթ Յ. Աբգարեան Աթոռական։

Միաբան ձայնիւ ժողովելոցն մատուցաւ շնորհակալութիւն ժողովոյս Պարոն Աթոռականին վասն բարւոք ունելոյ զԱթոռն։

Ըստ վերջաւորութեան ժողովոյն գրեցան թղթեանք որպիսածանոյց առ Վեհափառ Կաթուղիկոսն, առ Սրբազան Առաջնորդն և առ Սրբակրօն Տէր Յովհաննէս Խաչիկն ծրարելով ի նոսին զօրինակս քննագրոյն։

Զթուղթն գրեալ առ վերջինն օրինակեմք աստ ի շարունակութիւն բանից մերոց։

---

Արժանապատիւ Սրբազրոն Տէր Յովհաննէս Խաչակիր Աւագ Երէց

Ի Զիւրայ

Արժանապատիւ Տէր՝

«Թոյլ խնդրեմք սովաւ առաքել ձեզ զվերջաւորութիւն անցեալ Յուլսյի 6 ժողովոյ, որ ըստ խնդրոյ ձեր տեղի ունեցաւ մերով Աթոռակալութեամբ։ Այդէն քննագիր շորից կումիտի Պարնայն, որ հաւանական եղև ժողովոյ անդամոյն, առաքեմք ձեզ, որով ունիք բաւարարիլ՝ զորոյ և զմի մի օրինակս, ըստ վերջաւորութեան ժողովոյս հանդերձեալեմք առաքել Սրբազնակատար Կաթուղիկոսին և Սրբազան Առաջնորդին ի տեղեկութիւն, որոմբ, յուսամք, անմեղութիւն ձեր ունիցի յատենի նոցին քաղցրանալ եւ, ըստ մերում կարեւոր խնդրուածոց, դալ, հասանիլ աստ ի ձեզ եւ ի մեզ խաղաղութիւն եւ անդորրութիւն կատարեալ։»

Մնամ Յարգութեանդ, որպէս միշտ, խոնարհ ծառայ

(ձեռ.) Սէթ Յ. Արզարեան, Աթոռակալ ժողովոյն

Ի Կալկաթա, 1863. Փետրվարի 19։

Սրբակրօն Աւագ քահանայն Տէր Յովհաննէս Խաչիկ հրաժարի է վիճակէն Կաղիաթու : — Ժողովուրդն մատուցեալ նմա շնորհակալիս՝ խնդրէ շարունակել ըզ պաշտօն իւր : — Վասիան Թադէոս Արիւղ , որոյ կապանաց գիր ընդդէմ ցիչեալ Աւագերիցուն , խափանեալ առ կենդանութեամբն իւրով , հրատարակի յետ մահուանն ի խռովարարաց :

Այդ զանց գրաղմօք արարեալ՝ չափորժիմք այլ ընդ երկար դեղերիլ յիրաւունս հաւատեաց քան որք ցուցանն ի ծանօթութիւն անծանօթից , թէ կեանք Աւագ երիցուն Տէր Յովհաննիսի յամենայն ժամանակս՝ խոհական , կրօնասիրական , ազգասիրական , քահանայավայել , նախանձելի և անարատ ցամն 1861 . յոր եթող , ելիք զթէմական պաշտօն եկեղեցւոյն ի պատճառս խիստ գնացից Աւաջնորդին Ջուղայու . այլ զկնի , եթէ յաչս ոմանց ի նոցունց խնդրարկու Ջատագովաց այլափոխեալ՝ թողումք զայն երևակայական զգացմանց նոցին, տարբեր ըստ ամենայնի ի խղճի վկայութենէ, և դառնամք բուռն հարկանել զվախճանականէն, որ ի պատուեալ և յերախտագէտ ժողովրդոյ մատուցաւ նմա, յետ անյուսութեան նոցա ի դարձն վերստին առ թէմական պաշտօն եկեղեցւոյ :

*Օրինակ հրաժարականի Աւագ երիցուն։*

*Գերապատիւ Պարոն Կարապետ Յ. Վրդանիսեան եկեղեցական*

«Նուաստութիւն իմ, որ ի չորից ամաց հետէ հանդերձեալ էր հրաժարիլ ի թէմական պարտաւորութեանց և կապից վիճակիս, նա եւ ի գործառնութենէ Սըրբազան Առաջնորդին Զուղայու, այո՛, արդեմամբ և յորդորմամբ ազգասիրաց ոմանց յետս նահանջեցաւ ցայսվայր. յորում անազան միջոցաւ պարտաւորիմ յայտնել, զի ներքին և արտաքին դժուարութիւնք ժամանակիս, մանաւանդ ստէպ ստէպ հիւանդութիւնք անձինս թոյլ չտան ինձ շարունակել զթէմական պաշտօնս եկեղեցոյս։»

«Ուստի ակն ունիմ ի պատուելի հասարակութենէ զի բաւական համարեալ զիսնարհ սպասաւորութիւն իմ ութեւտասն ամաց՝ անբասիր կացուցանել զիս ի հրաժարմանս. որոյ և մատուցանելով զշնորհակալութիւնս, յորմէ յայտմանէ ազատ ի թէմական պարտեաց, ուխտեմ անդրէն մնալ ի բոլոր սրտէ, որպէս միշտ, պատուական կենաց ամենեցուն երախտապարտ աղօթարար։»

(ձեռ.) Թաչակիր Տէր Յովհաննէս Թաչկեան։

Ի Կարկաթա. 1861. Դեկտեմ. 31։

Պատասխան

Արժանապատիւ Սրբակրօն Տէր Յովհաննէս Խաչկեան Աւագ երէց, Խաչակիր և Ապետ

Արժանապատիւ Տէր՝

«Խորին և մեծաւ տխրութեամբ տեսանեմք զհրաժարականն ձեր ի թէմական պարտաւորութենց և Աւագ երիցութենէ տեղւոյս Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ, թուական Դեկտեմ. 31. 1861. և հրատարակեալ յեկեղեցականէն Կալկաթու։»

«Դժուարին է մեզ արդարև ստանալ կամ ընդունիլ զհրաժարական ձեր, և թէ զնչմարիտ զգայումն սրտից մերոց յայտնեսցուք, յաւէ մեզ մեծ բաժանիլ ի ձէնջ. և ուրախութիւն լինէր մեզ, եթէ յարգութիւն ձեր փոխանակ հրաժարելոյ, շարունակէր ի թէմի և ի պաշտօնի ձերում ատտ, մանաւանդ յաւուր մեծի տօնի Ծնընդեան և Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ. քանզի աններկայութիւն ձեր յեկեղեցւոջ զգալի և տրխրելի եղև մեզ բազմացս։»

«Զիարդ և իցէ, ընկալ այժմ, Յարգոյապատիւ Տէր՝ այսու դուզնաբեաց գրութեամբ մերով զբազում գոհունակութիւն և զերախտագիտութիւն մեր, զորս սերտ սրտիւ և անկեղծութեամբ մատուցանեմք ձեզ վասն անխտիր և բարեջան սպասաւորութեամբ ձերով մատակարարելոյ մեզ զհոգևոր մխիթարութիւն և քարո-

զելոյ զրանն Աստուծոյ ուղղափառ և ողջամիտ վարդապետութեամբ յամենայն ժամանակի։ — Ի նմին ժամու մեք ստորագրող ժողովուրդք Կալկաթայ զրաւարարութիւն և զկատարեալ հաճութիւն մեր գրութեամբս այսուիկ հաւաստի առնեմք և վաւերացուցանեմք վասն միշտ արթուն, զգաստ, պատրաստ, հաւատարիմ, փութաջան և բաւական գտանելոյ ձեր ի պաշտօնի, յոր կոչեցեալն էք, յընթացս տասնեւութն ամաց Աւագ երիցութեան ձեր ի թէմի սատ։»

«Մաղթելով ձեզ, Յարգոյապատիւ Տէր՝ զերկար և զերջանիկ կեանս, եւ մեծաւ յարգանօք, ակնածութեամբ և բարեցանկութեամբ մնամք Յարգութեան ձերում խոնարհ ժողովուրդք և բարեացակամք։»

Ի Կալկաթա. ի 25 Յունվարի · յամի Տեառն 1862

Ձեռագրութիւնք

| | |
|---|---|
| Յարութիւն Աբգարեան | Պետրոս Յ. Սարգիս |
| Մկրտիչ Ս. Յովհաննեան | Յարութիւն Պ. Որդանանեան |
| Յովհաննէս Աւդալ կրսեր | Մարտիրոս Ս. Յովհաննեան |
| Սարգիս Յովհան | Փ. Ա. Գէորգեանց |
| Գ. Ոսկան | Սէթ Յ. Աբգարեան |
| Խ. Խ. Սէթ | Յովհաննէս Գ. Բաղրամեան |
| Ս. Յ. Բաղրամեան | Մ. Տէր Յ. Գալստանեան |
| Մ. Խ. Յովակիմեան | Յարութիւն Գ. Աբգարեան |
| Մ. Խ. Մալխաս | Յովհաննէս Աւդալեան |
| Մ. Դաւթեան | Թ. Մելքումեան |
| Աղէքսանդր Յ. Աբգար | Մ. Ս. Վարդանեան |
| Է. Էմին | Գրիգոր Պ. Մելիտոս |

Մանուկ Յ· Դաւթեան
Կարապետ Յ· Վրդանէս
Մանուկ Թորոսեան
Նիկողայոս Ս· Մալխաս
Մ· Թ· Մանուկ
Պ·Մ· Գասպարեան
Կ· Յ· Սարգսեան
Յ· Զ· Շիրխոռեան
Ա· Զ· Տէր Աբրահամ
Մ· Յ· Բաղրամեան
Մ· Մ· Զօրաբեան
Ս· Տէր Յովսէփեան
Ս· Գ· Բաղրամեան
Եսայի Գէորգեան
Պ· Յ· Պօղոսեան
Յովսէփ Ստեփան
Զ· Վրդանէս
Յովհաննէս Խ· Յովհան
Միքայէլ Յովհան
Յ· Յ· Ամզալեան
Յարութիւն Կարապետեան
Յովհաննէս Ռ· Շիրխոռ
Ս· Ս· Ստեփաննոսեան
Ս· Ն· Մալխաս
Յ· Մ· Վարդանեան
Գէորգ Աւետ
Գ· Յ· Պետրոս
Ռ· Պ· Որդանան
Դ· Յ· Մանուկեան
Զ· Մ· Զօրաբեան
Յարութիւն Մայիլեան
Յարութիւն Ղերսէս
Յակոբ Ստեփաննոս
Մ· Տէր Բաղդասարեան
Յ· Միքայէլեան
Յ· Յ· Սարգիս
Յովհաննէս Յ· Յ· Սարգիս
Խաչատուր Յովհան
Խաչիկ Միրտումեան

---

*Մինչև սոյս վայր անցիւք և գրութեամբք, թէպէտ միտք ամենայն ողջախոհաց բաւին հանդչիլ ի ճշմարտութիւն եւ յիրաւունս Տեառն Յովհաննու Խաչիկեան եւ յոյն թէ ուրպիսի համբերութեամբ անսասան մնացեալ նորա ի յոյսն կենդանի եւ տարեալ սիրով նախանձու-*

գլխաւորին եւ կամարարաց նորին յանձն իւր. սակայն ի կարգս անցիցն վայելէ և համառօտութիւն հետեւանացն կարեւոր միջոցաւ. քանզի յետ վճարման նախընթաց գործոց, ի փոքու հասեալ աստ օրհաս մահուան Թադէոս Եպիսկոպոսի, զոգջիւք, ոմանք ի հակառակասիրաց առանց պատուիրանագրոյ կտակակատարաց հանգուցելոյն նշանակեալ տեսան գաղտնի գործողութեամբ, այն է անանուն հրատարակութիւն արգելական կամ կոչնական գրոյ հանգուցելոյն ուղղեալ առ Տէր Յովհաննէսն, զորոյ զօրինակն առեալ նորա, ըստ ծիսի, առաքէ առ Սրբազնակատար Վեհապետն, որում ի սկզբանէ հաւատացեալէր զամէն իրաւունս դատին, որպէս և մեք արժան համարիմք նախ զօրինակ արգելագրոյն և ապա՝ բողոքագրոյն Տէր Յովհաննիսի առ Վեհափառ Կաթուղիկոսն գծագրել աստ, ոչ այնքան ի ծանօթութիւն իրաւասիրաց, որքան՝ իրաւամերժաց ոմանց, որք ցայսվայր անսթափ ի նախապաշարմանց, ըստ բնածին ուղղակութեանց իւրեանց, զհետ սնդին կեղծեաց և բամբասեն զՏէր Յովհաննէսն՝ թէ ոչ գիտէ, ինչ գրեաց առ Վեհապետն և չահեցաւ զիրաւունս դատին յիւր կողմն։

## Օրինակ անդէպ բանադրանաց գրոյն

Ես Ճանապարհաստան Տէր Յովհաննէս Խաչկեան Աւագ Քահանայ։

« Խոովայուզութիւնքն տեղի կալեալ ի գերապատուեալ Հայ հասարակութեանն տեղոյդ ըստ նեղգործելոյ գործողութեանցն բում, առանց իրաւունս ունելոյ ի վի-

նել միջամուխ յայնօրինակ իրողութիւն, ըստ եղիս-կոպոսական վիճակաւոր իշխանութեան, որ չէր թեզ տուեալ, թէ մաւորելդ զՏէր Գրիգոր Մարտիրոսեան ի Հաւոյ (1) ի տրիտուր և ի վարձատրութիւն ըստ տաղանդոյն քոյ՝ լինելոյ նորա համախոհ քեզ և տալոյ զուստ ալրակս վատաբանութեանց զմէնջ ըստ օրինակին տուեցելոյ ի քէն առ նա, (2) ըստ որի եղեն մեզ հանդերձ ամենայն հետևութեամբքն և պարագայիքն. վասն որոյ ի յուշ ածեմք քեզ, զի յ31 Յուլիսի անցեալ 1861 ամի. 439 համարաւ, յետ մանրամասն պատասխանատուութեանցն մերում առ քեզ, ի վախճան այնր նամակի մերում հրաւիրեցաք զքեզ գալ առատանօր, որոյ վասն դատախազ եղեր, ի պարզութիւն չիմութեալ առարկայիցն։ Եթէ չիցէ հասեալ առ քեզ նոյն թուղթ մեր, զերկ-

1. Որպէս ամենայն առաջարկեալ բանք Առաջնորդին զուրկ յիրաւանց, նոյնպէս և այս. զի երէ չէր տուեալ իշխանութիւն թէմաւորելոյ զոք ի վիճակս, զիա՞րդ ապա թէմաւորեալ զնոյն Տէր Գրիգոր ի նախկին թէմն Սուրբայ, զհանգուցեալ Տէր Գէորգ Յ. Լշիազն՝ ի թէմն Դաքու և զՏէր Նիկողայոս Տէր Յ. Եղիայն վասն մոյ ամի ի Մաղրաս՝ յաւուրս նոյն իսկ Առաջնորդին։

2. Հարկ իրաւանցն պահանջէր օրինակով այսր զգրութիւն Տէր Գրիգորի ի ժանօրութիւն և ի զարմացումն ամենեցուն թէ Տէր Յովհաննէսն ուստի՞ ուստ զիմաստս այնր գրոյ, ընդ հիրդ Ժամանակօք անցիցն և անուանց անձանցն նորահասից, յետ բազում ամաց լքանելոյ նորա զՔուրայ. սակայն ամենեքեան ոչ խնամօք ի պատիւ գերազմանի հանգուցելոյն։

բորդ օրինակ նորին դարձեալ սովաւ առաքեմք, կրկնեմք սովաւ և երկրորդեմք դարձեալ զհրաւէր մեր, եւ առաջադրեմք քեզ, յետ ստանալոյ քո զայս թղթի մեր, պարտք համարեսցես քեզ ելանել ի քաղաքէ այդի և գալ աստ. զի կամ դու զհանդէս իրաւանց և արդարութեանց քոյին գործառնութեանցն ապացուցես, կամ մեք զմերն մարթասցուք խելամուտ քեզ առնել (1)։»

«Եթէ, ըստ քահանայական պարտականութեան բում, հնազանդեալ սոյն մեր սիրայորդոր հրաւիրանաց, եկեսցես աստանօր, բարւոք առնես, և եկեսջիր փառօք եւ արժանաւորութեամբն քոյին. և մեք ընկալուցք զքեզ խոստանամք ըստ մեծարանաց, որ վայելուչն իցեն քեզ. իսկ եթէ յաջողուածոց յեղյեղուկ բախտին արբեալ՝ առատն կոխեսցես զկանոնական իրաւունս (2) և զպարտս քահանայական հնազանդութեանցն քոց, սովաւ մերով եպիսկոպոսական իշխանութեամբ կապեմք զքեզ ի քահանայագործութենէ, և առաջադրեմք զի մի իւիք ինչ ձեռնամուխ լիցիս ի պաշտօն քահանայագործութեան։ Իսկ եթէ, ըստ բնաւորութեան քում, ոչ հնազանդես,

1. Զաւակ, երանելիս քէ, ո՞ր արդար դատաստանի և ո՞ր դատաւորի առաջի և քէ, ո՞ր ատենի իրաւասիրի։

2. Զո՞ր կանոնաց իսպի և ո՞ր անհնազանդութեան սակս դատի զքահանայն, չիմանամք, որչափ մինչ ցայսօր կուրացաք և չտեսաք զկանոնագիրս նկեղեցոյ արտաքոյ կանաց և հաճոյից Եպիսկոպոսաց. այլ եթէ ասել կամի, որպէս ձեւացուցանէ խնդիրն իսկ. եթէ, որ զպարանոց իւր ոչ խնայեսցէ հանցուցցէ, ի սուր մեր անսպարտ, ապստամբ է, այն յանուկ է բան։

ցես և սոյն արգելական հրամանի մերում՝ կապեալ եղիցես ի Հօրէ, յՈրդւոյ և ի Հոգւոյն Սրբոյ։ Եւ այսպէս արգելեալ մնասցես, մինչև վերադարձցես ասուտանօր։»

«Քաջայայտ է զի պարգևքն ըստ մերում միջնորդութեանց չնորհեալք բեզ յՕգոստափառ Կայսերէն Ռուսաց և ի Վեհափառ Հայրապետէն, էին յաղագս վարձատրութեան քահանայագործութեան բում ըստ ժամանակի իւրում (1). վասն որոյ յետ դադարումն առնելոյ քահանայագործութեան բում չունիցես իշխանութիւն կրելոյ զյիշատակեալ պարգևսն, ևս և զարտօնութիւնսն տուեալ ի մէնջ, ցորչափ ժամանակ տևեսցէ դադարումն քահանայագործութեան բում։»

(ձեռ.) Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց
Սրբ Եպիսկոպոս Թադէոս։

Ի Ջուղայ · Ամենափրկչեան Սուրբ Վանս.
Ի 21 Մարտի 1862 — ՌՅԺԱ · Համար 124 .

1. Երբ պարգևքն վարձատրութիւնք էին քահանայագործութեան անցեալ ժամանակի, զի՞նչ յարաբերութիւն այնոցիկ ընդ ապառնւոյն։ Նա՝ երբ պարգևատուքն ապրք՝ զի՞նչ իրաւունք նոցա յիրս օտարին։

Իններորդ բողոք նոցն Աւագ Քահանային առ Սմենապատիս Տէր Մատթէոս Կաթուղիկոսն : — Երկիր կոնդակք Նորին Վեհափառութեան, գրեալ՝ մին առ նոցն Աւագ քահանայն, որով սրբազան զնա յանդէպ կապանաց հանգուցեալ Թ. Սրբոյ, և միւսն առ Պարոն Մէր Յ. Արքար արոռակալն, որով ծանուցանէ Պատուելի Որխտին Հայոց Կալկաթու զայն վճիռ իւր :

Նորին Աստուածարեալ Քահանայապետի Տեառն, Տեառն Մատթէոսի Առաքելաշնորհ Կաթուղիկոսի և Սմենապատիս Դիտապետի ամենայն տանս Հայոց Օծեալ աջոյն համբոյր պատկառանաց

Վեհափառ Տէր՝

« Թիւ գրաւոր պաղատանաց առ Զերդ Սուրբ Օծեալութիւն՝ ընդ սին յիններորդն դասեալ, որոց վերջինն զոյգ օրինակօք ի 22 անցեալ ամսոյ, (ունելով ի ծոցի զօրինակս երկուց գրութեանց հանգուցեալ Թադէոս Եպիսկոպոսի և մին ի Բարձրութենէ Զերմէ առ նա, զոր, յետ մեռանելոյ նորա, կողմնականքն ի լոյս հանին, և յօրինակն գրութեան Վեհափառիդ առ Թադէոս Եպիսկոպոսն մեծեղեռն ձեռներեցութեամբ, փակագծիւ յաւելեալ էր վասն քահանային, իբր այժմ արգելեալ). այլ յաւիտեան սակս չունելոյ պատասխանի և ոչ մի. որոյ և ի չմնելն մատնեցայ, մատնեցան և Հայ ժողովուրդք

մայրաքաղաքիս յանձնարին ճապաղմունս խոտութեան. և տարաբախտապէս տեսանեմ զի ցնդումն ատի ճապաղել հանդերձեալ զՀնդկաստան ողջոյն ։ »

« Արդարև ցաւ է ինձ ծանրանալ և ծանրացուցանել զՀոգս Ձեր ի ծանրապատում հոգս տառապեալ վիճակի աղգայնոց . սակայն վայրկենական յաւելորդութիւն մինչ բաւ ըստ կարևորին ամոթել զդառնութիւն վիճակի աղգայնոց կողմանցս , չվայելչանայ և պաղատանս ընդունայն . քանզի արտաքոյ Ձերդ սպեղանեայ չունի աղգն հոգեվար ապէտիցն դարման. և եթէ այս չիցէ , մեռեալ ունի համարիլ և զաղգութիւնն ։ »

« Յետ յուշ յերևան ածելոյ իմ յատենի Ձերում Ողորմածութեան անթերի գրուածովք զամենայն անցս անցեալ և զառարկայ երկպառակութեանց ատի ի շնորհս հանգուցեալ Թադէոս Եպիսկոպոսի , որ անօրինակ գրուածովք անդատին յետ մեռելութեան չէ թողեալ տեղի չիմման հրոյն յուզմանց ի Հայ հասարակութեան տեղւոյս , որպէս ի սմին պարունակեալ վիմատիպ օրինակաւ ունիք տեսանել . ( այս էր զիր ցասմնական հրամանի եպիսկոպոսին առ քահանայն , զի եթէ դարձցի ի Ջուղայ՝ քահանայ է և պատուով ընկալցի . իսկ եթէ ոչ՝ չկարէ ի Կաղկաթա կամ այլուր վարել զպաշտօն քահանայութեան ) , որ յերկրորդումն այսր ամսոյ յաւուրս ապաշխարութեան ի լոյս ընծայեցաւ դիտաւորութեամբ թիւնաւորելոյ զողջախոհիցն զվիտս , մեռուցանելոյ զիս ի պատիւ քահանայութեան և դնելոյ վէրս ի վերայ վիրաց սրտի պատուեալ և առաջին ատիճանի սեպհական ժողովրդոց ։ Ահա գործ՝ ատելի Աստուծոյ և բացայայ-

տիչ զանգուածոյ հեղինակին և գործակատարացն անիրաւի։ Այս այն գրութիւնէ, որում ընդդէմ կայեալ հասարակութեան՝ հերքեցին և թոյլ չետուն ընթեռնուլ յեկեղեցին տալով զիրաւունս տեղական, նախ՝ թէ չունէր նուաստութիւն իմ յանցանս ինչ ընդդէմ եկեղեցւոյ և Առաքելական կանոնաց՝ արժանաւոր վրիժուն այնմիկ վճարելոյն անձնաւոր կրիւք. երկրորդ՝ որ արժանին էր, դատ եպիսկոպոսին և ապիկարիս արկեալ յատեան Բարձրագոյն Իրաւարանի Զերդ Մեծութեան և Սրբազան Սինհոդոսի Էջմիածնիչ, հարկ էր սպասել և դատակնքոյն. և այսպէս ոչնչացուցեալ զգրութիւնն առ կենդանութեամբ հեղինակին գրոյն, անդրէն այսօր, յետ ամի մոյ զկնի մահուան Եպիսկոպոսին ի լոյս ընծայի, և այն յաւուրս Զատիկանի. որով անբովանդակելի տրտմութեամբ լցեալ սիրտս սատուելոյ և Ջերմեռանդից, տեղի զտան դարձուցման ոմանց երեսաց յեկեղեցին Զիչրու, ոմանց՝ բողբքականաց յաղօթարան, բազմաց ոչ սատ և ոչ անդ՝ անսոյթ գոլով սատուելի վիճակաւոր քահանայից քաղաքիս ի հուրն արծարծողական ի կորուստ ազգութեան. զոր իմ նուաստութիւն մեծաւ շրջահայեցողութեամբ զամս 18 սահմանեալ պահեաց։ Զիչխեմ յայտնել զներհակն՝ զլեալեայն հակումն ի կողմն հակառակորդաց և տալն նոցա զրաջալերս յառաւել վրստահութիւն. ըստ որում բաց ի միոջէ նորեկէ, որ թուի այժմէն կամակից նոցա, երկոքեան իսկ եղեալ սատարիչ սուտկիս թանձրացելոյ, որպէս գրաւոր ապացոյցքն արդէն առ ձեզ կան։»

« Արդ՝ նիւթական վէճ աղմկի հասարակութեան յետ

մեռանելոյ Եպիսկոպոսին այսէ, զի ծանրագոյն մասն ժողովրդեան պնդէ թէ, ըստ որում գործ Աստուծոյ զին՝ անտեղի, և գրութիւն նորա ընդդէմ անիրաւեցելոյս ապօրինաւոր և բինախնդրութեամբ՝ մանաւանդ առ կենդանութեամբ Նորին Եպիսկոպոսի ոչ յառաջացեալ, և ոչ եկեղեցին մեր պատուեալ զհրամանն, զնին նորա և այժմանդօր և անընդունակ համարիմք զայն վրէժխնդիր գրութիւն, և ընդ մեռեալ հեղինակին տամք թաղել յոչնչութիւն։ Իսկ միւս մասն հակադարձ սմին ջանայ, աշխատի և դուն գործէ վաւերացուցանել զգրութիւն հանգուցեալ Եպիսկոպոսին, և այն յաւէտ ոչ ի յարգանս մեռելոյն և ոչ ի պատիւ հոգւով մեռուցելոյս. այլ առանձին ոխով և հակառակ վրէժխնդրութեամբ իրերաց։ Ահ, զինչ ասացից զհանգուցելոյն, որ մատնեաց զինքն և զդժբախտս ի նոսա գործիք վրիժու, որոց երկոցունցս վնիռ կախի և եթէ զհրամանէ Ձերդ հզօր արտօնութեան։»

«Իսկ իմս նուաստութիւն, որ յերկուց եղերաց տագնապեալ՝ զերբ փրկութեան ոչ գտանէ, ունի իրաւունս պահանջելոյ այսպէս. զի ես ի պաշտօն հոգևորականութեանս մեռուցեալ չեմ, և ընդդէմ եկեղեցւոյ և Աստուածաբանաւանդ կանոնաց նշանախեցիս յանցանս գործեալ չունիմ, ներհակ պատուոյ Եպիսկոպոսին մեղանս չունիմ, անհնազանդութիւն ինչ ուստ Աստուածամարգչեան Վանքին ցուցեալ չունիմ. այլ ընդհակառակն լեալեմ հաստատիմ մշակ եկեղեցւոյ ցամն 1861 (նախ քան զինդրելս, ըստ բոզոբոյ բազմաց, կանոնադրութիւն ինչ վասն բարեկարգութեան Վանաց Ջուղայու). որոյ

վկայականացն օրինակը թէ մանաւորապէս համապա-
տասխանեօք Եպիսկոպոսին առ իս և թէ իմ առ նա ,
այժմ առ Ձեզ կան . և բազմապատկարար առ իս այր
զեղուն կան, ի մեծուէ ցիսրունս ի Կալկաթու ժողովրդ-
դոց և իսկ յայնոցիկ, որք ապերախտաբար ի կործանումն
հոգւոց իւրեանց ընդ իս վստանան , ոչ միով . այլ եր-
կոքումբք , յորժամ երկիցս դէմ եղեալէր իմ զբաղաքս
լքանել , ունիմ առաքել և զօրինական առ ձեզ եթէ հր-
բամայիցէք առաքել . և եթէ չիցէր այսպէս՝ ոչ զամս 18
կարէի պատուով մնալ աստ ի ժողովուրդս և ոչ Թադ-
դէոս եպիսկոպոսն առիթս ունելոցէր զիս, ներհակ արդի
անարժան գործոյն , զերբան զչափն յարգել և մեծ-
արել : »

« Ի մասին վերակոչմանն զիս ի Ջուղայ (յայտնի է, որ
հոգւով և դիտաւորութեամբ կոչումն առնէ նա) ունիմ
իրաւունս զլանալոյ զհրամանաւն . քանզի ունիմ կոն-
դակօք արձակութիւն մնալոյ ի Հնդկաստան ցորչափ իմ
լիցին կամք , նախ՝ ի հանգուցեալ Յովհաննէս Սուրբ-
նեան Եպիսկոպոսէ , և երկրորդ՝ յիւրմէ Թադդէոսէ . ի
հաստատութիւն սմին առաքեալ ես ի Ջուղայոյ զհարցս-
տամեայ մայրն իմ աստ , որ այժմ , տասն ամբ են, յորմէ
հետէ կայ ի տան եղբօրս . եւ ես կապեալ կամ աստ զբ-
նեալ կալուածովք : Զունիմ զոք ի Ջուղայ մերձաւոր
ընտանի . այլ աստ ունիմ եղբայր մի տնաւորեալ գեր-
դաստանաւ , որ ողորմութեամբ Տեառն ունի , որպէս
վաճառական որ ի քաղաքիս , համարումն թէ յաղդի մեր
եւ թէ յօտար ազինս . ուստի դարձն իմ ի Ջուղայ կամ
շարժելս աստի՝ անհնարին : Արդ՝ եթէ այս իցէ յան-

ցանք իմ եւ օրինազանցութիւն ընդդէմ Աստուածային բանի եւ հրամանի Եպիսկոպոսին՝ արժանաւոր պատժոյն ահեղ եւ սոսկալի, զոր միջոցաւն թափեալ յիմ վերայ, թողում իրաւանց եւ դատաստանի Ձերդ հայրապետական ծովացեալ խնամոյ ։»

«Ահա առ Ձեզ զեղուն կան գրութիւնք մեր առաջի. զուցէ եւ իցեն նոյնասարաս գրութիւնք դատախազից մերոց Ջուղայու եւ աստի. որովք եւ փաստիւք նոցին յետ քննողութեան, յիմաստից եւ ի պարագայից անտի հարկաւ յայտ յանդիման գալոց է թէ յերկուց անտի ո՞րն՝ ուղիղ եւ աղգասիրական եւ ո՞րն՝ ընդ հակամէտն ։ Զուտ նիմ ես ներհակութիւն ինչ եթէ տուեալ լինիցի ինձ օրինօք վճիռ սխալանացս յայտնելով ի նմին ժամու զյանցանս ի պարագայից գործոց եւ գնայից իմոց. որոց ամենից ցուցակ եւ ապացուցութիւնք առ Ձեզ են ։ Յետ իրաւագատութեան եթէ վճռիցէք զիրաւունս շարաչար վրէժխնդրութեան հանգուցեալ Եպիսկոպոսին ըստ գործոց և գնայիցս՝ ինձ հատուցումն արժանի, ընդդրկեցիս և զայն սիրով ։»

«Զի որպէս նախընթաց գրութեամբս յայտնեալեմ Ձերում Վեհափառութեան, երկրորդեմ և ասա թէ. չունիմ փափաք միւսանգամ մտանելոյ ի պաշտօն թէմական եկեղեցւոյ տեղւոյս կամ այլ տեղեաց. և թերեւս իրաւամբ յոյժ, զի զկնի 35 ամաց քրտնահոս աշխատասիրութեամբ զոհելոյ զանձն իմ ի ծառայութիւն Աստուածորդաց, ընկալաց զսերկեանս հատուցումն Եպիսկոպոսին. մանաւանդ անառողջ բնութիւն անձինս թոյլ չտայ ինձ յայլ աշխատանս ծանր ։ Այլ որ ըղձալին

է ինձ և իրաւունք ժառանգութեան, մնալ ազատ և անգործունեայ մշակ եկեղեցւոյ, հսկող ի վերայ հոգւոյ իմոյ միայն, և այն՝ ոչ հպատակ հրամանի Առաջնորդի Ամենափրկչեան Վանայ, որ արտօնութեամբն բռնաբարչ դիս արասցէ միւսանգամ ի չարչարանս և ի ծառայութիւն իւր. այլ որպէս հոգևորական՝ մի միայն հպատակ Զեր և Էջմիածնիդ։»

«Արդ՝ եթէ չունիմ իրաւունս ըստ օրինի, և արժան է ըստ անիրաւ հաւածանայ Եպիսկոպոսին կապեալ և արգելեալ որ մնալ անարգարար և մեռանիլ որպէս դատապարտ և օրինազանց, ուրեմն կնքեցէք և դուք Զերով իշխանութեամբ ի դիւրութիւն սրտի իմոյ. իսկ եթէ ոչ՝ աղաչեմ, ով Վեհափառ Տէր՝ բարձէք յինէն զայսմանէ կանն վէմ Եպիսկոպոսին և ազատեցէք զիս ի չարաչար հարուածոց, որ ի մետասանեերորդ ժամուս անդրէն թախծարար յոտս Ողորմածութեան Զեր պազատիմ. արարէք դատ զրկելոյս և մի այլ թուլադրէք, արտասուօք աղաչեմ։»

«Առաւել պատիւ համարիմ մեծաւ ակնածութեամբ կալ և մնալ Զերում Սուրբ Օծելութեան անձնադիր ծառայ» (Զեռագրեալ) Վշտագնեալ Տէր Յովհաննէս Խաչիկեան Աւագ քահանայ Հայոց

Կարկաթա · 8 Ապրիլի 1863

Յետ նախընթաց հառիչ եկեսցուք այժմ ի հետազոտութիւն պատասխանեայ Վեհափառ Կաթուղիկոսին, թէ առ Տէր Յովհաննէս Խաչիկն և թէ առ Պարոն Սէթ Յ·

Աբղար Աթոռական երկրորդ ժողովոյ նորին Տէր Յովհաննէսի ի քննողութիւն իրաւանցն ընդդէմ անիրաւ արգելանաց հանդուցեալ Թ. Եպիսկոպոսի։

## (ԿՆԻՔ)

Մատթէոս Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաբն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Աղթամարայ Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կաթուղիկէ Էջմիածնի, Յովհաննու Աւագ Քահանայի Խաչկեան հայրական օրհնութեամբ ծանուցանեմք։

«Զցաւալի անհամաձայնութիւն ձեր և վիճակաւոր Առաջնորդին Ջուղայու և Հնդկաստանի Թադէոս Աբբ Եպիսկոպոսի տեղեկացեալ արդէն թէ ի դրութեանց ձերոց և թէ ի նոցայնոցն, արժան դատեալ պատուիրեալ էաք նմա, որպէս փոխանորդի մերում, թէ զինչ ինչ հարկ իցէ զառաջս առնուլ այդօրինակ դայթակղելի երկպառակութեան տարածելոյ ոչ ի ձեզ միայն. այլ և, որ յաւէտ վշտալին է, և յոմանս վիճակայնոցդ սիրելի համազգային ժողովրդոց. այլ նա, որպէս յայտնի է մեզ ի դրութեանցդ ինչ, նոյնպէս և ի նամակէ ձերմէ տողելոյ յ8 Ապրիլի տարւոյս, իբրև ընդ միջին լմն չաւիղ ընթացեալ, հրաժարեցուցեալէ զձեզ ի փոխանորդական պաշտամանէդ, կոչեալ առ ինքն պատասխանատու լինել վասն ամբաստանութեանցն, և յոչ անսալն

ձեր առաջարկութեան նորա՝ դադարել ի քահանայա-
գործութեանց՝ զուրկ և ի պատուանշանաց ։»

«Սակայն մեք և զայս խորհուրդ նորա համարեալ
խիստ վասն առաւելապէս ևս ամբոխելոյ ժողովրդոյ,
առաջադրեալէաք նմա բաւական վարկանել զհրաժա-
րումն ձեր և թողուլ զձեզ ի քահանայագործութեան և
յարտօնութիւնս պարգևանշանացն. բայց, որպէս նշմարի,
օրհաս մահու Աղաջնորդին հասեալ ի վերայ՝ չէ տուեալ
նմա ժամանակ հաղորդելոյ ձեզ և օրհնեալ ազգային հա-
սարակութեան տեղոյդ զիմաստս քանի ինչ կոնդակաց
մերոց, յորս յետ յոլովագոյն բանից, պատուիրեալէաք
հանգուցելոյն բարեյարմար տնօրէնութեամբ և չյիշե-
լով զանցեալսն վերջացուցանել խաղաղ զառիթն խռո-
վութեան և ազգակործան անմիաբանութեան ։»

«Ապաքէն նա ըստ մահկանացուացս օրինի, կնքեալէ
զկեանսն ի տալ զհամար աստուածային դատաստանի,
որում և ամենայն մարդ պարտի հանդիպիլ և ժառանգել
զհատուցումն գործոց իւրոց. և ոչ ինչ ի դէպ համարիմք
զարգելումն ձեր ի քահանայագործութենէ. վասն որոյ
տամք կոնդակաս օրհնութեան հրաման շարունակել
այդր զպաշտօն զեկեղեցական ըստ առաջնոյն և ունիլ
զպաշտօնդ՝ հրաժարեալ միայն ի փոխանորդութենէ
Հնդկաստանի. եւ պատուիրեմք անյիշատակ առնել բո-
լորովին, զոր ինչ պատահեցան մինչ յարդ, մանաւանդ
զի օրինակ բարի լինիլ ժողովրդոյ և արածել զնոսա որ-
պէս արիոն հովիւ այնպիսի կատարելութեամբ, զորս
պատուիրէ Սրբազան Աղաբեանն Պետրոս. «Զերի-
ցունս այսուհետև աղաչեմ, իբրև զերիցակիցս եւ

վկայս չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձելոց փառացն յայտնելոց հաղորդ։ Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ վերակացու լինելով մի իբրև ակամայ. այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի զոչաքաղութեամբ. այլ յօժարութեամբ. մի իբրև տիրելով վիճակացն. այլ լինել օրինակ հօտին, զի յերևիլ Հօտապետին ընդունիջիք զանթառամ փառացն պսակ. Ա. Պետրոս. Ե. 1–5։»

«Զգուշացուցէք զսիրելի համազգի որդիս Կաթուղիկէ սրբոյ Էջմիածնի, ի միասակար երկպառակութենէ եւ ի բազմաղանդ կրօնից. յորդորեցէք զնոսա ի խաղաղութիւն և յաղգասիրութիւն յուսացեալ յամենաբաւական շնորհս Հոգւոյն Սրբոյ. զի մինչ ի գալուստ Նորոյ վիճակաւորի ոչ ինչ մեասցէ յանբարեացն ի ձեզ, զոր մտադիր եմք առաքել ըստ ժամանակին։»

«Ողջունեմք զհամօրէն քահանայս և զբարեպաշտ հասարակութիւն կողմանցդ այդորիկ մատուցեալ նոցա զօրհնութիւն մեր հայրական։»

(ձեռ.) Վչտալի Մատթէոս Կաթուղիկոս Ամենայն Հայոց

Ի 25 Մայիսի. 1863 – ՌՅԺԲ։ Ի Տփխիս. համար 206

## (ԿՆԻՐ)

Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համաշխարհական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

«Հոգեհարազատ որդւոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի և բարեջան Եկեղեցվանի Կալկաթու Պարոն Սեթայ Յ. Աբգարեան, սիրելոյ մերում ի Տէր Քրիստոսանդ օրհնութեամբ ծանուցանեմք։»

«Որդիական գրութիւն Սիրելութեան Ձերոյ գրեալ ի 19 Փետրվարի սոյն ամի, զոր ստացաք ի 21 ամսոյս, պարունակեալ յինքեան զանհամաձայնութիւն Յովհաննէս Աւագ Քահանայի Թաչկեան ընդ վիճակաւոր Առաջնորդին Ջուղայու Թադէոս Արք Եպիսկոպոսի, և զառաքաղարտ խռովութիւնն ծագեալ ի ժողովուրդս տեղւոյդ յայս պատճառ, և զկարծիսն մեր, որպէս թէ անտարբեր իցեմք յերկպառակութիւնդ այդմիկ, և ոչ իսկ մտադրութեան արժանի համարելով զնամականին ձեր և այլոց ի վերջաւորութիւն գայթագղելի առարկայիցն խռովութեան։»

«Սակայն արժան դատեալ տալ զդարձուած գրութեան ձերոյ՝ ոչ ինչ առիթ ունիմք աւասիկ մեղադրանս զձեօք ածել գիտելով զի անտեղեակ էք բոլորովին թէ քանի հոգածութեանց և սրտամաշ խորհրդածութեանց պատահեցաւ մեզ պատճառ այդօրինակ անբաւականութիւն երկուց հոգևորականաց, յառաջեալ ոչ այնքան յար-

դարացի բողոքանաց, որչափ ի գրգռմանէ պատուասէ-
ութեան, որպէս յայտ առնեն բազմաթերթ պարակք
հակառակախօսութեանց եղելոց յերկոսին կողմանս, և
թէ զի արդ սեպուհ պարտաւորութիւն համարեալ մեզ
առնուլ զառաջս ցաւալի երկպառակութեան, առա-
քեալեմք արդէն զկոնդակս յանուն Առաջնորդին ի 17
Յունիսի 1862 ամի, համար 341. յորս ծանուցեալ նմա
ընդերկար զսխալանս իւր վասն շուտափոյթ ինքնակամ
անօրէնութեան արդելոյ ի պաշտամանց զյիշեալ Յով-
հաննէս քահանայն և համարելոյ զնա զուրկ յամենայն ար-
տօնութեանց՝ պարտաւորեալք անյիշաչար լինիլ
անցելոցն մեղանաց զմտաւածելով ի մի կողմանէ զբրիս-
տոնէական օրէնս աւետարանական, և ի միւսմէն՝ զյան-
կալին խաղաղութիւն սիրելի ժողովրդոյդ բնակելոց ի
Հնդկաստան, ուր պահէրդ արդարև ի միջի բազմաղանդ
կրօնից զփառս Աղդութեան և ուղղափառութեան Ա-
ռաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց. և մանաւանդ՝
առաջադրեցաք նմա գրել առ որս արժան է, և որպէս
պէտք իցեն, չիջուցանել զհրդեհն խռովութեան։»

«Այլ քանզի չիք ձեր տեղեկութիւն զայսցանէ, են-
թադրեմք զի վասնզի կենաց Թադէոս Այրք Եպիսկո-
պոսի Ամենափրկչեան Վանս Ջուղայու վարագուրեալ
իմիջ զիմաստս կոնդակաց մերոց, զորս կրկնելն ասա-
նօր աւելորդ վարկանիմք յուսալով ընդ դադարումն յայ-
սմհետէ անհամաձայնութեան նոյն քահանայի և բարե-
պաշտօն ժողովրդոց մեծաց և փոքրունց, որոց ամենե-
ցուն յորդորեմք սիրել զմիմեանս ազգասիրական ջերմե-
ռանդութեամբ, փոյթ ունիլ ի հաստատութիւն բարեկարգ

ազգային վարժարանաց, արմատախիլ առնել զտարա-
պարտ ատելութիւնն, յորմէ ոչ մի ինչ օգուտ. այլ յաւէտ
կործանումն Ազգութեան և գայթագղութիւն հաւա-
տոյ, որպէս ցաւալի դէպք պատահեալք երբեմն ի հայրե-
նիս մեր զսոյն հաստատեն։ Արդարև յոյս մեծ ունիմք
ընդ վերջաւորութիւն բանակռուութեանդ այդորիկ, ա-
ռաւել պատուեալ ձեր ամենեցուն զօրէնս Ազգասիրու-
թեան քան զոր ինչ ընդդէմ է նմա, և առաւել յարգեալ
զբաղձանս սրտի մերոյ ընդ խաղաղութիւն բարեպաշտ
վիճակաւոցդ, քան զոր ինչ դժպհիւ է մեզ յաւէտ։»

«Այսաբէն պարտաւորեմք զձեզ դի, որոց արժան է,
հաղորդեսջիք զիմաստս կոնդակի մերոյ յորդորելով զնո-
սա ի սէր և ի խաղաղութիւն միաբանական, որպէսզի
յառաքեն մեր ի մօտոյ ըստ յայտնելոյ Տեառն Աստուծոյ
ի տեղի հանգուցելոյն նոր վիճակաւոր Այր Եպիսկոպոս,
մի ևս ի վեր երևեսցին հետք անդամ անցելոցն անհամա-
ձայնութեանց և տարաձայնութեանց. այլ որ ինչ բա-
րին, կատարեալն և հաճոյքն են Աստուծոյ, շնորհօք
Սուրբ Հոգւոյն փայլեսցին ի ձեզ ի փառս Ազգիս և ի մը-
խիթարութիւն մեր։ Մաղթեմք ի Տեառնէ զերկնաձիր
շնորհս Աստուածութեան իւրոյ ի վերայ ձեր և ի վերայ
•րհնեալ ժողովրդոց տեղւոյդ։ Ողջունեմք զամենեսեանդ
հայրական օրհնութեամբ։» (ձեռ.)

Վչտալի Մատթէոս Կաթուղիկոս Այենայն Հայոց

Ի 21 Մայիսի. 1863–ՌՅԺԲ։ Ի Տփխիս. համար 199։

Այդ յետ նկարագրութեան անցիկ մինչ ցայս վայր,
հաղորդեմք ընթերցողաց զոր ինչ գրէ Եղբայրասէր Լը-
բագիրն ի 25 Սեպտեմբ. յայսմ մասին։

Նկա բազիր աւուր ընթերցման կոնդակաց յեկեղեցւոջն Հայոց Կալկաթայի, քաղեալ յԵղբայրաւէր լրագրոյ ի 25 Սեպտեմբերի 1863 ամի :

«Ամսոյս 19ին մի յայտարարութիւն դուրս եկաւ տեղոյս Նազարեթայ Սուրբ Եկեղեցւոյ Աւանդատանիցն և շրջաբերեցաւ ի մէջ հասարակութեան Հայոց քաղաքիս : Յիշեալ յայտարարութիւնն գրուած էր այսպէս : »

## « Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ւ Ն

Լիցի Պատուելի Հասարակութեան մերազնէից եղեալոց սատ, զի կոնդակն եկեալ ի Նորին Բարձր Սրբազան Տեառն, Տեառն Մատթէոս Կաթուղիկոսէն Ամենայն Հայոց, որ յԷջմիածին, յանուն Սրբակրօն Տէր Յովհաննէս Խաչիկեան Խաչակիր Աւագ Քահանային և միւսն՝ Պարոն Սէթ Յ. Աբգարին նշանագրեալ, որպէս եկեղեցական, ընթերցեալ լիցին ի Սուրբ Եկեղեցւոջ մերում յառաջիկայ կիւրակէի ի 20երորդում ամսոյս ի սովորական ժամու սրբոյ պատարագին ըստ կանոնին : »

Ձերոյ խոնարհ ծառայ

(ձեռ.) Կարապետ Յ. Վարդանէսեան, Եկեղեցական

Կալկաթու և Ձիշրու Սրբոյ Եկեղեցեաց Հայոց

Յառանդատան Նազարեթայ Սուրբ Եկեղեցւոյն Հայոց ի Կալկաթա. 17 Սեպտ. 1863 :

«Լսումենք որ նոյն օրն (ամսոյս 19ին) երեկոյին երեքին վիճակաւոր քահանայքն տեղւոյս, որոց երկուքն էին

նոքա որ բողոքագրի ճակատումն բոլորից յառաջ ստորագրած էին (1861 . Դեկտեմբեր 21) գնացած են անձամբ Սրբակրօն Խաչակիր Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Խաչկի տունն, և հրաւիրածեն նորան, որ յառաջիկայ առաւօտեան բարեհաճի գնալ յեկեղեցին . քանզի նոյն օրն պիտի որ ընթեռնուին Սրբազան Կաթուղիկոսի կոնդակն : Հետեւեալ կիւրակէի առաւօտն ներկայացած է Սրբակրօն Աւագ Քահանայն եկեղեցումն . և քանզի մեր տարաբախտապէս տակաւին բանդումն լինելով չկարողացանք ներկայ գտանիլ Սուրբ Տանն նոյն օրն, մեր մին բարեկամի գրած նամակն օրինակեցինք ի ներքոյ, որ ինքն ներկայ և ականատես լինելով հանդիսին՝ այսպէս կնկարագրէ զայն : »

« Փոքր ամ ցնծութեամբ, Արգոյ Վերատեսուչ՝ տալ քեզ զնկարագիր հանդիսի ներկայութեան յեկեղեցւոջ յայսմ աւուր Նորին Արժանապատուութեան Խաչակիր Տեառն Յովհաննու Խաչկեան Աւագ Քահանայի, զոր նկարագիր, որպէս կարծեմ, հետաքննին յոյժ լինելոց է և ցանկալի ձեզ և ընթերցողաց լրագրոյդ եթէ կամ ինչ իցէ այնպիսի հաղորդել զայս լուր և նոցա միջոցաւ Հրապարակիդ : »

« Այն ինչ յեկեղեցւոջ էաք յայսմ առաւօտու, և մինչ զալիրքն երգէին զերգն Խորհուրդ խորին յանկարծուստ լսելի եղև ջուաչիւն ինչ երկնի կառաց յարտաքին դրունս սրբոյ եկեղեցոյն, մինչ զեռ սպասէաք տեսանել թէ ո՛վ այն վաղցարոյց պատուելին . քանզի քաջ իսկ գիտէք թէ երևելիք բաղաքիս դուն ուրեք երբէք կանխեն ընդ առաւօտն յեկեղեցի . այլ ի ժամ սրբասացութեան

և կամ առաքելոցին հազիւ թէ ներկայանան անդ, զկնի սակաւուց դէտակն կալեալ տեսաք զԱրժանապատիւ Աւադերէցն, որ իջեալ ի կառաց՝ յառաջէր հանդարտ գնացիւք յեկեղեցին, զոր տեսեալ ծառայից՝ յուրախութենէ սրտից, գոգցեա, չփոթեալ և այր զարամբ ելեալ՝ չգիտէին զինչ առնել՝ ամենեքին ջանացեալ սպասաւարկու լինել նորին Արժանապատուութեան։—Այլ նորա անտարբեր դրեթէ խաղացեալ յառաջ՝ եմուտ յեկեղեցին զարդարեալ զանջն իւր Հայրապետական և Կայսերական չքանշանօքն, իշխանութեան գաւազանն ի ձեռին և արկեալ զիւրեաւ զծաղկեայ կապուտակագոյն վիրսն. այլ քան զամենայն առաւել զարդարեալ զանձն խոնարհութեամբ և ճշմարիտ ջերմեռանդութեամբ. բանզի թէպէտ պատրաստեալ էր տեղի վասն նորա ի վարդապետի դասուն. զի վաղուրեան տեղի տուեալ էր անտի Տէր Գալստեանն ի դասն աշակերտի. սակայն նա Աւադերէցն, նախ քան զերթալն ի տեղի իւր, մատեաւ յառաջ և խոնարհութեամբ մեծաւ համբուրեաց զսուրբ Աւետարանն և զկնի համառօտ ինչ անչչունչ աղօթիւ ելապա ջերմեռանդութեամբ ի բեմն և համբուրեաց զսուրբ սեղանն. և ապա իջեալ ի վայր՝ կանգնեցաւ ի տեղւոջ իւրում։ Եւ ապա պատարագիչ քահանայն ի խորանէն. և զկնի սակաւուց, արտաքոյ բան զսովորականն, գունդ-գունդ սկսեցին ժողովուրդք խռնիլ յեկեղեցին, որոց ամենեցուն ի դէմս երևէին յայտնատեսիլ նշանք խնդութեան. «ամենեցուն որ ի ժողովրդեանն էին աչք» ի նա՝ յԱւադերէցն հայէին. սակայն ինքն հայէր և եթ ի վեր յերկինս և անմռունչ զոհութիւնս ի վեր առաքէր Աստ-

նակալին, որ ի բաց արար ի ձեռանէ նորա զբաժակն կոր-
ծանման։ — Շարունակեցաւ պատարագն մինչ ցՀայր
մերն և ցառուր մեզ հաւարակաձայն բարբառով և այլն։»

«Եղծերունազարդ Տէր Գալստանն ի սեղանն և ընթեր-
ցաւ բարձրաձայն զերկոսին կոնդակս Վեհափառ Կաթու-
ղիկոսին ի լուր ամենեցուն։ Թէպէտ սովորութիւն է կան-
խել նախ քան զընթերցումն Հայրապետական կոնդակի
զերգ ինչ կամ շարական պատշաճաւոր. սակայն ըստ ո-
րում «Սարկաւագ դասապետն» յուրախութենէ սրտին
թերևս, չէր ներկայ յեկեղեցւոջ, այլ, գոգցես չիտ-
թեալ իմն՝ ոչ կարացին գտանել զպատշաճաւորն զայն
երգ. ուստի ի դանդաղիլ նոցա սկսաւ Սրբակրօն Տէր
Գալստանն ընթեռնուլ զառաջին կոնդակն ուղղեալ առ
Սրբակրօն Աւագերէցն (1). և յաւարտին ընթերցեալ
եղև ասպա Նորին Օծութեան օրհնութեան կոնդակն ա-
ռաքեալ առ Բարձրապատիւ Աղգասէր Պարոն Սէթ Յ.
Սրգարեան։ Զկնի ընթերցման երկուց կոնդակացն
դարձեալ ասպա Աւագերէցն առ ժողովուրդն՝ խօսեցաւ
ընդ նոսա շնորհաշուք կերպարանօք և խաստալից բանիւք
զհամառօտ ինչ, այլ կարի ազդու և պատշաճաւոր առա-
ջադիր նպատակին բանս յորդորական յայտ առնելով
նախ խորին երկրպագութեամբ զգոհութիւն իւր Աստ-
նակալէն, որ զկնի երկամեայ հրաժարման իւրոյ ի սիրելի
հօտէն իւրմէ, արժանի արար զինքն զգուել զնոսա վե-

1. Այն այս կոնդակ անվակ ժրարեալ ի կոնդակի Պարոն Սերայ, որ, զկնի ընթերցման, յեկեղեցպանէն պարտուպատ-
շաճ գրութեամբ առաքեցաւ առ Աւագ երէցն։

բրստին սիրով ի գաւիթս տան Տեառն, յորում պաշտօնեայ էր եղեալ ինքն և վերակացու յընթացս անցեալ ութեւտասն ամաց։ »

« Ամենութեամբ իմն գեղեցիկս օրինակեայ զանձն անդնդահիւր մարդարէին ոչ զերիս աւուրս. այլ զերկեամ մի ծփեալ ի դառնագոյն ծով չարչարանաց և կլեալ ի սպառ ի վերահաս փորձանաց ահեղ կիտոսէն, ոչ միայն իրաւունք նորա թաղեալ ի խորս վատահամբաւութեան· այլ հրամանաւն աստուածային անկան վերստին ի տարր իւր կենդանածին և ի վերայ վիմին ճշմարտութեան հաստատեցաւ ոտն նորա միւսանգամ · կցեաց ընդ նմին եւ զիւրն խորին ակնածութիւն և զոհունակութիւն առ Վեհափառ Կաթուղիկոսն Ամենայն Հայոց Տէր Մատթէոս, որ իբրև Ծայրագոյն Պատրիարք և Եպիսկոպոսապետ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, աստուածատուր իւրով իմաստութեամբն թափանցեալ ի խորս դժուարին և բազմակնճիռն դատին, իբրև դատաւոր արդար և անաչառ, արարեալէր դատ զրկելոյն ոչ դատապարտեալ զանմեղն · այլ պատուեալ զիրաւունս նորա (Ամաղ Փահանային) հայրապետական օրհնութեան կոնդակաւն ի խաղաղութիւն ժողովրդեան եւ ի բարձումն յաւալի երկպառակութեան։ Ցաւելի ինչն ասա Այժանապատիս Ամաղերէցն ի սրտէ չնորհակալութիւն իւր առ ներկայ եղեալ համօրէն Հայ ժողովրդականս բազաբիս վասն սիրաշարժ գումարման նոցա յեկեղեցին ի ցոյց Ջերմեռանդութեան իւրեանց առ Աստուած վասն փրկելոյ զութեւտասնամեայ զհովիւ իւրեանց աշխատաւոր ի զարհուրելի ալեկոծութենէ անակնունելի

փորձանաց և հաստատելոյ զնա վերատին ի նաւահան-
գիստն խաղաղութեան ։»

«Յուշ արար նոցա համառօտիւ զանցեալ ութեասան-
նամեայ անդորրալից և խաղաղական վիճակ ազգայնոց
բազաբիս ընդ անցեալ երկամեան անախորժ և տխուր
անցիցն . եցոյց նա զիւրն ի սրտէ տրտմութիւն վասն
անցելոց անհաճոյ եղելութեանց . սակայն ոչ կամելով
զշնացեալ վիրաւորժդոհանաց երկուստեք բանալ վերատին
արդարացուցանելով զանձն կամ դատապարտ առնելով
զհակառակորդն , ի մէջ երեր զծիրանազգեաց Մարգա-
բէին դրանս հոգեշունչ թէ . «ոչ որ է որ առնէ զբաղց-
ութիւն . և չէ որ մինչև ի մի ։ — Ամենեքեան խոտորե-
ցան ի միասին և անպիտանացան ։» Զոր բան վասեմ ա-
սացուածովք և հրաշալի աստուածաբանութեամբ մեկնա-
բանեալ՝ ի վերայ երեր զկնի բազում բանից թէ անկեալ
բնութիւնս մարդկային զիւրազայթ ի փորձութիւնս և
հակամէտ , չկարէ ապաստանարան ումեք լինել ի հոգա-
ծնաց , կոչել զանձն բոլորովին արդար և անմեղ , և թէ .
«եթէ ասցեմք եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք , զանձինս
խաբեմք , և ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ ։» — Զառաբե-
լականն ասա ի մէջ երեքեալ զրան՝ յաւելնա ասել . թէ
մարդկային անկեալ բնութեան է բուսուցանել յինքեանն
զփուշ և տատասկ մեզաց առնելով զայն , որ ոչն կամի .
բանզի ոչ նաև որ գործէ . այլ բնակեալն ի նմա մեղքն ։»

«Եցոյց նոցա թէ ո՞բպէս չարին հրապոյրք և երկպա-
ռակութեանն դև սողսկեալ մտանէ բազում անգամ և
ի մէջ սիրելեաց , եղբարց և ազգականաց , տինա՝ և ի
մէջ հօր և իւր զաւակաց իսկ . և վեր ի վայր կացուցանէ

զխաղաղութիւն դերդաստանին. սակայն չէ պարտ ասաց նա. անձնիւր ի վերայ կարծեցեալ իրաւանց մերոց յա-մառեալ, ևս քան զևս ճարակ մատուցանել խռովութեան հրդեհին. այլ համարելով զանձինս մարդ սխալական, ներել պարտիմք միմեանց և թողուլ, խաղաղութեանն ջրով լուանալ զվէրս սրտից մերոց և դնել ի վերայ քրիս-տոնէական սիրոյն զծպեղանիս։ Եւ ապա յառել սըր-տաշարժ յոյժ բանիւք և արտասուախառն կերպա-բանօք ասել օրինակ զայս. «Հետևեալ իմ Օրինակին այնմ, Որ ի վերայ Թաչին վասն խաչահանուայն աղո-թէր, ըստ պարտուց պաշտաման իմոյ և համաձայն սիրա-շարժ յորդորանաց Վեհափառ Կաթուղիկոսին, անտես և անյիշելի առնեմ զանցեալն, և թողում ամենայն սրտիւ ամենեցուն, որոց յանցուցեալ ինչ իցեն ընդդէմ իմ բանիւ, գործով կամ մտածութեամբ, նոյնպէս և ես թողութիւն հայցեմ և ներումն յայնցանէ, որք կար-ծեցեն թէ զրկեալ ինչ իցեն յինէն և կամ վշտացեալ ո՛ և իցէ եղանակաւ։ Ներեցէ՛ք աղաչեմ, Որդեակք՝ նե-ռեցէ՛ք. եւ եթէ մարդկօրէն ինչ մեղուցեալ իցեմ ընդդէմ ձեր, շնորհեցէ՛ք ինձ ի սէր Այնմ, Որ եթողն և թողու զօրհանապազ զմեղանս ձեր հեղմամբ արեան Միածնի իւրոյ. եթէ ոչ թողուցումք միմեանց, եղբարք՝ և մեք ոչ կարեմք հասանել թողութեան, և սուտ ձևա-նամբ կրկնելով զտէրունական զաղօթս յամենայն ժամ. «Եւ թո՛ղ մեզ զպարտս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց . . . »

«Աստանօր ի խորոց սրտէն հառաչանք եւ հեկեկումն, զոգցես, չափ եղին սիրայորդոր բանից Աչադերիցուն եւ

ընդհատեցին զայն բոպէս քանի մի, յորում, ժողովուրդն, որ յակտիռս եղեալ կայր անշշունչ, հնչէր տակաւին յունկն նոցա վերջին բառք պարբերութեանն. «որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։» — Վայր մի հոգի առեալ շարունակեաց Սրբակրօն Հայրն զրանս իւր վերստին, եւ այսոքիկ բանիւք աւարտեաց զիմաստաղեղ խրատ իւր յորդորական ասելով. Չնորհ ունիմ մեծապէս զԱրժանապատիւ Եկեղեցպանէն վասն տալոց ընթեռնուլ ի լուր ձեր զկոնդակս Վեհափառին. խոստովանիմ նաեւ զգոհունակութիւն իմ առ կարգակից եղբարս իմ, որք յանցելում երեկոյի սիրոյ հրաւիրանօք եկեալ ի տուն մեր՝ հրաւիրեցին զիս յեկեղեցին, և քան զամենայն առաւել, չնորհ ունիմ մեծապէս զձէնջ, ո՛ հանդիսատես սիրելիք՝ վասն ուրեւտանամեայ հաւատարիմ որդիական պարտաւորութեան ձերոյ, զոր լսուցիք անթերի ի բաւարարութիւն անձին իմոյ ամօք ինչ յառաջ, որպէս բաջայայտ է ամենեցուն, կամ էր ինձ զայս մատուցանել ձեզ չնորհակալութիւն և հեռանալ ի պաշտօնէս. սակայն խափանեցայ առնել յայնժամ ի յորդորանաց ոմանց ի սիրելեացդ, զորոց զերեսս աւասիկ տեսանեմ դէմ յանդիման։ Արդ զկնի անցանելոյ զարհուրելի փոթորկին ոչ կարեմ թողուլ ի ձեռանէս զպատեհութիւնս զայս մատուցանելով ձեզ ընդ չնորհակալութեան իմոյ զվերջին իմ հրաժարական ողջոյն ի թէմական պաշտօնէս, թէպէտև Սրբազան Կաթուղիկոսն օրհնութեան կոնդակաւ իւրով չնորհէ դարձեալ նուաստութեանս կալ եւ Ծալի նոյն պաշտօնին, յորում էի յառաջն. սակայն ծերութիւն իմ եւ այլ զանազան խափա-

նարարք արդելուութիւն ինձ հանդիսանան սպասաւորել այլ ևս յայսմիկ տան, իբրեւ թէմական քահանայ։ Իմ կամք եւ խորհուրդ են յետ այսորիկ պարապիլ աղօթից եւ աստուածային խոսմանց, եւ մինչ ցկէտ կոչմանս թէ ոչ այլով իւիք, զէթ աղօթիւք եւ բարեմաղթութեամբ ունիմ նպաստել կենաց եւ բարօրութեան Սիրելեացդ, զորս եւ յորդորելով կրկին եւ կրկին անգամ ի սէր միաբանական եւ ի խաղաղութիւն՝ յանձն առնեմ ի շնորհս գթութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։»

«Ապաքէն միտք իմ ոչ կարէին ըմբռնել կարդալ, թո՛ղ թէ, պահել ի յիշողականիս զրաւս եւ զրանս, որք հետ զկեանէ, իբրեւ յորձանս հեղեղայ, արտաքս զեղուին ի ճարտար լեզուէ բարոյչին. եւ ոչ ունէին իմ կարէր հետեւել բանից նորա, թարց ասա եւ անդ կորուսանելոյ զբազում հաստուածս ի գեղեցիկ յարմարութենէն. բանզի իբրեւ ի յորդառատ աղբերականէ բղխէին բանք շնորհայ ի բերանոյ Աւազերիցուն, եւ այնչափ զուարճացուցանէին զլսողս, որչափ զարմացուցանէին. ուստի զոր ի վեր անդր զրեցի, զրեթէ զլխաւոր մասունքն էին յորդորական ճառի նորա եւ ոչ բովանդակութիւն. քանզի լի էր եւ զեղուն բանն վսեմ ասացուածովք, գեղեցիկ նմանաբանութեամբ եւ խմաստուն եւ ճարտար դարձուածովք բանից, զորս եթէ կարէի միով եւ եթ ունկնդրութեամբ ի մտի դանձել անպակաս, անշուշտ և ես լինէի այր համանման նորա։»

«Որպէս կանխեցի զրել ի վերոյ, լի էր եկեղեցին բազմութեամբ ականաւոր և երևելի ազգայնոց քաղաքիս, որք ի հերուն հետէ հրաժարեալ էին անտի. երեսք

ամենեցուն նոցա ուրախ եւ պայծառ, ոչ վասնզի յաղթեցին հակառակորդաց իւրեանց. այլ զի բարձրացաւ կողմն ճշմարտութեան. եւ եղիտ անիրաւեալն զիւրն իրաւունս վերստին։ Այո՛, քանի մի երեսք, որք ի սկզբան անդ սպիտակ էին, իբրեւ բռեալ որմունս եկեղեցւոյ, շառագունեցան հետ զհետէ, եւ ի վերջոյ դալկադոյն տգեղացան, բայառութիւնք էին ընդհանուր պայծառաւորիչ կերպարանացն. սակայն թուով այնչափ նուազունք, մինչ ընկղմիլ նոցա իշխիք ի մէջ բազմաթիւ սիրուն երեսաց . . . . »

---

Թուղթ շնորհակալութեան արարեալ Պատուելի Հասարակութեանն Հայոց Կալկաթայի ի 28 Սեպտեմբ. 1863 տմի առ Աւետարանիչ Տէր Մատթէոս Կաթուղիկոսն յաղագս արձակելոյ զԱւագ քահանայն իւրեանց յանտոնի կապանաց Բ. Ս. Թադդէոս Առաքելոյ։ —Նոյնպիսի թուղթ և յիշեալ Ավագ երիցուն։

Նախամեծար Արարատեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, Տեառն, Տեառն Մատթէոսի Սրբազնակատար Կաթուղիկոսի Աւետեանն Հայոց, օծեալ աջոյն համբոյր պատկառանաց

Վեհափառ Տէր՝

«Եթէ ի դէպս բարեյաջող ելից, իբրև հետադարձեալ յիշատակ, թուական ինչ նոր սովոր են կարգել մարդիկ. ապա և մեզ ոչ ինչ տարաղէպ դէպքերատասաներորդ օր Սեպտեմբերի ամսոյ թուական ինչ նոր մեծի բարեբախտութեան Հայազգի ժողովրդականաց քաղաքիս հա-

մարել. բանզի յայնմ աւուր խաղաղասիրեա կոնդակը սուրբ օրհնութեան Ձերոյ, որպէս Նոյեան աղաւնի, ա-ւետեցին մեզ զհանդարտիկն զարհուրելի հեղեղայ ազգա-յին երկպառակութեան քաղաքիս շնչելով ի խռովեալ և յամբոխեալ միտս մեր զխաղաղութիւն ցանկալի և զե-միւռ յոգիսն սիրոյ վերստին շաղկապեալ ի մի զրաժա-նեալ զորդիս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ։ Ե-զի՞նչ տրիտուր վասն այսպիսի ծայրագոյն շնորհայ, եթէ ոչ՝ յետ միանգամ անջինջ դրոշմելոյ զայն ի սիրտս մեր անմոռանալի, խոնարհագին և երախտագէտ սրտիւ մաղ-թել ի Տեառնէ՝ երկարել զթել զպատուական կենաց Ձերոյ ի ծայր գաւազանի իշխանութեան ընդ բազում ամս ի պայծառութիւն եկեղեցւոյ և ի փառս տառապեալ ազգիս։»

«Օրհնութեան կոնդակը Բարձր Արքազնութեան Ձե-րոյ ուղղեալ ի 21 Մայիսի և ի 25 նոյն ամսոյ առ Արժա-նապատիւ Տէր Յովհաննէս Խաչիկ Աւագերէցն մեր և առ Գերապատիւ Պարոն Սէթ Յ. Արգարն, որպէս առ հա-սարակութիւն մեր, ի 14 Սեպտեմբերի հասեալ այսր, և ըստ տեղական կարգադրութեան անցեալ ի ձեռս Յարգոյ Պարոն Կարապետ Յ. Վարդանէսեան, եկե-ղեցպանի և պաշտօնակցայ Նորին, տնօրինեցաւ ի նո-ցունց ընթեռնուլ զայնոսիկ յեկեղեցւոջ յառաջիկայ կիւ-րակէի՝ ի 20 Սեպտեմբերի ի լուր ժողովրդեան. յորում աւուր ինքն Տէր Յովհաննէսն, հրաւիրմամբ վիճակաւոր քահանայից, ներկայ եղեալ յեկեղեցւոջ, զկնի ընթերց-ման կոնդակաց, ազգու՛և սրտառուչ առենաբանու-թեամբ շահեաց և քաղցրայոյզ զսիրտս ամենեցուն յայտ-

նելով ընդ Տէրունական բանից և զՔերն Օծութեան զպատուէր՝ զանցեալն մոռանալ խոպառ և անյիշատակ առնել բնաւին զառիթ ցաւալի երկպառակութեան աղ-գայնոց բաղարիս . և յառաջեալ ի բանս իւր՝ ասաց առ ժողովուրդն թէ . «Թողում սիրով զյանցանս նոցա որոց մեղուցեալ իցէ ընդդէմ իմ և ես թողուլ խնդրեմ և մոռանալ զայն ինչս , զոր ոք կարծիցէ թէ կրեալ իցէ յինէն ։» Եւ յետ մատուցանելոյ զչնորհակալութիւն իւր վասն անցեալ ութեւտասնամեայ մատակարարութեան վայելեալ բարեաց նոցա՝ ետ և զհրաժարականն իւր ի թէմական պաշտամանց պահելով զինքն ազատ պաշտօ-նեայ եկեղեցւոյ և պատուոյ Աւագերէցս։ Կնքեաց զբանս իւր մատուցանելով զիւրն ի սրտի գոհութիւն առ ամենա-կալն Աստուած, որ արժանացոյց զինքն զկնի իրրև երկուց ամաց հրաժարման , տեսանել զՀօտ իւր սիրելի ի դա-ւիթս տան Տեառն . ուր յընթացս ութեւտասն ամաց մա-տակարարեալէր նորա զբանն կենաց ։ Կցեաց ընդ նմին եւ զգոհութիւն իւր զՔէնջ , որ իրաւադատն եղեալ ա-զատեցիք զինքն յանպատուութենէ և ի վերահասն փոր-ձանաց . եւ այսու առիթ եղէք խաղաղութեան եկեղե-ցւոյ բարձեալ ի սպառ զերկպառակութիւն հրդեհին ։»

«Եւ թէպէտ հրաժարումն նորա ի թէմական պաշտօնէն, ըստ խիզ հակառակ կոնդակի բանից օրէնաբեր կոնդա-կաց Քերոց , որք հաստատեն զնա ի նախկին յիւրում պաշտաման . սակայն ըստ որում նա բարեմտութեամբ ոչ կամեցաւ հեռացուցանել զերկրորդ Աւագերէցն ի պաշտօնէ իւրմէ, զոր չնորհէաւն է նմա հանգուցեալ Թադ-դէոս Եպիսկոպոսն , եւ այլ եւս զանազան իրաւացի-

պատճառաց յաղագս, զորս աւելորդ համարիմք յիշատակել աստանօր, արժան դատեցաւ թողուլ զայն պաշտօն իւր ի խաղաղութիւն եւ ի սէր միաբանութեան ժողովրդոց. ուստի եւ մեք չկամեցաք ստիպել զնա յայն, եւ խոնարհաբար հայցեմք ի Վեհափառութենէ Ձերմէ նեղոյամիտ առնա զտանիլ վասն այնորիկ։»

«Իսվախան զրութեան մերոյ յայտ առնեմք Ձերդ Վեհափառութեան եւ զայս, թէ ցաւիմք մեծապէս տեսանել շինչեալ իմն եռանդն հոգւոյ նորին Տեառն Աւագերիցու. եւ զիղջ է մեզ տեսանել զայրն ազգաշէն արտաբեկ եւ կամոլին հրաժարեալ ի պաշտօնէն զոր այլ որ, ցաւիմք, ըստ երկար վորձոյ ասել. ոչ կարէ կատարել բարեպէս. եւ որ յընթացս ութեւտասն ամաց արժանի դիներն կացոյց աստիճանին, յորում նշանակեալն էր եւ շուք եղ պաշտամանն իւրով արժանաւորութեամբն։»

«Պարծանք համարիմք մեծ ջերմեռանդութեամբ ստորագրել զանուանս մեր Ձերդ Գերափառութեան շընորհապարտ եւ երախտագէտ որդիք եւ ծառայք։»

Ի Կալկաթա. ի 28 Սեպտեմբերի. յամի Տեառն 1863

Ձեռագրութիւնք

| | |
|---|---|
| Լ. Յովսէփ Լամին | Լ. Մ. Լամին |
| Յարութիւն Գ. Աբգար | Գէորգ Պետրոս |
| Ա. Ջ. Տէր Աբրահամեան | Պետրոս Յ. Սարգսեան |
| Աղէքսանդր Յ. Աբգար | Պօղոս Կարապետեան |
| Ս. Ս. Ստեփաննոսեան | Մարտիրոս Ս. Յովհաննէս |
| Յովհաննէս Ռ. Շիրվօռ | Միրայէլ Մ. Յովհան |
| Մ. Մ. Ս. Յովհաննէս | Բ. Յ. Վրդանէսեան |

Յ · Մ · Շիրխօռ
Յ · Գ · Բաղրամեան
Գրիգոր Պ · Մելիտոս
Գ · Ոսկանեան
Մ · Տէր Յ · Գալստանեան
Յ · Յ · Ալվալեան
Մ · Կ · Շիրխօռ
Մ · Խ · Մալխաս
Յ · Յ · Քամալ
Խ · Յ · Ալվալեան
Ս · Գ · Բաղրամեան
Յովհաննէս Ալվալ կրսեր
Կ · Սարգիս
Յ · Ա · Միքայէլ
Խաչիկ Մկրտում
Ա · Ս · Ստեփաննոս
Մ · Ս · Յովհան
Մ · Յ · Սարգսեան
Զ · Մ · Զօրաբեան
Յ · Մ · Զօրաբ
Մ · Մ · Զօրաբեան
Ա · Զնթլում Ա.ստեան
Ե · Տէր Յարութիւնեան
Ս · Յ · Ստեփաննոսեան
Մանուկ Յ · Գաւթեան
Ի · Տէր Աբրահամեանց
Գէորգ Յ · Բաղրամեան
Ա · Ն · Գալստանեան

Յովհաննէս Կ · Սարգսեան
Ս · Յ · Բաղրամեան
Յ · Մ · Վարդանեան
Խ · Գ · Սէթ
Մարգար Գրիգորեան
Մ · Թ · Մանուկ
Դ · Յ · Մանուկեան
Մ · Յ · Քամալ
Յովհաննէս Զ · Շիրխօռեան
Թ · Մովսէսեան
Յ · Խ · Միքայէլեան
Յ · Ա · Սարգիս
Յ · Յ · Աբրահամ
Յովհաննէս Յ · Յ · Սարգիս
Կ · Մ · Յովհաննէս
Յարութիւն Յ · Սարգիս
Կ · Գ · Շիրխօռեան
Մ · Խ · Յովակիմեան
Յարութիւն Պ · Որդանանեան
Գ · Զ · Մանուկեան
Ո · Թ · Ոսկանեան
Յովհաննէս Խ · Յովհան
Ս · Մ · Շիրխօռ Բժիշկ
Յարութիւն Մայիլեան
Յովհաննէս Ս · Գարրիէլ
Յարութիւն Կ · Օրէնդէտ
Մելքում Մարգար

Նորին Աստուածարեալ Քահանայապետութեան Տեառն, Տեառն Մատթէոսի Եռամեծար Կաթուղիկոսի և արթուն Դիտապետի Սմենայն Տանս Հայոց Շնորհաբաշխ օծեալ սուրբ աջոյն համբոյր որդիական

## Սմենապատիւ Տէր՝

« Որպէս օրէն է մարմնաւոր ախտացելոյ յախտ ինչ չար և դժնդակ յառնելն յոտին ոչ միայն զառաջին քայլ իւր փոխել ի տուն Տեառն և ասա՝ բժշկին բարերարի ի մատուցանել զգոհութիւն . այլև զմնացորդս ժամանակի կենաց ի նորա վերագրել շնորհ , նոյնպէս և անձն իմ ինչ խնամօք Ձեր յարուցեալ յանկմանէ չարաչար հարուածոց ներքին և արտաքին թշնամեաց , յետ վճարելոյ զպարտիս առ Աստուած , Ձեզ փութամ վաղվաղել զգոհունակութիւնս անբաւ . սակայն առ յոչ գոյէ ուժեղութեան հոգւոյն առերեսել խմաստից , թէ զի՛ շնորհակալս և զոր գոհութիւնս Ձեզ ի տրիտուր շնորհաց և մեծի բարերարութեան մատուցից , որ ի վերջին հագագի զորավիգն եղեալ ներշնչեցիք ինձ կեանս նոր : Այո՛, ո՛վ Վեհափառ Տէր՝ այս իսկ եղեն ներգործութիւնք դիւրափոփոխ վիճակի մերոյ, որով Ձեր առաջի , այսօր, իբրև նոր էակ կենագործեալ , արժանանամ թոթովախօսութեանս . և առ ի չկարողանալոյ յայտնել տիրաբար զյաժարութիւն ներքին բաղձանացս , պատեհ ընկալնում , նախ՝զՁերն փորձառութեան խնամոց , և ասա՝ զմերն ապառնոյ սթափման համբուրել զոյս , եթէ արժանացայց ողջութեամբ ընդգրգել , որչափ զարդիս

համառօտել զհաւաստիս պարտանդիմ ի նորոդ եղելու-
թեանց ։»

«Ի չորեքտասաներորդում անցեալ Սեպտեմ. ամսոյ
տեսին աչք իմ զխոյացումն առ իս Գերաստիճան Պարոն
Սեթայ Յ. Արգարեան, հարազատ բարեկամի մե-
րոյ և ազգասիրի (զերթ հրեշտակին լուսոյ, որ երբեմն
խթեաց զկողմն Պետրոսի և շղթայընկէց յարոյց զնա ի
կապանաց) զհաղաղաւէտ կոնդակս Ձեր սուրբ ի ձեռին,
որ ի 25 Մայիսի թուականաւ մակագրեալն էր առ իս, և
միւս մի առ ինքն, և զաւետիս ի բերանի. «արի ասէ.
որ տրտմեալդ ես. զի խնամածու եղև քեզ և մեզ ամե-
նեցուն Հովուապետն մեր բարի ։» Ով հրաշից ձայնիս
կենսատու, որոյ զգաղափարն միմիայն Յովնան ձեա-
ցոյց յետ երից աւուրց հետազօտութեանց անդնդային
շրջշրջմանց վիշապին և մտանելոյն այցելութեամբ
Տեառն ի ցամաք (մինչ մերն ձգեալ յամիս 21. և այն ոչ
աղատ ի հանապազօրեայ ալաբաց նետից աներկիւղա-
ծաց), որով զօրացեալ ըստ ութ և տասն ամաց դան-
դաղեալ հիւանդին, ի մեզ նկարագրեալ զԱ.ետարանա-
կան առակն յղոյց, տուաք զփառս Աստուծոյ յաջողղին
զամենայն. և մաղթեցաք զմահն անդորրաւէտ, եթէ հա-
ճոյէր կամաց Հաստչին ։»

«Եղեալ Պարոն Սեթայ առաքէ զկոնդակսն առ ար-
տաքին կառավարութիւն եկեղեցւոյ, որպէսզի նորա,
ըստ սովորութեանն, տայցեն յեկեղեցւոջ ընթերցումն ի
լուր ամենեցուն ժողովրդոյ. և այսպէս տնօրինեալ նոցա
զարժանն, որոշեալ զընթերցումն յառաջիկայ կիրա-
կէի, որ էր օր 20երորդ Սեպտեմ. . . և Բարեկենդա-

նի Սուրբ Խաչի Պահոցն. և զնուաստութիւն մեր հրաբ-
բեալ յեկեղեցին ի լուր կոնդակացն օրհնութեան, որպէս
ըստ յաջողելոյ Տեառն յանդաւորեալ զամենայն ըստ
պատշաճին, յորում և նուաստութիւն իմ ըստ կարեաց
մարթացաւ ամոթել հանառօտ իմն բարոզիւ զղջմա-
թիւն ամենեցուն և սերմանել ի նոսա զբանս աստուա-
ծահաճոյ խաղաղութեան, մինչ, զոգջիւր, ոմանց չկա-
րացեալ զսպել զարտասուս, որով և ի նմին ժամու ա-
մօթահարեալ սատանայի, որ արկեալ ունէր ի սիրտս
ոմանց զերմն ատելութեան, բեկաւ միջնորմն ցանկոյն
երկպառակութեան, և խրատեցան երկիւղիւն Աստուծոյ
այր իւրաքանչիւր՝ թողուլ ի սրտէ զվնաս ընկերին և ար-
մատախիլ զարմատն խռովութեան ի միջոյ. և առ ի տալ
օրինակ նոցա, ըստ բանին թէ նախ առնել և ապա ու-
սուցանել. թողաք մեր զվնաս նոցա, որք ընդդէմ մեր
մեղան (և այն ոչ ի սրտէ յորժամ հաճոյք մեր էին և յամե-
նայն ժամու ջատագով մերում վիճուն սպասահարու-
թեան եկեղեցւոյ. այլ յառանձին նախանձու իրեարաց
նախապաշարեալ թելադրութեամբ բանսարկուին չարի).
և խնդրեցաք թողութիւն, յորոց կարծիւք վնաս ինչ ու-
նել առ ի մէնջ։»

«Ահա, Վեհափառ Տէր՝ ըստ Քերում բարձու հրա-
մանի թէպէտ արարաք զոր պարտն էաք, և ուրախ եմ
տեսանել զշինումն երկպառակութեան, թէև դուն ու-
րեք պահէ զգաղջ գոլորշին. ունիմք Աստուծով և զայն
ի փոքու մերով խոնարհ պաղատանօք տալ հանգչիլ յիս-
պառնդարումն. սակայն ոչ առանց մեծի հառաչանաց
ասեմ. թէ ոչ միայն ապիկարիս երկունք Ջանից. այլև

բաղմայ հզօրայ աշխատութիւնք տարեկանաց ոչ բա-
ւեն յանդգնութիւն և ի ջերմեռանդութիւն նախկին
անդրադարձեալ զվիճակս. այր վասն ի խորոց սրտէ գայ ա-
սել. Տէր տայցէ նոցա բարիս, որչափ ի մեզ և ի վիճակի
սատ մերում սերմանեցին զանբաւ շարիս, շարասե-
ցան զոնէ մարմնաւոր մխիթարութեան իւրեանց, որ ի
հոգևոր աղբերէ ջերմեռանդութեան տեղւոյս ընանիւր։»

«Այրարև՝ թո՛ղ ի սակի տեղւոյս թեթևացին սրտա-
մաշ և մտամաշ հոգք Ձեր Այդպէս, (որոյ ծանրութեան
եւ դառն ներգործութեան չափ մերս նուաստութիւն
քան զբաղումս քաջ ճանաչէ)· եւ տա՛ւք, եթէ պատեան
իցէ, հանդերձեալ Արաքնորդին Զուղայու զաւետիս թէ
բարձան, անհետացան նշմարանք տարաձայնութեան
տեղւոյս. սակայն զգուշանալի է զապագայն. դի մի ըստ
նախորդին ընկղմեսցէ զանձն իւր ի խորհուրդ անմար-
դասէր, օգտաձարաւ եւ խռովայոյզ խորհրդականաց,
որք արտաքուստ նենգաւորին, որպէս մոխիր ցրտա-
ցեալ և ի ներքուստ բնաւորութեան զոզեալ ունին զբարկ
հուր կիզիչ բարութեան բաղմայ։ Եւ երանի թէ, իցէ
նա խոհեմ եւ փորձառեալ անձն, եւ դնասցէ զհետ հան-
ճարոյ մտացն, ըստ հզօր աստիճանին, առաջնորդ ին-
քեան ունելով զԹանգարան խրատու հանգուցեալ Պ.
Պատրիարքին, եւ զառաջին պարտ իւր համարիցի չձեռ-
նադրել զոգէտս, զանուսս եւ զանբարերարոյս ի քահա-
նայութիւն եւ ոչ հանել ի Հնդիկս քահանայ անկիրթ,
տղայաբարոյ, աշխոյժ, փառասէր, եւ որ չարագոյն
է, արբեցող, որովք իսկ տեղւոյն ի ժողովուրդս եւ ի
մեզ վնասք սերկեւանս պատահարայ։ Եւ զոր ասեմս ի

բաջիկ փորձոյ, մի՛ իցէ հաւատալ այլ խմն դիտաւորութեամբ, բան սուրբ սրտիւ եւ խղճահար զգայողութեամբ, որպէս բարեկամ արդարութեան եւ Նորին Աստուածնորդի. եթէ ոչ՝ մեք զմերն տուաք և առաք ի ժամանակի անդ իւրում, եւ չունիմք այլ կարօտութիւն եւ տեղի դառնալոյ կրից ի հատուցումն, կամ իրաւունք խորհրդատուութեան այլոց, որք ի դէպս օգտակարութեան խնկելի հանդիսանան, եւ ի ժամու ինչ փոփոխման՝ ընդ հակառակն, սուր հատիչ պարանոցի բարեմիտ խորհրդատուին, որչափ մերոյս առ հանգուցեալ Թ. Եպիսկոպոսն առաք զփորձն։ Ասասցէ՛ այն պարտաւորութիւն ներկայ եւ ապագայ հասուն եւ հանճարեղ թէմականաց կողմանս, մանաւանդ՝ եւ առաւելութիւն ընդ զմերն թերութիւն իսկ, որն որ առնել ոչ կարացաք մեք։»

«Մեք զպարտիս յեռանամեայ շնորհակալութեան մերոյ առ ժողովուրդս, զոր պարտն էաք, իբրեւ 2 ամաց յառաջ ընդ մերում հրաժարականի ընդդէմ թէմական պաշտամանց, ութ եւ տան ամայ վայելեալ բարեաց եւ շնորհաց նոցա, այժմ յատենի բանախօսութեան վճարեցաք, յայտնելով ընդ նմին զանբաւականութիւն անձին մերոյ միւսանգամ, ըստ Զերում հրամանի մատնելոյ ընդ ծով թէմական պաշտամանց, արտաքոյ ազատ կեցից և կարեւոր մատակարարութեանս ձրիապէս, որպէս պատուոյ Աւագերէց նոցա և անգործունեայ մշակ տանն Աստուծոյ եւ Աղգի (զի այսպէս վայել էր մեզ ընել զամենայն արդարութիւն, ըստ նախկին յայտարարութեանս ի սպասու Զերդ Մեծութեան, յորժամ փոխանորդն մեր արդէն կայր, և հատանելն զհայ ընկերին է անգթութիւն

ներհակ պատգամաց Աստուծոյ). եւ այսպէս ունիմ շա-
բունակել զպարտս կրօնի իմոյ, ցորչափ կարն իմ խոս-
տանայ, յուսալով թէ Ձերն խնամք հայրական սիրոյ
չունիցի բասրել զտնօրէնութիւնս այս. սակայն զմիջէ
յաւիտ հոգւով յաղագս ոչ հատանելոյն Ձեր զհպատա-
կութիւն իմ ի Վանայ անտի Ջուղայու եւ կայուցա-
նելոյն զիս միմիայն հպատակ Իշխանիդ եւ Ձեր համե-
մատ պաղատանայս, յորժամ անհնարին լինելոյ է ինձ
միւսանգամ խոնարհիլ ի բուն իշխանութեան Առաջ-
նորդին Ջուղայու, առ զանազան աշխատասիրութիւնս եւ
կառավարչական գործս պատկանեալ Վանայն և իւրոյ
ինքեան իսկ, մինչ վերբ սրտիս անցելովք տակաւին ան-
բուժ՝ միայն ապաքինին հոգով դամբանի. այլ որ ինչ եւ
է՝ կամք եւ մեալոց եմք երկրպագու Ձերդ բարձու հրա-
մանի եւ կամայ։»

«Իսկ արդ՝ ըստ որում վերագրեցի զկենաս հոգևորա-
կանութեան ի շնորհս Ձեր, եւ որդեգիրս որդիայայ
իսկ Ձերում Սուրբ Հայրութեան, անշուշտ պարտիմ
գործունէութեամբ յայտնել եւ զհաւատիս. ուստի ստի-
պիմ եւ զայս յուշ ածել, զի զկնի անկման իմոյ հարուա-
ծովք Թ. Եպիսկոպոսի, զորոյ գյանցանսն Տէր ներեսայ՝
(յիս հաստատեցաւ հասարակեալ առակն աշխարհի
թէ. «կովն երբ անկաւ՝ դանակաւորք շուրջն բազմա-
ցան), ոչ միայն ցուլք և դէրք սրաշարեցին զիս. այլ եւ
գոգչիք, մրջիւնք անգամ զիս խածատել յարեան։ Բա-
զում առասպելապատում տետրակք և գրուածք ընդ-
դէմ մեր եւ ճշմարտութեան շաղակրատեցին եւ վիսա-
տիպ սիռեցան ամենայն ուրեք ի խայտառակութիւն

(վա՛ չհամբերութեանս յիրաւի, որ չեղաք խելագարեալ), բայց հայերէն գրով եւ բարբառով. այլ ի վերջոյ ոմն յաղ-դէս, որ ի բաղում ամաց հետէ եւ այսր հետեալ յեկե-ղեցւոյ մերոյ . . . վստահացեալ, չգիտեմք, գրգռ-մամբ այլոց, թէ ի պաշտօնէն պատճառաբանական օրինաց քաղաքիս (որում այսր լայէր կամ վէքիլ ասեն, ի գիր և յոմ Անդլիացւոց տեսրակ մի լի հայհոյանօք տպագրեալ ցըր-ուեաց ատ և յայլ տեղիս . որոյ վնասն ոչ միայն անձնա-կան կամ անհատական . այլև կրօնի և ընդհանուր հո-գևորականութեան մերում եւ եկեղեցւոյ, յորում եւ վասն Ձեր յատուկ, ընդդէմ ժողովոյ տեղւոյս առաջին ժալրհի ասել. «Կաթուղիկոսն գիտացեալ զայս ամենայն անարժան գործ քահանային (իբրև մերոյ) եւ ժողովրդեան խնդրոյ ունկնախիչ լեալ՝ չառնէ պատասխանի, և այլն։»

«Այսօրինակ ոմիր նորա պարտաւորեաց զիս բողոքել քաղաքական օրինօք ընդդէմ նորա, եւ առնելով զհա-տուցումն տալ ի բաց քերել զամենայն գէարիս վատաբա-նութեան մտեալն նոցա ի կարծիս, եւ թերևս իրաւամբ յոյժ, յոյժամ բազմամեայ և բարեհամբաւ կեանք մեր եւ կառավարութիւն ընտանեցուցեալ ունէին եւ ունին ընդ մեզ զրաղումս յերևելեաց հոգևորականաց Անգլի-ացւոց, մինչ անգամ արդի Տէր Կաստէն Աբբ Եպիս-կոպոս նոցա ի գալն ատ (հարկաւ, ծանուցմամբ իւրոց բահանային) զառաջինն մեզ նախողջոյն եղեալ այցելու-թեամբ եւ զկնի նախամաչիկ մեծարանօքն, ընդ մեզ, որ տեղի ունեցաւ յաւուր Զրօրհնեաց (այր ընդ հակա-ռակն ցարդ չլսի թէ արտաքնոց այլոց ցուցեալիցէ

զնմանն։ Այո՛, ունիմք այսու ամենայնիւ պարծանս ասելոյ. թէ այսպէս եղեալ ընթացք մեր և անարժանութիւն ի թէմական պաշտօնի. նոյնպէս կային և են աշխարհական պատուաւոր անձինք ի նոցունց և այլ ազգաց մերոյ ծանոթք, որոց հարկ լինէր շփոթիլ բաղբաղայիւք հոգեսպան տեսարանին թէ չէաք մեք իրօք ծանուցեալ ոգի նոցա, և թէ եկեղեցականք մեր էին զանդուածք օտար, ըստ աստուածընդդէմ գրութեան նորին. ուստի զիրաւունս մերոյ յանդիմանութեան ճարահատ պարտաւորութեամբ ի ձեռն ատենարանին օրինաց վարեալ յատեան դատաստանի, որով այժմ շուարեալ չիմանամք զելս հնարիցն, զի եթէ յետս կոչիցիմք ի դատաստանէ. օն անդր յաւելու ի մեզ խայտառակութիւն, եւ լուութեամբ տամք հաստատել ի մեզ զդրոշմ ուղղութեան բանից նորին չարաչար ամբաստանողի. և ոչ այսչափ միայն. այլև տամք քաջալերս բաղմաց ի նոյն տեսակ չարիս ընդդէմ առաքելական բանի թէ. «որք մեզանից են՝ առաջի ամենեցուն յանդիմանեալ զի և այլք երկիւղեսցեն։» Մանաւանդ մնալով մեր ի քաղաքի աստ՝ ալեաս ունիմք բարեկամութեան և յարակցութեան նոցին եւ ամենեցուն սիրով. իսկ եթէ յառաջ մղեսցուք, որպէս յառաջացեալն է, երկմտիմք յերեսաց բարձու հրամանի Զերոյ, որպէս թէ չեղաք անյիշաչար անցելոցն. որ սակս հոգւոյ տառապանօք աղերսեմք ի Տեառնէ յաջողել մեզ որն որ հաճոյ ինքեան։ Եւ եթէ զվճիռ դատաստանին տնօրինեաց, կարելի է ոմանց բերանաբացիկ զարթնուլ անդրէն ի նոր բամբասանս ընդդէմ մեր, և թէ յաչակոտք այլ ընդ այլով թեկնածեալ՝ զչարիցեն զմեզ

ի Ձերում ատենի, սորին վասն վութեայաք զառաջն ունել ճշմարիտ և ուղիղ խոստովանութեամբ մինչ զվախճանակնեն ունիմք ծանօթս տալ Ձերում Գերազանցութեան։»

«Պատիւ անձին համարիմ յարգական մեծարանօք և խորին ակնածութեամբ ստորագրել զանուն իմ Ձերդ Բարձրութեան ամենախոնարհ եւ անձնադիր ծառայ Հնորհապարտ։»

(ձեռ.) Տէր Յովհաննէս Խաչիկեան Խաչակիր
Աւագ Քահանայ Հայոց

Ի Կալկաթա. 1863. Հոգտեմ. 2։

Եւ Քրիստոսի Մարդասիրին Աստուծոյ փառք, պատիւ եւ երկրպագութիւն, Սրբազնասուրբ Կաթուղիկոսին՝ անբաւ զոհութիւն եւ բարեկամաց մերոց՝ Հնորհակալութիւն յաւիտենիւ. Ամէն։

«Թէ գիտունին է բաւական լոկ մի բան.
խակ տգիտին հազար խնատն է գուր քան։»

# ՑԱՆԿ

Երես

Ընծայումն

Նախաբան 3

Թուղթ Տէր Յովհաննէս, Աւագ Քահանայի Խաչկեան, գրեալ յ30 Ապրիլի 1861 ամի առ վեշտասան եկեղեցական և աշխարհական անձինս Նոր Ջուղայի ի մասին բարեկարգութեան թէմին Ամենափրկչի Վանացն։ 5

Խնդիր բարեկարգելոյ զթէմն Ամենափրկչի Վանացն Նոր Ջուղայի, ուղղեալ նոյն Աւագ երիցուն յ8 Սեպտեմբերի 1861 ամի առ Ամենապատիւ Տէր Մատթէոս Կաթուղիկոսն։ 18

Թուղթ վկայութեան գովանի առաքինութեանց նոյն Աւագ քահանային տուեալ ի Հայոց Բուշեռի յամին 1834։ — Խնդիր առ Առաջնորդն։ — Մի նոյնպիսի թուղթ տուեալ նմա ի Հայոց Կաղկաթայի։ 41

Ընդարձակ թուղթ պաշտպանութեան անձին, գրեալ նոյն Աւագ երիցուն ի 20 Փետրվարի 1862 ամի առ Բարձր Սրբազան Թադէոս Առաջնորդն Նոր Ջուղայի և Հնդկա-Հայոց։ 59

Հրաւէր ժողովոյ գրեալ նոյն Աւագ քահանային ի 4 Յուլիսի 1862 ամի ընդ ձեռն Պարոն Մ· Խ· Յովակիմեան, եղբօր իւրոյ, առ Պատուելի հասարակութիւնն Հայոց Կաղկաթայի, որ և հա-

39
42.



մասամբեալ կարգէ 5 քննիչս։ Քննութիւն սոցա և վճիռ երկրորդ ժողովոյն։ 171

Սրբակրօն Աւագ քահանայն Տէր Յովհաննէս Խաչիկ հրաժարի ի վիճակէն Կալկաթու։ — Ժողովուրդն մատուցեալ նմա շնորհակալիս՝ խնդրէ չարունակել զպաշտօն իւր։ — Վախճան Թադէոս Արխոյ, որոյ կապանաց զիր ընդդէմ յիշեալ Աւագ երիցուն, խափանեալ առ կենդանութեամն իւրով, հրատարակի յետ մահուանն ի խառվարարաց։ 240

Իններորդ բողոք նոյն Աւագ քահանային առ Ամենապատիւ Տէր Մատթէոս Կաթուղիկոսն։ — Կրկին կոնդակք Նորին Վեհափառութեան, գրեալ մին առ նոյն Աւագ քահանայն, որով արձակէ զնա յանդէպ կապանաց հանգուցեալ Թ. Արխոյ, և միւսն առ Պարոն Սէթ Յ. Աբդար ամթոռական, որով ծանուցանէ Պատուելի Ուխտին Հայոց Կալկաթու զայն վճիռ իւր։ 249

Նկարագիր աւուր ընթերցման կոնդակաց յեկեղեցւոջն Հայոց Կալկաթայի, քաղեալ յԵղբայրաբանէ լրագրոյ ի 25 Սեպտեմբերի 1863 ամի։ 262

Թուղթ շնորհակալութեան արարեալ Պատուելի Հասարակութեանն Հայոց Կալկաթայի ի 28 Սեպտեմբերի 1863 ամի առ Ամենապատիւ Տէր Մատթէոս Կաթուղիկոսն յաղագս արձակելոյ զԱւագ քահանայն իւրեանց յանտեղի կապանաց Բ. Ս. Թադէոս Արխոյ։ — Նոյնպիսի թուղթ և յիշեալ Աւագ երիցան։ 271

ՀԱՅԿ. ԳՐԱԴ. ԳՏՍ. Գրադ. Գիբ. ՀՍԽՀ-ՍՍՀ Ա. Մ. Մասեցի անվան Ս. ՍՊԱՍՆԻԿՅԱՆԻ ան

002032
938